

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Thibaut Paul  
Highfield Camp  
Mombasa  
1944

491.99-3

4X-50



28 APR 2010

491.542-3

Հ-47

Ա.ՃԱ.ՌԵ.Ա.Ն

# ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ՀԻՆ ՄԱՍԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷԶ

ՀԱՏՈՐ Բ.



ՎԵՆԵՏԻԿ

ՏՊԱՐԱՆ Ս. Դ.Ա.Զ.Ա.Ր

1920

Ձ

ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

6.02.2013

3500

491.99-3

4-50

45

ՀՀ. ԱՃԱՌԵԱՆ

# ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՆԵՐ

ՀԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷԶ

ՀԱՅՈՐ Բ.

100  
100  
100  
100



3325

3268

ՎԵՆԵՏԻԿ

ՏՊԱՐԱՆ Ս. Դ. Ա. Ա. Ա. Ա.

1922

ԳԼՈՒԽ ԻԳ.

ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԵՓՐԵՄԻ ԱՐԵԿԵԼԵՍՆ ՎԿԱՅԻՑ ՄԷՋ

Եփրեմի վկայք Արևելից, որուն թարգմանութիւնը Ոսկեղարէն է, արդէն մասսամբ (?) ծանօթէր Հայկազեան Բառարանի հեղինակներուն։ Նոյնին մէկ մասը տպուած է Սովերքի ի հատորով։ «Պատմութիւն վարուց սրբոյն Շմաւոնի եպիսկոպոսի և ճառ ի վկայօն արևելից» (տպ. Վենետ. 1854)։ Վերջին անգամ ամբողջ գործը զանազան ձեռագիրներու համեմատութեամբ ուղղագրութեան տուաւ ողբացեալն Գալուստ ՏէրՄկրտչեան։ Գիրքը թէև ամբողջապէս տպուած է Էջմիածնի տպարանին մէջ, բայց մինչև այսօր հրատարակուած չէ<sup>1</sup>։ Այս աշխատութենէն օրինակ մը հեղինակը սիրայօժար իմ որամադրութեանս տակ գրած ըլլալով՝ հոս կը հաւաքիմ այն ըոլոր նոր բառերը՝ որոնք Առձեռն Բառարանին ծանօթ չեն, կամ ըստ իս որևէ բացատրութեան պէտք ունին։

1. Կը լսեմ թէ նորերս արդէն լոյս տեսած է։ Նոյն անժին ինամբով լսյս տսեսք է նաև Շապհոյ Բագրատունոյ նորագիւտ պատմութիւնը։



## 1. Երու

Եւ՝ զարիւնն ձեր, որ ներկեաւ և չուցաւ, և ոչ երբն երտաց՝ որ է անկողին նորա, կարէ լուանալ և սրբել զսպանումնն ձեր, որով սեացաւ և հմուտ ի հող, և ոչ որդն կենդանի՝ որ է հանդերձ նորա, կարէ սպիտակացուցանել (էջ 54. նոյն ընթերցուածն ունի նաև Սոփերք, ի. էջ 103):

Թէ նշանակութեամբ և թէ ձեռով անստոյգ բառ մ'է երտաց. ուղղականը ըլլալու է երու կամ երիւ, որոնց երկուքն ալ այլուստ անծանօթ են: Բառով երեմիայ (ա. տպ. Ամիկոռնա 1698, էջ 91, բ. տպ. էջ 126) ունի երեաց «ծառ» ձև մը, որ ապահովաբար ասիկա ըլլալու է: Քստ այսմ երր երտաց կը նշանակէ «ծառի որդ»: Բայց ո՞րբան ստոյգ է երեմիայի մեկնութիւնը: Նկատենք միայն որ երրն երտաց և որդն կենդանի մերձաւորապէս հոմանիշ դարձուածներ են, ինչպէս նաև ամբողջ երկու նախադասութիւնները:

## 2. Կուոգպետ

Իսկ այր մի աւագ՝ անուն Պուսակ, որոյ աշտիճան իւր կոոզպետ կոչէր, որ թարգ-

մանի գլուխ արուեստագիտաց արքունի (էջ 139. նոյն ձենի ունի նաև Սոփերք, էջ 47. Էջմիածնի Ա ձեռագիրը միայն ունի կոոզպետ):

Ուրեմն կոոզպետ «արհեստագիտ» իրանեան բառ մ'է (բարդուած, կոոզ «արհեստաւոր» բառէն), որուն բուն պահլաւ ձեր յայտնի չէ:

## 3. Կտուր

Առին սղոց և սկսան սղոցել զմարմինսն և կտրեցին արարին վեց մասն և եղին զկտուրսն ի վեց կողով (էջ 154):

Կտուր բառը հոս կը նշանակէ «կտոր». այլուր այս իմաստով գործածուած չէ. Կայ նաև կտուրը «կտրելու գործողութիւնը». հմմտ. վերոյիշեալ հատուածէն քիչ մը վեր. «Վարեցին երկուս ցիսս միում և հարստեցին զոտան ընդ մի ցից և զզլուխս ընդ մի, որպէս օրէն է աշխարհի պրկել զոչխարսն ի կտուրս»:

## 4. Հաստի հարկանել

Զոտն հաստի հարին, զտեղի կալան և առացինացան յամենայն տեղիս (էջ 37):

Հաստի հարկանել ոճը կը նշանակէ

«Հաստատ կանգնիլ»։ ասոր հետ հմմտի հաստի կալ «հաստատ կանգնիլ» Ուկա ա. Թիես. էջ 459. «թեպէտ և ուղն ի հաստի կայցեն, ցնորեալ աչքն ի խորոցն՝ ամենեին ի վայր զառածեալ անկանիցի»։

### 5. Պուղակիլ

Ոչ միաբանեսցուք, ոչ զուղակիմք և զկամս ըու և զթագաւորին ըու ոչ առնեմք... Պաւղէ զուղակեցաւ ի մեծութիւն (էջ 192):

Ուրիշ տեղ չկայ գործածուած դուղակիւ բայ մը. կայ միայն դուղակել «պահել, պահվուիլ» (հմմտ., նաև ըիչ մը վերը՝ Մի՛ զուղակեր ի բանս մոլութիւնդ. էջ 191): Նախորդ երկու հատուածներուն մէջ դուղակիւ կը նշանակէ «համոզուիլ, ցանկանալ»։

### 6. Վերկառակ

Եւ մատնեցան յաւեր յանկարծակի և եղեւ մերկառակ և կողոպուտ (էջ 35):

Կը նշանակէ «մերկ և խայտառակ»։ Նշբ և ԱԲ չունին այս բառը, որովհետեւ իբրև առանձին բառեր կը կարդան՝ մերկ առակ և կողոպուտ (Ոսկերք, էջ 84):

### 7. Յազագիլ

Եւ զաւազան անօրէն իշխանին... ահա յազազեալ կայ ի մէջ մայրոյն և չէ ձեռն հաս միւսանգամ դալարանալ (էջ 54, նոյն ընթերցուածն ունի նաև Սոփերք, էջ 103):

Յազագիլ կը նշանակէ «չորնալ»։ այլուատ անձանօթ է. կար միայն ազագիլ (Փիլոն), ազագեալ (Տիմոթ. Կուզ, էջ 278): Նոյն հեղինակը ունի նաև ազազանիլ «ցամքիլ»։ Գետք անհունը նուազեցին և եղեն մօտ յազազանել (էջ 42):

### 8. Շօշիլ

Իսկ ի վերայ սրբոցն հոսէին թարախը մարմնոյն յոյժ, զի շօշեալ տրորեալ էին յանձնարին տանջանացն (էջ 222):

Կը նշանակէ «լուծուիլ, բայցայուիլ, մեռած մարմնին նեխիլ փոփլը»։ այս բառը գիտէ Նշբ շաշել ձեռվ և վկայութեան կը բերէ նիւս, կազմ. ուր կը գտնենք շոշեալ, շոշեալ գրչութիւնները։ Բայց այս երկուքն ալ սխալ են։ Բառը պէտք է ուղղել շաշեալ, ինչպէս կը գտնենք գլուխած կնիք հաւատոյ, էջ 274՝ նիւսացին փոխառեալ նոյն հատուածին մէջ։ Առաջ. Բառ. Որևելեան վկայից մէջ գտնե-

լով շօշեալ ձեւ և չանդրադառնալով շոշեալ ձեխն վրայ, իբր իրարմէ տարրեր բառեր կը գնէ շոշի «քայքայիլ», շոշի «նեղուիլ, չարչրկիլ»։ Երկութը պէտք է միացնել իրարու՝ վերի ձեռվ։

#### 9. Պարաժոյժ

Ով սկայազունք անուանիք... բարձունք քան զամենեսեան, որք ոչ կորացուցին զպարաժոյժն պարանոց ընդ լծով անիծից մահու (էջ 17. Սոփերք էջ 66 ունի զպարոյրե պարանոցմ)։ Վերջին ձեւ կը յիշէ Առձ. Բառ. «կլորածն, կլորութիւն»։ Նշանակութեամբ, որ բաւական անճահ է։ Անշուշտ լաւագոյն ընթերցուածը պէտք է զնել պարաժոյժ կամ թերևս ուղղելի տարաժոյժ՝ «տկար, անզօր, չդիմացող»։ Նշանակութեամբ (տար և ժոյժ բառերէն բարդուած)։

#### 10. Վաւարտ

Նովաւ ազատ կանայք ապրեցան ի պէսպէս նկարագործ անօթոց և առ ի վաւարտան ստէպ ստէպ թօթափելոյ (Սոփերք էջ 51. Էջմիածնի տպագրութեան ընթերցուածը մոռցած եմ նշանակել)։

Նշն բառս կ'ուզէ կարդալ զաւարտսն։ Ջախջախս կը մեկնէ «ինչը, ստացուածք»։ Սոփերքի հրատարակիչը (էջ 158) կը համարէ պլու. ավորտ «որ է այտք և զգեղերեսել շպարել կանանց նշանակիցէ նկարագործ անօթովըն»։ Բայց պլու. ավորտ ոչ ձեռվ կը յարմարի և ոչ ալ նշանակութեամբ։ Բառին նշանակութիւնը կը մնայ անստոյգ։ Առձ. Բառ. բոլորովին չնջած է զայն, անշուշտ գտնելով լաւագոյն ընթերցուած մը, որ կարծեմ թէ պիտի ըլլայ նաև Էջմիածնի հրատարակութեան մէջ։

#### 11. Տնտղիլ

Ելցէ ճարպն յուռուցեալ և ի տնտղեալ ընդերացն, որ ուտէին զընտիրս պարարտաց (էջ 76. նոյն ընթերցուածն ունի նաև Սոփերք 133)։

Առձ. Բառ. զիտէ այս բառը և կը մեկնէ «ուռիլ»։ այս նշանակութիւնը ստոյգ է, ինչպէս կը հաստատէ Ոսկ. Կողոս. էջ 534. «Եւ նոցա ոգիք ջրգողեալք տնտղեալք տորոմեալք»։

## 12. Ի փետս մտանել

Որոց հարքն յետս կացեալ էին և ազգատոհմն ի փետս մտեալ ի գայթակղութիւն յօժարեցուցանէին (էջ 72. նոյն ընթերցուածն ունի նաև Սովիերք. էջ 129):

Ընդհանուր իմաստն այն է, թէ երանելի նահատակներուն հայրերը իրենց հաւատքը ուրացեր էին. դաւաճաներ էին նոյնպէս իրենց ազգականները, և հիմայ ալ իրենց հարազատները կը յորդորէին դառնալ. բայց ասոնք չլսեցին անոնց գայթակղիչ խօսքերը:

Սակայն չեմ կրնար այս ընդհանուր իմաստէն անդին անցնիլ և ի փետս մտանելունին բուն նշանակութիւնը որոշել: Մի գուցէ պէտք է կարդալ ի միտս մտանել «մէկուն ուղեղը մտնել, համոզել»:

## 13. Քեշտ

Այ քեշտ անմիտ և ոչ իմաստուն (էջ 168. երկու ձեռագիրներէն Ա ունի այքեշտ, Բ այ քեշտ. հրատարակիչը զրած է այ քեշտ, որ պէտք է հասկնալ այ քեշտ. Սովիերքի մէջ չկայ այս հատուածը:

Բառս այլուստ ծանօթ չէ. կայ պրատակ կատ «տգեղ և աղտեղի», որ թերեւս

յարմարի յաջորդէ անմիտ և ոչ իմաստուն բառերուն: Խօսքը ուղղուած է նահատակին:

## 14. Քորէշ

Կատարեսցէ իբրև զրորէշ զկամս քո: կացո՛ Տէր քորէշ ի տեղի քորիշի և հատո՞քարկութիւն և չարութիւն մոլորեցուցչացն (էջ 74. նոյն ընթերցուածներն ունի նաև Սովիերք. էջ 131, միայն վերջին անգամ կը դնէ բարեշի՝ փոխանակ բորիշի):

Քորէշ բառին համար Սովիերքի հրատարակիչը (էջ 158) կը ծանօթազգրէ թէ «Զբառս օտար և որպէս թուի ասորի, վարէ ուրեք և Ստեփանոս Ռուպելեան, և տայ զիմաստ հակարոռ կամ հակառակ իշխանի»: Օրբելեանի այս հատուածն է. կարգեցին ի տեղի նորա զայլ ոմն կաթողիկոս և լուծին զվահան: Եւ այսպէս կեցեալ քաւրէշ ի տեղի քաւրէշի՝ Ստեփանոս յԱնի և Վահան ի Վասպուրական (տպ. Էմինի, էջ 212): Երկուքին նմանութիւնը կատարեալ է. վերջինին մէջ յայտնի կ'երեւայ որ բառը կը նշանակէ «կաթողիկոս, կրօնապետ»: Նոյն իմաստով առնելու է նաև առաջինին մէջ:

## ԳԼՈՒԽ ԻԴ.

### ՀԱՅԵՐԻՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԶՈՒՄՆՇԻՐԻ ՎՐԱՅ ՊԱՏՄՈՒԹՅԵՍՆ ՄԷՋ

(տպ. Վ. Հնկարկ 1884)

Այս աշխատութիւնը՝ որ վրացերէնէ թարգմանուած է Ժ. Ժ. դարերուն, ծանօթէր Նշբ-ի հեղինակներուն, որոնք բառարադած են զայն։ Զանազան պատճառներով առնուած չեն միայն երկու բառ, որոնց, ինչպէս նաև ուրիշ երկու բառերու վրայ, կ'ուզենք ընել մեր զիտողութիւնները։

#### 1. Պասանիկ

Գնաց ընդ նմա և Ղունկիանոս կարունացի և երթեալ զիտեցան աւուրն խաչելութեան։ Եւ իբրև պասանիկն պնդեաց զբանեան, զմայր իլիոսի ընդուստոյց մասն մարգարէութեան՝ որ ի նմա (էջ 52)։

Նշբ և Առձենն չգիտեն այս բառը։ Պատմութեան հրատարակիչը կը հասկնայ

« դահիճ կամ բենող » և կը հանէ յն պատճենական (որ և պատճենական) « ցիցի զարնել » բայէն։ Այս մեկնութիւնը ուղիղ չէ։ Կու զայ պհիւ քանուկ « պահապան » ձեւ մը, որ պահուած է մանիքէական գրութեանց մէջ բանուկ « պահապան » է բան, պրու։ Այս բան « պահ » որմէ և պահապան « գիշերապահ »։ Նոյն բառը փոխառեալ է նաև վրացերէնի մէջ, հմմտ։ ըստ Մար ԹՅՕ 17,027 վրաց. պատճենիկի (Վարք Ա. Նունէի, ձձ. պատճենիկի), պատճենակի (Պիղատոսի անվաւերականին մէջ) « պահապան », պատճենի « օգնական » (ըստ Չուպինովի բառարանէի), պատճենարի « ծառայ, սպասաւոր » (Մուլխան Օրբելիանի բառարանին մէջ)։

#### 2. ԱԵՄԻՓՈՐ

Եղել ի նոսա ախտ սեմփորի (տպագրին մէջ սևմբորի, բայց Նշբ ունի սևմիգորի, որ աւելի ուղիղ է) և զիտացին թէ ի խաչէն է պատճենան (էջ 108)։

Նշբ այս բառը կը համարէ անստոյգ։ Զախիջախեան և Առձեննը չեն յիշեր. Brosset կը համարէ « dysenterie », իսկ կենետիկան հրատարակիչը հասուածը կը սրբագրէ « եղել ի նոսա ախտս իմն փորի »։

Բատ իս պարզապէս տառադարձուած  
է յն. սուբֆօրի (կամ սուբֆօրձ) բառէն՝ որ  
կը նշանակէ «զանազան հիւանդութիւննե-  
րու հաւաքում, réunion, rencontre de  
maladies» (յն. սուբ-ֆէրօ «հաւաքել»  
բայէն): Բատ այսմ հայ ձեզ պէտք է ուղղել  
սխմիորի:

### Յ. Սրահանգ

Այս բառին վրայ խօսած էի Հայերէն  
նոր բառերու շարքիս մէջ (Գ.Լ. Թ.), բե-  
րելով Վարդանէն և Ուռհայեցիէն մէկ մէկ  
վկայութիւն և ըստ Առնենի ընդունելով  
սրահանգ «սրիկայ» նշանակութիւնը: Կը  
տեսնեմ որ այս նշանակութիւնը սիմալ է,  
քանի որ Զուանչիրի պատմութեան մէջ  
կը գտնեմ երրորդ վկայութիւն մը, ուր  
սրահանգ չի կրնար ոննենալ այսպիսի գէշ  
իմաստ մը. Յաւուրսն յայնսոփէ զայ Մե-  
լիքան Սուլտանն... և թողեալ անդ ա-  
միրայ զՄրահանզն... Զկնի աւուրց եկն  
Սրահանգն (էջ 114):

Սրահանգ պրս. سرهانگ sarâhang կամ  
هانگ sarhang «յառաջընթաց զօրաց,  
բանակի զլիաւոր», բառն է (կազմուած  
սար զլուս ahang բառերէն): Այս ի-  
մաստով գործածուած է յիշեալ երկու

վկայութեանց մէջ. նոյն բառն է դարձեալ  
այս երրորդ վկայութեան մէջ, ուր իւրեւ  
յատուկ անուն առնուած է:

### 4. Փրոտիտոսիկ

Եւ կացոյց ի վերայ երկրին պատրիկ՝  
որ է աւագ, զայր մի Մակեդոնացի՝ Ազոն  
կոչեցեալ. տուեալ նմա զօրս հարիւր հա-  
զար, որք էին փրոտիտոսիկ բաջակորովք  
և բռնամարտիկը (էջ 20):

Նչի և Առնենը չունին այս բառը:  
Պատմութեան հրատարակիչը կը համարէ  
յն. որուառուն «առաջնակարգ զինուորք» որ  
առ յոյնս յառաջնում զծի բանակին կար-  
գէին»:

Այս մեկնութիւնը յարմար չէ. թէ՛ հա-  
յերէնի և թէ վրացերէնի մէջ յն. π=պ  
տառը չէր կրնար շփոթուիլ մեր փ-ին  
հետ: Սակայն բացի նախատառէն՝ բարին  
մնացեալ մասն ալ համաձայն չէ առաջար-  
կուած յոյն ձեին հետ:

Բատ իս փրոտիտոսիկ խանզարեալ զբչու-  
թիւն մըն է և կը ներկայացնէ յն. Փօսրօձ  
«պահապան զօրք, պահակ» բառին մէկ  
ածանցը, ինչ, Փօսրօյթօճ «պահապանուած»,  
Փօսրօք «պահել, պահակ կանգնիլ, պաշտ-



պանել, զինւորական պաշտպանութեան  
տակ առնել» ևն:

Այսալը յառաջացած է նօտրագիր գրու-  
թեան մէջ որ և տ ձևերուն չափազանց  
նմանութենէն: Պէտք է կարդալ փրուրի-  
տոսիկ:



## ԳԼՈՒԽԻ ԻԵ.

### ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

#### ՄԱՅՏՈՑԻ ՄԷՋ

---

ԾԱՅՈԹ. — Երկու տեսակ Մաշտոց ու-  
նինք. առաջինը, որ կը կոչուի պարզապէս  
Մաշտոց կամ Փոքր Մաշտոց, կը պարու-  
նակէ հասարակ կեանքի մէջ պատահող  
սովորական արարողութիւնները, ինչպէս  
Մկրտութիւն, Պատկ, Թաղում ևն: Եր-  
կրորդը՝ որ կը կոչուի Մեծ կամ Մայր  
Մաշտոց, այս բոլորին հետ կը պարու-  
նակէ նաև մի քանի ուրիշ ոչ-սովորական  
արարողութիւններ, ինչպէս՝ Քահանայի  
ձեռնազրութիւն, թաղում ևն: Փոքր Մաշ-  
տոցը շատ անգամ տպուած է. վերջին և  
մաքուր տպագրութիւն մ'է Լջմիածնի 1894  
թուի տիպը. ընդհակառակը Մայր Մաշ-  
տոցը քիչ անգամ տպուած է և եղած օրի-  
նակներն աւ շատ հազուազիւտ են:

Այստեղ կը հաւաքեմ Մաշտոցի բոլոր  
այն բառերը՝ որոնք չկան Առձեռնի մէջ:

Գործածած եմ Եջմիածնի 1894 թուի փոքր Մաշտոցը (զոր կը համառոտագրեմ Մաշտ.) և երկու Մեծ Մաշտոց, տպ. Պօլիս 1714 և 1807. (առաջինը կը համառոտագրեմ Մ. Մաշտ. 1714, իսկ երկրորդը՝ պարզապէս Մ. Մաշտ.):

Փոքր Մաշտոցը ամբողջապէս կը պարունակուի Մայր Մաշտոցին մէջ. բայց որովհետեւ այս վերջինը շատ հազուագիւտ է, ուստի վկայութիւնները մէջ կը բերեմ փոքր Մաշտոցէն: Բայց Մեծ Մաշտոցներն ալ իրարմէ զանազանութիւն ունին. զըլխաւոր զանազանութիւնը կը կայանայ առողջքներուն մէջ, որոնք մէկուն մէջ աւելի երկար, միւսին մէջ կրծատ ձևով են: Կան նաև արարողութեանց մէջ տարբերութիւններ: Այսպէս օրինակ՝ Մ. Մաշտ. 1714 ունի Ռոտնալուայի կարգը, որուն համար կ'ըսէ թէ Եփրեմ Խուրիէն թարգմանեց «մեծ դիտապետն Հայոց Գրիգորիս Վըկայասէրն» (էջ 550). բայց այս կարգը ամբողջապէս կը պակսի 1807-ի տպագրութեան մէջ: Այս պատճառով է ահա որ կարդացած եմ նաև Մ. Մաշտ. 1714 տիպը և ուր որ յաւելուածներ կան և այս յաւելուածներուն մէջ նոր բառեր կան՝ քաղած և հոս դրած եմ:

Արեղայացու «արեղայ ըլլալու կոչուած

անձը»: իսկ զարեղայացուն որ յօժարի իւր կամօքն, ի քսան ամին զչուխայն հագնի և ի մսոյ և ի գինոյ կարի. Մ. Մաշտ. 343 ա: — Եղնը արեղացու ձևով կանոնագրքի մէջ, տպ. Թիֆլիս 1914, էջ 187. Որ արեղացու է, ի 20 [ամին] չուխա ազանի:

Աղաւենաձեւ «աղաւնիի ձև ունեցող»: Եպիսկոպոսն առցէ ի սեղանոյն զաղաւնաձեւ տուփ մեռոնին և հեղցէ ի զագաթն սեղանոյն. Մ. Մաշտ. 173 ա:

Ամբիքը «թաղման նախորդ և յաջորդ օրերը՝ մեռելին վրայ կատարուած կարգը». Գան ի միւսում աւուր առաւօտեան ի գերեզման և ասեն զամբիծն ի բուն. Մաշտ. 543. = բառու յառաջացած է նոյն արարողութեան ժամանակ կարգացուած առաջին սաղմոսին առաջին տողէն՝ որ է «Երանեալ են ամբիծը ի ճանապարհի և ոյք գնան յօրէնս Տեհան»: Հայերէնի մէջ շատ անգամ աղօթքի մը կամ երգի մը առաջին բառը վերնագրի տեղ կը ծառայէ. ինչպէս՝ Եկեսցէ, Հաւատամբ, Փառը ի բարձունս, Այսօր դաս, Գոհանամք, Նորաստեղծեալ, Խորհուրդ խորին, Նայեաց սիրով ևն: Ճշմարիտ է թէ վերի արարողութեան մէջ առաջին բառն է Երանեալ, բայց որովհետեւ Երանեալ ըսելով կը հասկցուի «Երանեալ

է այր որ ոչ զնաց » սաղմոսը (և Հեղաւրանը), ուստի պատշաճ համարուած է հոսերկրորդ բառը առնելու: Թէ Ամբիծք ո՛չ թէ յատկապէս մեռելի կարգը, այլ նոյն Ապամոսը կը նշանակէ՝ յայտնի է անկէ որ նոյնը կը գտնենք նաև ուրիշ արարողութեանց մէջ. այսպէս օրինակ՝ Հաղորդ տալու կանոնին մէջ՝ Եւ ապա ասէ զամբիծման ի բուն (Մ. Մաշտ. 35 ա), Աւագ սարկաւագի ձեռնադրութեան կանոնին մէջ՝ Ապա առեն զամբիծըն ի բուն (Մ. Մաշտ. էջ 245 բ), Աղուհացից խաղաղական ժամու ժամերգութեան մէջ՝ Յաւուրս աղուհացից աստ ասի ամբիծըն, իսկ յայլ աւուրս Հայր մեր (Ժամագիրք, տպ. Վարշավ. 1903. էջ 820):

Ամպափարատ « ամպերը փարատուած, անամպ »: Միտք ձեր խառնակեալ և պլուտորեալ՝ ամպափարատ պարզ երկնից եղիցին նմանեալ. Մ. Մաշտ. 226 բ:

Ամօրանարուրիւն « ամօթ, ամշնալը »: Թողցէ զմեզս ձեր՝ զորս գործեալ իցէք... զկամայ, զգիտութեան և զանգիտութեան, ի մոռացմանէ և յամօթահարութենէ. Մ. Մաշտ. 226 բ:

Այդոց « Թաղման երկրորդ առաւոտը մեռելին վրայ կատարուած կարգը »: Մեծի Այգուցն է. Շարականն այգուցինն է.

Մաշտ. 561-585. (բառարաններուն մէջ կայ այդոց « վաղը », բայց այս առումը նշանակուած չէ):

Անպարտաւորելի «որ մեղաւոր չի կրնար համարուիլ»: Որ անպարտաւորելիդ էիր՝ պարտաւորեցար, զի զմեզս կողածնին չարչարանօք բո բարձես. Մ. Մաշտ. 384 ա:

Աշխարհակոծ « աշխարհին ողբ ու կոծ պատճառող »: Ընկալ զհոգի ծառայիս ցոյ, որ ելից զժամանակ պանդխութեան նըշդեհութեան իւրոյ ի վերայ երկրի և ընկալաւ զլուծումն յերկրաւոր աշխատութեանցս և յաշխարհակոծ պատրողական խարէութեանցս. Մ. Մաշտ. 353 ա:

Աշխարհանեղձ « աշխարհ խեղզող »: Ընկալաւ զլուծումն յաշխատութեանց և յաշխարհանեղձ պատրողական խարէութեանց. Մաշտ. 466 (նախորդին հետ նոյն է և անոր տարրեր ակը կը ներկայացնէ):

Առանձնակացուրիւն « մինակ կենալը, մենակեցութիւն »: Ուսուցանէ նմա զլուծիւն լեզուի և զառանձնակացութիւն. Մ. Մաշտ. 340 բ:

Աստուածահրաւէր « Աստուծմէ հրաւիրուած »: Զժամանեալս յաստուածահրաւէր կոչմունս ի կարգ բահանայութեան. Մ. Մաշտ. 270 ա:

Արդարավաստակ « արդար վաստակով

ապրող, անարդար շահ չփնտռող » Պատուիրել նմա (նորաւարտ աշակերտին) լինել ձշմարտախօս, արդարավաստակ, իրաւակշիռ. Մաշտ. 688:

Որենակցուրիւն «ազգականութիւն». Թուրին թռռնոր է չորրորդ, որ լինի եօթներորդ. և եզր արենակցութեան. Մ. Մաշտ. 228 ա:

Գաւազանեալիր «եպիսկոպոսին գաւազանը բռնած տանող անձը ». Եւ զինի մեռնակրին երթիցէ եպիսկոպոսն, ունելով ի ձեռին զմասնառութին՝ լի մեռնաւսքով. և զկնի նորին երթիցեն գաւազանակրին և այլքն՝ քշոցօք. Մ. Մաշտ. 174 թ. Եւ ինքն եպիսկոպոսն առեալ զբուրվառն... և զգաւազանակրին. Մ. Մաշտ. 184 ա:

Գերանանձար «շատ հանճարեղ ». Յօրինեալ սրբոյն Գրիգորի Տաթևացւոյ մեծի վարդապետի՝ գերանճանճար հռետորի. Մ. Մաշտ. 281 ա:

Գերեզմանօրինեկը «մեռելին գերեզմանը օրհնելու կարգը ». Աստի ասի գերեզմանօրհնէք. Մաշտ. 760 (տպուած է սխալ մամբ իբրև երկու բառ. պէտք է միացնել իբրև բարդ բառ):

Գոգնոց «փէտիմալ ». Վեցերորդն է զոգնոց սեղանոյն, իսկ եօթներորդն է սրբուոցն, զոր ի ներքոյ սկնւոյն սփառն. Մ.

Մաշտ. 176 թ. Կանոն՝ եկեղեցւոյ զգեստ օրհնելոյ, այսինքն շապիկ, ուրար, վակաս, չուրջառ, զոգնոց և զայլս. Մ. Մաշտ. 216 թ:

Գոյափոխել «հացն ու զինին Քրիստոսի մարմնին ու արեան փոխութելը ». Գոյափոխեցի յանապական և ի պատուական մարմին և արին միաձնի քո Յիսուսի Քրիստոսի. Մ. Մաշտ. 177 թ:

Գորփորայ «պատառան ի վերայ որոյ դնի սուրբ նշխարն ի պատարագելն ». Յամանն՝ յորում զգորփուրայն լուանաս, մի ինչ այլ մերձեցի. Մ. Մաշտ. 243 ա: (Այս բառը ունին Հին Հայկ, և Զախյ. բառ. իբրև փոխառութիւն լու. սօրորալիս հոմանիշէն):

Դոնապանուրիւն «դռնապանի պաշտօն, յատկապէս եկեղեցւոյ դռնապանի, որ է եկեղեցական առաջն աստիճանը ». Առաջին կարգ աստիճանի դռնապանութեան. Որ հրաւիրեցաւ ի պաշտօն դռնապանութեան. Մ. Մաշտ. 237 ա:

Եկեղեցաշէն «եկեղեցին շինել տուող բարերարը ». Եպիսկոպոսն առցէ ընդ իւր զեկեղեցաշէնն և զճարտարապետն. Եկեղեցաշէնն և ճարտարապետն ըստ ամենայն հանգամանացն ըստ արժանւոյն. հանդերձ եկեղեցաշինաւն և իշխանօք և ժողովը.

դովք և ճարտարապետաւն և նորին գործաւորօքն. Մ. Մաշտ. 156 ա:

Եղեմնածին «եղեամ յառաջ բերող կամ եղեամէ յառաջացած». Հողմն խորշակի կամ եղեմնածին սառնամնեաց դառնութիւն. Մ. Մաշտ. 212 բ:

Երդմնեցոցլուրիւն «եկեղեցական երբորդ աստիճանը, երդուեցնողի պաշտօնը». Երբորդ կարգ աստիճանի երդմնեցոցչութեան. Տուր զօրութիւն ծառայիս քո յայս գործ երդմնեցոցչութեան՝ յոր ձեռնադրի. Մ. Մաշտ. 238 բ. 239 ա:

Երեսապաշտ «մարդահաճ, կեղծաւոր». Մի՛ առնուլ կաշառ և մի՛ երեսապաշտ լինիցին. Մ. Մաշտ. 337 ա:

Եօրենապակ «եօթնիցս պսակեալ». ճշգրտագեղ ի տիպ զանազան, եօթնապակ շնորհօք պերճական. Մ. Մաշտ. 278 բ (Գանձ):

Եօրեօրեայք «մահուան եօթներորդ օրը՝ մեռելին վրայ կատարուած կարգը». (Կանոն) մեծի եօթնօրէիցն. Մաշտ. 586—598. (բառարանները զիտեն եօրեօրեայ ածականը, բայց այս ձեւը չունին):

Խաչանանգիստ «խաչալուայ, ջուր օրհնելը». կանոն խաչալուայ առնելոյ որ կոչի խաչահանգիստ. Մաշտ. 301:

Խաչվատ «խաչանիշ դրօշ. եկեղեցական

զարդ մը» . Գնան քահանայք ի տուն մեռելոյն շուրջառաւ, խաչիւ, խաչվառաւ, բուրժառաւ և մոմեղինօք. Մաշտ. 441:

Խարտաֆիլակ «կրօնաւոր ձեռնադրուող անձին օժանդակը». Եւ սարկաւագն կամ խարտաֆիլակն ածէ զնուիրեալն առ եպիսկոպոսն. Մ. Մաշտ. 237. տես նաև 240 բ. 242 ա. ևն: — Բառս առանձնապէս կը յիշէ Զախար. իսկ Նէմի թէն առանձին չունի, բայց կը դնէ րդրապան բառին տակ, իբրև փոխառութիւն յն. χարտօփύլառ «գիւանապետ, թղթապահ» բառէն:

Ծաղկետիսիլ «ծաղկի նման տեսքով». Զուարթասաղարթ, ծաղկեայտեսիլ (!) և հսկայաձև անձամբըս. Մ. Մաշտ. 24 ա:

Կատարերակազմ «կատարեալ կազմով, ո՛չ պակասաւոր». Զմի մարմին կատարելակազմ՝ զմարդոյ կամ զանասնոյ՝ ո՛չ ոք կարէ յերկուս հատանել. Մ. Մաշտ. 231 բ:

Կիսասարկաւագուրիւն «սարկաւագութեան երկրորդական աստիճանը». Հինգերորդ կարգ աստիճանի կիսասարկաւագութեան. Մ. Մաշտ. 240 բ:

Հարացօրինեկ «պսակի նախնական կարգը, այն է նորապսակներուն զգեստները օրհնել». Մաշտ. 121—4 (տպուած է սըխալմամբ իբր երկու բառ):

Համեստաբարոյ «համեստ բարբով,

պարկեշտ ». Պարզեցաւ սոցա, ՏԵՌ, զառողջ կեանս, զառաքինի վարս և զհամեստարարոյ երջանկութիւնս. Մաշտ. 705:

Հացօրհնելք « եկեղեցւոյն ընծայաբերուած թուչունները օրհնելու կարգը ». Կանոն Հաւօրհնէքի. Մ. Մաշտ. 89 բ. (սրխալմամբ տպուած է իբրև երկու բառ):

Հերեւիկոսապետ « հերձուածողներուն զլուխն ու պաշտպանը ». Եւ մեք աղօթիւք խնդրեմք յաստուծոյ՝ ընկնել զհերետիկոսապետն սատանայ. Մ. Մաշտ. 169 բ:

Հոգեւորեցուցանել « հոգեւոր կամ կրօնական արժէք տալ, սրբագործել ». Առի սրբել և հոգեւորեցուցանել զմարմնաւոր գործս ճարտարապետին փորուածոցն. Մ. Մաշտ. 157 բ:

Ջայնարուր « ձայնը լսուած, լսուելու արժանի եղած ». Զնոյեանն նաւահանգիստ դադարման ալեաց՝ ոգեվէրն խաղաղացեալ վրդովմանց, խորհրդակիր և ձայնալուր, արժանաւորեալ արթնացեալ սրբութեամբ. Մ. մաշտ. 274 բ:

Ղեկարափ « ղեկը ինկած՝ կորսուած ». Եղաք նաւարեկ ու ղեկաթափ և խոնարհեցաւ կայմն նաւալվարին. Մ. մաշտ. 1714, Էջ 386:

Ճկոյրամայր « մատնեմատ (որ ճկոյթին բո՞լի է և անոր մայրը կը համարուի) ».

Եւ ապա զմատանին զնէ ի չորրորդ մատըն (ճկոյթամայր) աջոյ ձեռին հարսին. Մաշտ. 119:

Ճշգրտագեղ « ճիշդ նման և զեղեցիկ նըկարուած ». Ոմն ծաղկող և պատկերահան, ճշգրտագեղ ի տիպ զանազան. Մ. Մաշտ. 278 բ (Գանձ):

Մահակրապ « մահը կապած ». Զմահ նոցա զժնեայ մահակրապ առեալ թանդ, կապ առեալ զադարեցուցանէ ի կէտ. Մ. Մաշտ. 1714. Էջ 441. Հմմտ. Եղիշ. չքչը. 247. « ի բազում տեղիս բազում անզամ զմահ կապէր »:

Մասնատուի « Հաղորդութիւնը պահելու աման, որ քահանան ծանր հիւանդին քով տանելով՝ անոր մէջէն հաղորդութիւն կուտայ ». այս իմաստով կը գործածուի բառս հիմայ, բայց « մեռնինի աման » մտքով է Մ. Մաշտ. 174 բ. Եւ զկնի մեռնակրին երթիցէ եպիսկոպոսն, ունելով ի ձեռին զմասնատուին՝ լի մեռնաւ սրբով »: Հմմտ. յաջորդը:

Միունեատուի « մեռն պահելու փոքր տուփ ». Ապա լնու քահանայն զսուրբ իւղն ի միւռնատուին և ասէ շարական. Մաշտ. 60:

Մորմոքալից « կսկծանքով լի ». Զտարակուսանսն մեղաւորացն որ ի կայմն

հոգւոցն և զմորմոքալից փոշեմանութիւն նոցա. Մ. Մաշտ. 339 ա:

Նշանօրմնեկը «նշանադրութեան կարգը».  
Մաշտ. 106-120:

Նոյնազարդ «նոյնպիսի զարգերով զարդարուած» . Եւ որ զարդարեաց զէակս ամենայն պէսպէս զեղապանծութեամբ , նոյնազարդ պայծառութեամբ հրաշազարդեսցէ զբեզ. Մ. Մաշտ. 254 բ:

Նորատիպ «նոր տպագրուած» . Ընկալ և այժմ զնորատիպ զիրս զայս ի ձեռաց մերց. Մաշտ. 384. (նորակերտ բառ՝ որ կշմիածնի հրատարակիչները մացուցած են Մաշտոցին մէջ):

Շորեղին «լաթէ շինուած» . Զի և այս նիւթս շորեղին արժանի լիցի սպասու եզեղեցւոյ քում սրբոյ. Մ. Մաշտ. 216 բ:

Ոզեյկը «հոգին վիրաւորող» . վկայութիւնը տե՛ս Զայեարուր:

Ռդորմարուն «բնապէս ողորմած» (!) Աղեք և սիրտք ձեր զազանացեալ և բարացեալ՝ եղիցին որպէս զզառանցն հեզոց և որպէս զողորմարուն արդարոցն հեզացեալ և կակլացեալ. Մ. Մաշտ. 226 բ:

Պայծառաշոր «փառաւոր, պայծառ և շքեղ» . Զգեստաւորեն զեպիսկոպոսն պայծառաշոր զգեստուքն. Մ. Մաշտ. 244 ա:

Պայծառափայլիլ «պայծառութեամբ փայ-

լիլ» . Պայծառափայլեցաւ շնորհս այս առ մեծ մարգարէն Մովսէս. Մ. Մաշտ. 335 բ:

Սաղարրակար «տերեններով կարուած» . Երկոսնան ճաշակելով մերկացան, պատեալ տերեկախիտ սաղարթակար. Մ. Մաշտ. 1714, էջ 441:

Սաղարրակարկատ «տերեններով կարկըտած» . Եւ սաղարթակարկատ տերեկովն հայթայթին ծածկեալ զմերկութիւն ամօթալի. Մ. Մաշտ. 1714, էջ 621:

Սպիտակակերպ «սպիտակ տեսացով» . ի լուսափետուր սպիտակակերպ երամս աղաւնեաց. Մաշտ. 623 (թձ՛լ):

Սփոր «բանի մը տակ փոելու լաթ» . Վկայութիւնը տե՛ս գոգեոց:

Վարդագեղ «վարդի պէս զեղեցիկ» . Բազմերանգ, ազգի ազգի գունովք, ծառովք և ծաղկամբք, բուսովք և անկովք, վարդագեղ, կարմրափայլ զարդարես. Մ. Մաշտ. 24 ա:

Վերադասիլ «վերը դասուիլ, վերը դասուորուիլ» . Շնորհեա նմա ընդ երջանիկ հայրապետացն վերադասիլ. Մ. Մաշտ. 363 բ:

Վերածնելուրին «վերածնութիւն» . Կանոն Աւագան օրհնելոյ՝ որ ունի զկարգ փրկութեան և յաստուածային շնորհս վերածնելութեան. Մ. Մաշտ. 189 բ:

Վերակրկնել « նորէն կրկնել ». Կրկնեսցն և վերակրկնեսցն ըստ առաջնոյն ամբողջապէս. Մ. Մաշտ. 157 թ:

Վերապատուիլ « փառաւորուիլ, մեծաւորուիլ ». Ծնորհեամ սմա յարդար դատաւորութեան քում ընդ Պետրոսեան աթոռակցութեանցն վերապատուիլ. Մ. Մաշտ.

369 թ:

Վիժան « վիճուած սաղմը, avorton ». Երանի թէ իբրև զվիժանն էի, որ աննկար կորեաւ և ոչ ետես զլոյս. Մ. Մաշտ.

1714, էջ 391:

Վիժակիր տես Քարակիր. Եւ թողեալ զայն ի գիրկս վիժակին, գայ անտի առ քարն. Մ. Մաշտ. 159 ա:

Վճռահատել « վճռել, վճիռ կտրել ». Եւ յաւարտ ընտրութեանն՝ մինչև վճռահատեսցն և զեզերս տեղւոյն նշանակեսցն. Մ. Մաշտ. 159 ա:

Տարիմուտ « տարելից ». Կանոն մեծի եօթն աւուր կամ քառամօրեայ և կամ տարեմուտ կատարելոյ. Մաշտ. 585. (Բառարանները կը նշանակեն միայն « կաղանդ, Ամանոր, Նոր տարի » նշանակութեամբ):

Տեսոնափայլ « աստուածային փայլով ». Եւ հաճոյական մաղթանօք՝ ընդ կղիայի արժանաւորիլ աստուածային և տեսանափայլ երեմանն. Մ. Մաշտ. 274 թ:

Տեօրհնեկը « Ծնունդին և Զատկին տուն օրհնելու արարողութիւնը ». Ծնորհնէք ի սուրբ Ծննդեան. Մաշտ. 836: Ծնորհնէք ի սուրբ Զատկի. Մաշտ. 847:

Տփափինափայլ « տպագիոն քարին պէս փայլուն ». Զյականց շափիւղայս տպագիոնափայլս. Մ. մաշտ. 24 ա:

Ցրտածեծ « ցուրտէն ծեծուած, ցրտահար ». Եւ փոխանակ ցրտածեծ և բոկագնաց լինելոյ. Մ. մաշտ. 1714, էջ 624:

Փարատել « սրբել, մաքրել ». Կանոն փարատելոյ զտուն նորածին մանկանց. Մաշտ. 321: (Այս նոր ասումները կը գտնուին նաև գաւառականներուն մէջ, հմմտ. վն. « թոնիրին մէջը լաթով մը սրբել՝ մաքրել », նիւ. « ծնունդին յետոյ տղոցկանին տունը օրհնել »):

Փոշիմանիլ « զղջալ ». Յաղթահարեալ ի բնութենէն՝ անկանի ի մեղս և սխալեալ փոշիմանի. Մ. մաշտ. 252 ա. Մի գուցէ սխալեալ իցէ և փոշեմանեալ, (և-ով). Մ. մաշտ. 341 թ:

Փորորար « ժամարարին փորին կապելու տեսակ մը զարդարուն գօտի ». Եւ զկնի առնու զփորուրար մի ժամարարի կարմիր և արկցէ ի վերայ շապկին ուղղակի. Մ. մաշտ. 190 թ:


Քարտակիր (որ և վիմակիր) «եկեղեցւոյ հիմնարկութեան ժամանակ օծելի հիմնաբարերը կրող անձը»։ Եւ տայ զիւրաբանչիւրմն ի գիրկս ի ժառանգաւորացն եկեղեցւոյ՝ ըստ պատուոյն պատշաճի՝ քարեկիր պատրաստեցելոցն յինքենէ։ Մ. մաշտ. 158 ա. նոյնը նաև էջ 159, 164։

Քեզահանոյ «քեզի հաճելի»։ Լինելինը իրբու զմի ի քեզահանոյ և ի բարեվաստակ արանց։ Մաշտ. 698։

Քեռտ «քնկոտ, շատ քնացող»։ Զի թէ տգէտ է կամ թերեհաւատ, կամ ծոյլ է և քնոտ, կամ ազահ է և արծաթասէր։ Մ. մաշտ. 342 բ։

Քոյինատունկ «քու տնկած»։ Ի քոյինատունկ զուարթասաղարթ զրախտին փափկութեան եղեալ։ Մ. մաշտ. 23 բ։

Քրիստոնեածին «քրիստոնեաներ ծնուցանող»։ Աւազանն սուրբ՝ իրբու որովայն քրիստոնէածին համարեալ է նմա։ Մ. մաշտ. 189 բ։



## ԳԼՈՒԽԻ ԻԶ.

### ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱԱՆԵՐ

ՃԱՇՈՑԻ ՄԵԶ

(տպ. Վ. ՊՐԵՊ. 1872)

ԾԱՆՈԹ. — Ճաշոցը կը պարունակէ իւրաքանչիւր օր եկեղեցւոյ մէջ կարդալու ընթերցուածները Աւետարանէն, Առաքելոց թղթերէն, Մարգարէութիւններէն. ևն։ Ըստ այսմ՝ գրքին ամենամեծ մասը անփոփոխ արտադրութիւն է Հին և Նոր կտակարաններէն։ Ասկէ զատ կան Տօնացոյցէն առնուած մասեր՝ որոնք կը ցուցնեն իւրաքանչիւր օրուան ժամապաշտութեան կարգը և մանրատառ տպուած են ընթերցուածներէն յետոյ։ Կան նոյնպէս մէկ քանի հայրապետական գրուածներ՝ որոնք են։  
1. Բարսղի կեսարացւոյ՝ Օքնութիւն ջըոյ (էջ 14-18). 2. Ջրօրհնեաց տաղեր՝ Յովհաննէս Պլուզի, Սորեկ կոստանդեայ, Գրիգոր կաթողիկոսի և Այսօր ձայնն հայրական (էջ 18-20). 3. Աւագ Եշ. օրուան Աղօթք սրբոյն Բարսղի (էջ 193-6). 4.

Աղօթք օրհնութեան ի վերայ ապաշխառողաց (էջ 196-199). 5. Սրբոյն Բարսզի « Լուարուց ինձ, որդեակը » (էջ 203-5). 6. Աղօթք Ռտնալուայի՝ արարեալ Սրբոյն Եփրեմի և թարգմանեալ Գրիգորի Վկայասիրի (էջ 205-6). 7. Յովհաննու Պլուզի բան վասն սիրոյ (էջ 208-9). 8. Դանձ և տաղ ոտնալուայի (էջ 210-211). 9. Աղօթք ի վերայ իւղոյն և ջրոյն (էջ 212-4). 10. Կտակ չարչարանաց (էջ 227-232). 11. Թուղթ Կիւրզի եպիսկոպոսի Երուսաղէմայ՝ առ Կոստանդիանոս թագաւորն, վասն երևելոյ նշանի սրբոյ խաչին յերկնից (էջ 368-370). 12. Աղօթք սրբոյն Յովհաննու Ռսկերեանի ասացեալ ի Ա. Երրորդութիւնն (էջ 459-62). 13. Ներսիսի Լամբրոնացոյ Ներբող ի Գալուստ ամենասուրբ Հոգույն Աստուծոյ (էջ 466-474). 14. Սրբոյն Եղիշէի վարդապետին վասն Այլակերպութեանն Քրիստոսի (էջ 549-556). 15. Աղօթք Ներսիսի հայրապետին վասն օրհնութեան խաղողոյ (էջ 595-7):

Կարդալով այս բոլոր զբուածները ուշադիր կերպով՝ կը գտնեմ հետեւեալ հայերէն բառեր՝ որոնք առնուած չեն Առձեռնի մէջ:

Ամենակեցուցանող « ամէնքը ապրեցնող ».  
Միոյ Աստուածութեանն անեղանելոյ...»

ամենակեցուցանողի, անմահի. (էջ 196 ա):

Ամօրալիր « ամօթալից ». Զանայր ծածւկել զամօթալիր զմերկութիւնն պատառատուն տերեւովն (էջ 193 թ):

Առատարոյս « առատ բուսնող ». Տացէ առատարոյս բարիս՝ աստ և ի հանդերձելումն (էջ 199 ա):

Գանձապետ « գանձատան վերակացու ». Ետ քեզ զօրութիւն յարուցանելոյ զմեռեալս և գանձապետ արար զքեզ (էջ 227 թ):

Գեղազանորիչն « գեղեցկութիւն ». Փառազարդ և լուսազգեաց գեղազանութեամբ, երևակի և պայծառ տեսակաւ (էջ 550 ա):

Եղեմեածին « եղեամէ յառաջացած կամ եղեամ յառաջ բերող ». Զմարախ, զջորեակ, զսուն եղեմեածին և զամենայն ցաւս (էջ 198 թ):

Զուարձազեղ « ուրախացնող գեղեցկութեամբ ». Այ գուարճագեղ տեսիլ կուսածին, զու թարշամեցար ըստ պասբեալ վարդին (էջ 231 թ):

Ժամակու « ժամահար, ժամ կանչող ». Օրհնեացէ Տէր Աստուած զժամակու քաղաքիս մերոյ, զի որպէս ձայն հրեշտակապետի յաղթող է առ ի զարթուցանել զննջեցեալս ի մահահանգիստ ընոյ (էջ 198 թ):

Ասակացուրիւն «լուռ մնալը», Եւ փունակ լուսակացութեան ձերոյ՝ անթառամպակօք զարդարեսցէ զձեղ (էջ 199 ա): Ծարաւակրտուրիւն «ծարաւ բաշելը, ծաշրաւէն նեղուիլը». Եւ փոխանակ ժուժկաւ լուրթեան ծարաւակրութեան ձերոյ՝ յանձական ազբերէն տացէ ձեղ ըմպել ջուր (էջ 199 ա):

Կենդանաստեղծի «կենդանի ստեղծուիլ, կենդանանալ»: Կորուսեալ ճաշակմամբ պաղոյն և մահացեալ՝ վերստին ի սոյն ժամու դարձեալ կենդանաստեղծի չոգոյդ սրբոյ իշմամբ (էջ 459 թ):

Կոշտանալ «կոչտ ու կոպիտ բան մը դառնալ»: Ո՞չ կոշտացեալ և խոշորացեալ (էլ) մարմին (Յիսուսի) (էջ 227 թ):

Հարկաւորիլ «պէտք գալ, պէտք ըլլալ»: Եթէ ըստ ցուցանելոյ տարեգրոյն՝ չորրորդ կիւրակէ հարկաւորեսցի (էջ 43 թ և 583 թ). Եթէ հինգերորդ ևս հարկաւորեսցի... Եթէ վեցերորդ կիւրակէ հարկաւորեսցի (էջ 583 թ):

Ուրօրեայք «Ծնունդէն յետոյ ութ օրուան միջոցը»: Յետ ութօրեիցն տօնք եթէ տօնիցին՝ սոքա են (էջ 43 թ). Առձեռնը գիտէ միայն իրը ածական և այս առումը չի նշանակեր. ժողովրդական լեզուին մէջ գործածական է ուրօրեկը ձևով:

Զրամեղանուրիւն «ջուրի մէջ իւեղդուիլը»: Պահեա՛, Տէր, ... ի զլորմանէ, յընկդմանէ, ի հրկիզութենէ, ի ջրահեղձութենէ (էջ 555 թ):

Վարդեղին «վարդէ շինուած, վարդէ բաշուած», Զարդարեսցն զնա ուհանով և վարդեղէն ջրով (այն է՝ վարդաջրով) (էջ 632 թ):

Վերարրիլ «նորէն մաքրուիլ»: Որ ջուր՝ ըստ ստեղծուած, ծով՝ ըստ արարած, որպէս զկարօտ ինդրես վերասրբիլ (էջ 19 ա):

Տպայամտուրիւն «տղի խելը ունենալը, անմտութիւն»: Վասն որոյ դու զողայամը տութիւն նոցա՝ նախ նշանօք և սքանչելեօք զարմացո՛ (էջ 471):



ԳԼՈՒԽԻ ԻՒ·  
ՀԱՅԵՐԻՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ  
ՇԱՊՈՒՀ ԲԱԿՐԱՏՈՒՆԻՑ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵԶ  
(տպ. Եջմիածին 1921)

---

Մեր հին մատենագիրները առհասարակ կրօնաւոր եղած են և անոնց գրական լեզուն միշտ գրաբարը եղած է՝ իրքեւ եկեղեցական լեզու։ Միակ անձը՝ որ այս երկու կողմերով բացառութիւն կը կազմէ, Շապուհ Բագրատունին է։ Ասիկա Աշոտ Ապիհիւպատի որդին էր, հետևաբար իշխանական ծագումէ, և չընդունեց կրօնական կոչումը. զրեց Բագրատունեաց սկզբնաւորութեան պատմութիւնը, բայց փոխանակ ժամանակի սովորութեամբ գրաբար զրելու, ձեռք առաւ այն ատենուան ժողովրդական բարբառը։ Իր զիրքը հասած չէ մեզի, բայց իր մասին տեղեկութիւն կու տան ժամանակակից և յաջորդ պատմագիրները, զլիաւորապէս Յովհ. Կաթ. Պատմաբան (այսպէս են Յովհ. Կաթ. յոջ. և զլուխ Իդ, Իլ, Իթ, Ասողիկ Բ.

զ. Աւիտ. Ա. հե. Միաթ. Անեցի ե. Կիւրակոս Էջ 3,44):

Նորերս ձեռք է ինկեր Վանի և Մուշի կողմերէն բերուած անպիտան ձեռագիր մը, որ շատ պակասաւոր ըլլալով՝ ո՞չ խորագիր ունի և ոչ յիշատակարան։ Չեսապիրը շատ յիտին է, Ժի-Ժիթ դարերու գրչութիւն և գրիչն ալ այնքան տգէտ ու ողորմելի՝ որ մինչև անզամ բնար զրելու փոխարէն գնար կը զրէ։

Առաջին անգամ ձեռագրիս քննութեան ձեռք է զարկեր Միաթան (Գալուստ Տէր-Մըշրտչեան), այժմ հանգուցեալ, և ինչպէս կ'ըսուի, վերապահութեամբ յայտներ է իր մօտիկներուն թէ սոյն պակասաւոր և անխորագիր ձեռագրիր Շապուհ Բագրատունոյն պատմութիւնն է։ Հասկանալի է թէ բանասէրներուն համար ինչպիսի հըրճուանը պիտի ներշնչէր այս զիւար, մնար ահա ձեռքի տակ պիտի ունենայինք ո՞չ թէ լոկ նոր պատմագիր մը, այլ թ. դարու աշխարհիկ լեզուն...։

Այս նկատումներով ահա « Եջմիածնի զիւական ինստիտուտը » (կաճառ) հրատարակութեան կու տայ սոյն ձեռագիրը՝ աշխատութեամբ Մեսրոպ եպիսկոպոսի, որմէ զրուած է նաև Յ4 էջ յառաջարան մը (Եջմիածին 1921):

Այս յառաջարանը ուսումնասիրութիւնը  
մ'է Շապուհի անձին և զործին նկատ-  
մամբ։ Մեսրոպ եպիսկոպոս կ'աշխատի  
ապացուցանել՝ որ յիշեալ անխորազիր  
ձեռագիրը Շապուհի զործն է։ Դժբախտա-  
բար Միաբան այս մասին ոչինչ չունի.  
և իր դատողութիւններն ու փաստերը՝  
որպէս, (ինչպէս կ'ըսուի) հասեր է այդ եղբա-  
կացութեան՝ մեզ իսպառ անձանօթ պիտի  
մեան։

Մեսրոպ եպիսկոպոս ի մի հաւաքած է  
այն բոլոր տեղեկութիւնները՝ որ արուած  
են Շապուհի և իր զործի մասին՝ զանա-  
զան պատմազիրներու կողմէ։ Այս տեղե-  
կութիւնները կարելի է ամփոփել հետեւեալ  
ձևով։ Շապուհ զրեր է Բագրատունեաց  
թագաւորութեան սկզբնաւորութեան պատ-  
մութիւնը, մանրամասն Աշոտ Ա.ի պատ-  
մութիւնը և Սմբատ Ա.ի զործերը. իր  
զրածը ժամանակին աշխարհաբարովն է։

Սակայն ներկայ ձեռագրին նիւթն է  
նախ Հացունեաց Խաչին պատմութիւնը  
և յետոյ Վասպուրականի քանի մը իշ-  
խաններու պատմութիւնը, այսպէս՝ Դերէն,  
Տաճատ, Աշոտ, միւս Դերէն և Գուրգէն  
Արծրունի։ Աշոտ կամ Սմբատ Բագրա-  
տունի թագաւորներու մասին առանձնապէս  
առնելով՝ խօսուած է շատ հարեանցի կեր-

պով և կամ միայն այն պարագային, երբ  
Արծրունիները դէպքին խառն են։ Այսպէս՝  
երբ Բաղդատի Մահմէտ խալիֆան կ'ար-  
շաւէ Այրաբատ և կը զրաւէ Գուին քա-  
ղաքը, ասոր կը տրուի 2 տող, իսկ երբ  
անկէ կ'արշաւէ Վասպուրական, կը տրուի  
մէկ երես (էջ 50): Քանի մը էջ յետոյ  
(էջ 55) Տաճատ Արծրունին ամբողջ  
Հայաստանի տէր, նոյն իսկ Բագրատու-  
նիներու վրայ գերիշխան կ'ըլլայ։ Սմբատ  
Ա. Բագրատունոյ մասին կը խօսուի կէս  
էջ և կը յիշատակուի իր տիրապետութեան  
լայն սահմանները։ Բայց այս բոլորը անոր  
համար՝ որ հանգամանօրէն պատմէ Սմբա-  
տի ըոյը Հրանոյշի մասին և ասոր ամուսին  
Դերէն արծրունոյն սիրային շահատակու-  
թիւնները մահմետական Գուլինար իշխա-  
նուհին հետ (օ<sup>1/2</sup> էջ)։ Բաւական ընդար-  
ձակ կը պատմուի Մուսուլի իշխան Հա-  
պիպի արշաւանքը և կոփէր Սմբատի հետ,  
բայց անոր համար որ ամբողջ կոփւնե-  
րուն առանցքը Ապումրուան արծրունոյն  
վրան է։ Ամբպատականի իւսուփ սոտի-  
կանի կոփւները՝ որ Սմբատ Ա.ի կեանքին  
ծանր և դժբախտ զրուագները կը կազմեն՝  
կէս էջ տեղ միայն կը բռնեն։ Ասոր հա-  
կառակ շատ ընդարձակ է Սմբատի և  
Ափիսազաց Գոտաս թագաւորին կոփւներու

պատմութիւնը, որովհետեւ այս կոիւներուն  
մէջ ամէնէն ակնառու դերը Գուրգէն, ար-  
ծրունին կը կատարէ:

Այս բոլորէն կը հետեւ որ ներկայ  
ձեռագիրը Արծրունեաց պատմութիւնն է  
և ոչ թէ Բագրատունեաց, հետեւարար պէտք  
է որ ըլլայ Արծրունի զրչի գործ. չե-  
կրնար ըլլալ Շապուհի աշխատութիւնը,  
որ Բագրատունի է և Բագրատունեաց պատ-  
մութիւնն է գրած: Մեսրոպ եպիսկոպոս  
այս կէտը արդարացնելու հա մար կ'ըսէ՝  
թէ ձեռագիրը պակասաւոր է, և կորսուած  
մասերուն մէջ գտնուած ըլլալ կը կարծէ  
Բագրատունեաց գործերը: Բայց ասոր հա-  
կառակ են նոյն իսկ եղածները: Երբ պատ-  
միչը (էջ 65) Ամրատի աշխարհակալու  
թիւնները կէս էջով կը պատմէ և այն  
ձեռվ՝ որ նիւթը արդէն սպառած է, այլ  
ևս զուր է կարծել որ ուրիշ տեղ նորէն  
սկսած և աւելի ընդարձակ պատմած ըլլայ:  
Երբ իւսուփ ամիրայի մանկութիւնը և  
անոր յարաբերութիւնները Ալի ամիրապետի  
հետ մանրամասն կը պատմէ (չորս էջ)  
և յետոյ կէս էջ միայն կու տայ իւսուփի  
և Ամրատի կոուին, պէտք չկայ կարծելու  
որ նորէն ետ կը դառնայ և այլուր աւելի  
ընդարձակ կը պատմէ նոյն դէպքը:

Վերջին և հիմնական պատճառաբանու-

թիւն մ'ալ լեզուն է: Զեռագրին լեզուն  
ոչ միայն գեղջուկ բարբառ չէ, այլ և  
նոյն իսկ շատ աւելի զրաբար է՝ քան  
Վարդան Պատմիչի լեզուն: Գեղջկութեան  
նշան պէտք չէ համարել այն մի քանի  
տառասխալները (բուր փոխանակ բոյր ևն),  
որոնք ագէտ զրչին անշնորհըութեան ար-  
դիւնքն են: Մեսրոպ եպիսկոպոս այս կէտն  
ալ արդարացնելու համար կ'ըսէ թէ Յովհ.  
Կաթողիկոս ևն: «գեղջուկ լեզու» ըսելով՝  
հասկցած են ոչ թէ բարբառը, այլ պատ-  
մելու ոչ-դասական, ոչ-հոեւտորական ձեր,  
որ իրը թէ գտնուի ձեռագրին մէջ: Բայց  
չեմ կարծեր որ ասիկա ճիշտ ըլլայ: Յով-  
հաննէսի գեղջուկ բառը ամէն հայկարան  
ալ «ուամիկ լեզու» հասկցած է, ասկէ  
զատ ձեռագրին պատմութեան ոճը ոչ մի  
բանով չի տարբերիր մեր անկեալ շրջանի  
հեղինակներու ոճէն:

Ենթագրեալ Շապուհ Բագրատունւոյն  
պատմութեան մէջ կը գտնեմ հետեւեալ  
նորագիւտ բառերը:

### 1. անգնայ

ԶԱՀՈՒ անդրանիկ եղբայրն ըո կապեց  
չարաչար կապանօք, մինչեւ անգնայ մահ  
եղել ի ամբողջին Նկանայ (էջ 84):

Աշուածի բանտարկութեան մասին խօսուած է նաև էջ 71, բայց մահուան մասին յիշատակութիւն չկայ: Անգենայ բառ մը զոյութիւն չունի. կ'երեայ թէ պէտք է կարդալ անդ նա. (Շապուհի զրիչը շատ անգամ կը զրէ նայ փոխանակ նա). ըստ այսմ կը հասկցուի «մինչև որ հոն անիկա մահ գտաւ՝ Նկան ամրոցին մէջ»:

### 2. ապիկարել

Արդ՝ եթէ արասցես զիսնդրուածս իմ, նոյն օրհնութիւն հաստատեսցի ի վերայ քո. ապա թէ յանդզնեսցիս ցասմամբ և ապիկարասցես զրանս իմ, ... նկուն արասցէ Տէր Աստուած զքեզ (էջ 27):

Կը նշանակէ «արհամարհել, կարեռ բութիւն չտալ, բանի տեղ չդնել»:

### 3. ապտկաց

Երեվարք զօրացդ խրթնասցեն և մի՞ կարասցեն գնալ զմանապարհօք և աւար առնուլ զոր խնդրեսդ և ապտկաց ամբոխանք (էջ 27):

Ոմէն կողմէ անսույգ է բառս, որովհետև հատուածը պակասաւոր կ'երեայ, որով և տեղէն դատելով իմաստ մը տալ

չենք կրնար. մանաւանդ որ ձեռագրին աւ լնթերցուածը մեզի յայտնի չէ: Բնագրին մէջ հրատարակիչը զրած է ապակաց, բայց ծանօթութեանց մէջ կը զրէ տպակաց. աւ սոնցմէ ո՞րն է ուղիղ. վերջապէս բառը ուղղական է, թէ յոգ. սեռ. որով ուղղականը պիտի ըլլար ապտիկ կամ ապտուկ ձև մը:

### 4. արեւանք

Եւ զհետ մտեալ մինչև արեանքն՝ անհինայ կոտորեցին զայլազգիսն (էջ 62):

Բայտ հրատարակչին թերես կը նշանակէ «արեին մայր մտնելը», իբր կազմուած արև. + անկ բառերէն: Այս մեկնութիւնը հաւանական է, եթէ արևամբ տեղի յատուկ անուն չէ: Բարբառներու մէջ նման ձեռվ բառ մը չկայ:

### 5. աւանդ

Ունիք զտէրութիւնդ Զարեանդ զաւառի և զաւանդ բաղաքն Հերայ, զգլուխդ Պարակց (էջ 67):

Բռնութեամբ առեր զամենայն կողմանս արեմտից, մինչև հասար յաւանդ բաղաց ի Պարտաւ (էջ 72):

Տեղէն կ'երևայ որ կը նշանակէ «զլուկ»,  
մեծ քաղաք, chef-lieu ». այլուստ ան-  
ձանօթ է:

#### 6. բանդար

Եւ նա կոչեաց զբանդար, որ կարդա-  
ցած էր ի գուռն նորա, զտեսուչ զօրացն  
Պարսից և ասէ. «Ա՛ռ զայս երկու մա-  
նուկս և հովուեա զնոսա որպէս արժան  
է և տե՛ս, զի որդիք են ամիրային Ապու-  
սէճայ»: Եաւ և երես ի հոգացողք զնոսա  
բանդար և ասէ (Էջ 76):

Կրնայ ըլլալ յատուկ անուն, բայց  
կրնայ ըլլալ պաշտօն մը: Եայ պըս. յա-  
bandar որ կը նշանակէ «նաւահանգիստ»  
յայտնի են օրինակ Պարսկաստանի նշա-  
նաւոր նաւահանգիստները Պահտարգեալ,  
Պահտարարաս՝ կասպից ծովին և Պարսից  
ծոցին վրայ: Ասկէ զատ bandar տաճ-  
կերէնի մէջ դարձած է «մեծ, նշանաւոր».  
Կ'ըսուի օր. bender շehir dir «մեծ քա-  
ղաք է»: Ասկէ է նաև տճկ. sah-bender  
«հիւպատոս», որ բուն կը նշանակէ «քա-  
ղաքի մը թագաւորը»: Կրնայ ըլլալ որ  
յիշեալ բանդարն աւ վերի ձեւն յառա-  
ջացած ըլլայ:

#### 7. բաստ

Ապա է՞ր է զի նստիս ընդ զըռւց քա-  
ղաքին. բաստ է. այս քաղաքս ըո է և  
այդ բարձր աշտարակս զի՞ է քեզ. ասա  
ինձ (Էջ 43):

Արդի Պարսկաստանի մէջ շատ սովո-  
րական է տ. bast. երբ մէկը կտուավա-  
րութեան կողմէ հալածուած է կամ երբ  
ժողովուրդը պետութեան դէմ ցոյց կ'ուզէ  
սարքել, տունը տեղը կը թողու և կ'ա-  
պաստանի մզկիթ մը, սրբատեղի մը, փոս-  
տատունը կամ այլ անբոնաբարելի վայր  
մը և մէկը իրաւունք չունի զանոնք այն  
տեղէն գուրս հանելու: Վերի հատուածին  
մէջ աւ կը թուի թէ բաստ բառը այս  
իմաստով է. բայց կը յարմարի՝ եթէ առ-  
նենք հարցական. — բաստ է հոս որ նըս-  
տած ես:

#### 8. գազազիլ

Եւ հայեցեալ ամիրապետն և ասէ զա-  
զակելով ընդ հճեպն, թէ Ո՞վ է սա (Էջ 78):

Կը գտնուի նաև արդի բարբառներուն  
մէջ (Երևան, Լոռի, Ղազախ) և կը նշա-  
նակէ «նեղասրաիլ, զայրանալ, բարկու-  
թենէն կատղիլ»:

## 9. գոռոշել

Արտասուեաց և գոռոչեաց և եհարց  
լալով և ասէ (էջ 54):

Կը նշանակէ «գոռալ, գոչել» և կազ-  
մութեամբ ճիշտ այնպէս է՝ ինչպէս հաշել  
- հասածել, բաւել-բառաւել, շաչել-շառաւել  
և մանաւանդ կոչ-կոռոչ, կայ նաև բառիս  
գոյականը՝ գոռոչ ձեռվ (Մարթին):

## 10. գուն

Եւ ասէ. «Հեծիր, որդեակ Դիրէն, ին-  
չի՞ գուն ես»: Եւ ասէ Դիրէնն ցհայր իւր.  
Լուր, իշխան, զարմացեալ եմ թէ... (էջ  
63):

Պատասխանէն կ'երեի որ գուն (կամ  
թերևս իգուն, եթէ կարդանք ի՞նչ իգուն)  
կը նշանակէ «զարմացած, շփոթուած,  
ապշած»: Կայ և պրս. Կնք ցոց  
«համը», որ կրնայ նոյնպէս յարմարիւ  
տեղին:

## 11. դարպացի

Եւ մտեալ ի (յ)արբունիս իւր... զար-  
հուրեցաւ և կանչեալ ահեղ՝ մինչև ամե-  
նայն զարպացիին զարհուրեցան (էջ 32):

Կը նշանակէ «պալատական, դարպա-  
սին մէջ բնակողները»:

## 12. դերի

Ու հայր նորա Սահակ կոչեաց մանկան  
անունն Դիրէն, որ կոչի որդիի վանաց  
(էջ 38): Ասոր հետ հմտա, թովմա Արծր.  
Ե. Յ(ապ. Պետեր. էջ 280) համապա-  
տախան հատուածը. «Իշխանն Գրիգոր՝  
անուանեալն Դիրանիկ, որ թարգմանի  
ուխտիւը խնդրեալ ի Տեառնէ»:

Երկու հեղինակներու այս ստուգաբա-  
նական բացատրութիւնը կը ցուցնէ որ  
հայոց մէջ կար դեր- ձեռվ բառ մը «վանք  
կամ իուտ» նշանակութեամբ: Նչի կը  
համարի «տէրունի կամ համառօտեալն  
բառիս անդրանիկ»: Հիւնքեարպէյէնտեան  
(Պտուգ. Բառ.) կը կցէ պրս. Թէրահի  
«նոր պտուզ»: Այս երկուքն ալ անյար-  
մալ են. աւելի լաւ է հրատարակչին հա-  
մեմատութիւնը արդի գաւառական դերի  
ձերին հետ: Այս բառը կը գտնենք Ախալ-  
ցըսա, Բարերդ, Կարին, և կը նշանակէ  
«զիւղական տօնախմբութիւն», հանդէս՝  
խալերով ու պարերով, ուխտագնացութեան  
կամ տօնական օրերու ժամանակ. տնկ.  
փանայիր»: նոյնը Բիւթանիոյ բարբառով

դարձած է «տեսակ մը պար»։ Բայց աւելի լաւ է Մշոյ բարբառով դերինակ։ հմտ։ Վարդավանին Ա. Կարապետ պիտի երրանք դերինակ ընելու. Ա. Կարապետի դերինակը փառաւոր անցաւ։

### 13. զանանառ

Այս հետաքրքրական բառը քանի մը անգամ գործածուած է Շապուհի մէջ, զանագան ձերով։

1. Իսկ Դերէն առ զձիս և զանանառու զօրացն Մահմետի և զբազումս ի նոցանէ կոտորեալ և դարձաւ մհծաւ յաղթութեամբ (էջ 50)։

2. Ի աւարէն որ առին և զրէնս և զսաղաւարտս ի ամենայն զանանառին այլազգեցն (էջ 62)։

3. Եւ նա յորժամ լսեց՝ ձի ուզեց և զրահ և սաղաւարտ, իսկ այլքն զարմանային և ասէին. Իշխան, որդին քո է. զիարդ խնդրես զանանառս պատերազմի (էջ 63)։

4. Դուք յորժամ լսեցիք զգալն իմ առձեզ՝ ձի ուզեցիք և զանոյժառ (էջ 63)։ Կան նաև բառիս կրկնն բայական ձերը։

5. Ընտրեցէք ազատաց բոց սուսերս

և սումբս և զրէնս և սաղաւարտս... և ապա հագան և զանանառեցին ինքն և ազատը իւր (էջ 59)։

6. Եւ կոչեաց ամիրայն զիշխանն Աշոտ և զազատքն նորա և զանանառեցոյց զնոսա։ Եւ ասէ ամիրայն. Լուր, իշխան Աշոտ, եթէ յաղթես... (էջ 60)։

Այս բոլոր օրինակներէն կ'երկի որ բառին ուղիղ ձեն է զանանառ «զէնք ու զրահ» նշանակութեամբ, ասկէ կազմուած են զանանառել «զինաւորուիլ», զանանառեցոցանել «զէնք ու զրահ հազինել»։ Առաջին օրինակին մէջ զանանառս հայցական է, բայց զ նախորդին ստացած չէ. առաջին բաղաձայնը չենք կրնար համարել նախորդիր, որովհետև բայական ձերն ալ ունին նոյն զ ձայնը։ Երկրորդին և չորրորդին մէջ (զանանառ, զանոյժառ) պէտք է տեսնել զրչազրական սխալներ՝ որոնք իւրար կը հերքեն։

Կազմութեան կողմէ զարմանալի է բառս. վերջին մասը անշուշտ անառ բառն է, որ Ոսկեղարքն ալ ծանօթ է մեզի «ծիռ զարդ, սպաս, հանդերձանք» իմաստով. բայց լնէ է զանե-։

## 14. զԵՐԾ

Առեալ թագաւորն զսուրբ խաչն զերթ  
ունէր ի ձեռինն և հարեալ զջուրն երիցս  
անգամ և հանեալ զխաչն կանգնեաց ընդ-  
դէմ նաւերուն (էջ 23):

Անյայտ բառ է. հրատարակիչը կ'ուզէ  
ուղղել զոր. (իբր թէ զոր ունէր ի ձեռինն).  
Բայց կը նաև զրիչը այսքան հասարակ բառ  
մը այսքան կոպիտ կերպով աղաւաղել:

## 15. զԻՐԵԼ

Եւ դէմ եղեալ երթեալ ի վերայ Դար-  
բանդին, և առեալ զքաղաքն Դարբանդ,  
և ել պատերազմ և առեալ զամրոցն որ  
ի վերայ զբանն Ալանաց, և առեալ զնա-  
զիրեաց ի վերայ նորա անառիկ երկա-  
թակալ դրանն (էջ 18):

Բառս այլուստ ծանօթ չէ ինձ. հրա-  
տարակիչը կը համարի աղաւաղուած բառ,  
թերես ըլլայ տիրեաց?

## 16. զՔԱԻ

Եւ նա յորժամ լսեց՝ ձի ուզեց և զքահ  
և սաղաւարտ (էջ 63):  
Հրատարակիչը կ'ուզզէ զրահ: Անշուշտ

իրաւացի է, որովհետեւ քահ կամ զքահ  
ճէ մը չկրցայ գտնել ո՛չ բարբաներու,  
ո՛չ թուրքերէնի և ո՛չ ալ սրարսկերէնի մէջ:

## 17. ԹՈՐԱՅ

Զեռք արանց պատերազմողաց թուլաս-  
ցին և աղեղունք նոցա փշրեսցին. զէնք  
թորայ մի՛ կարասցեն տալ խոց թշնամեաց  
քոց և երիվարք զօրացդ խրթնասցեն (էջ  
27):

Թորայ բառը այլուստ բոլորովին անծա-  
նօթ է. Հրատարակիչը Ոսկեփորիկի հա-  
մազատասիւան հատուածին մէջ գտնելով  
«զէնք ձեր», վերի ձեն ալ կը սրբազրէ  
զի՞ք զօրաց:

## 18. ԺԱՄԱԼ

Այս բառին վրայ բաւական խօսած ենք  
արդէն այլուր (տե՛ս իմ Հայերէն նոր բա-  
ռաեր՝ հին մատենագրութեան մէջ, Վենետիկ  
1913, էջ 92): Բոլորի ամփոփումն այն  
է՝ որ ժամակ՝ «զեղ, զարդ» բառ մը  
չկայ հայերէնի մէջ, այլ այդպէս զրուած  
ձևերը ձեռագրական սիսալներ են, որ  
պէտք է կարդալ ժամանակ:

Բամածներս հաստատելու համար գտած

եմ նաև նոր օրինակ մը՝ Ոսկեբերանի Յովհաննու մեկնութեան մէջ (տպ. Պօլս 1717). Հա. Բ. գլուխ 12, էջ 626 Բ. «ի ժամակս հնձոցն՝ ուր բազում թուեսցի տապն, ոչ ի տան նստիմք, այլ և ի գոեհս ճեպով ընթանամք»։ Հու ժամակ բառը պարզապէս տպազրական սխալ մ'է միայն և պէտք է կարդալ ժամանակ։

Յն. Որչ «գեղ» բառը շփոթելով սու վորական արա «ժամ» բառին հետ՝ հյ. Ժամանակ թարգմանելու սխալ մ'է նաև Պատմ. Աղեքս. 99 այն հասուածը, ուր Դարեհի հագուստը նկարազբելով՝ կ'ըսուի։ «Եր յրկեալ կազմ կերպարանացն ձև և ի միջի ժամանակին անցեալը»։

Վերջապէս Շապուհ Բազրատունոյն ձեռագիրն ալ ունի նման օրինակ մը։ «Տէ՛ր, ընկալ զմանուկս զայս ի զրկաց իմոց, որպէս զլամուէլ ի հին ժամակին» (էջ 38), ուր ժամակ պէտք է ուղղել ժամանակ։

### 19. Խաղարար

Յորժամ առաւտա լինէր՝ գային սովորականքն փողահարքն և զնահարքն (կարգադահարքն կամ վեահարքն) և տաւեղահարքն և խաղարարիքն, կաբաւէին առաջի նորա (էջ 40)։

Կը նշանակէ «պարող, կաքաւող, խաղցող», կազմուած իսաղ բառին ժողովը՝ դական «պար» նշանակութենէն։

### 20. Խուասաւ

Եղիցի Խամայէլս այս յազգ մեծ և ձեռն նորա ի վերայ թշնամեաց խրոց, որպէս գաւազանն խոսսաւ, արք սորա՝ տէրք, և կանայք սորա՝ տիկնայք, և զպարարութիւն (յ)երկրի կերիցես (էջ 27)։

Բառս այլուստ անձանօթ է. ըստ համեմատութեան հրատարակչին՝ Ոսկեփորիկի մէջ նոյն հատուածին ընթերցուածն է խարտառ, որ նոյնպէս իմաստ չունի։ Խամայէլի համար ըսուած խօսքերը կը գտնուին Ծնն. ժգ. 12, մէ. 20, իս 13, որոնց մէջ սակայն «խոսսաւ զաւազանը» ակնարկող բառ չկայ։

### 21. Խամակար

(Խօսելով Դերէնի մասին, որ ամբողջ օրը բոլորը՝ ծանօթ ու անծանօթ կը հիւրասիրէր երգով և ուտելեղէնով, կ'աւելցնէ)։ Զարմացան նորա և ասեն. Ո՞րպէս համակար է առնել զայն (էջ 44)։

Համակար բառը Շապուհ ունի նաև

երկու տեղ (էջ 26 և 81), բայց երկուքն ալ յատուկ անուն են: Առձեռն Բառարանը զիտէ համակար բառ մը՝ «համազօր» իւմաստով, որ սակայն հոս յաբմար չէ: Բայտ այսմ բառս կը մնայ անորոշ, մասնաւանդ որ նախազասութիւնը եղծուած կ'երեայ. և թերես ուղղելի՝ Որպէս համա... կարէ առնել զայն:

## 22. հարիրել

Եւ ծովն ամբոխէր և վերանայր ալիքն մինչեւ յերկինս. և զնաւս այլազգեացն բերէր հարհրէր ընդ յիրար և զարկնէր ընդ պարիսպս քաղաքին (էջ 23):

Կրկնուած է հարուշ բայէն և կը նշանակէ «բաղիսել, զարնել». կը գտնուի նաև արդի գաւառականներուն մէջ, ինչ հարհարել (Ղարաբաղ) «զարնել, ցնցել, շարժել», հարհարուիլ (Ղազախ, Ղարաբաղ) «շարժուիլ, ցնցուիլ, երկար ատեն շարժուելով տրորուիլ, մարմնին մէկ մասը բանի մը բսուելով բսուելով վնասուիլ, կեղ բացուիլ», հարհրել (Ակն) «շարունակ հարել (թան, մածուն)», հարհրիլ (Փոլիս) «յոգնութենէն ուժասպառ ըլլալ, ծարաւէն պապակիլ», են:

## 23. հօշ

Լսեմ թէ Դերենիկդ՝ որ իմ փեսայ է, զՊուլինար քոյրն ձեր սիրէ: Զամաչէք դուք զայդ տալ առնել. ամենայն հաւատի ճաւշը. էք (էջ 67):

Հրատարակիչը այս բառը կը համարէ ձօշ «զրահ, կուրծքի զրահ», որմէ կը շինէ ձօշել «կուրծք դէմ տալ»: Բայտ իս ասիկա ստոյգ չէ. նախ որ ձօշ ձեէն (= արար. և պր. շոշ յաւՏ) չի կրնար ձևանալ ձօշել, իսկ եթէ ձևանայ ալ՝ կը նշանակէ «զրահաւորել, զրահ հազցնել» և ո՛չ թէ «կոռուիլ»: Վերջապէս տեղույն յարմար չէ «կոռուիլ, կուրծք դէմ տալ», իբր թէ «բոլոր հաւատի մարդոց կուրծք էք դէմ տուած»:

Ես կը կարծեմ որ ձօշ կը նշանակէ «բամբասանք», ինչպէս ունի և փուչակ. ասկէ է ձօշալ «չարախոսել, թշնամանել, բամբասել». հմմտ. Ես զպնահար եմ և ամօթով, վասն անզիտաց զմեզ ձօշալով. Կոստ. երգն. 135: Բառս կենդանի է նաև արդի գաւառականներու մէջ. այսպէս ձօշը «բամբասանք, վէճ, կորւ» (Ղազախ, Մուշ, Տիլիսի), ձոշել, ձոշալ «բամբասել» (Մուշ, Շամշուլդէ, Վան, Տիլիսի):

Բայտ այսմ վերի հատուածը կը նշա-

նակէ «ամէն կրօնի մարդոց բամբասանքի՝  
նախատանքի առարկայ դարձել էր»:

#### 24. մանտար

Եմուտ ի պարտէզն իւր և սկսաւ զմեածամեծ բանջարս տակցի խլել և առեալ զմանտարն տունկ արկանել ի տեղի մեծամեծացն (էջ 3):

Գրուածքին ձևէն կ'երեայ որ մանտար տեսակ մը տունկ ըլլայ, մանաւանդ երբ աչքի առջև բերենք թրք. մանրար «սունկ» բառը: Բայց հատուածը այնպէս կազմուած է՝ որ մեծի ու փոքրի խնդիր մը կայ: Մօրիկի հայրը պարտէզ կը մտնէ, մեծամեծ բոյսերը կը ջարդէ և այդ մեծամեծներուն տեղ մանրերը կը դնէ: Ըստ այսմ մանտար կը դառնայ մեզ ծանօթ մանտր <մանր բառը:

Մօրիկի հօր այս պատմութիւնը մեզ կու տայ նաև Գանձակեցին (էջ 47) հետեւալ բառերով. «Զմեծամեծ կաղամբան որ ի պարտիզն անդ, արմատախիլ առնել, կտրել զգլուխն. և զմանունս փայ-փայել»: Ստորագծեալ բառը կը ցուցնէ որ վերի օրինակին մէջ ալ մանտար պէտք է հասկնալ իբր մանտր «մանր»:

#### 25. մեծահար

Քանզի Ամբատ էր այր մեծահար և ամբարտաւան և աջողեցաւ ժամանակ թագաւորութեան նորա (էջ 80):

Թերեւս ուղղելի մեծահարկի՝ պատուաւոր, պատկառելի, երկելի», ինչպէս ունի Առձեռն Բառարանը:

#### 26. յայգեւանն

Վաղիւն վաճառենք զձին Դերէնին և զհանդերձան և պատրաստեմք ճաշ յայգեւանն (էջ 41):

Զեռազրիս հրատարակիչ հանգուցեալ Միաբան կ'ուզէ հասկնալ «յԱյգեստան», իսկ Մեսրոպ եպս. կը հասկնայ «վաղը»: Երաւացի կը համարիմ վերջինս, «որովհետեւ նոյն բառը կը գտնենք նաև ուրիշ բանի մը տեղեր ալ, հմմտ. Համամ. քեր. 271 «ի վաղիւն տեսանէ զթիսուս զի գայ, զոր զաեհիկըն յեզուց ասեն. Եգուց դառնամք»: Նոյնը նաև բանիցս Վրք. հց: Աւելի յարմար է միջին հյ. յեզուցն, յեզուցին «վաղը» Անսիզք, էջ 13: Այս բոլորը կը ներկայացնեն արդի գու. եղուց բառը: Ամենահին վկայութիւնն է Սոլյատ, էջ 365. «Ես և այսօր և այգուց նոյնս եմ»:

## 27. յետին

Եւ հասաւ ախտ հիւանդութեան սրբոյն Սահակայ հայրապետին, և առեալ զրեաց զյետինս իւր այսպէս (էջ 26):

Կը նշանակէ «կտակ» և թերես յետեր բառն է, որ տգէտ զրչին ձեռքով այսպէս խաթարուած է: Բայց հմմտ. Ղեռնդ պատմիչ, որ նոյն տեղը (էջ 29) կը զրէ. «Գրէ զվերջինս բանից իւրոց»:

## 28. շատորաց

Եւ ի շատորաց ցանկացեալ էր Դերէն աղջկանն և յանկարծակի կալաւ զնա և և բոնադատեաց և արար կամաց իւրոց (էջ 39):

Ի շատորաց կը նշանակէ «վաղուց, շատոնց»:

## 29. որման

Ողորմեա՛ ինձ և արձակեա զիս և յորման հասանէ հրաման քո՛ ես գամ և մեռանիմ առաջի քո (էջ 60):

Հրամարակիչը կը նկատէ որ յորման, եթէ պակասաւոր ընթերցուած չէ (բառին կէսը կը գտնուի ձեռագրին 59թ էջին

վերջը, իսկ միւս կէսը կը սկսի էջ 60ա), կրնայ ըլլալ «երբոր» իմաստով բառ մը, և կը կապուի գւո. ո՞րման «ի՞նչպէս» բառին, որ գործածական է Ախալցիս, Խոտրջուր և Շիրակ: Որակի իմաստէն ժամանակի իմաստին անցնելու լաւ օրինակ մը ունի այլուր Շապուհ, էջ 79. Եւ որպէս էր Ալի ի բանտին, գեղեցին և սպանին զնա: Հոս որսկս կը նշանակէ «յորժամ»:

## 30. պահէզ

Ոչ կարեմ զալ. լաւ համարիմ զսակաւ պահէզս իմ քան զթագաւորութիւն Հոռոմոց (էջ 3):

Կը նշանակէ «բանջարանոց»: Հմմտ. անդ՝ Քիչ մը վարը. «Եւ ինքն եմուտ ի պարտէզն իւր և սկսաւ զմհծամեծ բանձարս տակցի խլել»: Այս բառը՝ որ կը նշանակէ նաև Նորայր (տե՛ս իր Թրանսահայ բառարանը, jardin բառին տակ), կենդանի է զեռ քանի մը բարբառներու մէջ. այսպէս Շատախ, Սալմաստ և Վանապահէկի ձեռով և «սեխի, ձմերուկի և վարունգի պարտէզ» նշանակութեամբ, Գանձակի մէջ պիկ ձեռով և «բանջարանոց» նշանակութեամբ (տե՛ս Մամիկոնեան, Հա-

զարից մէկը, էջ 39 և 248): Ասկէ կազմուած է՝ վանայ բարբառով՝ պախւղպան (<պահեղպան>) «պահէզը պահող մշակող, պօստանձի»: Հին աշխարհագրական անուններու մէջ ալ կը պատահինք թահիզանը (Օբբելեանի պատմ. 1861, էջ 268), որ ճիշտ այն է՝ ինչ որ այլուր կ'ըսուի Պարտիզացիոր:

## 31. ոտէ

Եւ էր արքայն հագել սև և ոտէ սև ի գլուխ նորա (էջ 53):

Բառս այլուստ ծանօթ է ոխողէ ձեռվ. Մազ. քեր. 229, որմէ նաև Երզն. քեր. իսկ մեր ի Պարսից բազում ինչ ընտաներար ուսեալ զգեստս, որպէս դուռայ և ոխողէ (այլ ձձ. ոփէ, ոփողէ): Ասիկա է արար. Նշ. ridā «վերարկու» (Հիւպշ. Arm. Gram. 264), որմէ փոխառեալ է նաև վրաց. րիդէ «ծածկոց, քօղ»: Շապուհի օրինակին մէջ ոտէ կը նշանակէ ոչ թէ «վերարկու», այլ աւելի «քօղ», ինչ պէս է և վրացին:

## 32. սարիաթ

Եւ ի գիշերի սարիաթ արար Հապիպն

և հասաւ ի վերայ զօրացն Ամբատայ (էջ 73):

Անշուշտ արար. سرعت sur'at «արագցնել, շտապում» բառն է. Գամուսի ծովածաւալ բառարանին մէջ (թրք. թրգմ. հա. թ. էջ 597) չկայ sar'at ձև մը, որով կ'ենթապիքմ թէ վերի բառն ալ պէտք է կարդալ սորիար:

## 33. սկեւովին

Յորժամ էառ ի զիրկսն զոսկի զսկեսոին, յորում կայր նշան սրբոյ խաչին Քրիստոսի, ոչ կարաց շարժել ի տեղութէն (էջ 13):

Թուի նշանակել «խաչը պարունակող արկղը». Հմմտ. քիչ մը վերը՝ Յայնամամայեաց բերել զնշան խաչին և բացեալ զարկղն ոսկի, կազմած ակամբը պատուականօք:

Ստոյգ նշանակութիւնը գտնելու համար համեմատելով Արարատ, 1888, էջ 399–401 «Հացունեաց խաչի պատմութիւնը», տեսայ որ այս վերջինը ամենելին չունի բառ մը՝ որ յիշեալ ձեն ակնարկէր:

## 34. մՆԿԻՒ

Գնա և շինէ աւերած երկիրն ըո և  
տամ ձեզ զամենայն պէտք և զանձք, որ  
և սնկիք դուք (էջ 62):

Հրատարակիչը սնկիք կը համարէ ան-  
հասկանալի. ընդհակառակը միջին հայե-  
րէնի հետաքրքրական բառերէն մէկն է:

Բառիս արմատն է սնիկ. «պէտք, կա-  
րիք, կարօտութիւն», որ մէկ անգամ ունի  
Անսիզը, 75. Ու ես ի սնիկ եմ ի յիմ  
գրամն (այն է՝ ի պէտք եմ). կամ նաև  
«կարոտ, պէտք ունեցող», ինչպէս կը  
գործածէ մէկ՝ անգամ կոստ. երզն. 150.  
Ով ունի կին շնացող կամ պոռնիկ, հանց  
որ ինք ի յայլոց այր երթայ սնիկ: Ասկէ  
կու գան սնիկի կամ սնգիլ «պէտք ունենալ,  
կարօտիլ». Թէ սնկիս՝ վառես կրակ. Շնորհ.  
առակ. իզ. (զայլախազին համար կ'ըսէ).  
Զամշի կուտ առնուս և պահես, և երբ  
սնկիս՝ դու մունֆախդէճով թրջեա. Երբ  
սնկիս՝ կեր, անուշ լինի (դամոնի համար  
կ'ըսէ). Զի որ սնգի ի պառակիլ և ի  
հանգչիլ. Վատկ. 117, 135, 200. Եւ թէ  
չսնկի որ զամէն հայրենեստանն. ծախէ.  
Ով ոք որ զսա ունի՝ նա բնաւ ի յայլ  
գիրք չսնգի. Անսիզը 45, 93. սնկուրիւն  
կամ սնկուրիւն «կարիք, պէտք, պահանջ»

Վատկ. 39, 158, Անսիզը 31, 33. սնկող  
«կարօտութիւն քաշօղ» Վատկ. էջ 6:

Այս բառը զիտէ նշի, բայց ունենալով  
միայն Վատկ. էջ 135 վկայութիւնը՝ կը  
մեկնէ «փորը պնդանալ, փիր. նեղուիլ».  
այս նշանակութիւնը կը հետեւնէ նախ  
անկէ՝ որ յիշեալ վկայութիւնը դամոնի  
համար ըստւած է (և դամոնը իբր լուծիչ  
կրնայ գործածուիլ) և երկրորդ թրք.  
Տօգութեած բառին ձայնական նմանութե-  
նէն: Բայց իրօք Վաստակոց վիրքը բժշկա-  
կան նպատակ չունի և պահենի պտուղ-  
ներու մասին կը խօսի հոն. երկրորդ՝ թրք.  
արդ-լմբրի շատ պատահական նմանութիւն  
միայն ունի, և վերջապէս՝ միւս վկայու-  
թիւնները և ածանցները բառին նշանա-  
կութեան վրայ կասկած չեն թողուր: Ուղիղ  
իմաստով կը հասկնայ նախ Անսիզը հրա-  
տարակիչը և յետոյ Նորայր (տես կոստ.  
երզն. 204):

## 35. վար

Ժողովէ զօրս Հայոց և Միջազետաց և  
գնա ցվարս Խութանի և առ զբէն (իմա  
«զվրէմ») ծառային իմոյ Սեթայ որ ըս-  
պանին (էջ 56):

Տեղէն կ'երևայ որ կը նշանակէ «սահ-

ման կամ լեռներ»։ Ըստ այսմ ալ հրատարակիչը կ'ուզէ ուղղել ցվայրս, ինքն ալ համարելով շատ կասկածելի։ Կրնայ ըլլալ որ գրչութիւնը խաթարուած ըլլայ այստեղ, որովհետեւ բառին առաջին տառը ձեռագրին օճա էջին վերջին տառն է և վարս կը սկսի նոր էջ և նոր տող (55 թ)։ այսպիսի շրջումներու ժամանակ սիսալներ փախցնել սովորական բան է, մանաւանդ Շապուհի գրչին չափ տգէտ անձի մը համար։

### 36. տակցի

Եմուտ ի պարտէզն իւր և սկսաւ զմեծամեծ բանջարս տակցի խլել (Էջ 3)։

Լազմուած է տակ «արմատ» բառէն՝ յի մասնիկով. Հմմտ, աքացի, բոնցի, ձերացի կամ ձեռամբացի. Ըստ այսմ կը նշանակէ «տակով, արմատով», և ճիշտ այն է՝ ինչ որ այլուր կ'ըսուի տակախիլ առնել «արմատախիլ ընել» Մարթին. (տես Արարատ, 1913, էջ 1147)։

### 37. քաղված

Եւ ասէ ընդ ինքն քաղվածն, որ էր այր քաջ և քազում քաջութիւն էր ցու-

ցեալ ի յաշխարհն վասպուրականի և նա ասէ (Էջ 83)։

Հրատարակիչը կը կարծէ կամ յատուկ անուն և կամ «ներքինի, կուրտ» նշանակութեամբ նոր բառ մը. առաջինին համար աննպաստ է յօդը. առհասարակ նախադասութիւնը մուլթ է։

### 38. քամուկ

Յորժամ զայր մտանէր նա ի քաղաք մի Պարսից՝ կային նմա կանայք քամոսկ, որ շըջէին տանէ ի տուն, և ուր գեղեցիկ կին տեսանէին՝ զայն պատմէին ամիրապետին Ալէ, և նա բերել տայր և խառնակէր զբազում կանայս մեծամեծաց և աղբատաց։ Եւ էին նորա խորհրդակիցք կանայքն այն և ոչ գոյր նմա ճար կոչել մեծամեծս իւր յառաջի իւր (Էջ 76)։

Եւ եկին այն բոնսկաննին ամիրային Սրաւայ և էր նա մեռեալ ի նոյն տարին, և կայր նմա զուստը մի անչափ գեղեցիկ։ և եկեալ մի այն կան(ան)ցն բռնեց ի ձեռն ամիրապետին (Էջ 77)։

Երկու բառերը յայտնի կերպով նոյն են և ինչպէս հրատարակիչը կը նշանակէ «երկի նշանակում է կառատ»։

Մեզի համար ամէնէն առաջ բառին

ձեն է կարևոր, երկրորդ վկայութեան մէջ  
անշուշտ -անի (սխալմամբ զրուած աննի)  
ծանօթ յոգնակերտ կամ հաւաքական մաս-  
նիկն է, որ հանելով՝ կ'ունենանք քոմուկ.  
ասիկա առաջինէն ա ձայնաւորով միայն  
կը տարբերի: Բայց առաջինին մէջ ալ  
նախագասութիւնը այնպէս է կազմուած,  
որ յոգնակի կը պահանջուի. ուստի պէտք  
է կարդալ կանայք քամոսք, որով եզակի  
ձեզ կ'ըլլայ քամոս: Այսպիսի բառ՝ մը  
զիտէ Բառգիրք Երեմիայ (տպ. ՅԱԼԻԿՈՆՆԱՅ  
1698), էջ 327, «Հօշափումն» իմաստով,  
որ յարմար չէ տեղին:

Կը կարծեմ որ քամոս և քոմոս ձեեւ-  
րուն մէջ աւելի ընտրելի է քոմոս, բայց  
ասիկա ալ տգէտ գրչին մէկ սխալն է,  
որ պէտք է կարդալ քամոս. ասով կ'ու-  
նենանք ծանօթ բառը՝ «բամբասող, չա-  
րախօսող, լուր տանող» նշանակութեամբ,  
որ ոչ միայն կը պատշաճի տեղին, այլ  
և աւելի յարմար է քան «կաւատ», նախ  
որովհետեւ այդ կանայքը կը համարուին  
ամիրապետին խորհրդակիցները, ինչ որ  
անյարմար պիտի ըլլար ըսել կաւատ կա-  
նանց համար. երկրորդ՝ որ եթէ անոնք  
ըլլային հասարակ կաւատ կանայք, ո՛չ  
մէկ մեծամեծ չի պիտի թողուր իր կանա-  
նոցը ոտք կոխելու, և վերջապէս իրօք՝

համաձայն պատմութեան՝ անոնց գործը  
կաւատութիւն չէ, այլ քսութիւն կամ  
տեսակ մը բանբերութիւն:

Ո վրիպակաւ ա գառնալու օրինակ մը  
ունի Շապուհ, նաև էջ 80, խատայիրտ  
(ՓԽ. խստասիրտ):



## ԳԼՈՒԽԻ ԻԸ.

### ՀԱՅԵՐԻՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

Մի. ՍԿԵԽՈԱՑԻՈՅ ՊԱՏԱՍԽԱՆԵԱՅ ՄԵԶ  
ՅԱԴ. ՀԱՄԱՊԱՏՈՒԹԵԱՆ Ժ.Բ. Ա.Ա.ԲԵԼՈՅ

(ապ. Եպուադէմ 1865)

Այս փոքր գրուածքը՝ որուն երրորդ տպագրութիւնն է միայն ձեռքս, անշուշտ ծանօթ էր նոր Հայկազեան բառարանի հեղինակներուն. բայց ո՞չ իրրև Միսիթարի գործ կամ անջատ գրուածք, այլ Ոսկեֆորիկէն մաս մը. հմմտ. իմբնադիմարար բարին տակ դրուած վկայութիւնը, որ Նշի կը համարէ Ոսկեփորիկէն, բայց Մի. Ակեւուացոյ վերոյիշեալ գործէն է. « Զկատարեալ պարզեւն ինքնաղիմարար ընձեռէր աշակերտացն » (էջ 2). Բայց կ'երեւայ թէ Ոսկեփորիկի մէջ Միսիթարի գրուածքը ամբողջական չէր. այս պատճառաւ ահա ինչ ինչ բառեր մոտած չեն ո՞չ Հայկազեանի և ո՞չ ալ Առձեռնի մէջ։ Այս բառերն են որ կը հաւաքեմ հոս։

Անյաշաղիոտորիւն «աննախանձ բարք»։ Մի՝ ըստ իմաստասիրական բարուցդ ան-

յաշաղկոտութեան, և միւսն՝ ըստ աշակերտութեան Փրկչին անարգամեծարութեան (էջ 12)։

Անապրդելի «որուն մէջ կարելի չէ նոր բան մը ներմուծել ». Կնքէ անլուծանելի կնքով և անսպազելի ի ներհակաց զիորհուրդ բանիս Հարր (էջ 65)։

Աստուածաբադադապահ բաղաբի բնակիչ » (Անտիոքի պատրիարքին տրուած տիտղոսը). Եւ աթոռակալաց սոցա անուանս յօդեն կրկին պատուով. զկոստանդինուպոլիսին տիեզերական կոչեն պատրիարք, և զԱնտիոքայն աստուածաբացաբացի և ամենայն արևելեան (էջ 70)։

Առողքար « փաստաբան » . Քաղաքապետն՝ որոյ անուն Ջուփրի, այր խաղաղաբար և մայէստր դանվլուն և քումանսուր տանն հիւանդանոցին, և ամենայն իշխանք ծովեզերեայց՝ բաց ի բրենձէն և բովանդակ աւուգաթբն (էջ 13)։ Երուսաղեմի հրատարակիչները կը մեկնեն « փաստաբան » անշուշտ ֆրանս. avocat, իտալ. aννοκατο, լտ. advoсatus « Պաշտպան, փաստաբան » բառն է, որ հիմայ ալ գործածական է Պոլսոյ Հայոց մէջ ապուրաբձեով։

Դանիկ « Ճաճար, Ճաճարականք » . Վրկայութիւնը տեսնախորդին մէջ. = ֆրանս. temple, լտ. templum « տաճար » :

կելիալ «զլուխ»։ Յովհաննէս յունարէն գրեալ զԱւետարանն, կեփալ ասաց, «ը է զլուխ։ Յաղագս որոց պիտոյից ասաց զկեփալն՝ թէ թարգմանի Պետրոս։ Իսկ եթէ ասիցէք թէ կեփալ ի կեփալ ասաց թարգմանել։ Զի՞նչ առաւելութիւն ունի յունարէն կեփալն ի վերայ զլիսոյն հայերէն (էջ 43-45)։ = յն. ռեփալի «զլուխ»։

Մակայաւելուր «վրան աւելցնել»։ Մակայաւել երիցս թէ Արածեա զոշխարս իմ (էջ 58)։

Մայէստր «տէր, զլիսաւոր»։ Վկայութիւնը տես առողար բառիս տակ։ = ֆրանս. maistre, maître, իտալ. maestro, լատ. magister.

Միորսկ «միապէս, մէկ ձևով, համահաւասար կերպով»։ Միապէս պատուիրեաց զօրութիւն ընդունել ի բարձանց, միորսկ և զհրեղէնն ընկալան զլեզուսն (էջ 65)։

Եազ «չկամութիւն ցոյց տալը»։ Կամ վասն բարձրայօնութեան նազ գոլով, և կամ խորհուրդ առնելով եթէ տեսցուք եթէ ո՛չ (էջ 9)։

Վկար «եպիսկոպոս»։ Ոմենայն պատրիարք և կաթուղիկոս և արծուէսք և վէսք պարտին հնազանդ լինել Պապուն Հոռվմայ (էջ 66)։ Երկու տեղն ալ ձեռագիրը ունի վկար, բայց առաջինին մէջ հրատարակիչները սրբազրած են վկար, երկրորդին մէջ պահած են վկար, բովը բացատրելով «եպիսկոպոս»։ Այս մեկնութիւնը ուղիղ է. բայց կը ծագի ֆրանս. évêque, իտալ. vescovo հոմանիշէն։

Քումանատոր «հրամանատար»։ Վկայութիւնը տես առողար բառին տակ։ Կու զայ Փրանս. commandeur հոմանիշէն։

Պետրոսի (էջ 23)։ Ոմենայն պատրիարք և կաթուղիկոս և արծուէսք և վէսք պարտին հնազանդ լինել Պապուն Հոռվմայ (էջ 66)։ Երկու տեղն ալ ձեռագիրը ունի վկար, բայց առաջինին մէջ հրատարակիչները սրբազրած են վկար, երկրորդին մէջ պահած են վկար, բովը բացատրելով «եպիսկոպոս»։ Այս մեկնութիւնը ուղիղ է. բայց կը ծագի ֆրանս. évêque, իտալ. vescovo հոմանիշէն։

Քումանատոր «հրամանատար»։ Վկայութիւնը տես առողար բառին տակ։ Կու զայ Փրանս. commandeur հոմանիշէն։



## ԳԼՈՒԽ ԻԹ.

### ՀԱՅԵՐԻՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

Ճ. Ա. Մ. Ա. Գ. Ր. Ք. Ի. Մ. Է. Զ.

(Վաշագու. 1903)

Անջոկական «անզանազանելի, ոչ—տարբեր, նման կամ հաւասար»։ Բաշխես զհացն մաքրական, Զարիւնդ ըմպել տառ սոսկական, Հանես ի վեր զերաստիճան, Յիմանալեացն անջոկական (էջ 960, առնուած է Տաղարանէն)։

Հանրատենչ «ամենուն փափագելի»։ Ցնծայ և զուարճանայ եկեղեցի սուրբ, տօնելով մեծաւ հանդիսիւ զհանրատենչ յիշատակս քո (էջ 592)։

Յանձնառնի «յանձն առնելիք և կատարելիք բան»։ Այլ և մեղայ ամենայն պատուիրանացն Աստուծոյ, յանձնառնըլեացն և հրաժարելեացն, զի ո՞չ զյանձնառականսն կատարեցի և ո՞չ ի հրաժարելեացն հեռացայ (էջ 9)։ — Ծանօթ բառ է, բայց իրբեւ երկու բառ (յանձն առնլի) համարելով՝ մոռցուած է բառարանին մէջ առնելու։

Ուղերձել «նուիրաբերել, ընծայաբերել, զոհել»։ Այլ դողալով առաքինաբար զինքն ուղերձեալ (տպ. լողերձեալ) ի յանիւս աստուածային զանձուցն հոլովիցի աղաղակելով առ Քրիստոս (էջ 604)։

Լծ. Տաղ է չափաւոր բանն ի սկիզբն կամ  
ի վերջն »:

Գերյիշրագոյն «ամենէն զերազանց» . Արդ՝  
վայել է յոյժ զերվերագունին զերունա-  
կութեանց, հեզ և հանդարտ խոհեմութիւն  
(էջ 280 ա):

Գործականաւոր «զործող, ընող, կատա-  
րող» (որ և գործառուական) . Ի հաստա-  
տութիւն մեզ և ընդունողաց զբանն, վա-  
յելչաբար ընթացողաց և գործականաւո-  
րաց ուղղութեանց, առ ի զգուշութիւն  
կամ յանդիմանութիւն անհաւատիցն (էջ  
94 բ):

Երկառնեակել «երկու տեսակի վերածել,  
երկու կերպ դնել» . կործանեն առ ի նո-  
ցանէն բանքն երկառեսակելով, քանզի  
զաւանդեալն մեզ հաւատ ստացուցմանն  
(էջ 299 ա):

Երկրպագելի «երկրպագելու արժանի» .  
Զիանը եղիցի երկրպագելի որ ընդ երկը-  
պագուա է շարադասեալ (էջ 260 բ):

Ծառայավայելու «ծառայի վայել կեր-  
պով» . Քանզի ոչ էր այլազգ պատուել  
զծառայն, եթէ ոչ էր եղեալ իւր ծառա-  
յավայելուն (էջ 330 ա):

Համանան «ընկերակից» . Ողջախոհացն  
պիտոյ գոլ ասեմք հաւատակցաց և համ-  
անձանց անհաւատար ճեղիլ յայս գործ  
(էջ 423 ա):

## ԳԼՈՒԽ Լ.

### ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԿԻՒՐԴԻ Ա.Դ.Ե.Ք.Ս.Ա.Դ.Դ.Ր.Ա.Յ.Ի.Ո.Յ

ՊԱՐԱՊՄԱՆՑ ԳՐՈՅ ՄԵԶ

(տպ. Պօլիս 1717)

Անաղարտարար «մաքուր՝ անաղարտ  
կերպով» . Գնալ ընդ ուղիղ և անաղար-  
տարար քննեալոն սրբոց մերոց հարց  
(էջ 81 բ):

Աներասանակարար «յանդիմարար» . Շե-  
ղեալ էր աներասանակարար յապստամ-  
բութիւն (էջ 181 ա):

Անբրրական «անքթիթ, առանց աչքերը  
ցթթելու» . Խորարհեալը ի նա և անքթ-  
թական ակամք ի տիրականն պշուցեալը  
(էջ 45 բ):

Գեղեցկատադրիւն «գեղեցիկ բանա-  
ստեղծութիւն» . Հեթանոսացն իմաստունք  
և բանեղբ սքանչացան ընդ գեղեցկատա-  
դրութիւնն և ընդ որ մանաւանդ փութալի  
է առ ի նոցանէ պերճաբանելն (էջ 296  
ա): — Ասիկա մեկնելով Լծ. Պրպմ. էջ  
728, կ'ըսէ . «ընդ գեղեցկատադրութիւնն .

Հասանելի «հասնելիք», որ կարելի է հասնիլ»։ Խոր է խորհուրդս, այլ որոց ըստ մասին գնեն և որոշեն, դժուարաւ հասանելի և տարակուսելի ճշմարտապէս (Էջ 252 ա)։

Մարդելի «որ կընայ մաքրուիլ»։ Դժուարաւ մաքրելի քան զառաջնոյն յանցանաց վես (Էջ 259 բ)։

Մշտերե «միշտ երկցող»։ Մտոյգ և մշտերե են և յարամնաց ունելով զպայծառութիւնդ (Էջ 113 բ)։ — Այս բառը գիտէ ՆՀԲ, բայց սխալ կը համարէ և կ'ուղղէ միշտ երեխ։ Առձ. թառ. հետևած է այս սրբազրութեան և իր ցանկէն ջընջած է բառաւ. բայց ես կը կարծեմ թէ միշտ երեխ ծեւ մը շատ անյարմար է տեղին և մշտերե ձեւ նորէն պէտք է պահել։

Նմանեցուցանելի «որ կարելի է նմանցընել»։ Որ լուսնի նմանեցուցանելի է, թոյլ տալով զմեծագոյնն ճշմարտութեան ճառագայթից (Էջ 119 բ)։

Տարակուսելի «տարակուսական, երկրայելի»։ Դժուարաւ հասանելի և տարակուսելի ճշմարտապէս (Էջ 252 ա)։

Տոփոռ. անստոյգ բառ. «Այսուիկ և յոյժ խոհականապէս վճարեալք զինքեանս յայսոցիկ պատճառաց, անբիծ հաւատոյն տոփոռաց հաւատարմացուցանել զինքեանս

փութացեալ» (Էջ 428): Զարմանալի է որ Տաթևացւոյն լուծման մէջ (Էջ 767 ա) այս անլուր բառիս մասին խօսք անգամ չկայ։ Զգիտէ նաև Երեմիայի Բառգիրքը։ Ուստի կ'ենթազրեմ որ հասարակ վրիպակ մ'է, փոխանակ զրելու տոփողաց. որով անբիծ հաւատոյն տոփողաց Կըլլայ «անբիծ հաւատքին փափառղներուն, ճշմարիտ հաւատացեալներուն»։

Փոխատարիլ «ինքը նոյն մնալով՝ ուրիշներու հետ միաւորիլ»։ Ոչ է պիտոյ ասեն երկունս և ծնունդ ի կնոջէ զրել միզ միածնին, այլ համարիլ յաւէտ զբանին բնութիւն ի կնատս յայս և ի հողեղէնս փոխատարիլ մարմին (Էջ 231 ա)։ — Բառին ձեւը կասկածելի է, և կընայ ըլլալ փոխատրիլ, որովհետև Տաթեւացւոյն լուծման մէջ, ուր բառին մեկնութիւնը կը տրուի, նոյնը կը կըկնուի երկու անգամ փոխատարիլ և երկու անգամ ալ փոխատրիլ ձեռվ. «փոխատարեալ։ Այլ է փոխազրեն և այլ է փոխատարելն. զի փոխազրեալն է ի բաց փոխիսել զիրն և ոչ թողուլ ի նոյնութեան մնալ. նոյն է և փոխարկելն, իսկ փոխատրիկն է՝ որով միաւորի յայլս և մնայ ի նոյնութեան։ Եւ տես զի աստ փոխատրեալ ասէ զապականութեան և ըզմեղաց...» (Էջ 545 ա)։ Յոյն բնագրին

Համեմատութիւնը կրնայ որոշել թէ երկու  
ձևերէն ո՞րն է միայն ուղիղ:

Օժանի «օժանդակ, օժանդակութիւն».  
Եթէ մարդ առեալ որպէս զայլ ոք քան  
զինքն որդի Աստուծոյ Բան որպէս զօժանդ  
ոք իւրոցն կամաց երևեցոյց զնա (էջ 328  
ա): — Բառիս նշանակութիւնը ստոյգ է.  
Հմմտ. էջ 329 ա՝ նոյն ձեին կրկնութիւնը.  
«Քանզի հովիւ գոլով զնէր զնա մարգարէ  
և իւրոցն կամացն օժանդակ կատարէր»:  
Բայց կրնայ անստոյգ համարուիլ բառիս  
ձեր՝ փխ. օժանդակ, որովհետև Տաթեաց-  
ույն լուծման մէջ՝ էջ 737 օժանի չի  
յիշուիր:

Օրինարաննել «օրհնութեամբ գովաբա-  
նուիլ»։ Հաց հոգեսոր հաստատէ զսիրտ  
մարդոյ, բառ որում որ ի զիրս Աաղմոսացն  
օրհնաբանի (էջ 296 ա):

\*  
\* \*

Այս բոլորէն յետոյ՝ կը նկատեմ որ  
Պարապմանց գրոց մէջ, էջ 449 ա կայ  
ներդրողազոյն բառը և էջ 273 թ կայ  
սկզբնագունուրին բառը, որոնք թէն նոր  
Հայկազեանի մէջ յիշուած են, բայց Առ-  
ձեռնի մէջ աչքէ վրիպած են:

## ԳԼՈՒԽ ԼԱ.

### ՀԱՅԵՐԻՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ՊԱՐՍՊՄԱՆՑ ԳՐՈՅ ԼՈՒԾՄԱՆ ՄԷՋ

---

Գր. Տաթեացւոյն սոյն աշխատութիւնը  
տպուած է կիւրզի Պարապմանց զրբեն  
հետ (տպ. Պօլիս 1717, էջ 529-790):  
Հայկազեան բառարանը թէն գործածած  
է այս գիրքը (հմմտ. մշակեալ բառը), բայց  
ամենեին ձեռք դպցուցած չէ Տաթեաց-  
ւոյն լուծման, նոյնը կրկնած են նաև  
Առձեռնի աշխատասիրողները։ Ահա այս  
պատճառով է որ 260 երեսնոց համեմաւ-  
տաբար փոքր աշխատութեան մէջ կը  
գտնեմ 41 նոր բառ, որ կը հաւաքեմ  
ստորեւ։

Այլաբերաբար «անուղղակի կերպով՝  
ուրիշին վրայ կատարուած բան մը իր  
վրայ առնելով»։ բառս այս՝ որ ասէ՝  
«համարեալ», կրկին ունի տեսութիւնս.  
զի է համարեալ ինքնարերաբար, և հա-  
մարեալ այլաբերաբար։ Ինքնարերաբար է՝  
յորժամ ոք ասիցէ թէ զայս ինչ մասն  
հոգւոյս տամ և համարիմ թէ մարմինս

եկեր կամ զգեցաւ. իսկ այլարերաբար է՝ յորժամ ասիցէ ոք թէ զոր ինչ դմա արաբեր՝ համարիմ թէ ինձ արաբեր։ Արդ որ լսես ի Քրիստոս համարեալ զմարմնոյսն՝ բանին, այսինքն զնուաստականսն, և զոր ինչ բանին՝ համարեալ մարմնոյն, այսինքն զգերագոյնսն, այսորիկ ինքնաբերաբարք են։ Իսկ այն որ ասաց աշակերտացն՝ որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ, և այլն, այլարերաբար համարելովն են (էջ 540-1)։

Անիղեկ «անպատեհ»։ Զայսպիսի անիղեկ հարցմունսդ առնելն տկարութիւն է (էջ 592)։ Թէև Հօր Աստուծոյ ասիցես զոր զշնորհն զայն, չէ անիղեկ (էջ 623)։

Անհատողորիւն «անբաժանելիութիւն»։ Յէլց անհատողութեանց որ ցուցաւ յառաջացոյն, ուր և հանդիպեսցի մինն՝ բաժանէ զանձն (էջ 665)։

Անհախանաբորբոք «աննախանձ»։ Աննախանձարորբոք մանուկ է ըստ մարմնոյ ծննդեանն և որդի է վասն աստուածութեանն (էջ 574)։

Առատափիրու «փուխսիրու»։ Լինիցին քաղցունք, այսինքն առատափիրուք և զուարթերեսք և մի զժգմնեալ երեսօք և դառն խօսիւք (էջ 606)։

Առելարար «յարաբերաբար»։ Մեծ առելն կրկին ունի ցոյցս. առաջին՝ առըն-

չարարն, որ ցուցանէ զփոքրն... այլ առնչարարն ոչ իսկապէս՝ այլ պիտակապէս (էջ 563)։

Առելակամ «յարաբերական»։ Եսի Հայր և Հայր յիս. որպէս առնչականն զմինն դնելով զերկուսն ցուցանէ (էջ 696)։ Համաձայն կամ առնչական աշակերտեալ պետ անուանեցայ (էջ 775)։

Բազմատու «շատ սուտ»։ Բազմանիւթ կամ բազմաթիւր կամ բազմասուտ (էջ 762)։

Բարձրիւնց «բարձր՝ երկնային բաներու վրայ խորհող»։ Մի՛ լիցի երկրաբարց խորհրդով, այլ բարձրիմաց (էջ 615)։

Բացրարձորիւն «բացասութիւն, ժըստում»։ Բացրարձութեամբ ամի Հայր Աստուած անսկիզբն և անվախճան (էջ 787)։

Բենիստար «բեռ կամ ծանրութիւն կրող»։ Եկայր առ իս ամենայն աշխատեալք ի մեղաց և բեռնատարք օրինաց (էջ 659)։

Գյուսարակամ «զժուարաւ կամեցող»։ Այլ զանց առնելն չէր ըստ կամաց մերոց. այլ ասել զճմարիտն թէ ոչ յանդկնեցայ կամ զժուարակամ եղէ կամ անփոյթ արարի (էջ 721)։

Գյուսարակիրը «կնճոռու, զժուարիմանալի»։ Ոչ բարեկիրթ. այսինքն զժուարակիրթ կամ զժուարիմաց (էջ 595)։ —

Տաթևացին կը մեկնէ Պարապմանց գրոց բարեկիրը բառը (տես էջ 97), որ կը նշանակէ «դիւրահասակընալի, դիւրըմբռնելի, պարզ»։ Զայսակէս նուրբ և ոչ բարեկիրթինդրոյս ո՞չ է պարտ օրինագրական վճիռ հատանել, այլ տարակուսիլ յաւէտ քննութեամբ։

Դժուարամաքրելի «դժուար մաքրելի, դժուար սրբուող»։ Անհնարին և դժուարամաքրելի (էջ 711)։ Տաթևացին իրը բնագիր զրած է այս երկու բառը, բայց բնագիրն մէջ (էջ 299) տպուած է «Անհնարին համարիմ մոլորութիւն գրել և հեթանոսաց նմանիլ և դժուարաց մաքրելի բան զառաջնոյն յանցանաց վնաս»։

Եզերորդ «առաջին»։ կը գտնուի զլուխաներու թուակարգութեան մէջ։ ինչպէս՝ ճառ քսաներորդ (էջ 566), ճառ երեսներորդ եզերորդ (էջ 628)։

Երկագոյ «երկու տեսակ գոյացութիւն ունեցող»։ Եւ զարձեալ որպէս ունէր գոյութիւն Աստուծոյ և գոյացաւ, և ոչ ասի երկագոյ, այլ միագոյ (էջ 537)։

Երկուաշոր «երկուքէ բաղկացած»։ Ոչ ասի երկուաւոր բնութիւն կամ երկաբուն, այլ միաւոր և միաբուն (էջ 788)։

Ժողովուրիւն «հաւաքել պահելլ»։ Մո-

տանալն՝ մտացն է, կնքելն՝ ձեռացն է, ի բնակի ժողովութիւնն է (էջ 720)։

Իմբնարերաբար «ուզզակի իրեն անձին հետ կատարուած»։ Վկայութիւնը և համեմատութիւնը տես այլարերաբար։

Խոնեմապէս «խոհեմութեամբ, մտածելով»։ Խորհրդապէս, այսինքն խոհեմապէս կամ արդարապէս (էջ 774)։ — ՆՀԲ չամ արդարապէս ինէ խոհեմարար տես խոհեմապէս, բայց այս վերջինը կը մոռնայ նշանակել։

Խորզախեղիր «պլապտող, բառակըկիտ»։ Ցեղնատիր՝ խորզախնդիրն է (էջ 627)։ — Տաթեւացին կը մեկնէ Պարապմանց գրոց ցեղեատիր բառը (էջ 146), որ հոս առանձիննշանակութիւն ունի։ «Պիտոյ է զբանիցն ձև ոչ յոյժ ցեղնատիր առնել, այլ տեսանել ինոսա յաւէտ զբանիցն բնութիւն» (բառելը պլապտիլ պէտք չէ, այլ իմաստին պէտք է նայիլ)։ Այս նշանակութիւնն ալ պէտք է մացնել բառարաններու մէջ։

Ծռագատիկ «Զատիկ՝ որ Տօմարական հաշիւներով սխալ է»։ Յամենայն 97 ամին Ծռագատիկ բերէ (էջ 607)։ Յամենայն 95 ամի ծռագատիկ լինի նոցա (էջ 612)։

Մարմնացի «մարմնով»։ Մարդացի, այսինքն մարմնացի և ո՞չ մարդացեալ կամ մարմնացեալ (էջ 742)։

Մերձակից «յարակից, կցորդ»։ Յարակից՝ որ է մերձակից, այն է՝ զի փառացն կցորդ և հաղորդ արար (էջ 736)։ Իսկ յարակից՝ որպէս մերձակից, ընթացակից, ընկերակից, կամ մշտակից կամ նմանակից (էջ 737)։

Միաշարի «միայար, միակերպ, սկիզբէն վերջը նոյն ձեռվ»։ Որպէս ասէ թէ առանց ճայթման այսինքն միալարի ի ծննդենէ մինչ ի խաչն և ոչ երբեմն տղայ և փոքր փոքր զալ և լինիլ այր կատարեալ (էջ 748)։ — Կենդանի է բառս գաւառականին մէջ՝ միաշար ձեռվ։

Միատրակի «միայն, մինաւորիկ»։ Վասն Քրիստոսի ասաց զայս օրէնքն միաւորակի և ոչ երկակի (էջ 565)։

Միշակօրէն «միջակ դիրքով, ոչ հեռու և ոչ ալ շատ մօտ»։ Զինւորքն երեք կերպիւ պատերազմին։ այսինքն՝ կամ մերձակայ՝ սրով, կամ ի հեռուստ՝ նետով, կամ միջակօրէն՝ գեղարդեամբ (էջ 630)։

Մշտակից «միշտ հետը եղող, ընկերակից»։ Իսկ յարակից՝ որպէս մերձակից, ընթացակից, ընկերակից կամ մշտակից կամ նմանակից (էջ 737)։

Մտաւորագոյն «շատ մտադրութեամբ, ուշադիր»։ Վեց ազգ հերձուած յայտնի առնէ աստ. զոր թէ մտաւորագոյն ընթեռ-

նուս՝ վերաբերին երեքն յանմարմին էութիւն թանին և երեքն ի մարմին նորին (էջ 689)։

Յայտնաբանիլ «յայտնուել, յայտնի կերպով պատմուիլ»։ Օրհնաբանի, յայտնաբանի կամ պատմի (էջ 728)։

Ներրաղդատ «համեմատութիւն վերցնող, համեմատելի»։ Յովհաննու Արունեցոյ, որոյ եղէ ի վերջին ժամու վերջացեալ սպասաւոր, ոչ զոլով ներբաղդատ իրօք կամ մտօք, թէկ համաձայն կամ առնչական աշակերտեալ պետ անուանեցայ (էջ 775)։

Ներհակօրէն «ներհակաբար, հակառակ կերպով»։ Այլ ոչ մասնաւորաբար որպէս այժմ, այլ համանգամայն, և ոչ ներհակօրէն, այլ առանց ապականութեան և պայծառ տեսութիւն (էջ 601)։

Շարաւալիր «շարաւալից, թարախու»։ Լուսցեալ բուժեսցէ զբազմազան շարաւալիր վէրս հոգւոյ և մարմնոյ ամենաթշուառ անձին (էջ 775)։

Ուղղափառակից «իրեն հետ միեւնոյն ուղղափառ հաւատը ունեցող»։ ի միտառ, ով ուղղափառակից իմայս խոստովանութեան (էջ 686)։

Ուհակապէս «ընապէս սովորութիւն դարձած»։ Ճառագայթն է յէութենէ արեգականն, այլ զօդդ ունակապէս պայծառացուցանէ (էջ 596)։

Պատմաբար «պատմողական ձեռվ»։ Թէ հարցմամբ ասես՝ այն է որ ասէ՝ ցամաքեսցի սէր բազմաց, իսկ թէ սոսկ պատմաբար է, զայն ասէ՝ որ յետ նեռին ամենայն լեզու խոստովանեսցի տէր զՅիսուս Քրիստոս (Էջ 672):

Սիսակիիր «սխալաւոր, սխալներ կրող՝ ունեցող»։ Եթէ գտանիցի ինչ ըստ ախորժելեաց ձերոց՝ տեառն են շնորհը, և նուազն՝ սխալակիրս անօթոյ (Էջ 775):

Վերջադաս «յետագաս, բառին վերջը դրուած (մասնիկ)»։ Եւ որդն վերջադաս է, և այն զոր ասեմբ ութիւնն, զմի բնութիւնն նշանակէ, որպէս ասեմբ մարդութիւն, ձիութիւն (Էջ 598):

Տեսակապես | «կերպապէս, օրինակով».  
Տեսակօրէն | «կերպապէս, օրինակով».  
Մշկութիւնս մեր նիւթապէս կայացաւ ի մկրտութիւնն Քրիստոսի և անսակապէս կատարեցաւ ի կողին բացումն։ Որպէս և բաշխումն մարմնոյ և արեանն՝ նիւթապէս եղեւ ի վերնատանն և տեսակօրէն ի խաչին (Էջ 663):

Փոխարիսպես «փոխարկաբար, և հակառարձը»։ Ասի նոյն Աստուածն մարդ և նոյն մարդն աստուած։ և այս ո՛չ փոխարկապէս (Էջ 787):

## ԳԼՈՒԽ ԼԲ.

### ՀԱՅԵՐԻՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ՅԱԿՈԲ ԿԱՐՆԵՑԻՈՅՑ

ՎԵՐԻՆ ՀԱՅՈՅ ՏԵՂԱԳԹԻՆ ՄԵԶ

(ապ. Վ. ՊԵՂԱՎՈՒ. 1903)

#### 1. ախօրան

Ելանեն բազում ակունք և լինի գետ առւր և ախօրան և մտանէ անհուն ձորն Ծիրանայ և Ապոչամու (Էջ 47):

Այլուստ անձանօթ բառ մ'է, որ իրը և ածական զործածուած է գետին համար՝ «սրբնթաց կամ ահեղ» նշանակութեամբ։ Կրկին ածականներուն համար հմմտ, նոյն հեղինակին քով՝ Էջ 52. «ի Բայլ զետու ելանեն անթիւ ակունք, ի գեղջէն կարմրոյ լերանցն ժողովեալ մտանեն ընդ ձորն և լինին գետ սուր և զարհուրելի»։

Ախօրան բառը կազմութեամբ բոլորովին անյայտ է, թթք, և պրս. լեզուներուն մէջ ալ նման ձեւ մը զոյութիւն չունի, որմէ փոխառեալ ըլլայ։ Բայց զիտենք որ Յակոբ

կարնեցին ուրիշ տեղ մը նոյն բառը կը գործածէ իրուկ յատուկ անուն Ախուրեան գետի. «Եւ գետն զայ Ղարսայ և յԱնոյ, որ է Ախօրան» (էջ 50): Ասկէ կընանք հետեցնել թէ յատուկ անունը յետոյ հասարակի վերածուած է:

### 2. բանտար

Զի այժմ բաղաքս այս յոյժ բանտար է նման Ատամպօլայ, որ տարին ԺՄ բեռ մտանէ և ելանէ (էջ 37):

Տեղէն կ'երկի որ կը նշանակէ «բանուկ, վաճառաշահ բաղաք» և ըստ այսմ կրնայ համարուիլ բան + տանիլ բառերէն ծագած, ինչպէս ունինք բանուկ: Բայց այս ստուգաբանութիւնը անշուշտ կեղծ է և բառը պէտք է զնել պըս. յայ Bandar «նաւահանգիստ» ձևէն, որ հոս ածականաբար գործածուած է: Ասոր վրայ արդէն խօսած ենք կեղծ Շապուհ Բագրատունոյ նոր բառերուն մէջ:

### 3. դատկան

Լաւ և խելացի դատկան, հողագործ և փէշաքար (էջ 39):  
Կը նշանակէ «աշխատասէր, բանուկ,

ժրաջան, դատող»: Կը գտնուի նաև ՄՇՈ բարբառին մէջ. Դատկան մարդ է:

### 4. թաւամայրի

Եւ միւս կողմն է Ղուռուչան, երկիր խոր և թաւամայրի (էջ 14):  
Կը նշանակէ «անտառախիտ»:

### 5. թուճ

Որ դեռ ևս պատերազմի է ընդ թուճին Վանատիկայ (էջ 27):

Ինչպէս զրբին հրատարակիչը կոստանեան (էջ 66) կը նկատէ, լտ. մաշ, ֆրանս. ծօց բառն է, որ Վենետիկան դուբսերուն պատուանունն էր. բայց կու զայ ո՞չ թէ լատին կամ ֆրանսական ձևէն, այլ իտալ. ծօց ձևէն, և կամ թերկս ասկէ աղաւաղուած թրբ. րուճ (?) ձևէ մը:

### 6. ծաղրելես

Եւ են բնակիչը սորա մարդասէրը և հիւրընկալը, ըբիստոնեայք և ծաղրելես բահանայք և տօլվաթաւորը (էջ 16):  
Կը նշանակէ «ժպտաղէմ, խնդումերես,

ուրախ դէմք ունեցող»։ չգիտէ ՆՀՅ, բայց  
գիտէ Առձեռնը։

### 7. կեր, կերուածք

Այս է թէմ և վիճակ՝ Արզուամ նստող  
փաշային կերուածքն, զի ամենայն շրջա-  
կայ բերդորայքս և գաւառքս, զոր կարգաւ  
պատմեցի, հուբմի և հրամանի ներքեւ սորա  
են (էջ 24):

Եւ իշխող, է սա մինչեւ ի Բալու՝ Համ-  
թայ փաշային կերն, դէպի արևմուտս  
մինչ ի թոփաթ և ի Սերաստիոյ փաշային  
կերուածքն, և ի հիւսիսոյ կողմն մինչ ի  
Տքապիզոն և Ախլիոյ փաշայի կերուածն  
(էջ 25):

Եւ թէ մեծ պատերազմ լինի, թագա-  
սորի հրամանաւ իւր կերուածքովն ամե-  
նայն ՃՌ թուրքի ծիաւոր ելանէ քաղաքէս  
(էջ 26):

Այս հետաքրքրական բառը քանի մը  
ուրիշ տեղեր ալ կը գտնենք կեր կամ զեր,  
սեռ. զերոյ ձեռվ։ Այսպէս՝

Եւ կինն այն հարցեալ ասաց թէ ի՞նչ  
մարդ ես, և նա ասաց թէ ես երէց եմ  
և զերոյ տէր (Յայսմ. յունվ. Յ, Ա. Մտե-  
փաննան Յուսկան որդւոյ վարքին մէջ)։

Եւ նորա բազում սիրով ընկալեալ զմեզ՝

ետ փոխան հայրենեաց իմոց՝ զՀրաշկա-  
բերդ իւր կերովն (տպ. Կերովն) և այլ բա-  
զում զիւզս ի Վայոց ձոր (Օրբ. էջ 263):

Տայ փոխան հայրենեացն... զՀամարի  
և այլ գեղօրէս բազում, ի Կայեն զԱղատն  
իւր կերովն (Օրբ. էջ 291):

Եւ տան նմա... զՈրոտն իւր երկրածն...  
և զբերդն Բորոտնայ իւր կերովն (Օրբ. էջ  
301):

Յօտար աշխարհէ եպիսկոպոս, վարդա-  
պետ կամ երէց կամ գերոյ տէր, առանց  
թեմի եպիսկոպոսի մի՛ շրջեսցեն կամ շի-  
նեսցեն, այլ նորա հրամանաւ՝ ըստ պատ-  
շաճի (Կիր. պտմ. էջ 170<sup>\*\*</sup>):

Քննիչները զանազան ձեռվ մեկնած են  
բառս. այսպէս Շահնազարեան՝ Օրբելեանի  
առաջին օրինակին մէջ կը մեկնէ «Եկա-  
մուտ», բայց միւսները առանց բացատրու-  
թեան կը թողու։ Կոստանեան՝ Յակոբ  
կարնեցւոյ հրատարակութեան մէջ կեր-  
ուտել բառէն կը հանէ։ Մենք ալ (Հայ.  
Նոր Բառեր հին մատենազրութեան մէջ  
վենետիկ 1913, էջ 74). Կիրակոսի  
զերոյ տէրը եկեղեցական պաշտօնեայ մը,

\* Նոյնը տե՛ս նաև կանոնազրի մէջ, էջ 175. «Յօ-  
տար աշխարհէ եպիսկոպոս կամ վարդապետ կամ երէց  
կամ զերոյ տէր՝ առանց եպիսկոպոսի թեմին մի՛ շր-  
ջեսցեն»։

թերեւս «քորեպիսկոպոս» զբած էինք, իսկ գեր բարին բուն նշանակութիւնը և ծառումը անստոյգ կը համարէինք:

Վերոյիշեալ օրինակները միասին առնելով՝ կրնանք հետեցնել թէ կեր, կերուսածք կամ գեր կը նշանակէ «գաւառ, վիճակ, թեմ»։ այս իմաստը յայտնի կերպով կ'երեի, եթէ համեմատենք Օրբ։ էջ 291 զրուած մէկ հաստուածը. «տայ փոխան հայրենեացն... զշրաշկարերդ իւր գաւառովն և այլ բազում զեղօրէս ի Վայոց ձոր», որ Օրբելեանի առաջին օրինակին ճիշտ կրկնութիւնն է և ուր կեր բառին տեղ զրուած է «գաւառ»։ Նոյն տեսակի բան մ'է նաև վերը «զՈրոտն իւր երկրան»։

Կ'ուզէի այս կեր կամ գեր բառը համեմատել պլա։ Հ ցոյ «բռնէ՛» բառին հետ, ինչպէս ունինք հայ. կա՛լ և կաղուսած, բայց պարսկերէն բառարաններու մէջ ցոյ «բառին դէմ նման իմաստ մը գոյութիւն չունի»։

#### 8. տնաւորիւ

Զազգան Հոռոմոց՝ որ եկեալ և տնաւորեալ էին յերկիրս Հայոց, զամնեսեան

հանեաց և աբսորեաց տամբը և ընտանեօք մինչև առ յափն Պոնտոսի (էջ 22):

Կը նշանակէ «ընտանիք՝ տուն տեղ կազմել»։ գործածական է Երեանի, Շամախիի, Վանի և Տփխիսի բարբառներուն մէջ՝ տնաւորել, տնաւորուիլ ձևով։

#### 9. փութեալայ

Սպանդանոցը և շուկաներ, սալարակապ խաներ և փութեաներ, բարտաշ գեղեցիկ շինուածովք և եկեղեցիք բազումք (էջ 31):

«Սպանդանոցը խաներ» (այն է բարաշէն իջևաններ) ձեին համազրութիւնը կը ցուցնէ որ փութեալ բառն ալ նման իմաստ մը ունենալու է։ Եւ արդարե Առանձինի մէջ կայ փութեալ կամ փութեայ՝ որ կը մեկնուի «կարաւանի իջևան, բէրվանսէրայ»։ Բառիս հնագյուն ոսկեղարեան գործածութիւնը ունի Փորիս և Շմ. էջ 69. «Եւ հրամայեաց դատաւորն Եւետոս դահճապետի տանել զերկոսեան և արգելուլ ի բանտի, ուր արգելեալ էին ընկերք իւրեանց բանտի, ուր արգելեալ էր կոչի Բեթթիկա»։ Ի փութեայի միոջ որ կոչի Բեթթիկա»։ Ալիշան, Հին հաւ. էջ 303 այս բառը կը հանէր պլա. Եսկադա «կռատուն, պահուկ» բառէն, բայց ըստ Goussenի պէտք է զնել փոխառեալ ասոր. բուտցա «կա-

պելայ, հանրատուն » բառէն (տե՛ս Հ. Վարդանեանի յօղուածը՝ ՀԱ. 1913, 136): Զարմանալի է միայն որ կարնեցին այսպիսի հին և գործածութենէ ինկած, հազուազիւտ բառի մը լաւ ծանօթ է: Եոյն բառը զիտէ նաև Առաք. Պտմ. և կը գործածէ բանի մը անգամ. Զետեղեալ բնակեցուցին ի փութկայն՝ որ է բարվանսարայ (էջ 111. հրատարակիչը յատուկ անուն կարծելով բառը՝ դրած է զլիատառ): Վասն տանց և ապարանից, բարդանեաց և փութկայից, որ է բարվանսարայ (էջ 373). Բաղանիքներ և փութկաներ և բազարի պարխսպն (էջ 514): Ասոնց համեմատ նաև բառզիրք Երեմիայ, էջ 325 փորկայ « բարվանսարայ » :

Այս բոլոր նոր գործածութիւններէն ուզեցի կարծել որ փորկայ բառը արաբերէնի մէջ ալ թերեւս զոյութիւն ունեցած ըլլայ, որմէ փոխառութեամբ անցած ըլլայ ստորին Հայերէնի. բայց Գամուսի ծովածաւալ բառարանին մէջ (Թրբ. Թրգմ. Գ. էջ 38) գտայ միայն արաբ. շա fatq « լայնատարած՝ ընդարձակ տեղ », որ անշուշտ նոյն բառն է, բայց յամենայն դէպս Հայերէնի մայրը չէ:

## 10. քարածոր

Եւ զնացեալ հասանէ մինչև բարածորն Ակնայ և Արապկերու (էջ 14):

Եւ մտեալ բարածորն Ակնայ և Արապկերու (էջ 48):

Կը նշանակէ «երկու մեծամեծ բարաւեռներու միջև գտնուած ձորը»:

## ԳԼՈՒԽՆ ԼԳ.

### ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ՀԻՆ ՔԵՐԱԿԱՆ ՆՈՐ ԲԱՌԵՐԻ ՄԷջ Զ

---

Հին քերականներու ճոխ և զիտական հրատարակութիւն մ'ըրաւ վերջերս ն. Աղոնց, «Արուեստ Դիոնիսեայ Քերականի և հայ մեկնութիւնը նորին» (Պետրոզրադ 1915), որուն մէջ շատ ընդարձակ յառաջաբանէ մը յետոյ (էջ 1-193), ամփոփուած են Դիօնիսիոսի Թրակացւոյ քերականնութիւնը՝ յոյն բնագրին հետ դէմ առ դէմ (էջ 1-76), Մեկնութիւն Դաւթի փիլիսոփայի (էջ 79-124), Անանուն մեկնիչ քերականին (էջ 127-156), Մովսեսի քերթողի մեկնութիւն քերականին (էջ 159-179), Ստեփաննոսի Սիւնեցւոյ մեկնութիւն քերականին (էջ 183-219), Գրիգորի Մագիստրոսի մեկնութիւն քերականին (էջ 223-249), Համամայ Արեւելցւոյ մեկնութիւն քերականին (էջ 254-285):

Այս բոլոր գրուածքները ծանօթ էին նոր Հայկագեան Բառարանի հեղինակնե-

րուն, բայց առաջին անգամ միայն հրատարակութեան կը տրուին (չհաշուելով Ջրաբետի հրատարակութիւնը): Հրատարակիչը աշխատած է ըստ կարելւոյն կատարեալ ընել գործը՝ նշանակելով ձեռագրական տարրերութիւնները, յոյն բնագրին համեմատութիւնը, տեղ տեղ բառերու բացատրութիւններ և ստուգաբանութիւններ: Դրբին վերջը (էջ 289-302) տրուած է նաև իւրաքանչչիւր հեղինակութեան մէջ պատահած նոր կամ անսովոր բառերը, բայց առանց բացատրութեան:

Այս ցանկը բաւական անյարմար ձեռով կազմուած է, և միջոց չկայ իմանալութէ բառ մը՝ օրինակի համար՝ բայր, որ գործածուած է թրակ. էջ 9, ուրիշ անգամ աւ կը պատահի միւս մեկնութեանց մէջ:

Այս երկու հանգամանքները պատճառ կը դառնան ինձ ամփոփելու համար հոսամբողջ գրբին նոր բառերը՝ աշխատելով նաև տալ անոնց բացատրութիւնը: Ցուցակիս մէջ չեմ յիշեր այն բառերը՝ որոնք արդէն յիշուած են նոր Հայկագեան և Առաքեոն բառարաններուն մէջ, կամ պարզ կազմութիւն ունենալով՝ առանձին դժուարութիւն չեն ներկայացներ:

## 1. արա

Աստղի մը կամ մոլորակի մ'անունն է.  
Նուազ է լուսին քան զարեգակն. նուազ է և  
աստղ քան զլուսին. նուազ է Արայն քան  
զարուսեակն զեղեցիկ (Համամ. քեր. 288):  
Նոյն է մեր ազգային աւանդավէպի զիւ-  
ցազն Արա զեղեցիկի հետ. համեմատութիւնը  
ճիշտ այնպէս է, ինչպէս Հայկը, որ թէ  
զիւցազնին և թէ համաստեղութեան ա-  
նունն է:

## 2. բաղթ

Թրակացին (էջ 9) արական, իգական  
և չէզոք բառերու վերջատափն վրայ խօ-  
սելով՝ կ'ըսէ թէ ամէն տառ (բաց ի ա-  
ե, ը, ո, օ տառերէն) կրնայ երեք սեռի  
ալ յարմարի. ասոր իրը ապացոյց կու-  
տայ հայերէնի բոլոր զբերով (բաց ի նոյն  
հինգէն) վերջացող 32 բառերու ցանկ մը:  
Այս բառերուն մէջ վեցերորդն է բաղր:

Համամ Արևելցին (էջ 256) ստուգա-  
բանելով այս միւննոյն բառերուն վերջա-  
ձայն տառը՝ կու տայ անոնց որոշ նշանա-  
կութիւն. այսպէս՝ Ողբ. բենն է բաղազա-  
նել ի դէպ. Ազգ. զիմն է՝ սերաւորելով  
զազգս. Բող. զայն է լուդականացն. ի

դէպ. Բսել կ'ուզէ թէ ողբ բառին մէջ ր  
կը ցուցնէ կցում, ազգ բառին մէջ՝ ո կը  
ցուցնէ սելունդ, բազ բառին մէջ՝ ո անար-  
գական նշան է, և այլն:

Ասոնցմէ յետոյ կու գայ՝ «բաղր. թոյն  
է թուլագոյն և տխուր» (ալսինըն թէ բաղր  
բառին մէջ՝ ո տառը կը ցուցնէ թուլու-  
թիւն և տխուրութիւն):

Բաղր բառը նոր բառ մ'է և այս եր-  
կուրէն զուրս ուրիշ տեղ չկայ. նշանա-  
կութիւնն ալ անյայտ է. բայց որովհետեւ  
տիրութեան հետ կը կապէ Համամ, ուստի  
յարմար չէ կարծել թէ ասիկա խանգա-  
րուած զրչութիւն մ'է, փոխանակ ըլլալու  
բար = բօր «գէշ կամ տխուր լուր»:

## 3. բարդակ

Աիւն. քեր. 206 խօսելով հաւաքական  
բառերու վրայ՝ իրը օրինակ կու տայ հե-  
տեւալները. «Ճոհմ, պար, ամբոխ, հօտ,  
անդեայ, ջոլիր, երամ, բարդակ (տպուած  
է բարտակ), բայց էջ 307 վրիպակներու-  
ցանկին մէջ ուղղուած է), գունդ, սպայ,  
զօր, զեհ, մայրի, այզի, արտ, մարգ,  
դրախտ»:

Բարդակ բառը անծանօթ է. Առձեռն  
բառարանն ալ չունի. կ'երկայ թէ կու

գայ բարդ բառէն և կը նշանակէ «խումբ,  
զէզ» :

#### 4. բարովիրոք

Մագ. քեր. 241 արջառի և ձիու իզա-  
կան ու չէզոք հոմանիշները մի առ մի  
նշանակելէ յետոյ՝ կ'անցնի թուչուններու  
սեռին, բայց չափազանց կարճ կապելով՝  
կ'ըսէ. «Եւ թուչուցի՝ որպիսի բարովդրոք  
և այս այսքան» :

Կ'երևայ թէ բարովդրոք կը նշանակէ  
«թուչունին էզը». իսկ Աղոնց, էջ 307  
(վրիպակներու ցանկին մէջ) perroquet  
«թութակ» բառէն աղաւաղեալ ձև մը կը  
կարծէ:

#### 5. բոյթ

Սիւն. քեր. 209 հոմանիշներու իբրև  
օրինակ կու տայ՝ «անիւ և ճղուղ, առեղ  
և աւարտը, հեւան և գանդանը, կունդը  
և ականոց, հեց և բոյթ, կապերտ և գորգ,  
ձի և զգի, երամակապան և կուտպան,  
բիր և մահակ» :

Ուրեմն բոյթ կը նշանակէ «հեց, այն է  
անիւի շրջանակ» : Նշի և Առձեռն չեն

յիշեր բառս, թէեւ ծանօթ է իրենց՝ հեց  
բառին վկայութեան մէջ:

#### 6. գիտութել

«Եւ է պարզ բայ ամենայն նախագա-  
ղափարն, որպէս զիտեմ, կոփեմ, կարեմ,  
իսկ բարդ՝ բաջ զիտեմ կամ զիտուեմ  
կամ կտրատեմ» (Սիւն. քեր. էջ 213):

Բատ հեղինակին բացատրութեան կը  
նշանակէ «լաւ զիտնալ կամ ամէն բան  
զիտնալ» . յաճախական ձև մ'է, որու  
նմանները շատ սովորական են կովկասի  
հայ բարբառներուն մէջ:

#### 7. դալապել

«Իսկ զործականին՝ օգտակարք արհես-  
տիցն, հիւսնութիւն և դարբնութիւն և  
ոմանց իւր. և չարին՝ դեղք մահաբերը.  
և զործք միջակին՝ աղեղնաւորութիւն և  
դալապելն» (Դաւ. քեր. 80):

Այս հատուածը ձեռազրի մը տարբե-  
րակն է, որուն զէմ իբր բնազիր զրուած  
մայր օրինակը ունի «... իսկ միջակին՝  
աղեղնաւորութիւն և զեղարդնաւոր լինել» :

Դարապրել բառը այլուստ անծանօթ է.  
Աղոնց ևս մոռցած է յիշել իր ցանկին

մէջ, կազմուած ըլլալով դադապր «կացին» բառէն, յայտնի է որ կը նշանակէ «կացինով ջարդել, կոտրել»:

### 8. լոք

«Խնձորի, տանձի, մանուշակ, շուշան, ղլփին, սղոցն, դալն, լոքն, բիլն, կապոյտն, ովկիան» (Աիւն. քեր. 208):

Նոր Հայկ. բառ. և Առած. բառ. կը կցեն րուր ձեխն և կը մեկնեն «մելանաձուկ». ըստ իս պէտք է հասկնալ «կարմիր», ինչպէս կը ցուցնեն երկու բովը դրուած դաշ «կանաչ» և թիւ «կապոյտ» բառերը, և ըստ այսմ կցել պրս. luk, թրք. lök «դոճի խէժ, կարմիր ներկանիւթ» բառուն:

### 9. խորշ

Մագ. քեր. 242 դնելով մանուկ բառին արական, իգական և չէզոք (այսինքն հասարակ) ձեերը, կ'ըսէ. — «Ծօլա արական և քալա իգական, գաւակ չէզոք. քանզի ոչ նշանակէ սա թէ արական է թէ իգական, որպէս մանկանց նշանակութիւն և աննշանակութիւն՝ տղայ, դիեցիկ, մնտնդեայ, տարրա, խորշ. այս ոչ ունի

նշանակութիւն թէ արականը են, թէ իգականը և ահա են աննշանակը»:

Այս բոլորէն կ'երևայ որ խորշ, ինչպէս նաև տարրա, կը նշանակեն «փոքր մանուկ», առանց արու կամ էզ սեռը յայտնելու:

Ագոնց չէ յիշած այս կարեոր բառը իր ցանկին մէջ:

Մեր տուած նշանակութիւնը կ'ակնարկէ Բառզիրք Երեմ. էջ 145 խորշ «զաւակ կամ խնձոր». այս նշանակութիւններէն առաջինը շատ յարմար է, իսկ երկրորդը՝ որ բնաւ չի յարմարիր անոր, կ'երևայ թէ պէտք է ուղղել խանձարուր:

### 10. կան

Համամ. քեր. 267—9 նախազրութիւններու ընդարձակ ցանկ մ'ունի, որոնց իւրաքանչիւրին համար ալ օրինակներ կու տայ: Այս նախազրութեանց մէջ են (էջ 268):

Կան. — կանխաւ սահման եղ ծովու.

Ուխ. — Ուխտս գիք. Ուխտեաց Աստուած Արբահամու:

Ասկէ կ'երևայ որ Համամ Արեւելցին զիտէ կան և ուխ նախազրութիւններ,

որոնց առաջինէն կը հանէ կանուխ, իսկ  
երկրորդէն՝ ոչխտ, ոչխտել:

Բացարձակապէս կը սխալի Համամ:

Համարի առաջնորդ թրակացին ալ ունի  
նախազրութեանց ցանկ մը (էջ 30), որ հե-  
տեեալ ձեռվ է. «Ներ, արտ, ատր, ասպ,  
բաց, նը, ին (ըն), բար, բաղ, շար, շաղ,  
մուշտ, զով, ջոկ, պատ, նախ, կանուխ,  
վաղ» ևն:

Վերջին երեքը հոմանիշներ ըլլալով՝  
կանուխ ընթերցուածը կասկած չի վերցներ:

Եթէ համեմատենք երկութին ցանկերը,  
կը տեսնենք որ Համամ միւնոյն շարքով  
կը կրկնէ թրակացւոյն ցանկը, աւելցնե-  
լով միայն իւրաքանչիւրին դէմ մէկ-երկու  
օրինակ: Կանուխ բառը սակայն չկայ  
Համամի քով և ասոր տեղ կը գտնենք  
կան, որուն կը յաջորդեն ոչի, վաղ, ևն:  
Շատ պարզ է որ Համամ սխալ է կար-  
գացեր բնագիրը և կանուխ միակ բառը  
երկութի բաժնելով՝ իրեւ առանձին ձեւեր  
դըեր է կան և ոչի:

### 11 կարոտել

Սիւն. քեր. 213 Խօսելով պարզ և  
ածանցեալ բայերու վրայ՝ առաջիններուն  
իր օրինակ կու տայ՝ ոռոգեմ, վարեմ,

կարեմ, պատառեմ, իսկ երկրորդներուն՝  
ոռոգանեմ, վարուտեմ, կարատեմ, պատա-  
ռուտեմ, կարուտեմ, բեկուտեմ, ևն:

Կարոտել նոր բառ մ'է, որ բառարան-  
ները չգիտեն. կը նշանակէ «կարկատել,  
զանազան բաներ կարել»:

### 12. կիտօնս

Գրիգոր Մագիստրոսի տիտղոսն է.  
«Գրիգորի մագիստրոսի և կիտաւնտի որդ-  
ւոյ վասակայ մարտիրոսի» (Մագ. քեր.  
էջ 223), Գործածուած կը գտնենք նաեւ  
այլուր. ինչ. Գրիգոր Մագիստրոսի մեծ  
արձանագրութեան մէջ՝ կեչառոյքի Ա.  
Աստուածածին եկեղեցւոյ հարաւային պա-  
տի վրայ. «Հզաւրին և առաքինոյն բա-  
րեպաշտին Գրիգորի մագիստրոսին կի-  
տաւնտին և դուկին վասպուրականի և  
Տարաւնոյ» (Եղողակաթ, էջ 181). Կամ  
նաև Մագիստրոսի «Մեծ են գործք» տա-  
ղաչափութեան յառաջարանին մէջ՝ կիտօն  
ձեռվ:

Կու գայ յն. չօւառնեց «սենեակի ծա-  
ռայ, սենեկապան» բառէն, որ յունական  
պաշտօնական տիտղոս մ'էր (արմատը  
չօւառն «ննջասենեակ»), ինչպէս ուզիղ կը

մեկնէ Աղոնց՝ իր աշխատութեան մէջ, էջ  
223 ծան.:

### 13. կուռաք

Բնաձայն բառերու շարքին մէջ Սիւն.  
քեր. 189 կը յիշէ «կուռաք, ազուաւ,  
կոռունկ, հողմ, սիք և որք այսպիսիք»:

Առձ. բառ. ունի այս բառը և կը մեկնէ  
«թոչուն մը», իբր անստոյգ բառ: Բատ  
իս՝ ուղիղ է ընթերցուածը և կը նշանակէ  
«ազուաւ», ըստ որում փոխառեալ է ա-  
րաբ. **غَرَّةَبَ** «ազուաւ» բառէն:

### 14. հիճկալ

Քերդ. քեր. 177 սպառնական մակ-  
րայներուն վրայ խօսելով՝ կը զբէ. «Սպառ-  
նական, որ սաստէ միւսումն, տիր, տի,  
զի տիրդ հիճկալ կոչի»:

Թուի թէ կը նշանակէ «սպառնալ»:  
Միսիթար Արքայի բառարանը ունի հիճակ  
«կոիւ, վէճ», հիճել «կոռուիլ, վիճիլ»: Այս  
բոլորը արդեօք կապ ունին հիճուկ ձեին  
հետ:

### 15. մալ

«Առն, խոյ, գոնչակ, վիդոն, դուար,  
մալ. այսոքիկ արականը ի վերայ հօտից

ասացեալը են նշանակութեամբ և այլը  
այսպիսիք» (Մագ. քեր. 239):

Նոր Հայկ, բառ, և Առձ. բառ. մալել  
բայէն հանելով՝ կը մեկնեն բառս «կոտած  
ոչխար»: Բատ իս դուար բառին յարա-  
գրութիւնը կը ցուցնէ որ կը նշանակէ  
«արջառ» և փոխառեալ է արաբ. մալ  
մալ «ապրանք» բառէն, որ յետոյ առած  
է «եզ, տաւար» նշանակութիւնը, ինչպէս  
որ կայ մինչև այսօր բանի մը հայ գաւա-  
ռականներու մէջ: Իմաստի զարգացման  
համար հմմտ. Ղըր. ապրանք «ինչք. 2.  
տաւար»:

### 16. մատարկայ, մարտկայ

Մակրայներու տեսակներուն մէջ թրակ.  
քեր. 33 կը զնէ «Մատարկայ(իւ) կամ  
ձզգրտութեանն, որպէս, զիպէս, որպիսի,  
զիբրդ, ըստ որոյ, որգոն»: Այս բոլորը  
նմանութիւն կամ օրինակ ցոյց տուող  
մակրայներ են և հետեւաբար այս նշանա-  
կութեամբ առնելու է նաեւ մատարկայ:  
Յոյն բնագրին մէջ ասոր զէմ զրուած է  
Տէ ծէ ու պարախոլիշ ն ծիօնածաւած. — Մա-  
տարկայ յն. ու պարախոլիշ «համեմատութիւն,  
նմանութիւն, առակ» բառին ստրկական  
թարգմանութիւնն է (պարձ «առ, քովը,

մատ-չել» թձլալա «արկանել» բառերէն կազմուած). հմմտ. առարկայ:

Համամ. քեր. 276 սիսալ կարդալով բառը՝ զրած է «իսկ որ ասէ թէ մարտկացն կամ ճշգրտութեանցն, մարտկացն հարցական լսի, իսկ ճշգրտութեանցն, որ զես ստուգագրյնս հարցմամբ ոք կամի ուսանել և ասէ. ո՞րպէս, զիպէս...»:

Նոյն բառն է որ Բառ. Երեմ. էջ 205 կը զրէ մատարակաց «ճշգրտեաց»:

### 17. մարքար

«Իսկ մեր ի Պարսից բազում ինչ ընտաներար ուսեալ զգեստս, որպէս դուռս և ոփէ, մարգար, աւազան, որ է ջրոյ անօթ, գաւազան՝ որ է վարիչ արջառոյէ խարազան՝ որ է վարիչ իշոյ և այլք այս, պիսի բազում, որ զրեթէ հասարակորդ լեզուիս մերոյ» (Մազ. քեր. 229):

Ինչպէս Աղոնց ծանօթութեան մէջ կը նկատէ՝ արար մարկար «չեծանելիք, զրաստ, էշ» բառն է, որ հիմայ ալ շատ սովորական է Օսմանեան թուրքերէնի մէջ՝ գերջին իմաստով:

### 18. ուխ

Այս անգոյ բառին վրայ տե՛ս թ. 10:

### 19. սուտրա

Օտար լեզուներէ փոխառեալ հայերէն բառերու վրայ խօսած ժամանակ Մազ. քեր. 228 իբր օրինակ կը բերէ «փակողն, որ է յունարէն, բանզի ոչ գոյր մեր և ոչ էր սովորութիւն, և աւտրա, որ է սպիրուռ (այլ Յ. սպիտուռ), և իշշամար, որ է կալամառ, այսինքն աման գրչի, և այլ ինչ բազում, զոր ընտանացեալ մեզ ունիմք»:

Այլուստ անծանօթ է աւտրա. տրուած բացատրութիւնը (սպիրուռ կամ սպիտուռ) նոյնպէս անծանօթ ըլլալով՝ անյայտ կը մնայ բառին նշանակութիւնը: Աղոնց կը հանէ սուճրա ձեւէն, որով անշուշտ կը հասկնայ պրս. սուճրա «է տեսակ իմն հանգերձի, որ և ասի զապաչէ, որոյ զրակն լինի մինչև ի մէջս, և թեզանիք նորին ի յուսս, և է զգեստ ինչ յատկացեալ պարսկական ազգին»:

### 20. վարուել

Բառիս վկայութիւնը տե՛ս թ. 11: Կը նշանակէ «բոլորն ալ քշել, վարել»:

## 21. տարրա

Վկայութիւնը տես թ, 9. Կը նշանակէ  
«մանուկ, փոքր տղայ»:



## ԳԼՈՒԽ ԼՂ.

## ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԲԱՆՔԻ ԿՄԱՍՏԱՄԻՐԱՅԻ ՄԷՋ

(Առիբեր Ա. Վ. Հանուկիկ 1853)

Գևագործող «նկարիչ»։ Բանզի ոչ  
դեղագործողի՝ աղօթիւց տացի զիծ և գե-  
ղեցկութիւն նկարից, և ոչ երաժշտակա-  
նաց՝ երաժիշտ և հագներգութիւն, եթէ ոչ  
ուսմամբ ընդունին զհմտութիւն արուես-  
տիցն (էջ 54):

Մահալից «մահուամբ լցուած, թշուառ,  
մահկանացու»։ Մի կաւ ունին ամենեքեան  
ի նախնեաց, որք ի ծիրանիս իցեն և որք  
ի խոր աղքատութեան մահալիցը են (էջ  
35):

Քաղաքուհի<sup>1</sup> «քաղաքացի կի՞ն»։ Որպէս  
պատուիրեցաւ և ամենեցուն այսպիսեաց՝  
քաղաքաց և քաղաքուհեաց և բնակչաց՝

\* Քաղաքուհի = Մայր կամ մեծ քաղաքէն կախուող  
փոքր քաղաք կամ աւան, իբրև անոր գուստը. ինչպէս  
Պատ. Ա. 27. «Եւ ոչ ժառանգեաց Մանասէ զիկիթ-  
սան... և ոչ զդուկը նորա»։ Թուշտութիւն - լու. viculus  
(աւան, զիւղ)։

(Ծ. Խ.)

յիշել զԱստուած զի է, և դատաստան  
արձակէ ի վերայ անիրաւաց՝ յորում լինի  
վախճան ամենայնի (էջ 54). — միտքը  
կիսատ է և բառիս իմաստն ալ կասկա-  
ծելի:



## ԳԼՈՒԽԻՆ ԼԵ.

### ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

Լ. Ա. Բ. Ա. Բ. Ա. Յ. Ա. Յ. Ա. Յ.

(տպ. Վ. Ենեակի 1868)

Դղորդումն «երկրաշարժ»։ Այսուհետե  
ռւսարութ և ի միտ առէց վասն մեծի  
դղորդմանն՝ որ եղեւ ի ժամու խաչելու-  
թեանն նորա (էջ 21)։ Ահագին դղորդ-  
մանըն՝ որ եղեն յայնմ ժամու (էջ 27):  
Խոյրաքանիդակ «Խոյր կամ թագ շինող»։  
Ազգէ կերպասազործ և խոյրաքանդակ թա-  
գաւորին (էջ 32):

Կապանդ. թերես «խնջոյք, հացկերոյթ»  
կամ նման իմաստով մը կը գործածուի  
էջ 40. Եւ եղեջիք ի խնդրել զկորուսեալու  
և այց առնել մոլորելոց և ուրախ լինել  
ընդ զրեալսն, գնել կաղանդս բեկելոցն և  
պահել անարատ զողջմն։ — Հետաքրքրա-  
կան է իմանալ թէ ի՞նչ ունի ասորին։

Կտաւավանառ «կտաւ ծախող»։ Հրեայք  
գիտակը օրինացն և մարգարէիցն՝ կտաւա-  
վաճառք, և նորա հաւանեալը աշակեր-  
տեցան խոստովանելով ի Քրիստոս (էջ 32):

Մղավաշէ «զողիակոս, կենդանակերպ»։  
Ի խտրոց և ի կիւսոց և վանկաց և ի բախ-  
տից և ի ծննդոց, որովք պարձին Քաղ-  
գէացիք մոլորականք, և յաստեղագիտու-  
թենէ և ի մղավաշէից՝ յորս յուսացեալ  
են յիմարեալըն (էջ 33)։ — Փոխառեալ  
է ասոր. malvaše հոմանիշէն, ինչպէս  
կը ցուցնեն Լարուրնեայ զրոց հրատա-  
րակիչը (անդ, էջ 33 ծան.), WZKM 4,  
191-2 և Հիւպշ. Arm. Gram. էջ 312։



## ԳԼՈՒԽՆ ԼԶ.

### ՀԱՅԵՐԻՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

Ն. Ա. ՍԵՐՈՆ. ԱՅՏՈՅ ՄԱՍՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

(տպ. Վ. ԿԱՆԿԵԼԻ 1847)

Ահադուղուրիւն «մաքրութիւն»։ Որպէս  
զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ ա-  
նազտեղութեամբ հոգւոյ և մարմնոյ, շնոր-  
հօք ջեառն մերոյ (էջ 194)։

Ահանամատն «անձնատուր»։ Խջեալ յա-  
մուր աշտարակէ բնակութեանն՝ անձնա-  
մատն եղեն ի ձեռս նոցա (էջ 342). —  
այս նշանակութիւնը չունի ԱԲ։

Բազմուտարուրիւն «շատ օտար լինելը,  
մեծ տարբերութիւն»։ Խակ մարդկան՝ որք  
վիճակեցան թանձրութեան մարմնոյ և աղ-  
ցաւոր կրից և այլայլական բարուց, ան-  
կարելի է առ Ամենամաքրուրն մերձ կա-  
ցուցանել զբազմուտարութիւնս մեր, բայց  
միայն առաքինութեամբ և պարկեշտ և  
անարատ կրօնաւորութեամբ (էջ 230)։

Ըերադրիչ «ոտքին տակ առնող»։ Մի-  
մեանց վահանակիցք լիցուք սպառազէնքս

և մի՛ կործանիչը, միմեանց մարտակիցք և մի՛ ընթաղբիչը (էջ 545):

Կարօտակից «իր քաշած կարօտին կցորդ՝ նոյն կարօտով տանչուող»։ Ծեսեալ զմեզ յայսպիսի վտանգս՝ լա՛ց ընդ մեզ, տըրտմակից լեր մեզ, կարօտակից լեր (էջ 272):

Մեկնակ «մեկնոց, կրօնաւորի վերարկու»։ Բնթերորդ դաս եկեղեցւոյ՝ անագանոսք, որ թարգմանին ընթերցողը. և ունին զնոյն զգեստ պատմուճանի հոլանի, բաց յուրարէն, և սոքա ոչ առանց գոտույ, այլ գօտի կապեն ի վերայ պատմուճանին, ուրք արտարոյ եկեղեցւոյն ելեալ, թէ կամին՝ մեկնակս զգենուլ մարթ է (էջ 84): — Բառարանները չունին այս իմաստը. անշուշտ առած են «մեկին, պարզ» սովորական նշանակութեամբ։ Նշանակութեան զարգացման համար հմմտ. հոմանիշ մեկնոց ձեր։

Մուլեղինաւոր «ձեռքը մոմ բռնած տիրացու կամ դպիր»։ Գային նախ մոմեղինաւորքն, ապա որք զգաւազման ունին և ապա սարկաւագքն (էջ 201):

Յառաջամտել «առջենէն մտնել, առաջինքը մտնել»։ Զի լիցի այնմ որ յեկեղեցին յառաջ մտաւ ի խորանս բռն յետոյ մտեալ և եպիսկոպոսն անդ յետոյ, աստ յառաջամտէ (էջ 202):

Յառաջերացեալ «առջեն գացող»։ Արդիք մեր նմին օգնական ըստ որում հաստատէ զայս տարակոյս յառաջ ընթացեալ բանիւս երանելիս այսպէս (էջ 176):

Նախականարիլ «շատ կատարեալ լինել, գերազանց զառնալ»։ Բայց բանզի էութիւն աստուածութեանն վեհագոյն գոլով ամենեցուն նոցա, ըստ հպաւորութեան դասուցն միջնորդութեան զամենեսեան ըզնոսա առ ինքն վերացուցանէ, այսպէս և որ մերս է բահանայապետ, որպէս մարդկան հասանելի է՝ նախակատարեալ (հասնելով գերագոյն կատարելութեան, որչափ մարդ մը կրնայ համնիլ) և համեմատեալ սրբութեանն Աստուծոյ և աստուածացեալ կարող է և զնուաստագոյնսն առ ինքն բարձրացուցանել (էջ 231):

Նկարակերպել «նկարներով զարդարել»։ Ի վերայ նորին արկանեն զվակասն, որ այժմ կոչի առ մնչ ուսանոց, այնայն ըստ որում հրամայեալ է ի զանազան նիւթոց նկարակերպեալ (էջ 147): ԱԲ ունի նկարսկերտել «յօրինել, զարդարել»։ արդեօք նոյն բանն է:

Նորաձիւ «նուաճող»։ Պատարագն հաշտութեան նուէր է, ի ծառայէ տեառնն մատուցեալ և ի խաղաղութիւն նուաճիչ (էջ 155):

Պաշտկամբ «եկեղեցւոյ բեմ, ուրկէ սար-  
կաւագը աւետարանը կը կարդայ»։ Գայ  
հանդերձ աւետարանաւն առ զուրս խո-  
րանին կամ յամպոնն և պաշտկամբ կի-  
սասարկաւագի ընթեռնու սարկաւագն զա-  
ւետարանն (էջ 205)։ — Մեզի ծանօթ  
պատշաճ՝ բառն է նոր առնւմով։

Պատրիարքիկի «ծածկելու, որ պիտի  
ծածկուի»։ Մի արտաքս փայլեցուցես  
զորս հանդերձեալ բանս ցուցանէ, որք են  
պատրուակելիք որպէս զսրբութիւն սրբու-  
թեանց, այլ երկիւղիւ պահպանեալ (էջ  
229)։

Պոսկօրէոս «մերձեցի՛ր, ո՛վ Աստուած»։  
Բացագանչութիւն՝ որ ժողովուրդը կ'ընէ,  
երբ սարկաւագը աւետարան կարդալու կը  
պատրաստուի պոսիուրն ըսելով։ Կը հա-  
մապատասխանէ արդի «ասէ Աստուած»  
ձևին, հմմո, լմբ, մատ։ էջ 208. «Քա-  
հանայն, Սրբոյ Աւետարանիս։ — Սար-  
կաւագն միայն, Պոսուսումէ։ — Ժողո-  
վուրդն, Պոսէօթէոս»։ — Նոյնը կը զբո-  
նեմ նաեւ Գաթըճեան — Տաշեան Պա-  
տարագամատոյցը՝ էջ 535 պոսկօրէոս, այլ  
Յ., պուազէարէաւս, էջ 563 պոստրէաւս,  
կամ միայն աւրէաւս՝ էջ 657։ Կու զայ  
յն, ոքօսւ ծ Թեօս հոմանիշ ձևէն։  
Պատղատոց «պտղի, այն է եկեղեցական

առւրբ վճարող»։ Վաստակաւորք, առն-  
թերակայ ժողովուրդ պտղատուք և ուխ-  
տաւորք, ողորմածք և հաւատացեալք (էջ  
430)։ Բարին այս առումը ծանօթ չէ բա-  
ռարաններուն։

Որովհասացուրիւն «սերովբէներուն  
օրհնաբանութիւնն առ Աստուած»։ Մեկ-  
նութիւն սրովբէասացութեանն աղօթից։  
Աստուած սուրբ՝ որ ի սուրբս բնակեալ  
ես... (էջ 314)։

Վահասիչ «ծախող, վաճառող»։ Վասն  
կրպակը խորանացն բազմութեան կամ  
յաղագս զբահանայս նորին վաճառիչս  
յաճախութեան (էջ 437)։

Վերաբերողապէս «դէպի բարձր՝ դէպի եր-  
կինք ամբանալու ձեռվ»։ Հոգով և ճշմար-  
տութեամբ զերկիր պազանելն. այսինքն  
զիմանալի միտս առ իմանալին Աստուած  
վերաբերողապէս ձգտեցուցանել (էջ 111)։

Վերաձառուրիւն «նորէն ճառեւ, նորէն  
կրկնելը»։ Այսպէս և այժմ ետ զսրբոցն  
ամենից նուէրն վերաճառութեամբ ա-  
նուանցն (էջ 424)։ Այս բարը ունի ԱԲ,  
բայց կը մեկնէ «բացատրութիւն»։ որ  
տեղին, ինչպէս և բառին կազմութեան  
յարմար չէ։

Վերլնկապէլ «ի վեր ընդունիլ»։ Տէր  
Աստուած մեր, զբազկատարած զաղաչանս

ծառայից բոց վերընկալցիս և ողորմեացիս  
ըստ մեծի ողորմութեան բում (էջ 205):


Փաղիիլ «շաղախիլ, ապականիլ», նոյն-  
պէս և փոանգը՝ զի տեսին զժառանգաւորս ի  
կանայս զիճութեամբ փաղիեալ, և զնութըս  
եկեղեցւոյ ի պէտս որդւոցն ծախեալ, բար-  
ձին զունելն նոցա կանայս (էջ 184):

Փայտ համարոյ «հաշուեփայտ, չէթէ-  
լէ»: Համար տուրեւարիցն՝ կրպակաւո-  
րացն է գործ. յեկեղեցիս՝ որպէս ի կըր-  
պականոց, մի հարկաւորէք զմեզ փայտ  
համարոյ կախել և զշնորհ ողորմութեան  
փրիստոսի ի թիւ արկանել (էջ 107): —  
Քաղաքակրթութեան պատմութեան տեսա-  
կէտով կարեոր բառ մ'է. հաշուեփայտը  
ուրեմն այն հին ժամանակներն ալ կար  
և մարդիկ վրան դանակով զիծեր բաշելով  
հաշիւ կը պահէին:

Փեռեկել «մեկնել, պարզաբանել». Այս-  
ցան և այսպէս երանելի Հայրս (Ս. Դիո-  
նեսիոս) ուսուցանէ մեզ զեկեղեցական  
կարգաւորութիւն... զոր կարեոր համա-  
րեցայ ըստ կարգի խուզողութեամբ եւս  
փեռեկել առաջի այնոցիկ որբ խնդրեն  
զիմացութիւնն (էջ 234): — Փեռեկել  
«թամնել» բառն է, որ հոս նոր իմաստ  
մը ստացեր է:

Փողոց «երկու շարք կանգնած մարդոց

մէջտեղ բաց թողուած տարածութիւնը,  
որով շքաղիր անձը պիտի անցնի». Սոքա  
եկեալ կանգնին առ զրունան. որպէս և  
գային նախ մոմեղինաւորքն, ապա որբ  
զգաւազանսն ունին, և ապա սարկաւագբն,  
և յետ նոցա քահանայքն ոչ բոլոր, այլ  
մի զմիոյն կնի յերկայնսն տող երկու դաս  
մինչև ի զուռն՝ մէջն փողոց և դէմք իւ-  
րեանց ի միմեանս (էջ 201: — Ծանօթ  
փորց «անցը» բառին մէկ նոր և կարեոր  
առումն է, որ բառարաններու մէջ անտես  
է առնուած:



նային լուսոյ և սուրբ շնորհաց ծայրագոյն  
առընդունակիդ (Ա. էջ 10):

Աստուածագու « աստուածային ձայնով  
կանչող » . Պարտ է կատարիլ զրելոցն՝ որ  
ի Պօղոսէ, զոր աստուածագու ձայնիւ ա-  
ղաղակէ (Բ. էջ 53):

Արքանեկակից « ծառայակից, ընկեր » .  
Կրսերս եմ ուսմամբ և յետին քան զամե-  
նեսեան, իսկ ժամանակաւ քան զբագում  
արքանեկակիցս իմ (Ա. էջ 3):

Արձանաբարպ « խոշոր՝ մեծ՝ քար » . Սպա-  
սաւորը նորա ընդ [J]այգանալն՝ առեալ  
վէմ արձանաքարի՝ ունելով ընդդէմ նորա,  
զոր ի հայելն Երուանդայ՝ պայթէր ար-  
ձանաքար վէմն (Ա. էջ 57): — Խորենաց-  
ւոյն որձաբար բառն է՝ որ կամ հեղինակին  
և կամ զրիշներուն անհմտութենէն այս  
ձևն ստացեր է:

Գայլահարած « գայլերը հալածող (հօտը  
պահպանելու համար) » , իբրև զհովիւ քաջ  
զանձն իւր զնելով ի վերայ ոչխարաց  
իւրոց գայլահալած լեալ, և ճանաչող զիւրսն  
և ծանուցեալ յիւրոցն (Բ. էջ 37):

Գոռողասաստ « գոռողութեամբ սաստող » .  
Հրաման տայլ շրջաբերական թղթօք զո-  
ռողասաստ և անխիղն իշխանաց անդէն  
հաստատել (Բ. էջ 51):

Գաստաշարժ « ձեռքով շարժուած » .

## ԳԼՈՒԽ ԼԷ.

### ՀԱՅԵՐ ԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ՈՒԽՏԱՆՔՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵԶ

(ապ. Վ. ՊՐԵՎ. 1871)

Աւեցան « ալիքներ ցանող, սփռող » . Յեր-  
կուս բաժանէր բնութիւնս և զալեցան խո-  
րութիւն խաւարային խորհրդոց իւրոց զայն  
ներհակ դնել (Բ. էջ 106):

Այսահարձել « սաստանան քշել, հալա-  
ծել » . Քանզի նոքա մեծաւ հանդիսիւ և  
բազում աշխատութեամբ այսահալածեալ  
կործանեցին զսատանայ (Բ. էջ 19-20):

Անպակարտոյց « անապակ խմուելու,  
անարատ, մաքուր » . Ի գալստեան Ցեանն  
առցես զանարատ և զանապակարբոյց զե-  
զումն պարզեաց բարեաց (Ա. էջ 8):

Անյայտումն « անհետացում », որմէ ան-  
յայտումն աչաց « կուրութիւն, տեսողու-  
թեան կորուստ » . Մինչև բազում աւուրց  
ոչինչ կարացեալ տեսանել [J]անյայտմանէ  
աչացն (Բ. էջ 128):

Առնելունակ « ընդունած, առած » . Երկ-

Զքո բանիքուն պուետիկոս դաստաշարժիզ վարժու ի ստագին (տպ. խստագիս) ասպարէզ (Ա. էջ 12): — Անշուշտ հոս պատկեր մը կայ. պուետիկոսին գործերը ասպարէզին մէջ տեղի ունեցած՝ վարժութեանց կը նմանցնէ, բայց այս շարժումները դաստաշարժ են (զրչով կամ թուղթի վրայ) և ոչ թէ զէնքով կամ մրցութեամբ:

Դժոխագինց «զժուար երթալու (ճամբայ)»։ Զդժոխագնաց ճանապարհ նորախոպանել ջանացուք, որ թուէր նմա թէ ուղիղ է (Բ. էջ 113). — աշխատինց աւրշտկել անոր զժուարագնաց ճամբան՝ որ իրեն ուղիղ կ'երևար։

Դժոխածառանզեցուցանոյ «զժոխքի ժառանգ գարձնող, մեղապարտ»։ Փախիցուք ի նզովելոցն և ի նոցունց դժոխաժառանց գեցուցանող փախմանցն (տպ. փախմանցն) (Բ. էջ 135):

Երեքրինեան «եռապատիկ թունաւորուած»։ Գրկալիր քարշեալ զլայնալիճ աղեղն՝ զիպեցուցանէ զերեթինեան սուր սլաքն՝ կրծից տախտակին (Ա. էջ 26). — Խորենացւոյն երեքրինեան բառն է, բայց հոս սխալմամբ այս ձեն է ստացած։

Թերեւանաւատ «հաւատքը թոյլ, անհաւատ»։ Նաև զահ և զերկիւղ և սպառնալիս գազանամիտ և թեթեահաւատ և ճուաղա-

բարոյ մարդկան այնոցիկ ի վերայ մեր (Ա. էջ 14):

Լրջարանորիշն «լիրը խօսքեր»։ Այսպէս պատասխանի արարեալ կիւրոնի լըրթարանութեամբ առ Աթրահամ (Բ. էջ 88):

Խստակիր «խստամբեր, դժուարակիր»։ Յարանգնեալ խստակիր վշտամբերութեամբ և կենդանի վկայեալ ի մարմնի (Ա. էջ 9):

Կախիսապատրաստ «առաջուց պատրաստուած»։ Սորա թագաւորեցեալ ըստ յանզըզնութեան անձին և կանխապատրաստ եղելոյ մահացան խորհրդոյն (Բ. էջ 51):

Կապերտոց «զրօշակ կամ զրօշակին լաթը»։ Հրաման տայ զօրաց իւրոց զնշան խաչին թրիստոսի զրոշմեալ ի կապերտոցի, որպէս զի ունիցի յաջոյ ձեռին իւրում զիսաչն (Ա. էջ 83):

Իւցուցանել «ապացուցանել»։ Զեմ երթեալ առ Վահրամ և ոչ նորա կացուցանել կարեն զայդ (Բ. էջ 100). — իմաստի զարգացման համար հմմու, հաստատել:

Հայրաձե «հօր պէս, հօրը տեղը»։ Խնձերեւեալ հայրաձե և մերձաւոր Տէ՛ր Վըրթանէս (Բ. էջ 25):

Հանգիտանման «բոլորովին նման»։ Երին շաւլօք ըրջեալ հանզիտանման գոլ նմա, մանաւանդ եթէ հանզիտապատիւ (Ա. էջ 9):

Ճանաչ «յայտնի, ծանօթ»։ Քանզի և ինքն իսկ թուղթս յայտ առնէ ճանաշօթ բանիւք (Բ. էջ 92):

Ճնիսախօս «ճարտարախօս, հռետոր»։ Այլր կորովամիտ և ճնիսախօս և ճարտարախն և բանիբուն դպիր (Բ. էջ 91):

Մատակ. անստոյգ բառ. մէկ անգամ գործածուած է Ա. էջ 30. «(Շամիրամ) տուն արքունի շինէ հրաշազան իմն շինուածօք և զմատակ ամբարտակ ի գետոյն հանեալ»։ — Համապատասխան տեղը Խոր. Ա. ժգ ունի. «Եւ հրամայէ նախ զամբարտակ գետոյն ապառաժիւք և մեծամեծ վիմօք շինել, կրով և աւազով մածուցեալս, անբաւ լայնութեամբ և բարձրութեամբ, որ կայ հաստատուն, որպէս ասեն, մինչև ցայսօր ժամանակի»։ ասոր մէջ մատակ անստոյգ բառին համապատասխան ձև մը չեմ գտնել:

Յայրախերս «ցնդածի պէս, յիմարաբար»։ իբր արքեալ իմն ժայթքեալ ի յայլախելս (Բ. էջ 47):

Յայլացեղս «ուրիշ՝ այլայլուած ձեռվ»։ Զոր ուզիդ դաւանութեամբ աւանդեցին մեզ սուրբ հարքն մեր, նա յայլացեղս վարդապետեաց նոցա (Բ. էջ 38):

Յարաձեխ «անդաղար ճգնիւլ»։ Կենդանաբուկեալ քոյին սուրբ և պարկեցա

վարուք և յարաճգնեալ խստակիր վշտամթերութեամբ (Ա. էջ 9):

Յօմարիստ «յօմար, աշխատելու պատրաստ»։ Յայնժամ աշակերտքն քաջայոյս՝ յորժամ վարդապետն յօմարկոտ (Ա. էջ 13):

Նորաձեռակիրտ «նոր ձևով, նորելուկ ձևով»։ Ակիզբն եղեւ կորստեան, նորաձեռակերտ սկսաւ ձեռնազրել (Բ. էջ 96):

Նորոգաձեռորիւն «նորաձեռութիւն, նորահնար ձեւ»։ Մի՛ եղիցի նորոգաձեռութիւն հաւատոյ ի մէջ երկուց աշխարհացս (Բ. էջ 42)։ Զի նորոգաձեռութիւն հաւատոյ մի՛ եղիցի ի մէջ երկուց աշխարհացս (էջ 45)։ Մի՛ եղիցի նորոգաձեռութիւն ի մէջ երկուց աշխարհաց մեր և ձեր (էջ 46)։ Բառնալով ի միջոյ զնորոգաձեռութիւն հաւատոյ (էջ 52):

Շորչտևասնեկիր «ամփիթատրոն, կըրկէս»։ Առ սովաւ հանդիսիցն տեղիք շուրջտեսանելեացն այլրեցան հրով ի Հոռվմ (Ա. էջ 64)։ — Իբրև երկու բառ՝ տպուած է շուրջտեսանեկեացն, պէտք է զրել մէկ բառ, իբր թարգմանութիւն ամփի - րհատրուն ձևին։

Ողջունանարցորիւն «մէկուն առողջութիւնը հարցնելը»։ Սրբասիրի տեառն Ա. բրահամու Հայոց կաթուղիկոսի ի Մովսիսէ անարժանէ բազում խոնարհութեամբ եր-

կըրպագութիւն, ընդ որով և առաւել սրբութիւնէ ձերմէ ողջունահարցութիւն (Բ. էջ 69):

Ունկանաշորել «որսալ»։ Մարգարէաքարող և առաքելաշնորհ բանիւ ուռկանաւորեալ (Ա. էջ 10):

Զարանդակ «չար»։ Զորոյ և չարանդակ և չարանդար չար մտածմունս չարիմաց առն բովանդակ ուսուցանեն բեզ թուղթը իւր և բանք (Բ. էջ 104)։ — Կազմուած է բովանդակ և այլանդակ բառերուն չետեղութեամբ՝ չար բառէն՝ անդակ մասնիկով։

Վազ «անդունդ»։ Զանձինս իւրեանց ի վազից ի վայր մղէին (Ա. էջ 6)։ — Հյավակի բառն է, որ սխալ գրչութեամբ եղեր է վազ և ասկէ ալ սխալով մը՝ վազ։

Տրտմախառն «արտմութեամբ խառն»։ Զնոյն տալով սերմ չար իւրոյ վարդապետութեանն և զչար ոփից տրտմախառն մրուր արբուցանել (Բ. էջ 106)։

Քաշասատարուրիւն «մեծ օգնութիւն»։ Զի որքան յայնժամ յոյս էր ուղղութեան զզուշութեան, իսկ այժմ քաջասատառ բութիւն զակառակութիւնսն ընդդէմ իւրոյ փրկութեան (Բ. էջ 88)։ — Նախադասութիւնը գէշ կազմուած է. կ'ուզէ ըսել թէ՛ թէն առաջ յոյս կար որ զզուշանար

և ուղղուեր, բայց զիմայ իր հակառակութիւնը իր փրկութեան դէմ արգելը էր (օգնութիւն՝ հակառակ մտքով առնուած)։

Օսարանայինի «ճշմարտութիւնը եղծուիլ, սիալ ձեռվ պատմուիլ»։ Արդ մեք, որպէս ասացաք, զյիշատակս սորա ի թուղթս յայս ո՛չ կարացաք ընդմիջել ի կարգէ խորհրդոց, և յայլում տեղող ասել, զի մի գուցէ օտարածայնեալ հեռացի խորհուրդն (Բ. էջ 127)։

ԾԱՆՈԹ. — Ուստանէսի պատմութիւնը հասած է մեզի մէկ գրչագրի մը միջոցով. ասիկա ալ բաւական անհմուտ գրչի մը օրինակութիւնն է: Դիքախտութեամբ հրատարակիչն ալ անհմուտ մէկը եղած է: Աւելցնենք նաև Լշմիածնի տպարանին սովորական՝ վրիպակներու առատութիւնը և ահա կ'ունենանք ամէն տեսակ սիալներով լի գործ մը: Ասոնցմէ մաս մը կ'ուզեմ ուղղել յաջորդ տողերով։

Ա. էջ 2. Թէպէտե յառաջագոյն սակաւին հասու էիր լեալ ի գրոյ անտափ իմոյ՝ որ բերաւ բեզ ի ձեռն Սիմէօն քահանայի, և ապա ի ձեռն յառուտ զբաւանդակն ծանուցեալ։ — Պէտք է կարդալ բառոյդ «խօսքիդ»։ Ուստանէս նախապէս նամակ մ'է ստացել Անանիայէն, բայց յետոյ նաև անձամբ խօսեր է հետը. և ահա ա-

սիկա կ'ակնարկէ հոս. հմմտ. էջ 3՝ Արդ  
քանզի խնզրեցեր ի սկզբան ի ձեռն խնզրոյ,  
և ապա բերան ի բերան խօսելով զիմս  
յորդորեցեր զմիտու. էջ 11՝ Բերան ի բե-  
րան խօսեցար ընդ իս յաղագս պատմու-  
թեանս:

Էջ 10. Աղաչեմ որ և Հոգին սուրբ՝  
որում աւանդեցաքն յասակ վարդապե-  
տութեան. — կարդա յուսումնե:

Էջ 12. Խտագիս սապարեղ ուղղէ՛ ի  
ստադին ասպարեզ:

Էջ 23. քառարք ուղղէ՛ քաղաքք:

Էջ 24. Եփրատ որ է Սաստանի ուղղէ՛  
Արածանի:

Էջ 28. Յաղագս Արամայ պատերազ-  
մին սարտիք նահատակլութեան. նոյնը  
նաև էջ 113 ցանկին մէջ. ուղղէ՛ մար-  
տիք:

Էջ 33. Գարեն վշմասովեան ուղղէ՛ Վաշ-  
տասկեան:

Էջ 44. Կղերսատրի ուղղէ՛ Կղերսատրի:

Էջ 46. զնամշագրատ ուղղէ՛ զնամշա-  
գրատ:

Էջ 55. Տիսոս նորտի նորտի (<sup>o</sup>) կարդա  
Տիսոս նորին որդի:

Էջ 81. առիւծուցն և արդուցն կարդա  
արդուցն:

Էջ 81. վրասպան ուղղէ՛ վարասպան:

Էջ 82. մարտակի կուշտ ուղղէ՛ մարտակ  
ի կուշտ:

Էջ 89. ձագարի հասոյ տեղուցն ուղղէ՛  
ձագարի ի հասոյ տեղուցն: Բ. էջ 38. այլ-  
ազգ իմն ուսոյց տար խորհրդով ուղղէ՛  
օտար:

Էջ 40. իբրեւ զգես ինչ ի բազում  
ոչիսից ուղղէ՛ ոչիսից:

Էջ 61. Ասուշածաւե հրամանաց. հրա-  
մարակիչը կ'ուղղէ՛ Ասուշածոյ. բայց պէտք  
է կարդալ ասուշածային. սիսալը յառա-  
ջացած է երկաթազիր ի և ի տառերուն  
նմանութենէն:

Էջ 64. Վեհնութեաց կարդա՛ Մեհնու-  
թեաց (ինչպէս ունի էջ 57):

Էջ 64. Բժնութեաց կարդա՛ Բժնութեաց  
(ինչպէս ունի էջ 57):

Էջ 64. Թէոդորոս եփական գնդին ե-  
պիսկոպոս. հրատարակիչը նօտրազրով կը  
թողու եփական բառը և չի համարձակիր  
ուղղել. կարդա սեփական. հմմտ. էջ 57,  
ուր նոյն անձը կը կոչուի «Թէոդորոս Մարդ-  
պետական եպիսկոպոս». սիսալը յառա-  
ջացած է կրկին և - երէն մէկին յապաւ-  
մամբ:

Էջ 76. Բայց որ եպիսկոպոսն եղեւ  
վրացի և հասումն զիտէ և երկողումբը  
գպրութեամբը պաշտօն կատարէ: — Վրա-

տարակիչը հասունն բառը նօտրագրով զրածէ, այսինքն թէ անիմանալի բառ մը կը համարէ: Պարզապէս պէտք է ուղղել հոռոմն, եպիսկոպոսը զիտէր վրացերէն և յունարէն և այս երկու լեզուներով (երկորումը գպրութեամբը) պատարագ կ'ընէր:

Եջ 94. Քանզի մեր և այդ աշխարհի ազատերոյ թեպէտ արիւն և հարազատութիւն ի միջի կայր. — ուղղէ՝ ազատերոյ:

Եջ 126. Յուսմունս պէսպէս և յօտարաձայնս դանդաղէ. — թէե կայ դանդաղի «տնտնալ» բայ մը, բայց հոս խօսըը կամաց շարժելու վրայ չէ, այլ գէշ շարժելու, ուստի պէտք է ուղղել դանդաղէ:

Եջ 135. Ի նոցունց գծոխաժառանգեցուցնող փախմանցն. Կարգա՛ փախմանցն. այս բառը առ հասարակ կը գործածուի «հերձուածողական բան» իմաստով:



## ԳԼՈՒԽ ՀԸ.

### ՀԱՅԵՐԻՆ ՆՅՐ ԲԱՌԵՐ

ՀԱՅԱԲՈՐԱԿԱՆԻ ՄԵՋ

ԱՆՈՒԱՆՅՑ ԿԱԹՈՒԳԻԿՈՍՈՅՑ ԱՂԹԱՄԱՐԱՅՑ

(առ. Եջմիածին 1916)

ԾԱՆՈԹ. — Այս աշխատութիւնը՝ որ նաւազար Ղազարի ընդօրինակութիւնն է (1824 թուէն), խմբագրուած է երկու անկախ գրութիւններէ. առաջինը Գագիկ Արծրունի թագաւորի քարտուղար Թովմայի գործն է, երկրորդը տիրացու Ներսէսի (Ժի գար): Դժբախտաբար հրատարակիչը (Մեսրոպ Վրդ. Մաքուտեանց) կարեղը չէ համարած զրբին սկիզբը գնել փոքրիկ ուսումնասիրութիւն մը, ուր պատմուած գէպքերու, գրութեան ոճի և լեզուի քննութեամբ պարզուէր երեք գրիչներու հեղինակութեան բաժինը. թէ ո՞վ է Թովմայ քարտուղարը, արդեօք մեզի ծանօթ թովմա Արծրունի պատմիչը չէ. թէ իրօք Ղազարը հասարակ ընդօրինակո՞ղ մըն է, ինչպէս ինքը կը խոստովանի (Եջ 84,

տող 27-28) թէ խմբագրող մը եղած է (հմմտ. վարը զետնետեալ բառին տակ թուղմայէն ընդօրինակուած ամբողջ հաստուած մը). և կամ ո՛ր մասերն են յատկապէս որ կը պատկանին թուղմայի, այսինքն հնագոյնն են և որո՞նք ներսէսինն են, այսինքն կը պատկանին շատ յետին ժամանակներու։ Հ. Մաքսուտեանը՝ որ այնպէս նախանձախնդիր էր մեր հին զրականութեան մէջ ժողովրդական բարբառի հետքերը որոնելու, աւելի ուշադիր ըլլալու էր այս կէտին, որով միայն կարելի պիտի ըլլար որոշել թէ նկատուած բարբառային ձեւերը հին են և որքան հին են, թէ բոլորովին նոր բաներ են, այսինքն 1824 թուէն։ Այս անորոշ վիճակին մէջ մենք ալ կը քաղենք ուրեմն զրուածքին մէջ պատահած նոր բառերը, առանց կարենալու որոշել թէ անոնցմէ որո՞նք հին լեզուին յատուկ և որո՞նք նոր գաւառական բառեր են։

Արքայիւակ «թագաւորական»։ Ի տեսանել նորա հեռաստանէ զգոնդն հայրապետին, իսկոյն ի վայր իջեալ արքայեակ կառէն՝ հետիոտ քայլէր (էջ 30)։ Իմաստին համար բառին – ևակ մասնիկը անյարմար է. ուստի կը կարծեմ որ պէտք է սրբագրել արքայեան, ինչպէս

կը գտնենք արդէն այս իմաստով զործածուած ձառնուո. «Արքայեան տիկին» (արքայական տիկին)։

Բարկին «մահակ, կոպալ», երեք տուն մալի ու խաղին (=արար, մալ և խազին ապրանք և զանձ), 4 տուն հազեւափի էր, գէմի ու զրէն, թուր (,) բլաթկին և նաշափի ու ոռոմբ և ասպարս անհուն բազմութեամբ (էջ 20)։ — Նոյն բառը կը գտնենք նաև քանի մը ուրիշ տեղեր գործածուած. այսպէս՝ ինջուղն գէր և աղուոր պիտի, որ միս ունենայ և ուժով կարինք գահեն և բերեն ծանը պատկերով և ածեն ի տունն. և ընդ առաջն մեղմն ծեծեն զբնջուղն և ի հետ սերտեն զգարկերն այնչափ, որ միսն մէն մանրի և ի զարկուցն մեռանի (Վատկ, էջ 194)։ — Ու տեսան ազգի ազգի սեհ կապած, ըռումբ և չարփի աղեղ լարած ու թրեր և բատկի ասպարը ու բէշիկ (Պղնձէ քաղաք, Տփիփս 1908, էջ 39)։ — Զանազան է սլեհն. և վասն այլոց զինուց՝ մէկ ձեռն բաւական է. զի զթուրն և զբարիկինն՝ ի մէկ ձեռն կարէ բանեցուցանել. բայց աղեղանն երկու ձեռք պիտի (Տաթև, ձմ. իգ)։ Այս բառը զանազան ձեռվ մեկնուած է. Վաստակոց զրբին մէջ Ալիշան կը համարէ «հարուածք գաւազանի և գաւազանք

կամ քուրք», Գէորգ զպիր «պարանս, որով կապեալ զկով և զարջառ տանին՝ ուր կամինն» (տես Վատկ. 257), իսկ Գարամաճեան բառարանը «ոլորուած թաշկինակ կամ զենջակ, որով ինչ ինչ խաղերու մէջ հարուածներ կը տրուին»։ Ճիշտ նշանակութիւնը կու տայ մեզ պըս, *نَكْلَلِ بالاتيْجِين* «րիթ, չօմագ՝ որ զլուխն գնուակ է և փշուտ»։ ըստ այսմ լաւազոյն գրչութիւնն է Տաթեացւոյն բարսրիին ձեզ։

Գետինետիլ «ոռոգուիլ»։ Արդարեւ սա էր երբեմն անապատ ծարաւի, իսկ այժմ քաղաք մեծին Աստուծոյ՝ գետհետեալ յերկուց մշտաբուղիս աղբերաց (էջ 27)։ — Այլուր ունինը գետահնետեալ և այս ձեռվէ նաև Արծր. ե. 8, որմէ լնդօրինակուած է այս հատուածը ամբողջովին։

Գեիմ «հագուստ կապուստ»։ վկայութիւնը տես բլարիին։ — փոխառեալ է թրբ. *گییم* հոմանիշէն։

Գորտի «գգակ, զլխարկ»։ Եւ կամէին տեսանել զգեղեցիկ զարպաս, նախ զգըւխոյ գուտին ի վեր առնին և ապա կարեն տեսանել զգանազան գեղոցն և զպատկերագրութիւնս (էջ 19)։ — Գլխարկը հարագրութիւնս (էջ 19)։

Երկնարերձ բարձրութիւնը ցոյց տալու համար։ Բառս կենդանի է մինչև հիմայվանի և Մոկաց գաւառականներուն մէջ կուտիկ ձեռվ և կը նշանակէ «վարդապետի ու քահանայի զլխարկ՝ ու բուրդէ հիւսուած։ Զ. գլուխը դնելու սաղաւարտ, զըլխանոց»։

Դաման «հարկ, տուրք»։ Ինչպէս ըրահմաթլի (թրբ. rahmetlu լուսահոգի) մեծ խոսրով փաշէն զրեր է, որ 15 դռուշահնի զաման տամբ և դռուշ (ու) կէսէլ նայիրին (արար. *بَلْ نَأَيْبِ فَوْهُمْ قَاتِنَاتِرِ*) տամբ և զայլս աւելի ցաւ կամ հարկ չի լինի սուրբ տանս (էջ 49), = արար. Նշանը սաման «երաշխաւորութիւն, վնասուց հատուցում»։

Փաշնաստառ «գաշնազիր, պայմանազիր»։ Այլ և մասնակիցը յայսմ պայմանիս և զաշնաստառիս (տպուած կամ զրուած է զաշնաստառիս, զոր պէտք է ուղղել այս ձեռվ)՝ զտէր Գրիգորն և զտէր Կարապետիոնեմ քահանայը (էջ 49)։

Գեղոց «զանազան ներկերով յօրինուած պատկեր»։ Վկայութիւնը տես գորտի։

Թրարսի «սոսներամարտութիւն»։ Անդ են և սուսերամերկաց հոյլը, որ կոիւ և թրաթափ, և երիտասարդաց և քաջ քաջաց կոիւ և քուշտընկերաց պատերազմունը (էջ 19)։

Խորութեղ «խոր, խորունկ»։ Եւ ասաց թագաւորն, ի ծովու խորունդ տակն ձգեցէք, զհիմն յիրար կցեցէք (էջ 16)։ — Այս ձեռվ և այս իմաստով գործածական է հիմայ ալ վանի և նոր-Բայազիտի գաւառականներուն մէջ։

Իրունվ. նշանակութեամբ անյայտ բառ, որ մէկ անգամ կը գտնեմ գործածուած էջ 40։ Ես զրել այսմաւուրք մի քաջ քարտուղ(ար)ին թօմայ վարդապետին՝ մականուն կոռանվ կոչեցեալ։ — Վանի բարբառով կայ իրած կամ իրած «սոխի, խնձորի, ընկոյզի, հաւկիթի կամ ծառի կեղե», որով կոռանվ կրնանք մեկնել «կեղեալ, կճեպը չհանած»։ Տես իմ Գաւառական բառարանս, ուր էջ 594 դրուած է կոռած և էջ 600 կրած։ ասոնցմէ պէտք է պահել միայն երկրորդը, քովը նշանակելով տեղացոց կոռած հնչումը։

Յարանա. իմաստով ու ձեռվ անյայտ բառ։ մէկ անգամ գործածուած է էջ 39։ «Ես շինեաց զանգակն մի և զսուրբ Յոհաննէս և զսուրբ Նիշան մի յալանա մասն շինեաց յիշատակ հոգոյ իւրոյ»։

Որփեր րին. խանգարուած գրչութեամբ բառ։ «Ես զհողաթափս աշխատասէր ու տիցն սուրբ կուսին Հոփիսիմեայ և զփողապատն որփէր թին ներկեալ սուրբ արեամբն և զբազուկն» (էջ 31)։

Ուշուր «տասանորդի տուրք»։ ստացաւ հալալ վաստակոց իւրոց և արար ովկ (արար. vagf) ի գուռն յԱղթամարայ սուրբ խաչին, որ է առանց գաւի (արար. da'və գատ) և առանց ուշուրի (էջ 53)։ — Փոխստեալ է արար. շաւ նՏՐ (թրք. öşür) «տասանորդի տուրք» բառէն. կայ նաև ասոր բացասական ձեր՝ սենոշուր «տասանորդէ ազատ»։ Եւ այլ ամենայն արտօրեար ֆարմանով է, ևս անուշուր է (էջ 50)։

Պալ «քարածայոյ»։ Ապա ի հինգերորդ տարին լինցան զպարիսպն. անհուն բարձրութիւն նորա էր զիմաց պալին, վաթսուն կանգուն (էջ 17)։ — Գործածական է Ապարանի, Բուլանըիսի, Մուշի, Նոր-Բայազէտի և Վանի գաւառականներուն մէջ։

Սալել «սալարկել, բար քաշել»։ Տէր Ստեփաննոսն՝ որ զսուրբ խաչի զմբեթն սալեց, ևս 13 քար ի սուրբ խաչի հարաւակողմն շինեաց (էջ 38)։ Տէր Ստեփաննոս՝ որ սուրբ խաչի զմբեթն սալեց, 12 քար հարաւակողմն շինեաց (էջ 60)։ — Գործածական է Ղազախի գաւառականին մէջ։

Սարակ «բանւոր, գործաւոր»։ Իսկ Գաւաշուց երկիրն՝ տուն վեցքին (իւրա-

քանչիւր տուն մէկ վեցըի), տուն սարակ մ(ի), տուն հաւ մ(ի) (էջ 56): — Գործածական է վանի բարբառին մէջ: — Այս բառը փոխառեալ կը համարիմ սեմականէն. հմմտ. արամ. ԴՐԱ սարակ «թագաւորական պաշտօնեայ», իմաստի տարբերութեան համար հմմտ. լու. minister.

Սպիհնտր «տեսսակ մը շաղախ է»: Եւ սկսան արկանել զիմն տաճարին ի մեծամեծ քարանց ի վերայ երկոտասան սեանց. արձիճ ու պղինձ ու սպինտրաւ (ձ. սպինտրօ) հալեցին հիման մէջ (ձ. մէնջ) լցին ի հետ ըռըխտին, որ պատնուր ուր ուր քան զպողպատ (ձ. պօղպատ) կու լինէր ի հմէն (տալ. ի հմէմն) մինչ ի զլուխն (էջ 18): — Թրանս. ciment բառն է = լու. cæmentum, որ իտալ. չիւներօ ձեռվ մոռած է Պոլսի բարբառին մէջ և ոռւս. յեմենս ձեռվ ալ զործածական է կովկասի մէջ:

Փարուանք «շէնքի մը շինութիւնը կամ հիմնարկութիւնը»: Յաղագս շինութեան գերապայծառ և պանծալի երկնանման և բարձրագմբեթ սուրբ Խաչիս յԱղթամար քաղաքի, որ նիւթ նպաստարութեան փարուանց բերաւ յերկըն հեռաստանէ (էջ 21):

Քիրա «կիր»: Աստուած ողորմի ասա-

ցէք նիկողայոս սրբազան կաթողիկոսին, որ զշասկանա վանից գոլն (լիճն) շինեաց բլսով (էջ 54). — արաբ. سک kills «կիր» բառն է:

Քուշտրեկեր «ըմբիշ»: Վկայութիւնը տե՛ս րիարափ. տպագրեալին մէջ իբրև երկու բառ զրուած է քուշտ լիճկերաց. պէտք է միացնել. այլուստ ծանօթ է բառս քուշանգորդ կամ քուշտրեկիր ձեռվ (տե՛ս Առձ. բառ.) և է պրո. կոշտից «ըմբիշ» (տե՛ս Աճառ. ՀԱ. 1908, 121):

Քոնած «ծաղկահար, չեչու»: Տէր կարապետ որ մականուամբ քռնած ասի (էջ 63): — Կենդանի է վանի բարբառին մէջ:

## ԳԼՈՒԽ ԼՅ.

### ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

Ա.Ի.Ա.ՔԵԼ, ՍԻՒՆԵՑԻՈՅ Ա.Դ.Ա.ՄԳՐԹԻՆ ՄԷՋ

(Տպ. Վենետիկ 1907)

Արենակոյս. գործածուած է ոսա հետեւ և առաջ տան մէջ. Ի կոյս մօրէ նա ծնանի, և կոյս մարմեռվ յերկրի սնանի. աթենակոյս զրով կնքի, և ի կոյս վիմէ յարուցանի (էջ 181): Անշուշտ յն. «Աֆղան բառէն, որ է «Աստուածուհին իմաստութեան, դուստը Արամազդայ»:

Անմար. «անշէջ, չմարող». Զնա մեռուցեր և դու մեռար կրկին մահուամբ ի բոցն անմար (էջ 300):

Անուշիմ. «անխելք, անմիտ». Զանձրախորհուրդ և անուշիմ և անհանձար ամենեւ ւին. Երբ զքեզ խարեց օձն ի ծառին, չափիր «Դու կեր որ ես ուսնիմ» (էջ 312):

Գեր. «վնաս, յանցանք». Եւ քեզ աւեմ, օ՛ձ խորագէտ, որ ուսուցեր զկինն տգէտ, թեպէտ յանցանք եր այդ և զէթ, բայց ո՛չ ի քէն, այլ ի չարէդ (էջ 93): Գործածականէ նաև Տփղիսի բարբառին գործածականէ

մէջ նոյն իմաստով: Ասկէ կազմուած է զիրվոր «մեղապարտ, յանցաւոր», որ մէկ անգամ գործածուած է յետին գլուրուածքի մը մէջ (տպ. Յանիկ, 11, 75). «Որպէս վախեցար դու ի ձայնէ փողոյն իմոյ, որ չես ինձ վնասակար, նոյնակէս և ես զարհուրիմ ի ձայնէ փողոյն՝ որ կոչէ զիս ի դատաստան. զի զիթվոր եմ Աստուծոյ, սեերես և պարտական»: Մառ (անդ) այս բառը կը հանէ պըս. Ու «վախկոտ» բառէ մը, որ չեմ զաներ Գէորգ դպրի բառարանին մէջ և ասկէ զատ չի յարմարիր իմաստով:

Գմանակ. «անըմբոնելի, դժուարլումը բռնելի»: Յետոյ ի խաչ գալ Արարչին, այս՝ խորհրդոց է գմպահակ. բայց այս նմա է զիտելի՝ որ է բնութեամբ անեղ գոյակ (էջ 284): Կ'ուզէ ըսել թէ Արարչին խաչուիլը մեր մտքին համար անըմբոնելի բան մ'է: Իմաստին լուսաբանութեան համար հմմտ. ասոլ յաջորդ տունը՝ այլ ձեռազրի մը մէջ. «Մահուամբ զմահն լուծեալ, այս՝ մեր մտացս է հակառակ, ևն»: — Բառս յարմարցուած է դպրի ձեին վրայէն, հմմտ. դմպահուրիւն:

Երուն «գուրս ելած, դուրս ցցուած»: Եւ զի կողն է բնութեամբ ելուն, վասն այն չեկաց առ իւր մարդոյն (էջ 125):

Ծնարութիւն «յետին մնացորդ, տկուք, տակը մնացած գէշ մասը». Միթէ ընտրուկս եմ եղելոց և վերջին մասն արարածոց, վասն այն ես մայր եղէ ցաւոց, չարչարանաց և գժոխոց (էջ 114): Ասոր հետ հմմտ, ընարութիւն «անխոտիք ընտրած՝ ժողված բաներ»: Խմասաը յառաջացած է մաղի օրինակէն, երբ ցորեն կամ ուշից հատեղէններ շարժելով՝ մէջտեղը հարսուած քարերը և այլ օտար նիւթերը կ'ընտրեն ու կը նետեն:

Ժժմունք «ցնորական տեսիլքներ, աշշին երեցած բաներ»: Եւ ընդ ցելուլ գարագուրին՝ մեր վարագոյլը մտաց լուծցին, անմիջաբար զիտել զբարին, առանց ժժմանց մարմնականին (էջ 213): Նոր չայկ. Բառ. այս բառը կը մեկնէ «խճըլաց», խառնիխուռն ձայներ», որուն իբր տոց, վաստակոց զրոց մէջ ժժմունք բնաւ Բայց վաստակոց զրոց մէջ ժժմունք բնաւ այսպիսի իմաստով զործածուած չէ. ահա զրբին մէջ զանուած բոլոր օրինակայդ կերիչըն և վնասակար ժժմունքն ները. — Կերիչըն և վնասակար ժժմունքն ի կեղեն կու բնակին (էջ 64). Զիկլին ի կեղեն կու բնակին (էջ 64). Զիկլին ոսկըն թրջէն ջրովն զսերմն մնշեն և զինքն ևս ի ներք խառնեն և ջփեն և միաւորեն ընդ սերմանցն և ցանեն, նա պահէ զնոյն սերմն յամենայն կերչաց և պահէ զնոյն սերմն յամենայն:

Ժժմանց (էջ 19). Յաղազս ոջլի և այլ ազգ մանը ժժմանց՝ որք հարկանեն ըզտունին (էջ 76). Բնաւ ժժմունքն չմերձենան. Զժմունն սպանանէ (էջ 76): Այս բոլորին մէջ ալ պարզ է որ ժժմունքը կը նշանակէ «ճճի, միջատ»: Բայց «ճճի» իմաստը չի յարմարիր վերի օրինակին մէջ: Այլուր նկատած եմ որ «ճճի, միջատ» նշանակող բառերը ստացած են նաև «երևակայական ոգի» նշանակութիւնը (տե՛ս իմ Գաւառական բառարանս, Բողոքայ բառին տակ), ըստ այսմ ժժմունքը բառն ալ յիտոյ զարձած է «երևակայական էակ, անրջական տեսիլ», ինչպէս ունինք արդարեւ խնուաի գաւառականին մէջ և այս իմաստով զործածուած է նաև հոս:

Լեկ «լերկ, անմազ»: Մարդն ծաղկի մօրուաց մազով, բայց կինն լեկ է երեսով (էջ 139): Ասիկա, ինչպէս իմաստն կ'երեայ, նոյն լերկ բառն է, ո-ի անկումով ձեացած. հետեւաբար նոյն բառն է նաև գու. լեկ (Խ. Խոշջ. Վն.) «ոչխարի բարակ և լերկ մորթ, կաշի»:

Լորոմել «ծամելով ուտել»: Զմաղձն մահու պասկեալ ծծէր, զլեղին զերդ մեղր լոլոմէր (էջ 316). Զեղին որպէս շաբար ծասկեալ լաւումէր (էջ 258). հմմտ. հոմանիշ բամբակել, լիրմել և մանաւանդ գու. լորմել ձեք:

Խաղբաղել «Հփոթել, միտքը տակնուշվրայ ընել»։ Զար հակառակ և դժնային՝ նախ խալբաւեաց մոօք զնախնին (Եւա) և ապա եցոյց զպառուղ ծառին (էջ 315): Ասոր կրաւորականն է խաղբաղել «միտքը շփոթուիլ, տակնուշվրայ ըլլալ»։ Խալբաւեցաւ միտքն Աղամայ՝ յորժամ ետես խարեալ զԵւա (էջ 31): Ասիկա հին հայերէնի խարբաղել «մաղել» բառն է, որ վերի իմաստով ալ արգէն գործածուած է Ղկ. իբ. 31, Եզն. 181 ևն: Նոյն իսկ Աղամզիրքը էջ 59 կը զբէ կրկին ձեռվ. «Ստեղծեալ էակ բնութեամբ բարի՝ չար խարբալեալ (այլ ձեռ. խալբաւեալ) ապականի»։ Բստ այսմ կը կարծեմ որ նոյն բառն ըլլայ խըլլիխայլիկ «ուշաթեափուիլ, ուշքը երթաւ, նուազելով վար իյնալ»։ բ > փ փոփոխութեան համար օրինակ կընանք առնել խարել > զւո. խափել:

Խեռային «անսանձ, խօսք մաիկ չընող»։ Այլու կնոջն է խեռային, կարծեօք ոխայընդ՝ իւր մարդին (էջ 137):

Խեր «բարիք»։ Զկողն որ առին յիմոյս մարմնոյ, այս ինչ նշան էր ինձ խերոյ (էջ 130). — Խմասոք պարզաբանելու կը ծառայեն Աղամզրի երեք ձեռագրերը, որոնք այս բառին տեղ ունին «բարոյ»։ = Արար. յշ խայր «բարիք» բառն է:

Կատարուն «կատղած»։ Մեծն Եսայի նմին հանգոյն զձեզ կոչեաց շոն լիրք կատաղուն. և լեզուք շանցն կատաղուն թացցի յարեանցն թշնամոյն (էջ 185):

Կարկափիլ «պապանձիլ, բերանը բըռնուիլ»։ Փշրեալ իմ ատամունքս որ զայն ճաշակէր, բերանս իմ կարկափի որ ըզմահն ծասկէր (էջ 261): — Հմմտ. կարկափացեալ «բերանը պապանձուած» (թենիկ, տպ. Առփերք, հտ. իս, էջ 81): — Ըստ այսմ վերի երկառողը կը թարգմանուի. «Թորդ փշրուէին իմ ակռաներու՝ որ զայն ճաշակեցին, թող պապանձէր իմ բերանս՝ որ մահը ծամեց»։

Կոտիտ «փականքին մասերէն մէկն է»։ Հաւատքն է նիւթ այն բանալեաց, իսկ յոյսն ձև որ զայն զուգեաց. սէրն կոտիտ որ զփակն երաց (էջ 146-7): Երևանի բարբառով ունինք կոտիտ «փայտէ փականքին մէջը շինուած մանը տատամները»։

Կսկծաման «կսկիծէն մեռնելու չափ»։ Ի հուրն անկեալ դու պապակիս և տուչորեալ բոցակիզիս. կսկծամահ դու մորմորիս և յաւիտեան ոչ ազատիս (էջ 299):

Հրովարդին. անծանօթ և անստոյգ բառ, որ կարծեմ պէտք է ուղղել հրաշագին. Պէսպէս պարզեցն աստուածային բաշխեալ բնութեանց գոյեղինին, իր զանազան յոյժ

հըսպագին՝ տալաւորեալք ի միասին (էջ 308):

**Չանձրախորհուրդյ** { «ուսման սէր չունեցամիտ» շող, միտքը շուռ ձանձրացող». Չանձրախորհուրդ և անուշիմ, և անհանճար ամենին (էջ 312). Որբ բաղձանօք զսակարդան ... բայց թէ իցէ ոք ձանձրամիտ, պարաւաղէտ բանից անկիրթ, նուոչ առնու զճաշակ բանիդ (էջ 232):

Դաշլ «պայման, ուխտ». Դնեմ ես ընդ ազգի քո մեծ դաւլ ու սէր (էջ 255). Բայց նախ սիրով ինձ դավլ արա որ զայս չասես դու Աղամայ (էջ 21): — Ալար. Ըց զավ «խօսք, խոստում, պայման» բառէն փոխառեալ:

Մէլ «յոյս». Գործածուած է 20 անգամ. ինչ. Ծնանի անախտ զԱստուած անմահ կենաց մէլ (էջ 243). Զի զգա ետ օգնական ինձ և կենաց մէլ (էջ 243). Այլ զգա ի կենդանոյ արար կենաց մէլ (էջ 243). Յորժամ անշնչանամ՝ կնոջով լիցի մէլ, երբ մահն ոչնչացնէ՝ կնոջով լիցի մէլ (էջ 244). Ի քէն ծնանի ծաղիկ անմառ կենաց մէլ (էջ 247 և 263). Ուրախ լեր և բերկրեա այլ քեզ կենաց մէլ (էջ 247). Եւ տամ ձեզ պատուիրան օգնական ու մէլ (էջ 248). Այս քեզ նշան

սիրոյ և քո ազգին մէլ (էջ 249). Ուրախ լերուք, ասէ, զի ես տամ ձեզ մէլ (էջ 254). Դու բաց զականջ սրտիդ, ես տամ հոգոյդ մէլ (էջ 255). Ծնանիս Աստուածողի անձառ բարեաց մէլ (էջ 256). Պտուղն որ ճաշակեաց՝ մեծ փառաց մէլ կեր (էջ 260). Կենաց չկայ մէլ. Չունիմ յուսոյ մէլ (էջ 262). Դիոր քեզ այլ մէլ կէր. կայ քեզ կենաց մէլ (էջ 263). Օրհնեալ Յիսուս Աստուած անձառ կենաց մէլ (էջ 269). Փառաց և յարութեան և պսակաց մէլ (էջ 272): — Աղամզրքի հրատարակիչ Հ. Մ. Պտուրեան, էջ 243 բառս կը մեկնէ «պատճառ, առիթ»: այս խմաստներն ալ կընան յարմարիլ, բայց լաւագոյն է ըստ իս «յոյս», ինչպէս գործածական է մինչև այսօր Պարարաղի բարբարին մէջ. Մէկրավ կաց «յուսով կեցիր, յուսա»: Երկուքն ալ կու գան արար. մը amal, emel «յոյս» բառէն:

Մղնուկ «խեղդող». Նեխ և մղնուկ իմ թշնամին (սատանային համար կ'ըսէ), զինչ շահեցար այդմ բանի (էջ 312): Իրբ անարգական ածական գործածուած է:

Աղբագին «աղաչելով, աղերսելով». Հարցարննէր ողոքագին, տեսնուլ նշան ինչ երկնային (էջ 202):

Աւշտար «խելքաղ, հիանալով ուշա-

գնաց եղած»։ Այն ինչ զբախում էր լուսափայլ, «ը զմեզ արար հենց ուշատար»։ մտօք կորար մեք հիացեալ (էջ 102):

Սահար «ժամ»։ Այն ինչ չար ժամ էր խաւարի, այն ինչ սահաթ էր ցաւալի (էջ 107):

## ԳԼՈՒԽԻ Խ.

### ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԿԱՆՈՆԱԳՐԻԻ ՄԵԶ

(ապ. Թիֆլիս 1914)

Ազգացեղուրիւն «ազգականութիւն»։ Յետ բազում քննութեանց, թէ ոչ գոյցի ազգացեղութիւն ի մէջ նոցա (խօսեցելոց) ... օրէնեսցէն զնշանն (էջ 191)։ - Երուսաղէմի 1651 թուի կանոններէն է, ուստի շատ յետին, կազմութեամբ ալ անմիտ բառ։

Աղձել «պղձել, ապականել, աղտոտել»։ Քանզի աղձեաց նա զսուրը ամուսնութիւնն և առ ոտն կոխեաց (էջ 210)։ — Քասին արմատն է աղծ == աղու, որմէ կային զանազան ածանցներ։ Ինչ. աղծուրիւն, աղծապիղծ, աղծապղուրիւն։ բայց բայը այս հատուածին մէջ միայն երեան կու գայ։

Անգեղչարար «վրան չզդշալով, չափսաւով, անկեղծօրէն»։ Ժողովրդականը զամենայն պտուզն և երախայրիս երիցանց մասուցեն անզեղջաբար մտօք, զի եղիցին ընդունելի (էջ 55)։

Անիսոստվաճարար «առանց խոսսո-

վանելու, անզեղջ »։ Քանիզի նորա անխորապէս և անխոստովանաբար, ոչ լեալ մաքուր, մերձենան յահաւոր խորհուրդն (էջ 159):

Անքակիլ « անքակ՝ անքաժան մնալ, չքակուիլ »։ Խառնեաց ընդ իւր Աստուածութեանն, վասն զի անքակեցաւ ի մարմիկ բնութեամբ (էջ 152):

Ապուննա « հոսում կամ վիժում ունեցող »։ Վասն որ ապոռնա է կամ ձգէ կամ ածէ ինն ամ ապաշխարեսցէ (էջ 119): Թէ բառը այսպիսի նշանակութիւն մը ունի՝ կ'երեայ նաև յաջորդ կանոնէն՝ ուր կ'ըսուի, թէ « Վասն որ ընդ հեթանոսի կայ և մեղանչէ ընդ նոսա՝ հինգ ամ ապաշխարեսցէ »։ Ասկէ զատ կընանք բառս համեմատել յն՝ ձոքօրօւա « հոսում » ձոքօրօւս « հոսում ունեցող » և կամ ձուութեած ժամանակ դուրս ձգել » բառերուն հետ, թէկ ասոնցմէ ոչ մէկոն ճշտիւ համապատասխան չըլլայ։ Արդեօք աւելի մերձաւոր ասորական ձև մը կայ։

Ապուղայ « տիկ »։ Թէ անխիղն պամբաէ համարել զձէթդ, որ բերեն յԱսորոց ապուղայիւր, մեռելոտիւր և յանսուրը անասնոց թէ ոչ (էջ 134): Այս բառը միւնոյն վկայութեամբ ունի նաև ՆՀՅ, որուն ունեցած ձեռագիրը սակայն ունի

ապուղայ ընթերցուածը։ Այս ձեռվ ալ կը դնէ ՆՀՅ, յիշելով նաև ուրիշ ձեռագիրը ներու ապուղայիւր, ապուղայիւր ընթերցուածն երը։ ՆՀՅ, ինչպէս նաև Զախջ, Բառ։ Կը մեկնեն « կապիկի մորթով շինուած տիկ »։ Առաջ. Բառ. չեմ զիտեր ինչ պատճառաւ՝ բոլորովին ջնջած է բառս։ Տեղէն յայտնապէս կ'երեայ որ ապուղայ կը նշանակէ « տեսակ մը տիկ՝ որուն մէջ ասորիները ձէթ լեցնելով՝ կը բերէին Հայաստան՝ ծախելու »։ այս տիկը կընար ըլլալ անսուրը կամ մեռեալ անասուններէ հանուած. և ասոր համար է որ կանոնին մէջ հարց կը արուի թէ պէտք է խղճել թէ ոչ։ ՆՀՅ համարելով « կապիկի մորթ »՝ անշուշուշու ուզած է բառս կապել պրս. ապուղայ « կապիկ » բառին հետ, որ աւելորդ և անտեղի է։ Բատ իս բառին լաւագոյն ընթերցուածն է ապուղայ. ասիկա՝ ինչպէս և այ վերջաւորութենէն և ասորւց յիշատակութենէն կ'երեայ, անպատճառ ասորական փոխառութիւն մ'է։ Դժբախտաբար ձեռքիս տակ չունիմ ասորերէն բառարան մը՝ բասծու փաստօրէն ստուգելու և ճիշտ մայր ձեր տալու համար։

Առարելարբարը « առաքեալներու կողմէն բարբառուած՝ ըսուած »։ Հըեշտակաբարոց և առաքելաբարբառ պատմի աւելացարով յառաջաւորեայ յարութիւնն (էջ 160):

Բանագուստամ « զիմադրձ , բռնի միշտոցներու զիմելով՝ իշխանութեան անձնատուր չեղող » . Եթէ ի նախարարի տան գոտին պղծութիւնըն , կամ կին նորա կամ դուստր կամ որդի կամ ինըն զըլիսովի և ոչ զընտանիսն ի ձեռս տացէ եպիսկոպոսին և ոչ ինքն ի սրբութիւն դարձցի , բանապատան կամիցի լինել , ամենայն տամբ իւրով և ծննդովը և կենօք նզովեալ լիցի (էջ 81) : — Նայելով բառին կազմութեան՝ կարելի է կարծել որ բառս նշանակէ ճիշտ այն՝ ինչ որ հիմայ Պարսկաստանի մէջ կը կոչուի իստիւտ (նստիւ) : Երբ մէկը մարմնաւոր իշխանութեան կողմէ ճերբարաւուելու վտանգին ենթակուած է՝ իսկոյն կը փախչի մզկիթ մը կամ այլ սրբավայր մը և կամ օտար պետական հաստատութիւն մը , որմէ չի կրնար իշխանութիւնը բռնի դուրս կորզել : Բայց բռնապատանը չի կրնար այսպէս ըլլալ , քանի որ շարունակութեան մէջ կ'ըսուի թէ « ի հրապարակ մի՛ իշխեսցէ կ'ըսուի թէ « ի հրապարակ մի՛ իշխեսցէ զալ , ընկերը և աշխարհ ամենայն մի՛ զալ , ընկերը և աշխարհ ամենայն մի՛ իցէ ի պղծութեան՝ ի սրբութիւն եկեսցէ , ապա թէ ինքն ոչ իցէ ի պղծութեան , զընտանիս և զծառայս տացէ ի ձեռս եղբանիս և զծառայս տացէ ի ձեռս եղբանիս զիմադրութիւն » :

Գեղգեղ « զեղգեղանք » . Զսաղմոսն զեղգեղով հնչեցուցանեն (էջ 51) : Բառիս ածանցները ծանօթ են . բայց արմատական զեղգեղ՝ որ նոր զրականութեան մէջ կը գործածուի , առաջին անգամ երեսն կու գայ հին մատենագրութեան մէջ :

Դասասաց « անազանոս , եկեղեցւոյ մէջ զիրք կարդացող տիրացու » . Գրոց զասասացը՝ բազմաց վկայութեամբ լիցին , զիտունք և ամենայն գրոց վարժք և տեղակը և փորձ ամենայնիւ (էջ 175) :

Դիւափոխել « խելօքնալ , նախկին անկարգ վարքը թողուլ » . Ապա թէ այլն չարաբարոյ ինչ է կամ պոռնիկ՝ կամ հանգանակող և արբեցող , կամ այլ ինչ խեղական , բանիւ և խրատու կշտամբեսցեն զայրն , ի կարգ ածցեն և հնազանդեցուացեն զերկոսին . Եթէ ազատ է , տուգանօք և խրատու ի կարգ ածցեն . ապա թէ զիւափոխեցի այրն , կինն պաշտեսցէ զնա (էջ 66) : — Խնդիրը մարդ ու կնոջ անհամաձայնութեան մասին է . կանոնը կնոջ մասին պէտք եղածն ըսելէ յետոյ , կ'անցնի ամուսինին . և եթէ ասիկա յանցաւոր է՝ կը նշանակէ պատիմներ , տուգանք , ևն . եթէ ամուսինը դիւափոխի , կինը այն ժամանակ պիտի ծառայէ անոր : Այս բոլորէն կ'երեւի որ դիւափոխիլ կը նշա-

նակէ «ուղղուիլ, խելքի զալ, դեերէն ազատուիլ»։ ՆՀՅ կը դնէ դիւարախիլ «այսահարիլ»։ այս իմաստը անտեղի և անյարմար է։ մարդուն խրատներ պիտի տան, տուգանք պիտի նշանակեն և եթէ մարդը այսահարի (?) կինը պիտի ծառայէ (!) անոր։

Երախայափս «երախայի՝ անկնունք մարդու պէս»։ Ոչ խոստովանեալք զյանցանս անձանց՝ հաղորդիցին (էջ 156)։

Զեխարարոյշրիւն «որկրամութիւն»։ Եթէ իցէ ոք, որ յառաջազոյն կերիցէ և արբցէ ի տան իւրում, ի հաց պատարագին մի՛ իշխացէ երթալ... զի զեխարոյշրիւն է այն (էջ 27)։

Զրել «մերժել, զրժել»։ Հայեաց, Տէր, յաղօթս և ի պաղատանս մեր, մի զրեր զուխտ քո և մի՛ մերժեր զմեզ ի ժառանգութենէ քումնէ (էջ 146)։ — Զորքառէն։

Զօշոտ «որկրամոլ»։ Եւ զշաբաթ և զկիւրակէ որոշեսցուք յուրախութիւն ճաշկիման զօշոտացն (էջ 156)։ Զշաբաթ և շակման զօշոտացն (էջ 156)։ Զշաբաթ և զկիւրակէ յուրախութիւն պայծառութեան ի կթոց կերակուրս հրամայեմք լուծանել զօշոտացն և որովայնամոլիցն (էջ 162)։ ՆՀՅ ունի այս բառը և ըստ Հին Բունորոշաբար կը մեկնէ «յոոի, զագիր,

յայրատ են»։ վերի վկայութիւնները կը ճշգեն ստոյգ կերպով բառին իմաստը՝ իրըև «շատակեր, որկրամոլ»։ Պահոց մէջ շաբաթ և կիրակի օրերը նաւակատիք են զրեր անոր համար՝ որ որկրամոլները զժզոն չմնան և պահերէն ի սպառ չհրաժարին։

Իշուան. ձեռվ և նշանակութեամբ անստոյգ բառ։ Զայն քահանայն, որ զայս առնէ, ժողովուրդն իրըև զհայր տեսանեն և իրըև զթիստոս թեթև պահեն ի չարէ, իշուան չտան, յամենայն արդեանց պտուղ տան, վաստակացն օգնեն, զմատաղենիսն տան և խաչահամբոյր (էջ 185)։ Հասարակօրէն դատելով՝ կարելի էր դնել ինչուան «նեղութիւն», որով ինչուան չտան «նեղութիւն չեն տար»։ Կարելի չէ մտածել իշուան բառի մասին, որովհետեւ տեղը ընդհակառակը կը պահանջէ իշուան տան։ Բայց կընանք մտածել նաև որ ի հոսնակիր ըլլայ, որով բառը կը դառնայ չուան։ և ի չուան տալ ոճը կը դառնայ բոլորովին անստոյգ։

Լայնապարիխազ «լայն պարիսպներով»։ Անբաժանելի և անորոշ յօրինելով, ցանկ հաստատելով և խորահիմն (տպ, խոնարհիմն!), հաստայատակ, լայնապարիսպ ամբափակեալ (էջ 156)։

Խաշանամբոյր «քահանային տրուած զրամական վարձատրութիւն»։ Վկայութիւնը տես իջուան բառին տակ։

Խեղական։ ասոր վկայութիւնը տես դիտախիլ։ ՆՀԲ գիտէ այս բառը՝ նոյն վկայութեամբ, բայց բացատրութիւնը այնպէս կը զնէ՝ որ խօսքը կարծես մարմնական պակասութեանց մասին է։ ասիկա խեղ արմատին պատճառով յառաջացած է։ բայց յայտնապէս սիրալ է, որովհետեւ մարմնական խեղութեանց պատճառով՝ ամուսինը չի կրնար տուգանքի և պատժի ենթարկութիւն։ Ուստի բառը կ'ուզգեմ խեռական «անսանձ», որուն հոմանիշը խեռային տես Առաքել Արքանցւոյ նոր բառերուն մէջ։

Ծննդանարդու «իր ծնողները անարգող նախատող»։ Թէ ծնողանարգուք, թէ լեզուանիք, թէ զաղքատս ոչ ընկալաւ (Էջ 94)։

Կարձեւան «զրամի անուն մը»։ Խակ որբ ի գաղանս և յանասունս յանդզնին . . . քահանայն տեղեկացեալ՝ գանեցէ առժամայն և Յ կարճեանս յաղթատս տացէ և 300 ծնբաղբութիւն (Էջ 91)։ Յանցանքին մեծութենէն և Յ թուանշանին փոքրութենէն կ'երեայ որ կարճեանը բաւական մեծարժէք զրամ մը ըլլալու է։

Կափակը «հաջոց, հաջիւն»։ Եթէ ոք ի քահանայից ի զնել կամ ի վաճառել կրթեսցին կամ իշխանութեամբ իշխանաց վարձեսցին՝ հարկապահանջս լինելով . . . այնպիսիք մի՛ լիցին քահանայը, այլ աստուածախարք, պատարագ նոցա կափակը շանց, մկրտութիւնը նոցա որպէս թլիատութիւն հրէի, տունք նոցա որպէս մեհեանը դիւաց, եկեղեցիք նոցա կրկին օրհնեսցին (Էջ 90)։

Համափուական «համատարած, ամէն կողմ սփռուած»։ Եոր զատիկ աւետեաց յարութեան, համասփռական տիեզերատարած և լուսասփիւռ, հրեշտակաբարող և առաքելաբարբառ պատմի (Էջ 160)։

Հաստայատակ «տակը՝ այսինցն հիմը հաստ՝ ամուը»։ Վկայութիւնը տես լայնապարիսպ բառին տակ։

Հարկադրամբ «ստիպմունք, բռնադատութիւն»։ Որք յանցեանն և անցին ընդ կարգօց ո՛չ հարկադրամօց կամ առանց բռնութեան (Էջ 261)։

Հմայ «հմայող, կախարդ»։ Առաւել ջան տարցեն եղիսկոպոսք և քորեպիսկոպոսք զպոոնիկս և զշնացողս, զհմայս և զամենայն յանցաւորս զեհենին երկիւղիւ ի դարձ ածել (Էջ 176)։

Հոգեհայր «հոգին ձիբը երով օժտուած,

կամ Ա. Հոգւսյն ձիրքերով լցուած»։ Արբոց քահանայապետացն Սահակայ Հայոց կաթողիկոսի և հոգելից և հոգեծիր ճշմարտասէր վարդապետին Մեսրոպայ (էջ 57)։

Հրեշտակաբարող «հրեշտակներէն բարողուած»։ Վկայութիւնը տե՛ս առաքերարդարաբար բառին տակ։

Զեռհաւորորիւն «սպասաւորութիւն, ծառայութիւն»։ Քահանայ այլ զործ չառնէ, պարոնին ձեռնաւորութիւն կամ մուճրութիւն (էջ 185)։ Նոյն բառը կը գտնենք նաև Մըբենի Զկթ. — 1320 թուի արձանագրութեան մէջ։ «Իմ ամիրութեանս և Աւտաշին ձեռնաւորութեան՝ զայս արձան հաստատեցաք» (Մառ, ՅԲՕ 8, 89)։ Բառիս արմատն ունի ձեռնաւոր թւուպ. տպ. Էմ. էջ 240, 266, 306, որ Մառ կը կցէ վրաց. խերսանի հոմանիշին, կազմուած խելի «ձեռը» բառէն։ Խնձիճեան, Հնախ. Բ. 81 ասոր նշանակութիւնը կը դնէր «իշխան, զիլաւոր», օրինակ բերեղն կը Մեծոփ. յիշատ. էջ 53. Ժողովեցան և բազում միայնակեացը և ազատք և բազում ազատաց, ձեռնաւորք և տանուորդիք ազատաց, ձեռնաւորք և տանուորդիք։ Բառիս վրայ կը խօսի նաև Գարեգին վրդ. (Եղղակաթ, էջ 34-35), ի մէջ այլոց օրինակ բերելով 1288 թուի արձանագրութիւն մը. «Ես Գէշմարդս էի արձանագրութիւն մը. «Ես Գէշմարդս էի

ամիրայ և Հաւիկս ձեռնաւոր ... թողարզուրը կարապետին այգեացն, զթօշականու, զՄիրինու զձեռնաւորին զհարդն զինչոր կայր»։ Բոլորէն կը հետեւի որ ձեռնաւոր «մի ստորին պաշտօնեայ էր հարկերի հաւաքման գործում, որ ի կատարէր ածում պարոնի հրամանները»։

Մերսմագնաց «անառակ»։ Կնքահայրն (լիցի) ո՞չ կին, ո՞չ այլազգի, ոչ յիշոցնատու, ոչ մելոմագնաց, այլ լաւ քրիստոնեայ և զիտուն (էջ 183)։ Նոյնպէս է նաև Եղղակաթ, էջ 38, 43, ուր հրատարակիչը Գարեգին վրդ. կը նկատէ թէ երզնկացին իր խմբագրութեան մէջ բառաթարգմանած է «շնացող»։

Միատեղիլ «հաւաքուփլ»։ Ոռնել ժողովի Մանազկերտ գեղջ ի սահմանագլուխ վիճակին Հարբայ՝ բազմօրեայ ժամանակաւ միատեղեալ համաժողով (էջ 149)։

Մուժրուրիւն «ծառայութեան աստիճան մը»։ Վկայութիւնը տե՛ս ձեռնաւորորիւն։ Գարեգին վրդ. (Եղղակաթ, էջ 35) կը մեկնէ «բնական բերերով վճարուած հարկերու վրայ հսկող պաշտօնեայ», հիմնուելով գու. մուձուր բառին վրայ, որ կը նշանակէ «հարսանիքի զինու և պաշարների վրայ հսկող անձը»։ — Կ'երեայ թէ արար. <sup>و جو</sup> տայւր «վարձեալ,

վարձքով բռնուած » բառն է, բայց յ ձայնը դժուարութիւն կը հանէ:

Մամու «մսի մոլի, մարմնապաշտ» . Գետնաքարշ մսմոլ իցէ և ի պատճառս բարեպաշտութեան կեղծաւորեսցի, սիրել և հպարտացուցանել զազգայինս իւր (էջ 42): — Հոս նախատարար զործածուած է անընց համար՝ որ իրենց ազգականները միայն կը սիրեն ու կը պատուին:

Յարարոցեալ «մշտավառ» . Հոյլը աստուածաբոյլը և տունկը աստուածազդիկը և ճրագունը յարալուցեալը, յորս Հոգին սուրբ հանապազ բուրէ (էջ 161):

Յիշոցասաց «հայհոյող» . Յամենայն տեղիս ի մեծ և ի փոքր, յիշոցաւագ դնեն, ի դարպասս, ի քաղաքս, ի զիւզս և յազարակս և (տպ. ի) զանօրէն յիշոցասացս, զբարկութիւն Աստուծոյ շարժողս... զայնզ զբարկութիւն հատցեն (էջ 177): — պիսեացն զեղուսն հատցեն (էջ 177): — պիսեացն է սոսկալի աղճատմամբ. «ի մեծ և ի փոքր յիշոց, աւագ դնեն ի դարպասս», որմէ ամեննեին իմաստ մը չ'եւեր: Կանոնս նոյն է կիրակոս Գանձակեցւոյն մէկ հատուածին հետ, որ ամբողջապէս մէջ բերած ենք Հայերէն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, էջ 80:

Ործոյն «փսխունք» . Զկէս զիշերին թերես արբեցութեան պարապիս... անկեալ

պարպատիցես ընդ երկ թասելով (տպուած է այսպէս. հրատարակիչը կը սրբազրէ էջ 272՝ երկրասեղով, որ անմիտ է. աւելի լաւ է պահել եղած ձնով) և թառանչելով և ի պղտորութենէ որովայնի ործունաց և սաստիկ գոլորշեաց, որ և զձայն անգամ լսել պաշտաման զժուարանաս (էջ 49): Մեր բառը տպուած. է որձունաց. բայց որովհետև յայտնապէս նոյն է ործալ «փսխել» բառին հետ, պէտք է ուղղել ործունաց, ուղ. ործոյն. մասնիկին համար հմմտ. ողջ—ոյն: Իրնանք սակայն կարդալ նաև ործանք, ործանաց:

Ուղղակարգ «կարզը՝ կանոնը ուղիղ, ուղղահաւատ» . Գրեցի... յընդունելութիւն ուղղափառաց, ի պայծառութիւն ուղղակարգ եկեղեցւոյ (էջ 164):

Պատգաւորիլ. Ի վեր բան զայս (Ա. Գրբի կանոնական զրբերը յիշելէ յետոյ) պատգաւորեսցի առ ձեզ, զի մանկունք ձեր ուսցին զբազում իմաստութիւնս Արքայ (էջ 252): — Մի և նոյն կանոնը կայ նաև էջ 173, ուր մեր իննդրական հատուածին զէմ կը կարդանք «և արտաքուստ պատգամարեսցի առ ի ուսուցանել ձեր մանկունք զուսումն Աիրաքայ իմաստութեանն »: Թէ պատգաւորիլ և թէ պատգամարիլ անյարմար ձևեր են, ուստի

երկութին համեմատութեամբ պէտք է սըրա-  
բազրել պատկանաւորիլ, որ այլուստ ծա-  
նօթ է և կը նշանակէ «յարմարիլ, յար-  
մար գալ»:

Պանդիստորիլ «կրօնաւորական կարգ մըտ-  
նել, պմղնաւոր հագնիլ». Ի զինուորական  
զգեստուց հեռանալ, պմղնաւորեալ՝ նմա-  
նեսցի հրեշտակաց՝ պաշտօնէից Աստուծոյ  
(էջ 232):

Անետիկոս. Զամուսնութեան խրատն  
առանց ամաչելոյ տայ քահանայն և զկա-  
րեռքն չպսակէ և ոչ զանտիկոսքն և  
որբ բամբասած են (էջ 186)... — Շո-  
ղակաթի մէջ՝ էջ 44, նոյնը՝ տպուած է  
սիեկոս, երկութին ալ պէտք է ուղղել սիե-  
տեկեսու, որ է յն. Ծընթեշօց «կաթնեղ-  
բայր»: Այսպէս գիտէ նաև Գարեգին վրդ.  
(Շողակաթ, ծան.), որ և իբր վկայութիւն  
կը դնէ Գր. Տաթ. Մեկն. Եմ. Խո. Ժ.  
կնքահայրն, այսինքն սանտիկնոցն... զի  
սանտիկոս զօրինակ Յովհաննու ունի զՄը-  
րըրտչին:

Աստանայապատիր «սատանայէն խա-  
րուած»: Անմաքուր, սատանայապատիր  
և որովայնամոլ (էջ 156):

Ակիդ «ծովային զագան մը»: Գիրք ա-  
նեն սկիզ և հիդրա ծովայինք. սկիզն շուն  
ասի երեքլինեայ և հիդրա եւս չարագոյն

քան զնա (էջ 84). Գիրք ասեն սկիզ և  
հիդրա ծովայինք, սկիզն շուն ասի երեք-  
լինեայ և հիդրայն չար քան զնա (էջ  
162). — յն. ուսչական պատկան նեղուցը  
քարայրի մը մէջ բնակող ծովային հրէց»  
բառն է, որուն հնագոյն տառաղարձու-  
թիւնն է սկիզ Ոսկ. Պող. Ա. 602 (տես  
Գալէմքեարեան, Մասիս 1900, էջ 403):

Սպասարկուրիւն «ծառայութիւն, սպա-  
սաւորութիւն»: Եպիսկոպոս կամ երեց  
կամ սարկաւագ ի ժամս սպասարկութեան  
Ա. Խորհրդոյն ո՛չ հաղորդիցի (էջ 236):

Արտալի «սրտալիր». Մովսէս (ի) Ախ-  
նէսկան լերինն ի ձեռն պահոցն իրբեւ  
սրտալի բարեկամ խօսէր ընդ Աստուծոյ  
(էջ 222):

Տարածոց «ժամանակամիջոց»: Զի՞նչ  
տարածոց պահեն զտղայսն, որ մեղք չը-  
տեսանեն և յիշոցք չլսեն. — Մինչև 15  
տարին զիեսացուն անարատ պահեն (էջ  
183):

Տկարողի «հոգին տկար, հիւանդ»: Աստ-  
էր և տկարողի Վարդան վարդապետ՝ ծա-  
ռայ ըրիստոնէից (էջ 180):

Ցափասէր «ցոփ կեանք սիրող»: Խիստք,  
նեղսիրտք, ցոփասէրք, յանդգունք և ան-  
գութք (էջ 228):

Փոքրապահ «կրօնաւորի կամ վանքի

փոքրաւոր»։ Ամէն մարդ փոքր չպահէ և զամէն որ գան չպահեն. այլ զոր խոստովանահայրն ընտրէ զփոքրապահն և զպահէլոյն (էջ 187)։

Քրիստոնացեալ «Քրիստոսի շնորհքին արժանացած»։ Այսուհետեւ ոչ ևս երախայցեալը, այլ քրիստոսացեալը, աստուածաբարբառ կրթեալը յաւետաբեր բարոգութիւնն (էջ 161)։



## ԳԼՈՒԽԻ ԽԱ.

### ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲՈՈԵԲ

ԳՐԵԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԹՎ.ԹԵՐՈՒԽԻ ՄԷԶ

(ապ. Աղեքսանդրապու 1910)

Ծանօթ. — Ե՞ր ամենէն խրթնախօս հեղինակն է Մագիստրոս, որ կարծես դիտամբ կ'ընտրէ կամ չգտած պարագային կը յերիւը անլուր և անիմանալի բառեր։ Անիկա հաճոյը կը զգայ, երբ ժամանակին գիտունները կը կարդան իր գրածները և բան չհասկնալով՝ իրենց տգիտութիւնը կը խոստովանին։ Ասով Մագիստրոսը՝ ժամանակին հասկացողութեամբ՝ բոլորէն աւելի գիտուն, բոլորէն աւելի փայլուն ասող մը կը դառնայ։

Մագիստրոսի թղթերը առաջին անգամ բառաքաղած է ՆՇԲ, բայց կարգ մը բառեր՝ որոնց կամ ձեռվ անստոյդ և կամ իմաստով բոլորովին անծանօթ կը մնային, իր էջերէն դուռս վտարած է։ Գուրսը մնացածներէն մաս մը Առձեռն բառարանը մեկնած և առած է։ Վերջին անգամ Հ. Գ. Մէնէվիշեան շատ մեծ յաջողութեամբ

լուծեց Գամազտականը՝ որ Մազիստը ոսկի ամէնէն իրթին գրուածքներէն մէկն էր, որով անձանօթ բառերէն թիւ մը պակսեցաւ: Ասոր յաջորդեց իմ Մրգուզ փանարի լուծում, որ հրատարակուած է Հանգ: ամս. 1923, 231-286: Ասոնցմէ դուրս մնացած բոլոր անձանօթ բառերը կ'ուզեմ հաւաքել հոս, ոչ թէ զանոնք լուծելու անիրազործելի մտազրութեամբ, այլ պարզապէս ի մի ամփոփելու համար կատարելիք աշխատանքը և ասով բառազրողներուն զիւրութիւն մ'ընծայելու: Այս բառերը մեկնելու կրնան ձեռնարկել անոնք՝ որոնք ձեռքի տակ ունին հին ձեռագիր քերթողական բառարաններ: Ասոնցմէ դուրս մեզի համար առ այժմ ուրիշ միջոց չկայ:

1. Աժանի տես անհասի:

2. Ալախուրել «պապաչել»: Որ յերեկեանն ճայթիւն գոռմանն և խինջիւն վըրենջելոյ պայթուցեալ պապչեկին լալաւրթիւն ալախութման քաղուն (էջ 86): — Նախորդ ձայրիւն զոռման և խինչիւն վրեներոյ ձեռներուն համազրութենէն կրնայ հետեւիլ թէ լալաւարրիւն ալախուրման ձեխն մէջ ալ առաջինը կազմուած է իշն մասնիկով լալաւարրել բայէ մը, իսկ լալախուրման սեռականն է ալախուրունն բայանու-

նին. երկուքն ալ (լալաւարթել և ալախութել) ձայն արտայայտող բայեր են և յատկապէս քաղի (այծի) ձայն, ինչպէս պապաչել, մկիալ են:

3. Ակիշրտափոս տես ախողել:

4. Աղօր «շառափղ»: Վասն զի Զրուանեան մեզ ըստ հօր հաւանիմ յարրահամայ, թէ ի բետուրայ, իսկ Յապետոսթեան դարձեալ երկիցս, և այս մերձ և անտարակոյս Հայկեան ի Արսակայ սարաւանդեալ: Այս եթէ պերճասցի ոք մի և յառաջին աղուրէ արտակացեալ, զմեզ տարաբունս կամեսցի առնել, ոչ վարկանիմ զայս պարտ (էջ 205): Մազիստը ինքզինքը պարթևական ցեղէն համարելով՝ ծագումը կը դնէ Արբահամէն և բետուրայէն, իսկ յետոյ (երկրորդ անգամ) իրեւ հայ յարեթեան գարձած: «Բայց եթէ, կ'ըսէ նա, մէկը (ոք մի) հպարտանայ և առաջին շառափղէն հեռանալով՝ մեզի ուրիշ ծագումէ համարել ուզէ, հոգս չէ»: Աղօրայ «Բարունակ, ճիւղ» բառն է:

5. Աղտիր. Ցոյժ հակառակեալ ընդ քեզ ներհակական հակամառութեամբ, վրդովեալ կոհակօք պղտորեալ ծառացեալ աւեօք, կամէի ծփել զբոյդ հաստատագոյնք (!) աղտիս (էջ 48): — Պէտք է սրբազեւ զբոյդ հաստատագոյն բաշխիս. քու ամուր նաւերդ պիտի ալեկոծեմ:

6. Անդամանայ «մագնիս». Այսբար և իմաստասիրաց անձինք անհպելիք և անմերձանալիք իրու զանդանտայս յինքն կարծրագոյնս քարշօղ և ինքեան ոչ յումեքէ համամիտեալ (էջ 204): — Ադամանդ բառն է, որ այլուր կը զտնենք անդամանդ «մագնիս» ձևով. հոս անշուշտ բառս աղաւաղուած է և պէտք է ըլլայ անդ (ամ) անտայ:

7. Անհառի. Աղէ՛, զինեա՛, զինւորեա՛, սպառազինեա՛ դու, վառեա՛... փիշամանի անհառի քեզ ի դիմի հարկանի, արջ անտառի շիկորակ քեզ մարտնչել հանդերձի (էջ 234): — Այս զրուածքը յորդորական մ'է վեստ վահրամին, «զօրանալ ի պատերազմին հասանելոյ ի չարաբաստ ձերարազմին նիկաւլայ»: Տպազրեալ ձևին տակ բուհոյն նիկաւլայ»: Տպազրեալ ձևին տակ հատուածը շատ անհասկանալի է. քիչ մը կը պարզուի խնդիրը, երբ նկատի առնենք երկրորդ ձեռազքին ընթերցուածը՝ փիղս արժանի անկատի. ես կը կարդամ փիղս անկայոի և կը հասկնամ «այս անժանիք և անկեռիք (անտամ) փիղը», ինչ ո՞ր շատ պատշաճօրէն կը յարմարի «ծերունի» նիկուլային: Հատուածը կը թարգմանուի. «Ե՞ւս, զինուէ՛, զրահաւորուէ՛... անժանիք և անտամ փիղը դէմզ կու գայ, անտառին շէկ արջը քեզի հետ կոռւելու կը պատրաստուի»:

8. Աննակին. շատ անստոյգ բառ մ'է. կը գտնուի հետեւեալ ոտանաւորին մէջ (էջ 134), որուն իւրաքանչիւր բառը հանելուկ է.

Բառական բաղդատական բաղազանեալ բարգաւաճեալ, Բարանարար բախուհական ներբուն բայի շարամանեալ, Բարեհամ բուծող հլու բարշոկ գեղոյ ձեզ լնձենեալ, Բնդեկ բազմակ բեղուն բաշղադիմիւ բեզ նուերեալ, Ներուն նամակ նիտան նորին նացոր անրուժական, Նախրուն նուէքր նիսեան նմին նետի անվտական, Ներծուն նպաստ նաշան նեռին նարի կիզողական, Ներլուն նաւթ աննակին նոյեան նմին իւր պահապան,

Առաջին չորս տողերէն կը հասկցուի որ Մագիստրոսը ծրար մը (բակաղեթ) բան նուիրեր է. այս ծրարին մէջ նամակ մը կար. այս նամակը՝ անփուտ նետով (գըրչով) գրուած՝ Մարտի (նիսիան)՝ տարուան առաջին (նախրուն) ամսուան նուէքրն է և իր պարունակած յանդիմանական ձեւերուն համար անբուժելի վիշտ (նացոր անբուժական) պիտի պատճառէ անոր: Նամակ նիտան նորին թերես կարելի ըլլայ կարդալ նամակին ի տան նորին: Մնացեալին մէջ քանի մը ծանօթ բառեր ալ կան: Այսպէս օրինակ՝ նար արար. կը նշանակէ «կրակ», ինչպէս կը ցուցնէ յաջորդ կիրական ածական ածականը, և փոխառեալ է արար. ոâր հոմանիշէն: Թէ՛ Մագիստրոս գիտէր

այս բառը, հմմտ. էջ 131 ստուգաբանութիւնը՝ ուր պը. առաջ «նուռ» բառը արար. ուր «կրակ» բառէն կը հանէ. «Պարսկական է անունն անար, ի հրաշպաշտութեանն պատուեալ յատրուշանին յորջորջեալ, յորմէ անարն կոչեցեալ սակս որակութեանն հրակերտ, կարմրահատ և հրահատ»: Այս նար «կրակ» բառն ալ կը ցուցնէ որ քիչ մը անդին դրուած հաւր բառն ալ ծանօթ նաւթն է, որով նոյ իր տապանը ծեփելով՝ պահպանեց ջուրին հոսանքներէն (նոյեան նմին իւր պահապան): Բայց այս բոլորին հետ՝ ամբողպանն:

9. Անզգանալ «կարդալ»: Ապա առեալ զտառս տախտակի ըղձական, տենչացայ վերստին անզգանալ (էջ 16): Յարմարցուած է Հ. անզգանոս «ընթերցող» բառէն՝ որ կու գայ յն. ծաշշաշաշաշաշաշաշաշալ» բայէն:

10. Ապախտ. Ոմն զորտ զտեալ ի վերիցացն կողմանէ ասեն ապախտ արարիցւոցն կողմանէ ասեն ապախտ արարիցւոցն կողմանէ ապախտ գեղամայ ձայրեալ և ի կոթ գաւառին գեղամայ ձայրեալ և կողման զնա կարծելով, զի զնեսցեն նէր, ձուկն զնա կարծելով, զի զնեսցեն նէր (էջ 231): Պէտք է ուղղել ապախտ: Վառաստանէն մէկը գորտ մը գտեր, ապախտ ըրեր տանէն մէկը գորտ մը գտեր, ապախտ ըրեր է և կոթ գաւառին մէջ իրը ձուկ կը ծաւէ լուէր:

11. Արտատակ «տեսակ մը թռչուն»: Ոմն զբոս և զարատակս լմբոնեալ առ լեռուտամբն կասթեայ, շրջեցուցանէր՝ բազէ զնոսա կասկածեալ (էջ 231. այլ ձձ. զտատրակս, զուրատակս):

12. Ատինիլ «առնական կարողոթիւնը կորսնցնել»: Այժմ ատինելով իմ, զի խափանեալ յառնի անդամոցս, ոչ զարական բերեմք սերտութեան բնութիւն (էջ 67. այլ ձ. ատեներով): — Այս խօսքերը զբուած են Գաղիկ Բ.ի մասին և շատ տարօրինակ են իրենց տուած նոր յայտնութեամբ: Այնուհետև բաւական ընդարձակ կերպով Մազիստրոս կը խօսի ներքինութեան վրայ և մէջ բերելով յոյն բժիշկներու կարծիքը՝ կ'ըսէ թէ ներքինացումը ոչ թէ կը ջնջէ արական զգացումները, այլ ընդհակառակը աւելի կրքոտ ու վաւաշոտ կը դարձնէ: Վերջէն խորհուրդ կու տայ Գաղիկին՝ մէկ կողմ դնել իր այդ միտքը և օրինաւոր ամուսնական պարտականութիւնը կատարել: Ասկէ յետոյ այնպիսի անպարկեշտ բաներ կ'ըսէ Գաղիկ Բ.ի և թագուհիին մասին, թէն ծածուկ բառերով, որ հին հայ մատենագրութեան մէջ ուրիշ տեղ տեսնուած չէ, հմմտ. էջ 69, տող 7-11: — Նոյն նամակին մէջ, էջ 67 տող 12, շաշովն բառը

պէտք է ուղղել Շաշղովն (Աւառողի ժամանակ), առանց որոյ խօսքը իմաստ չունի. Եթէ իդձը կիւսոյ հմայից դիւթութեան՝ իրու առ ի շաւզովն յարուցանեն զլամուէլ: Իսկ եթէ առարկուի թէ Մագիստրոս այլուր զիտէ Սաւուղ ձեւը և անտեղի է միենոյն անձին համար կրկին ձեւերու գործածութիւնը, իբր օրինակ կը բերեմ Եփրեմի մեկն. Թագ. հա. Ա. էջ 352, ուր բովէ բով գործածուած կը զտնենք երկու ձեւերն ալ. « Զի մի մատնեցն զնա ի ձեսս Շաւզողի բնակիչը բաղարին և զի ել Սաւուղ ի խնդիր Դաւթի»:

13. Ատիրագուհական. տես Մեղանպական:

14. Արան. Զիահրդ (ստամոքսն) զյոթնարեղուն կերակուրսն զօրէ յեղափոխել յարիւն և կամ վտարական զօրութեամբն յիւրաքանչիւր անդամս ընդ նմին զօրութեան առաջել, և եթէ փանաք և վտիտ անդամն այն, ախոնդիրն, զիահրդ զայսանդիսի ներգործութիւն տեէ և տոկայ արան պիտի ներգործութիւն տեէ և տոկայ արան բեկել (էջ 112. այլ ձ. տոկայարան): Մագիստրոսի այս թուղթը հրատարակուած է նաեւ Հանդէսի մէջ, 1892, էջ 167, որու մասին տեղեկութիւն չունի կոստանդնականութեան: Թէև վերի ընթերցուածը կարելի էր ուղղել տոկայ յար անբեկելի (միշտ կը

դիմանայ առանց կոտըելու), բայց նոյնին դէմ Հանդէսի մէջ զանելով արբանեկել ընթերցուածը, այլ եւս այսպիսի սրբազութեան տեղիր չի մնար:

15. Արիփինու. Իսկ ծայրացիալն մեր մակդասական հանդերձ զօրուն Պրիմիւթէ յուսացուցանէ զմեզ յայսպիսումն տատանական տեսել կենդանութիւն, ասելով գուցէ հազիւ հազ հասցէ պատասխանի թղթոյն թեմանայ: Եւ այսպէս վստահացուցանէ զմեզ զու տաղմական զօրուն կանատի և արիփինու, որք պարածածկեին կարմրակերպ կերպասիւր և կանաչորակ զգեստիւ: (էջ 121): Հեղինակը հոս դիցարանական լեզուով կը հասկցնէ թէ ձմեռը պիտի անցնի և զարունը պիտի գայ, արեւ իր կենդանութիւնը պիտի սփոէ, նորէն դաշտերը պիտի կանաչին: Անձանօթ են կանատի և արիփինու (էջ 325 գրուած է արիփինու) բառերը, իսկ տաղմական ձեւը Առձ. Բառ. նոյն կը համարէ պայմական բառին հետ՝ որ տեսակ մը ցնցող երկրաշարժ կը նշանակէ:

16. Արծանազանուտ «խոխոջալից, շառաչուն». իրու յոլորտս հեղեղաց և յորձանս արծանազանուտս այսր անդր տարաբերեալ տատանիմք (էջ 140): Ածանցուած է արձագանց բառէն, որ յետիններէն

ոմանք յոզնակի համարելով՝ ասկէ շինած  
են եղ. արծագան ձեւը. հմմտ. Մ'ազ. էջ  
117. և զի՞էյան ոմն արծագան առն կլու-  
ցեալ. էջ 62՝ Խիզախելով սանդարամե-  
տականին հողմոյ հոսեցուցանէ և յարծա-  
գանաց ստորև կացեալ...: Ինչպէս վերջին  
օրինակէն կ'երեայ՝ Մազիստրոս արձագանգ  
կը կոչէ նաև ջուրերուն կամ ալիբներուն  
շառաչը և այս իմաստով շինած է արծա-  
նագանցու, որ թերեւս ըլլայ սխալ գրչու-  
թիւն մը փոխանակ արձագանցու (հմմտ.  
այլ. ձ. արծագանցու) և կամ ինքը հեղի-  
նակը դիտմամբ այս ձեւը տուած ըլլայ  
բառին՝ համարելով կազմուած արձան բա-  
ռէն (գանգիւն արծանաց):

17. Բառական. անծանօթ բառ. տե՛ս  
անեակին:

18. Բարչոկ. անծանօթ բառ. «մեզմ,  
անոյշ»? վկայութիւնը տե՛ս անեակին:

19. Գմեալ «ջարդուած». Զօրէն լա-  
կոնացի վիմացն սահեալը լարծին փայա-  
ռական և լինիցին գմեալ իբրու զիսալքն  
անդամաբեկ, (էջ 237):

20. Դովար «ցուլ». Թերեւս և Առէս  
լուծեալ զմակավագեանն հրաշունչ մօրուեղ  
յոքնայածուկ ի դովարցի դովար յեղա-  
փոխէ (էջ 86): — Այս բառերով կը  
խօսի եղանակներու փոփոխութեան մասին.

մօրուեղ յոքնայածուկ ըսելով կը հասկնայ  
Այծեղիւր կամ Խոյ, որոնք Նոյեմբերի  
կամ մարտի կենդանակերպներն են, ասոնք  
պիտի փոփուկն և պիտի ըլլան դովար,  
այն է դուար «ցուլ», որ է ապրիլ ամսուան  
կենդանակերպը: Բնել կ'ուզէ թէ պիտի  
անցնի ձմեռը և զարունը պիտի գայ:

21. Եպիկենել «շինել, կերտել, կառու-  
ցանել». Որոնեմ որցեալ կերտեալ ձեմա-  
րանիս եպիկեմեալ (էջ 236). յն. էպիծեալ  
«կառուցանել, շինել» բառն է, որ իբր  
հոմանիշ կցեր է կերտեալ բառին:

22. Եպիկեմիական «համաճարակ հի-  
ւանդութեանց վերաբերեալ». Եթէ այսպէս  
վազ ուրեմն նախասականն զայս յիւրումն  
եպիկեմիական մատենին, որ առ երազօրն  
է, ճուաղանցն իմաստափրէ (էջ 68). Դե-  
ղովը տածել ի բժշկացդ. զի որպէս նա-  
խասականն զրէ յիւրում եպիկեմիական  
մատենին (էջ 98). Բնթերցցիս զմատեանն  
երրորդ Գաղթանոսի՝ ի չորրորդում տառի  
յիւրում եպիկեմիական տիմին տրամաբա-  
նութեան, որ ի սակս կազմութեան մարդոյ  
(էջ 112. այլ. ձ. եպիկեմական. նոյնը հրա-  
տարակուած է նաև ՀԱ. 1892, էջ 1892,  
էջ 167 ա՝ ուր բառիս ընթերցուածն է  
եպիկեմական): Բնդելուզեալ հիւսակս ատ-  
արկեցի տիմիական յիւրումն եպիկեմիական

մակամուածութենէ (էջ 125). Քանզի ի ջերմինսն, զրոս ցուցանէ նախասականն յիւրում եպիդիմականն տրամաբանութեանն, սոսկ զնա զիտէ (էջ 135), == յն. Եռութիւնը «Համաճարակ» բառէն փոխառեալ է:

23. Եսորական «եռման, շատ տաք». Առեալ, ասէ, հող եռորական զանգեալ ջրով և յարենէ ինքեան որակացուցեալ զնա ատրորական զառաջինն, իսկ զերկորդն շիկորակ (էջ 79): — Այս կտորը առնուած է ծերունի կոփտասի վարդապետութենէն. բառին վերջնական ստոգման համար կարելի է դիմել նոյն աղբիւրին:

24. Եսունկնեան «երեք ունկունք ունեցող» (աման)». Եւթն հազարաց լտերց եռունկնեան սափորացն ճմլի հնձան (էջ 49. այլ ձ. եռանկունեան):

25. Զիսպ «զպում, սանձահարութիւն». Խոհեմութիւն շրջապարիսպ յամէն դիմաց առնէ զզիսպ, արդարութիւնն հաւասարօղ, ողջախոհ կեանն աւել մաքրօղ (էջ 243):

26. Զոխ «բոյսին մէջտեզի հաստ ծիլը, կուրծը». Զհազարդ սակս բազմաթերթութեան և յոզնաբեղուն մանրագոյն մասնը-կաց, որ ի ներքոյ թերթից տերևոյն ստո-

րակայեալ ընծիւղեալ զոխիցն, որ ի նմապատշաճեալ հուալ ի միմեանս յարամանեալ (էջ 95): Բառս կենդանի է մինչև այսօր կովկասի հայ զաւառականներուն մէջ՝ վերի իմաստով: Այս բառէն էնակ զոխոյ «տեսակմը կաթոս բոյս, որուն տերևները սպանալիսի և բողկի տերևներուն կը նմանին». տես Հայրուսակ § 730 և յաւել. էջ 677 (զրուած զօխօ). հմմտ. յատկապէս Երևանի բարբառով զոխ «սիրեղ բոյսը»: Կոստանեան, անդ, էջ 302 հազար բոյսը կը համարէ գազար»! Բայց ասիկա բոլորովին տարբեր բոյս մ'է. զազարն է ֆրանս, carotte, ստեղղին, իսկ հազարը՝ ֆրանս. laitue կամ romaine, մճկ, մասուդ, պրս. բեանու. զազարը միակտուր տակ է, իսկ հազարը բազմաթերթեան բոյս մը, որուն միայն կը պատշաճի Մազիստրոսի տուածճիշտ նկարագրութիւնը:

27. Զրահակ. Եւ զանազան հանդերձիւք երեկի մետաքսաց և ոսկեհուռ արտակետեալ զգրահական (տաճարին) ծածկեալ (էջ 224): Զեռազիր մը ունի սրահակ, որ իմաստով շատ յարմար է տեղին. Բայց յայտնի չէ թէ ինչո՞ւ հրատարակիչը կ'ընտրէ զրահակ ընթերցուածը: Երկրորդ ձեռազգիր մ'ալ զրահակ բառին իբրև բացատրութիւն կը դնէ «պարապ տեղիքն ուրպատկեր չկայր»:

28. Ելիոսական «արեգակնային». Բաղկացուցանես ցում վիճակելոց երանաւետական դասու ըստ Ելիոսական երրորդ լոյսդ կամ Սրովբէական հեղումն (էջ 16): — Մեր բառին դէմ ուրիշ ձեռագիր մը ունի իշխանական, և կոստանեան՝ էջ 330 կը կարծէ որ ասիկա՝ Ելիոսական բառին թարգմանութիւնն ըլլայ: Բայց խօսքը հոս ուղղուած է Պետրոս Գետաղարծ կաթուղիկոսին, որով «իշխանական» անյարմար կու գայ: Բատ իս պարզապէս յն. զիւօս «արեգակ» բառն է և կը նշանակէ «արեգակնային»:

29. Թիւմնիոր «տաճար». Վկայութիւնը տես սփողել բառին տակ. ձեռագիրներն ունին րեսմայ փառուացն, րեսմոյփորացն, րեսմայփառուացն, վերջինը՝ որ սխալ գրչութիւն մ'է, իբր ուղիղ մտցուած է բնագրին մէջ, մինչդեռ պէտք էր զնել րեսմնիոր < յն. Թեսլուքօքրուօն «տաճար», որ մէկ անգամ ալ գործածուած է Անկունդուի մէջ բնամուխորոն ձեռով (տես Տաշեան, Das Leben und die Sentenzen der Phil. Secundus, Wien 1895, էջ 27):

30. Թիւմնիոր «ուսումնասիրել». Եւ այսորիկ յոքնատեսակ և յանհատսն վարին, եթէ մանըամասնաբար թիւմնոջեսցիս

(էջ 113. այլ ձ. թիւմնիոյնցիս, որ թերեւս աւելի ընարելի է): Այլուր Մագիստրոս կը գործածէ բևակախորիւն «ուսումնասիրութիւն» (էջ 206): Մագիստրոսի այս թուղթն ալ Հանդէսի մէջ (1892, էջ 167 բ) նոյն տեղն ունի բևակոխուցիս:

31. Թիւմնիոկ. անստոյդ բառ. գործածական է թժշկական հատուածի մը մէջ, Մագիստրոս թուելով հազարին օգուտները՝ կ'աւելցնէ. «Ծնուցանէ արիւն յստակ և ուղղոյն գաղափար գոլոշեաց թզորեակն պտոյ» (էջ 96), այլ ձ. ունի րրիւմակն պտղոյ. Վերջին պտոյ ձեր գործածուած է նաև էջ 126. Եւ յարմարեալ ընդ այն ևս ակն խիժ պտոյ որը գորակնէ, տայր Պոռկեայ (այլ ձ. և սակա խիժպտոյ որթ զոր ակնէ): Դժբախտաբար այս հատուածն ալ խանգարուած է, խօսքը Պոռկլէսի մասին է, որ կ'ուզէր գայլի աչք մը փակցնել ձակտին մոմով՝ բնաւ քուն չունենալու համար. և ասոր համար խնդրեր է բաշ որսորդէ մը՝ որ իրեն գայլի աչք մը բերէ: Աւէսը կաշառեր է որսորդը, որպէս զի գայլի աչքի տեղ արջի աչք մը տայ: Այս աչքին բսեր են (յարմարեալ) պուտի( բոյս է) խէժ և որթ գորակնէ (?):

32. Խմարակեալ «կակուղ». Զւպրծոտ և խմարակեալ ողորկատեսիլ ապակատա-

բազ (էջ 236): «Քովը զրուած համազօր բառերէն և ձեւի նմանութենէն կրնանց հետեցնել թէ նոյն է յն. բալոնը «կակուղ, մեղմ, հաճելի, քննցոյշ» բառին հետ:

33. Խրատական. անստոյգ բառ. գործածուած է շատ մութ ոտանաւորի մը մէջ (էջ 236). Բարայական պայքար պարսիւ իւրատական աճապարեալ: Կրնայ ուղղուիլ խրատական:

34. Լալաւաբթիւն «պապաչումն», տես աղախորել:

35. Իիզոն. արդեօք յն. λύγος «ուոփէ պսակ» բանն է. վկայութիւնը տես ախուղիւ:

36. Խաղտիք «խորամանկութիւն». Առուալ զգօրս Մարաց չոզաւ ի վերայ Գոհականաց և ազդեալ ի ծածուկ պատրաստէ զնոսա յեզր անձուկ ձորակին և յայսպիսի խորտիս ծպտեալ և ի ծերպս անձաւին մուծանէր և նշանակի արարեալ, զոր յառաջ զգուշացուցեալ էր, արկանէր զնոսա ի սատակումն (էջ 229): — Պատմութիւնը հետեւեալն է. Բաւարդանը Վարբակէսէն զօրք կ'առնէ՝ Գոհականներուն դէմ կոռւեւլու համար, բայց ասոնց հետ գաղտնի պայման կապելով՝ Վարբակէսի զօրքը նեղ ձորի մը մէջ կը ձգէ և բոլորն ալ կոտորել կու տայ:

37. Խանձառ «ածուինի կտոր». Հազիւ հազ ի տոչորեալս հասաց խանձառ, զի ստուգապէս ըստ անուանս մեք թուի թէ եղեալ խանձառ յաւէտ տոչորմամբ (էջ 70): — Կը նկարագրէ ամառնային ճամբորդութիւն մը, երբ սաստիկ տաքէն նեղուած ու խաշուած՝ հասեր են Խանձառ զիւղը: Հոս բառախաղ մը կ'ընէ. մենք ալ զիւղին անունին համեմատ Խանձառ դարձանց, կ'ըսէ: Բառս կը զտնեմ նոր զաւառականներուն մէջ խանձար «ածուինի կտոր, մձիր» ձեռվ և անշուշտ խանձ արամատէն է:

38. Խանձեցոցանել «հրապուրել, որսալ». Թողից և զիիայն, որ զձկունսն զկնի իւր խանձեցուցեալ նմա (էջ 206). Սակս երաժշտացն է բանս այնոցիկ, որք մերկ (լոկ) երգով զձկունսն խանձացուցանէին և զծառս կաղնիս ուր և կամէին փոփոխէլն (էջ 123): — Կը պատկանի խանձ «Կեր որսոյ, խայծ» արմատին:

39. Խարբ. անստոյգ բառ. երկու անշամ զործածուած է ՀԳ. նամակին մէջ, որ Մագիստրոս կ'ուղղէ Գագիկ Բ. թաշաւորին. Ոչ զիտես, զի համբերեցի այսքան ժամանակ, զիս համալուծ առնես որդույդ խեղկեալ խարբի . . . ի խարբի որդույդ ի զանգատ գնա՛ (էջ 212-3):

Կոստանեան այս բառը յատուկ անուն  
համարելով՝ զիմատառով կը գրէ և էջ  
337ա անուանց ցանկին մէջ կը գնէ ուղ.  
Խարիթ ձեռվ. ՆՀԲ հասարակ անուն կը  
համարէ, թէեւ կը կասկածի որ յատուկ  
անուն ըլլայ. «Խարը, կարծի նոյն ընդ  
խարբանդակ, ուսող խմօղ, եթէ չիցէ յա-  
տուկ անուն ». Զախշախեան կը մեկնէ  
«անիրաւ, անզգամ, խառնակեցիկ», իսկ  
Առ. Բառ. երկուքին տուած նշանակու-  
թիւնները կը միացնէ: Մեզի համար դը-  
ժուար է ստուգել թէ ասոնցմէ ո՞րն է  
ստոյգ: Գազիկ Բ-ի որդիներուն անունները  
աւանդուած չեն. ինձ ծանօթ է միայն  
երէց որդին Յովհաննէս՝ որ փեսայացաւ  
Անիի յոյն դրախն և յետոյ Վրաստան ու  
Պոլիս գնաց, ուր և մեռաւ (տես Ուռչ.  
էջ 220 և Վրդ. պտմ. կ): Բայց Խարը  
անուն կայ. մէկ անզգամ յիշուած կը զըտ-  
նեմ այս անունը սեռ. Խարբի ձեռվ. ա-  
սիկա Սակոի որդին էր և իր եղբայրներուն  
հետ Շոռոթ զիւլը նուիրեց Տաթեկ վան-  
քին՝ 1026 թուին (տես Օրբել. ԾԵ): Իը  
սիսալի կոստանեան՝ բառին ուղղականը  
դնելով Խարիր. ասով անշուշտ բառ կ'ու-  
զէ կցել արար. gharrîb ձեին հետ, որմէ  
ծագած է հայոց մէջ Ղարիր, Խարիպ յա-  
տուկ անունը. բայց ԺԱ. զարուն արար.

ցի ձայնը չէր կրնար իս արտասանուիլ.  
ասիկա նոր ժամանակի երեսոյթ է և այն  
ալ յատուկ է միայն Պոլսոյ, Նոր-Նախի-  
ջեանի և Արևմտեան Փոքր-Ասիոյ հայոց  
բարբառներուն: Ըստ իս բառին ուղղա-  
կանը Խարը է և ծանօթ խարր «սուր,  
թուր» զոյականէն յառաջացած է, ինչ-  
պէս որ իրօք ալ ունինը Ասր յատուկ  
անունը:

Միւս կողմէ խարր կրնայ գէշ իմաստով  
ածական մ'ըլլալ. ասոր հետ հմտ. ա-  
րար. խարի «կրօնըի և ազգութեան դէմ  
խոռոչութիւն հանող. 2. Թերութիւն, պա-  
կասութիւն, խար «զոռութիւն ընել» (տես  
Գամուսի թրք. թրգմ. Ա. 118) և մանա-  
ւանդ վրաց, խարրի «ագաճ, անկուշտ»:  
կը սիսալի Մառ, Քերակ. հին հայ. էջ  
265 վրաց. խարրի բառը փոխառեալ դնե-  
լով հայ գւռ. \* խարի (իրը հարրած) են-  
թազրեալ ձեէ մը՝ իմաստի դոյզն փոփո-  
խութեամբ: Ո՛չ հյ. խարի և ոչ հարր  
կրնան տալ վրաց. խարրի, որուն հարա-  
զատ ներկայացուցիչն է Հյ. խարր:

Այս երկընտրանքին մէջ մէկ ապահով  
ելք կայ. ասիկա է խարրուրիւն «անիրա-  
ւութիւն, անառակութիւն» բառը՝ զոր կը  
յիշեն Զախշախեան և առձեռն բառարան-  
ները: Այս բառը չունի ՆՀԲ. ևս ևս տա-

կավին պատահած չեմ հայ մատենազրութեան մէջ. բայց եթէ իրօք զոյութիւն ունի՝ կը լուծէ խնդիրը և խարր ենթադրեալ յատուկ անունը կը դառնայ հաւսարակ ածական։

40. Խոռի. իմաստը անյայտ է. Շոնչան խելապատակին վերտառեալ դեղեւեսցին այսր անդը ոտնառութեամբ, զոփալով թուգեալ իբրու ի Պիսիդոնի, որ այժմ ստորաբերեալ խափուցանէ, ի Կոսնէ կարկատեալ այծահեծուկն այն և երկնաչուն, որպէս յեղջերդ խոռի խրեցեալ խափուցամբ (էջ 203): — Ընդհանուր իմաստը հետեւեալն է. իրենց խելքը պիտի դառնայ և ասդին անդին պիտի իյնան ծովի վրայ տարուբերուածի պէս կամ ինչպէս եղջիւրով հարուած ստացած։

41. Մապատրակիլ « զարհուրիլ, սարսափիլ ». իբրու ի ծովի համատարածի ծփեալը, անդեկարար վարանեալը ի ծերունեաց ծառացելոց ալեացն ծփմանցն, ի ծերպ անկեանցն ծպտեալը նաւացն, ծապատրակեալը ի հոսիցն բլրաձև կոհակացն, նաւապետին ակնարկեն (էջ 203). — Կրնայ նաեւ նշանակել « թրջուիլ, խխում բլլալ »:

42. Մարտածպուկ. անստոյգ բառ. Տագնապ տոչորման Պռոմիդեայ հասեալ

Հեփեստիւ պաշարեաց. . և ափրողիտականն նուազեալ թառամի կարօտացեալ փարայի ի ծարակածպտել այս օգնականութեան (էջ 48): — Միտքն այն է թէ տաքը կոխեց, կարօտ ենք անձրեւի կամ զով օդի: Բնազրին մէջ փարայի տպուած է զիստառով, բայց վրիպակներու ցանկին մէջ ուղղուած է մանրատառով. յայտնի չէ, թէ ինչ բառի հետ կապելով՝ հրատարակիչն աւելի լաւ համարած է դնել մանրատառ, որովհետեւ առաջին ակնարկով իրօք որ զիցաբանական անուն մը կ'երեւայ և Ափրողիտէի արբանեակներէն մին։

43. Կահատի տես Արխիկեռ:

44. Կարր « երկաթէ ցից ». Զնիւբարն Մատեռ... ձերբակալ արարեալ, ածէր յԱրմաւիր և անդ ուրեմն ի ծայրս աշտարակի պարսպին ցցէր, կարթ ընդ ճակատն վարեալ, ի յորմ վարսել հրամայէր (էջ 59): Կարր բառին այս իմաստը չունի ՆՀԲ. իմաստի ճշդման համար հմտու. էջ 220՝ Զնոյն ինքն զնիւբարն Մաղէս կոչեցեալ անդ ուրեմն հանդէս ի ծայրս աշտարակի պարսպին ցից երկարի ընդ ճակատն վարեալ ի յորմ վարսել հրամայէր։

45. Կմակարկած « մեծ դղում » որ իբրեւ զինիի աման կը զործածեն ». Սակայն զտանձս տինեան կժակարկած տարագեալ

պարտ էր տալ, իւ ածին, զի յայսմանէ ճաշակեալ ի բացանցութեանց դադարեալ, վաղ ուրեմն զձեզ ազատեալ (էջ 80): — Յառս կազմուած է կործ + կարկած բառերէն. վերջինս թէեւ հին մատենազրութեան մէջ աւանդուած չէ, բայց կենդանի է նոր բարբառներուն մէջ « գդում » նշանակութեամբ. կժակարկած տարագեալ « կուժի ձեւով » (տանձ) ըսելով Արգիստրոս կը հասկնայ այն տեսակ մը լայնանիստ և սրածայր տանձերը՝ որոնք հիմա ալ Ղարբարդի մէջ կը կոչուին կոչելի (կոշրայ « ջրի կուժ » բառէն կազմուած): Այս տանձերը հեղինակը փորլուծութեան (բացանցութեան) իրը զեղ կ'առաջարկէ:

46. Կողով « խմորի փոքրիկ գնդիկ » . Առեալ խմոր՝ կողովս առնէր ձեռամբն և թացեալ ի զինի՝ արտաքս ձգէր և ասէր. Այդ է խարէութիւն քրիստոնէից (էջ 157): — Այսպէս ընողը թոնդրակեցի աղանդաւորն է՝ որ քրիստոնէից Հաղորդութեան խորհուրդը կը ծաղրէ: Անշուշտ հոս կողով չի կրնար ունենալ ծանօթ նշանակութիւնը և վերի մեր զբած իմաստն ունենալու է:

47. Կոպրական. անստոյգ բառ. Զգիծ մակերեւակեալ տառի յոզնաբեզուն բարդեալ յինքեան ներածութիւն ստորոգութեան ընկալայ, և կոպրական իմն սղեւու-

բեալ կասկածանօք կարծեաց պշնեալ, ընդ աղօտ պշնելով (էջ 77): Այս անմիտ երկարաբանութեան իմաստն է. « Նամակդ առի և վախվխելով՝ քիչ մը կարդացի »: Զեռազրական տարբերութիւններն են կոպրակն և որդեռորեալ. վերջինը ինձի շատ աւելի ընդունելի կ'երեւայ, քան անիմաստ սղեւորեալ ձեւը : Մագիստրոսի լեզուին շատ յարմար ոճ մըն է ըսել, թէ աչքերով ճամբորդեցի զրերուղ վրայ: Այս բացատրութիւնը ընդունելէ յետոյ քիչ մը աւելի ճանաչելի կը զառնայ կոպրական կամ կոպրակն ձեւը: Գաւառականներուն մէջ կայ կոպրար « ցեխի կամ ձիւնի վրայ բացուած նեղ ճամբայ » :

48. Հերմետամած. անստոյգ բառ. Այլ բնականքս այս թեակտեւ յօդոյ սիմեոնի կոնն անուանեալ, սակայն մտաց և մակացութեան ընդունակ. վասն որոյ երկիր զսա կոչել աստուած ոչ պատկառի, հերմետամած, թեպէտեւ աշխարհ, բայց ի բազմաց աստուածու (էջ 205. այլ ձ. հերմեռամեծ): — Արդեօք Հերմեն աստուծոյ անունէն կազմուած բարդութիւն մ'է. հատուածին մթութիւնը չի թողուր պարզել բառին իմաստը:

49. Հեջայրութիւն. ձեւով անստոյգ բառ. Պարսեաց զհսկայն դէպ ուղղակի ի ճանար բառեւ Բ.

կատն ճահեցուցեալ հնչայրուրիւնս պարսին որոտիւնս թնդեալ յերկիր զարկուցեալ (էջ 11): Այլ ձ. անի չայրուրիւն, որով յայտնի չէ թէ ո՞րն է ուղիղ. իմաստը հնչել կամ ճայրել բառերուն հետ պէտք է կապուի:

50. Դորկայուրիւն, անստոյգ բառ. Բայց զհայցեալդ առ ի մէնջ զոսկեկոկոնդ եթովապացի յաղագս զորկայութեան զգեղեղիկս շնորհեցաք. և եղիցի քեզ ի մաքրութիւն և յառողջութիւն հոգոյ և մարմնոյ (էջ 218). այլ ձ. դորակուրեան, դորկուրեան. ստոյգ ձեւը յայտնի չէ:

51. Ճիւմիլ « ճխլուիլ, տրոլուիլ, թոռմիլ ». Բայց սոքա ճխմեալը և ճեկճեկեալը ճիօրէն ճողորտեաց (էջ 218): — Հեռու տեղէ նուէր զրկուած ձկներուն համար կ'ըսէ, որոնք ճամբան թրմոշկեր, ճխլուեր ու տրորուեր էին:

52. Մանիա « տաքութենէ յառաջացած զառանցանք, սեւ մաղձ » (ըստ հին բժբշկութեան). Կիզեալ ատրորական մաղձ և ափրողիտականն զործէ զնա, այնուհետեւ մանիան սեւամաղձեայ դանդաղկոտ և զժոխաշարժ գեղել կամ եթէ թափել արիւն (էջ 135). ասկէ կու գայ մանիական « զառանցական, սեւամաղձային », որու վկայութիւնը տես մեղանպորտական բառին

տակ: == Փոխառեալ է յն. բանի « զառանցանք, խենթութիւն, սեւ մաղձ » բառէն:

53. Մեղարեալ. անստոյգ բառ. ի նոյն միակ պարառեալ և յեօթնիցն երկրորդացն դասուէ շաղկապեալ և յիւրն սիրեցեալ միակ մեղարեալ և անդուստ յերկեակն երրորդին թաւացեալն և յօդն յանգեալն (էջ 208): — Թիւերու անիմանալի յարաբերութեան մը վրայ կը խօսի, որով բառին իմաստը շատ մուլթ կը մնայ: Կայ յն. մէջաջօն « սրահ, ժողովարան, տաճարին մէջ պատգամախօսին տեղը », որմէ կրնար Մագիստրոս բայ մը յօրինած ըլլալ:

54. Մեղանպոյնական « տեսակ մը հիւանդութիւն ». Մթերեալ յինքեան զհամացամուած և զտոզս և զափողիտականն և զատիրբազունականն և զմանիական մեղանպոդականաւն կիզեալս (էջ 6): Ամբողջ հատուածը տենդային հիւանդութեանց մասին է. ասոնց մէջ մանիական բառը յայտնի է (տես վերը մանիա). նոյնը կրնանք ըսել նաեւ մեղանպոդական բառին համար, որուն թէեւ ճիշդ համապատասխանը չեմ գտներ Bailly-ի բառարանին մէջ, բայց կայ Մելախուս, Մելախուս, որ հնութեան հոչակաւոր բժիշկ մ'էր. ասոր նուիրուած է Մելախուս Հեսփողոսի մէկ բանաստեղծութիւնը, Մելախուս

55. Մուլ « ծուխ », ծովսին բարձրա-  
նալը ». Արտաշէսն պարթեւ բաղձայր մլոյ  
մըրկեալ ծխոյ շամանդաղեալ մակաւասար  
շինից և բաղաքաց. Ո՛ տայր ինձ, ասէր,  
զծուխ և զառաւօտն նաւասարդի (էջ 87):  
— Ե՛ռոգէ բսել թէ Արտաշէսը կը փա-  
փագէր տեսնել յորդ ծովսը՝ որ բարձրա-  
նալով՝ մշուշի պէս հաւասար փռուած կը  
տարածուէր գիւղերուն ու բաղաքներուն  
վրայ: Մուլ բառը այլուր աւանդուած չէ  
իին մատենագրութեան մէջ, բայց կեն-  
դանի է Ղազախի և Ղարաբաղի գաւա-  
ռականներուն մէջ՝ « ծուխ » նշանակու-  
թեամբ. ասկէ կազմուած են մուլ անել (Լոռի) « թիչ ու միչ վառել », մրազ (Ղա-  
զախ) « ծխալ », մլիկ մլիկ (Փօլիս) « կա-  
մաց կամաց (այրիլ) », մլլալ (Ղարաբաղ) «  
ծովսը հանդարտ բարձրանալ », մլմլալ

(Մանկսա) « առկայժիլ, պլազմալ », հին մատենագրութեան մէջ ալ մըմու « առկայժեալ, պլազմացող » Եիր. էջ 74. Եթէ տեսանիցես զնոսա (զատեղս) պայծառս և այլանմանս և մըմու:

56. Մուշիլ «սիրտը կոտրիլ, ընկ-  
ճուիլ?»։ Այսին արարեալ, յայրս և ի  
փապարս արտալածեալ զիաչու, խրու-  
ցեալն այն հերօօց և մուշեալն սրտիւք,  
մաշկեղինաւ պարածածկեալ մարմնով  
(էջ 55)։ Չեռագիր մը ունի մաշեալ, բայց  
հրատարակիչը կը գնէ մուշեալ, որ շատ  
կասկածելի է։ Մէնէ վիշեան, Գամագտ.  
էջ 32 մուշեալ սրտիւք կը հասկնայ «հան-  
դարտամիրտ, հեղարարոյ» և կը կասկածի  
թէ անմուշական «անդանդաղ» և գւո.  
մշիկ մշիկ բառերուն հետ կապ ունենայ։  
— Այս հատուածին մէջ կէտաղրութիւնը  
առհասարակ շատ պակասաւոր է. երեք  
տեղ ստորակէտ աւելցուցած եմ։ Միալ է  
նոյնպէս տող 23 մատեան բառին քով  
դրուած միջակէտը՝ որ երկու բառ անդին  
պիտի երթայ. ասով խօսքը իմաստ կը ստա-  
նայ. «Անցից յայսմ վայրի զերկարու-  
թիւն բանից միով ծանուցեալ մասամբ և  
ոչ զերկարագոյնան յարդարեցից մատեան  
իբրու անձանօթի. տիրաբար տեղեակդ ես  
հին և նոր կտակարանաց»։ — Զեմ ուզեր

երկարել խօսքս, կ'ըսէ, իբրև անծանօթ մարդու, որովհետեւ հին ու նոր կտակարաններուն քաջ տեղեակ ես:

57. Յատանեց, բոլորսվին անստոյգ բառ. Քանզի և այս ինքեանց սեպհական և հարազատապէս ի Թրակիայ երեւեալ զիւտ, մանսաւանդ ի յատանցն ներքինեաց մաքրագոյն և վճիտ քմազարդութիւն և բացազանչութիւն պատկանեալ և յարմարեալ ձայնիւ (էջ 223): — Յայտնի չէ մինչեւ անգամ բարին ձեւը, յ կրկնուած նախդի՞ր է թէ արմատական. ուղղական հոլովը ի՞նչպէս պէտք է դնել:

58. Յորորական. Երրորդն դարձեալ սակաւ քան զայլսն և ստեղծնոյր սպիտակիփառ և ի սոցունց այլք յորորականք եղեալք (էջ 79): Պէտք է ուզդել յոգնորական «շատ»: Համու. էջ 88 անկոււածուկ (հիւուած. չունի նշի) յորնորական զրահիւք. էջ 121 բիւրարեղուն և յոգնորական մակստացականութեամբ: Նշի և Ա.Բ չունին յոգնորական ձեւը, բայց զիւեն յոգնորական «շատ կերպ, բազմատեսակ»: պարածածկեալ յորնորակական գունովք. էջ 223:

59. Նաշան. անստոյգ բառ. տե՛ս Ա.Հ. ևակիին:

60. Նառեան. անստոյգ բառ. վկայութիւնը տե՛ս սիրովել:

61. Նար(ին) «կրակ»? տե՛ս անհակին բառին տակ. այլ ձ. ևակիին:

62. Ներոր «վիշտ»: տե՛ս թիւ 8:

63. Ներձուն. անստոյգ բառ. տե՛ս թ. 8:

64. Նիսեան «մարտ ամիսը»: Եւ մինչ ցնիսեանն, յորում պարապարար անցեալ բեզեկին մտնէ ի խոյն (էջ 135): Ըսել կ'ուզէ՝ մինչեւ մարտ ամիսը, երբ արեգակը շրջուելով կը մտնէ խոյի կենդանակերպը: Բառու գործածուած է նաևն էջ 134, որուն վկայութիւնը տե՛ս անհակին բարին տակ. երբայսական ուսանուած բառէն փոխառեալ է:

65. Նիսեան. անստոյգ և թերեւս անգոյ բառ. տե՛ս թիւ 8:

66. Նվաստկուրիւն «պատրիկութեան աստիճանը»: Մինչ տակաւին ի տարերս էր անթիպատութեանն նպաստկութեան (էջ 23): Նոյն անձին մասին խօսելով Մագ. էջ 82 կը գրէ. Ի խօնարհազոյն աշտիճանէ անթիպատ պատրկութեամբ: որմէ կ'երեւայ որ նվաստկուրիւն բառին հոմանիշն է «պատրկութիւն»: Այսպէս կ'ընդունի նաև կոստանեան, էջ 330:

67. Ուսիդայ «տեսակ մը պողիպոդ»: Ի թալանոտայ (== յն. ֆալառա ծով) արտակիտեալ ստորիջացն ի խորս և յախոնդեանց ոսմիդայն (այլ ձ. Նումիդայն ըն-

կալեալս, զոր շիթք ամպոց զնա գործին (էջ 202): Կը խօսի լուղորդներուն կամ սուզակներովն վրայ՝ որոնք ծովին խորերը իջնելով, անոր փորոտիքէն կ'որսան ուսմիղան՝ որ ամպերուն շիթերէն կը յառաջանայ: Պէտք է ուղղել ոսխիզայ, որ է յն. ծմբական, ծմբական, ծմբական «տեսակ մը ծովային պողիպոգ՝ որ գօրաւոր հոստ մը կը բուրէ»:

68. Ովամայ կամ ովանայ «կարմիր ծովէն ելլող մեծ ձուկ մը»: Կէտք վեհ գոլով քան զփագրոս... և քան զդուակոնոռայն և կամ զովամայն, որ ի կարմիր ծովէ արտաքս ելեալ (էջ 213): Յիշատակեալ եմք զփագրոս և զովանայն և զդուակոնոռայն և զկէտն Յովնանու, ընդ նոսին և զլկիաթանայն (էջ 215): Քովի բառերը մեծ ձուկերու անուններ ըլլալով՝ այսպէս է նաև ովամայ կամ ովանայ: Առաջ, բառ. ունի ովան «ծովային գազան մը», որ կ'երեւայ թէ այս բառն է:

69. Ովելիիր. մէկ անգամ ունի Մագ. էջ 62: Իրրու մենքանայիւ մրցեալ մակաւար զագաթանն ոստուցեալ և յոեկացն մանրամասնից իրրու զովրէլիրեացն ճահեցուցանէ հանդէպ ճակատուն: Կոստանեան նախ զրած է այս ձևով, էջ 259 ձեռագրական տարրերութեանց մէջ զրած է ովրէկերեւանց, իսկ էջ 350 սրբա-

գրած է զՌվրէլիրեացն, որով բառը դարձած է յատուկ անուն: Բատ իս ուղղագոյնն է երկրորդ ձեռագրին լնթերցուածը, պէտք է հասկնալ ովկերին «պարսաւոր զօրք», որ քանի մ'անգամ զործածուած է Ա. Գրբի մէջ (հմմտ. Բ. Թագ. Ը. 18, ԺԵ 18, ի 7, - Գ. Թագ. Ա. 38, 44, - Ա. Մնաց. ԺԲ. 17) և ասոնցմէ դուրս ալ կիւրդ. Թգ. և Մի. Դատ. էջ 267:

70. Որուշել «քովէն բաժնուիլ, հեռանալ»: Բազում անգամ փարելով հուալ կրծից սրտի իւրոյ հանդէպ ստեանցն եղեալ, դէմս իմ համբուրէը և ի զորովելոյ զգուանացն նիբհեալ ննջէի. իսկ նա տըրնեալ տենչայր միայն զիմն ոչ որուշել: Յայսմանէ զարհուրէր ուրեմն տեսանողն այն մերձ զիս միշտ կամելով խոկայր և զամենայն խակութիւն մանկական մերոց տից իւրովին հեզութեամբ համոզեալ ջանայր հանդարտեցուցանել (էջ 37): Այս խօսքերը ուղղուած են հօրեկորը՝ Վահրամ պահւատունիին յիշատակին և իմաստի կողմէն ալ շատ պարզ են: Որուշել ըստ իսնոյն է որուշել «բաժնել, բաժնուիլ» բառին հետ, կայ նաև որուշեալ ձեւ, հմմտ. Առփերը ԺԲ. էջ 73 և Ախիան. էջ 24:

71. Պաղակ «ցնդած ծերուկ?»: Լուաք թէ եկն պազն պազակ (այլ ձ. պակ),

Վարդանասարն պիսակ, զիշերաբուն Բուլղարաց սպիտակափառն զեստրաս... պատագարուն պրացսիս, սէզ զիշերեանն ճեմօղ (Էջ 234): Խոսքը «չարաբաստ (Քիչ մը ետքը՝ վատահամրաշ) ծերունի Նիկոլա» զօրավարի մասին է, որ կռուի էր եկեր վահրամ պահլաւունիի վրայ: Այս Նիկոլան նախապէս բուլղարներուն վրայ գացած էր (զիշերաբուն բուլղարներու սպիտակափառ որսորդ): Մազիստրոս քանի մը անգամ կը ծաղրէ անոր ծերութիւնը. նախ կը կոչէ ծերունի Նիկոլա, երկրորդ՝ պապ, երրորդ՝ ապիտակափառ (ճերմակ մօռուին ակնարկելով), չորրորդ՝ անժանի անկեռիք փիդ (տես անհանի բառին տակ) և վերջապէս՝ անտառի շիկորակ արք: Այս բոլորէն յետոյ անպատեհ չէ կարծեմ պաղակ բառն ալ դնել «ցնդած ծերուկ», իբր յն. ուժաւո՞ց «վաղեմի, ծերուկ, զառամեալ» բառէն կազմուած ձև մը:

72. Պատագարոս. վկայութիւնը տե՛ս  
թ. 71. անշուշտ հասկնալու է պատագրոս  
= յն. ուժաւո՞ց «որ ոտքի կաթուած ուշնի». հեղինակը կը ծաղրէ Նիկոլա զօրավարը՝ կոչելով զայն գործի մէջ կազ, զիշերային շահատակութեանց համար լաւ ուց ունեցող:

73. Պարսկական հաշ «սիրամարդ»: Խոկ

ո արգեօք ոչ առաւել սրանչասցի ընդ թոշնոց, եթէ զիանրդ ի միոյ հատէ անեւ զական և անյարմար պարսկական հաւն այն զբազմորակ փետուրս իւր ըստ իւրաքանչիւր մասին բերէ կենդանական (Էջ 113):

74. Պեսեկել «ինայել, զԼանալ?»: Դուսպառնաս անիծանել, այլ ես աղօթել ի վերայ ըո... զու խոստանաս դատել... ես խոստովանիմ, եթէ ոչ ամաչեցայց... զու իւրատ ինզրես, ես ոչ իշխեմ զպիտանացուն պեռեկել զիսորցն (Էջ 210):

75. Պիասմի. անյայտ բառ. թեզ և հոմերականս հատանէի բան, ի պիսանի պուետեալ՝ առաւել քան զԵւնոմէոս (Էջ 206): Կ'երեայ թէ մէկ բառով պէտք է զրել իսպիտանեի:

76. Պոսփիւսիկրն տես սփողել:

77. Պուատեապատրիկ . իրրեւ հասցէ զրուած է ՀԸ նամակին սկիզբը. Առ պըռաւեսպատրիկ և աշխարհագիր՝ սակս բարեխօսութեան վաճառականի ումեմն ի Մելիտինոյ (Էջ 225): Պէտք է ուղղել պուատասպատրիկ < պստոս պատրիկ , այն է յն. ուժուո՞չ ուժուո՞չ մէծ պատրիկ»:

78. Պոուիխական. Յորս անկայ փորձութիւն առաւել քան զպոոմիականն, յորս

անանէը։ Մարդոց համար գործածուած է բառը՝ էջ 148. Զատագով ջայլեաց գաղափար հարանցն։

83. Զչի կամ չիչի, այս բառին բացատրութիւնը ինքը Մազիստրոս կու տայ, բայց բաւական մութ ձեռվ, երբ խօսքը ուղղելով ճգնակեաց անապատականի մը, կ'ըսէ. Բանս ոչ կամի զբեզ ջընի (այլ ձ. ջնջնի) յորջորջել, վասն զի ջատագով ջայլեաց զաղափար հարանցն կոչի այն, ջայլեաց զաղափար անունին։ Այլ կամիմ որբ յաւէժաբարն անուանին։ Այլ կամիմ զբեզ խոռացեալ ճերովք և թաղկեալ վարսիւք... (էջ 148)։ Ինձ կը թուի թէ վարսիւք... կը նշանակէ «թաւամազ» և կատակով ըսուած ծաղրական բառ է։

84. Ոերտաւ (իմա՞ ոերտոս) «իշխանական աստիճան մը»։ Զայս արար մի նոյն Հոգի ի ձեռն բարեփառ առնս ոերտաւիս և իմոյ ծառայի Քրիստոսի Աստուծոյ (էջ 104)։ — Լտ. Rector «տէր, կառավարիչ, իշխան» բառն է, որ բիւզանդանց միջոցով անցեր է մեզի։

85. Ուստագիս «սոթահեր», խիտ կամ կարծը մազերով»։ այսպէս կը մեկնէ Մազիստրոս այս բառը՝ խօսելով Ուստագ բաջի վրայ. Զոր զարթուցեալ սստագէսն (այլ ձ. սստակէսն) այն սոթահերն այս ինքն, շարժեալ զվարսն իրուու երբեմն

ոչ բարերջանիկ գոլ նմա եհաս հանդէս (էջ 13). Իրուու ի պոէմէականն զրէ զիս անկեալ փորձութիւնս (էջ 57)։ Թէեւ վերջինս մէջ ալ ձեռագիր մը ունի պոռամեական, բայց կոստանեան՝ առաջինին մէջ պրոմիսական, երկորդին մէջ պրեմեական դրած է անուշագրութեամբ։ Երկուքն ալ պէտք է ուղղել Պոռամեական, յն. Պրօւենց, Պրօլեաց յատուկ անունէն։

79. Պոտաւապարար «առաջին և զլիսաւոր սպաթար» (յունական աստիճան մը)։ Բայց ոչ զայսոսիկ միայն, այլ և վեստ և պատրիկ և պոտաւապաթար ոսկի մատանի (էջ 104)։ Պէտք է հասկնալ յն. որատօսաժքուօս, որուն համեմատ ուղղել հայ ձևն ալ պոտուպարար կամ պոտուպարար. վերջինին համար հմմտ. յն. որատօսաժքուօս դարձած հյ. պոտուկուրագարաս։

80. Պոտյ տես բզրեակ։

81. Պրաքսիս. անշուշտ յն. որջէւս «գործ» բառն է. տես թ. 71-72։

82. Զայլիր «խումբ, բազմութիւն»։ Ոչ հանգոյն դորա զնա հաւանիմ ասել և զեռակալեան սոճին, զոր ջայլեացն օդից բիւրուց եւթանց կաթամբ սնանէր (էջ 219)։ Կ'ակնարկէ չերակլեան սոճին՝ ուր 70,000 ոչխարներու հօտի կաթով կը

կոռնոս (էջ 127): Բառին երկրորդ մասը՝ գետ կը համապատասխանէ «հեր» բառին. իսկ առաջին մասին համար կարելի է թերևս յիշել պրս. չու rusti «ամրութիւն», պնդութիւն»:

86. Այսեւիկոն «մասնակից, հաղորդակից»? Գոյն ի գոյէն ասի բնաւորեալ... նաև ինամածի, եթէ ոչ արտակայի, իբրու ձկանց ի ջուր, յորմէ են և նովաւ կեան և որ արտաքոյ այսմ օդոյ: Ոյլ բնականքս այս թէպէտև յօդոյ սիմեռիկոնն անուանեալ, սակայն մտաց և մակացութեան ընդունակ (էջ 205): — Թուփի թէ յն. ԾԱՄ-ԱՅԾՈ «մասնակից ըլլալ, հաղորդակիլ» բառէն է:

87. Այեւորիլ տես թ. 47:

88. Ափողել «ընդելուզանել». Իբրու ոստայնանգութիւնս, որք զպաստառակն խաշարս և անհոյծս և անգայտս յանգեն, անհարթութեամբ կեամատարազ կարկատեալ խեղկեալ մատանց մանուածով, և զպատկանեալն պոռփիւռփիկոն թեսմափոռեացն (տաճար) այպանեն և որք զկնի նառեանն լիգոնի (պսակ) ակիւրբափաւռեացն սփողէն (կարդա սփողեն) նրբաքարշիւքն քանոնիկոն հարթութեամբ հոյժեալ. և այսոքիկ ի խոյրագործն է խնդիր (էջ 204): Ոյս մութ հատուածին ընդհա-

նուր իմաստը չետևեալն է. Ոստայնանկները կեմի նման կոպիտ պաստառներ կը գործեն և կը ծաղլեն ... ի՞նչը: Մնացածը որոշելու համար վեց անծանօթ բառերու նշանակութիւնը ստուգել պէտք է: Հանելուկը լուծելու իբր բանալի պիտի ծառայեն թեամափոռ և սփողել բառերը: Առաջինը արդէն այլուստ ծանօթ է մեզի (տե՛ս վերը թիւ 29). իսկ երկրորդը՝ ի՞նչպէս տեղէն ու ձեէն կ'երեայ, նոյն է փողել, փողիփողել «հիւսել, ընդելուզանել» բառին հետ, որմէ աճած է և մասնիկով (հմատ. սրափիլ փխ. բափիլ «ջուրը թափուիլ» Մագ. էջ 206): Ոստայնանկներուն ծաղրած բաները անշուշտ հանդերձեղէնի վերաբերեալ պիտի ըլլան. ուստի այս կարգի բաներ ըլլալու են սփոփիւիկնեն ու լիգոնի: Արդարեւ ունինք յն. որօքիրք «ծիրանի գոյնով ներկուած կերպաս, հագուստ կամ գորգ, հոռվմէական ծերակուտականներու ծիրանի ժապաւէնը», որօքիրքուս «ծիրանեգոյն կերպաս», ուսքիրքուս «ծիրանեգոյն ներկող ներկարար», որօքիրքուս «ծիրանի հազուստ» բառերը. և սփոփիւիկնեն ալ պիտի ըլլայ բիւզանդական որօքիրքն ձևէն փոխառեալ բառ մը: Գալով լիգոնին, ասիկա ալ յն. լոյց «ուոփէ պսակ» բառն ըլլալու է, որուն համաձայն

է նաև «այսոքիկ ի խոյրագործոն է լինդիր» բացատրութիւնը: Անձանօթ կը մնան հաւուեան և ակիրրափառ բառերը: Ասոնց համար սա՝ միայն կրնամ ըսել թէ առաջինը անշուշտ կը նշանակէ այն նիւթը՝ որով լիգոն պատկը շնուած է, իսկ երկրորդը՝ նոյն պատկը կրող անձը կը ցուցնէ և կազմուած է ... քօրօս «... բերող, կը-րող» բառէն: Բատ այսմ բոլորին թարգմանութիւնը սա՞պէս կ'ըլլայ: « Ուստայ-նանկներու պէս՝ որոնք կոպիտ մատներու մանուածով փսիփաթի նման անհարթ ու կոշտ կտորներ կը հիւսեն և կը ծաղրեն տաճարներու վայելուչ ծիրանիները, և զա-նոնք՝ որ ակիրրափառներու նառեան պը-սակին ետեր կ'ընդելուզանեն՝ նուրբ ու կանոնաւոր զարդարելով: ասոնք խոյրա-գործներու բաներ են »:

89. Վաեզ. Ոչ զանց արարից զՄես-տրեմեանն սանէ, զորմէ ասեն երիցս հա-զարաց ցոփց և եղջերուաց անյօշել կեն-դանւոյն ի վերայ եղեալ Հեփեստեայ, ի ճայթոյն վաեզիցն ուռուցման պատառելոյ պայթման մորթոյն նշանակեալ, առ ժա-մայն լափլէզ մաքրէր զսանն (էջ 228): — Առասպել մը կը պատմէ՝ թէ կաթսան կը պակին վրայ դրեր են, հազար ցիռ ու եղջերու առանց կտրտելու մէջն են լեցու-

ցեր և անմիջապէս որ մորթերը սկսեր են պատռտիլ ու ճարճատել, դիւցազնը բոպէապէս բոլորը կերեր ու կաթսան մաքրեր է: Վաեզ հոս անշուշտ «վան-գիւն, ձայն» բառն է, բայց կրնայ ըլլալ նաեւ վաեզ «ոսկոր» բառը, որու մասին տես իմ Հայ: նոր բառեր Ցիմոթ: Կուզի մէջ, էջ 99:

90. Տաղմական տես թ. 15:

91. Տեռուցի, անսոսոյգ բառ: Իսկ թանձրագոյն օդոյն իբրու զի տեռուցի մածուցեալ միով թաղկեալ, ոչ թորեցուցանէ զրեզեկեանն արփի փեռեկել, զի զնպատակ գրօշակաց զեկաւորացն տեսցեն (էջ 62): Հատուածիս նախորդ մասերը տես թ. 16 և 69: կը նկարագրէ փոթորիկ մը ծովին վրայ՝ ուր ալիքները կարծես բարանով ու պալսաբարով կը կոռին նաւին հետ, « իսկ օդը՝ տեռուցիի նման խտացած ու թանձրացած՝ չի թողուր որ ա-րեգակին լոյսը թափանցէ, որպէս զի զեկա-վալներուն պարզած գրօշակը տեսնուի »:

92. Տիւիհական, տիւիկ, կաշկանդեալ կշկոււտ և ընդելուզեալ հիւսակս ատտիւկեցի տիմիական յիմումն եպիփիմիական մակամտածութենէ (էջ 125), Հիկէն իբրու յականս կայծին դժոււարագիծ և իբրու ի պողովատան տիմին՝ Եմանն և Բասրային.

բանզի սոցա ականաւոր և մզնատեսակ համանման նշուլիցն (էջ 203). ծառն ծառնուցեալ ի ջեառնէ ասացեալ տիմին է տառ (էջ 20. այլ ձ. տիմինէ տառ):  
 = Ասոնց հետ կրնայ համեմատուիլ յն. ուրած «մեծազին, թանկազին, արժանաւոր, պատուական», ուրիշը, ուրիշը «թանկազին, պատուաւոր», ուրիշ «յարգ, զին, արժանիք»: Այս իմաստները շատ յարմար են առաջին երկու վկայութեանց (ընտիրութ կամ թուի), իսկ երրորդը շատ փիլիսոփայական է:

94. Տիեևան «տանձի տհսակ մը»: վկայութիւնը տես թ. 45 (այլ ձ. տիկեևան): Բայց ես կը կարծեմ որ զատեան տիմեաց պէտք է կարդալ զտաճառ ստիմեան. և ասոր ապացոյց ունիմ յաջորդ յայսմանի ձաշակեալ եզակին, փոխանակ յայսցանի: Այս սըրազրութեամբ բառը կը դառնայ ստիկեևան և կը նշանակէ «ստինիքի ձեւ ունեցող», որուն համաձայն կու գայ նաև յաջորդ կծակարկած բառը:

94. Տող «մարմինին մէջ արտազրուած հեղուկները, sécrétion»: այս բառին համար երկու պատուական օրինակ ունի Մագ. Խնդրէ զցաւազնոտսն և զանախորժման ախորժակս, մթերեալ յինքեան զհամաքամուածս և զտողս և զափողիտականս

... (էջ 6). Միայն ջերմինս և կծուինս տայ կերակրել տկարացելումն, զի զտողսն հատցէ ի խոնարհ և օգնականութիւն ահեւ կին կողման և փայծղան» (էջ 135. ջերմ հիւանդութեան բուժման համար կ'ըսէ, երբ իրօք որ փայծղաղը՝ որ մարմին ձախ կողմն է, կ'ուռի և կը ցաւի): Այս վկայութիւններէն շատ պարզ կ'երեւայ տող բառին նշանակութիւնը և մենք ալ մեր խօսքը պիտի վերջացնէինք հոս, եթէ աւելի կարեւոր խնդիր մը չծագէր:

Նոր Հայկազեան բառարանի հեղինակները իրենց գործածած ձեռագլին մէջ՝ առաջին վկայութեան տող բառին փոխարէն ունեցեր են տղի ձեւ և չանդրադառնալով երկրորդ վկայութեան տող ձկին, երկուքը իրեւ առանձին առանձին բառեր նշանակած են: Այսպէսով ձկացեր է տղի «բամուը, դիրտ» անգոյ բառը, զոր նչի ստուգաբանօրէն կը կցէ տիղմ և տողուն բառերուն: Բայց որովհետեւ տղի առանց ձայնաւորի այլանդակ ձեւ հայերէն բառի կերպարանը չունի, Առձ. Բառ. դարձուցեր է տիղ կամ տղիղ: Ախալած եմ ես ալ, երբ՝ հիմուելով այս անստոյգ աղբիւրներուն վրայ, տիղ, աղիղ, տղի, տղող անգոյ բառերը կցած եմ տղել «շարժել» արմատին (տես իմ Հայ. նոր բառեր Տի-

մոթ. կուզի մէջ, էջ 103): Մագիստրոսի նոր ընթերցուածը բոլորովին կը ջնջէ այս բառերը և նոր վկայութիւն մը կ'աւելցնէ տող բառին, որուն ածանցներն են տողի իսլուք. յոր. տողուկ, տողուն «թուք» Յոր. Է. 19, Փիլ. այլաբ. Պոմ. աղէքս. պահուած մինչև այսօր Նոր-Նախիջևանի բարբառին մէջ դօդոր «մաղաս» ձեռվէ:

95. Բարայական. անստոյգ բառ. վկայութիւնը տես թ. 33: ՆՀԲ և ԱԲ կը մեկնեն «ըարունական»:

96. Ցաքի «վայրի բոյս մը՝ որուն տերեներէն ճշնաւորները հաց կը պատրաստէին». Եւ ոմանց ի տերեւոց ցաքւոյ և ի կորզոց հիւնից աղացեալ թրէին, յարեգակնային տապոյն արարեալ բլիթս և այն իսկ էր նոցա կերակուր և ոչ հաց (էջ 138): Այս բառը ունին ՆՀԲ և ԱԲ. միայն ցարի ձեռվ. այսպէս է եղեր Մագիստրոսի իրենց ունեցած ձեռազրին ընթերցուածը. կոստանեանի գործածած ձեռագիրներուն մէջ տարբերութիւն չկայ և բոլորն ալ հաւասարապէս ունին ցաքի: Ալիշան (տես Հայրուսակ § 3007) արդէն կասկածած էր՝ որ բառս գուցէ սխալ գրչութիւն մը ըլլայ՝ փոխանակ ցախի կամ ցաքի: Նոր հրատարակութիւնը կը ջնջէ ցարի անգոյ բառը և կը հաստատէ

ցաքի, մանաւանդ որ այս ձեռ կենդանի է դեռ կովկասեան քանի մը գաւառական ներու մէջ:

97. Փարայ. անստոյգ բառ. վկայութիւնը տես թ. 42:



## ԳԼՈՒԽԻ ԽԲ.

### ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐՈՒԵՔ

ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՃԱՌԵՐՈՈՒԵՔ ՄԵԶ

(առ. Վ. Անտոնի 1861)

ԾԱՆՈԹ. Ոսկերերանի ճառերուն մէջ  
երեցած նոր բառերը՝ որոնք Հայկազեան  
բառարանի մէջ մտած չեն, առնուած են  
արդէն Առձեռնի մէջ։ Այս բառերը ես  
հոս նորէն չեմ յիշեր։ Իը խօսիմ միայն  
այն քանի մը բառերուն վրայ՝ որոնք  
կամ մոռցուած են Առձեռնի մէջ ալ և  
կամ առանձին նկատողութեան պէտք ու-  
նին։

#### 1. Կարամուտ

Անդրիական ճառերուն մէջ (էջ 800)  
Ոսկերերան խօսելով զլխու ոսկրային կազ-  
մութեան վրայ՝ կ'ըսէ. «Եւ պատճառ՝ զի  
մի յեկելոց վտանգից կամ գանից ի վերայ  
զլխոյն՝ վնաս կրեսցեն զգայարանցն, այլ  
զի ընդդէմ կացցեն զօդուածքն և առանց  
վնասու զնա պահեսցեն. ըստ որում ոչ

եղեւ մի զօդուած և ոչ մի ոսկր որ ծածկէ  
զնա, այլ յամենայն կողմանց կարս բա-  
զումս ունի և բազում զգուշութիւն նորա  
ըստ ամենայն պատճառի»։ Հոս կար՝ ինչ-  
պէս ունի նաև ԱՅ, կը նշանակէ «ան-  
զամներուն յօդը»։ Ոսկերերան այնուհետև  
կ'աւելցնէ. «Իսկ ծխոյ արտաքուստ ստէպ  
մտելոյ զիւրաւ արտաքս բաղի, ոչ կա-  
րելով ազգել ի ներքս ընդ այնմ կարա-  
մուտս ոսկրազօդիցն»։ ԱՅ ստորագծեալ  
բառին տեղ ունի կարամուրք «անդամոց  
կպած՝ կցած տեղերը»։ Որովհետև այս  
ձեզ կրնայ ստուգաբանուիլ իբր կար և  
ամուր բառերէն կազմուած բարդ մը, ուստի  
յայտնի չէ՝ թէ կարամուրք հասարակ տը-  
պազրական վրիպակ մ'է, թէ հիմոււած  
է ձեռագիրներու ստոյգ համեմատութեան  
վրայ և ընդհակառակը կարամուտ ձեւն է  
վրիպակ։ Ըստ իս ուզիդ ըլլալու է վեր-  
ջինը, իբր բարզուած կար և մուտ (մուա-  
նել) բառերէն, ինչպէս կը թուի ցուցնել  
նաև մտերոյ բառը։ Կարամուտ կը նշանակէ  
ուրեմն «զօդերուն, յօդուածներուն մուտ-  
քը»։ Յունարէն բնագրին համեմատութիւնը  
կրնայ վճռել խնդիրը։

## 2. Հարհարել

Զի ոչ ալիքն անհամբոյրը հեղձուցին զնա և ոչ գազանակերպն որ եկուլ զնա՝ ապականեաց և կորոյս, այլ պահեաց զնա և տարաւ հասոյց ի քաղաքն (էջ 39). — Խօսքը Յովիանի մասին է:

Ոյս հատուածին մէջ ապականեաց բարին դէմ օրինակ մը ունի հարհարեաց, այլ օր՝ «հարեաց և կամ հաշեաց զնա»:

Բառարանները չեն յիշեր հարհարել ձեր. բայց այս բառը իրոք կայ զաւառականներուն մէջ՝ «ցնցել, տրորել, շարունակ տրորելով վրան կեղ բանալ» իմաստով:

## 3. Ովփազ

Ամբարձի զաշս իմ և տեսի, և ահա այր զգեցեալ բաղէն (այս է պատմուաճան աստուածային) և մէջն իւր պնդեալ ոսկւով ովփազեաւ և մարմինն թարսսեաւ (էջ 588!):

Հատուածս կ'ակնարկէ Դան. ժ. 5, որ մեր թարգմանութեան մէջ հետեւեալ ձեւն ունի. Եւ ընդ մէջ իւր ածեալ կամար յոսկւոյն Ովփազայ»: Հոս Ովփազ երբ. Ի՞նչ սրհաց ձեւն է, որ սովորաբար առ-

նուած է իրը սեղական յատուկ անուն, ինչպէս է և Ս. Գրքի հայ թարգմանութեան մէջ: Բայց գիտուններէն ոմանք կը կցեն զայն ԻՇ քազ «մաքուր ոսկի»: Բառին հետ: այսպէս ըմբռնուած է նաև Ոսկերանի վերի հատուածին մէջ:

## 4. Առնակալ

Ահա ամպ, ասէ, ի հիւսիսոյ կայր և ճառագայթք շուրջ և հոր փայլատակեալ, և ի մէջ նորա իբրև գտեսութիւն սոնաւ կալի և ճառագայթք ի նմա...: Եւ տեսի իբրև զնմանութիւն սոնակալի ի տեսութենէ միջոյն և ի վեր (էջ 590):

Հատուածս կ'ակնարկէ Եզեկ. Ա. տեսիւթք, ուր սոնակալ բառին դէմ մեր Ս. Գրքի թարգմանութեան մէջ դրուած է բազմագունի ակն. Եւ ի մէջ նորա իբրեւ բազմագունի ակնանց և ճառագայթք ի նմա, Եզեկ. Ա. 4: Նչի չունի սոնակալ բառը, բայց Ա.Բ գիտէ և բազմագունի ակն բառին իբրև հոմանիշ՝ կը մեկնէ «Ելեկ-տոռն, սաթ, ցէհրիպար»: Հանդ. Ամս. 1908, էջ 122ա առիթ ունեցած եմ խօսելու բառիս վրայ և ենթադրած եմ որ արմատն ըլլայ սիոն կամ սորոն ձևով բառ մը՝ «յարդ» նշանակութեամբ կալ «ունող»:

բոնող» . ճիշտ ինչպէս ունինք պրս . Կահրաբա «սաթ» (բուն «յարդ քաշող») :

### 5. Ստողկիլ

Թագաւորն բիւր իջօք պատանդեալ է և բիւր յաւեկոծութեան բազում ուստեղ մխըրմճի (այդպէս յօրինակին) և յոլով սոռղկի ընդ մեղս (էջ 128):

Ո՛չ նշի և ոչ ալ ԱԲ ունին այս բառը,  
որ ինչպէս տեղէն կ'երևայ, կը նշանակէ  
«թաթաւիլ թաթխուիլ, մալակոնուիլ»:  
կրնայ ըլլալ սակայն որ բառին սկիզբը  
գտնուած և ձայնը պատկանի նախորդ  
բառին (իրը «և յոլովս տողկի ընդ մեղս»),  
որով սոյց ձեւ կ'ըլլայ տողկիլ:



### ԳԼՈՒԽԻ ԽԳ.

### ՀՅ.ՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԵՎԻՇԵՔԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՄԵԶ

(տպ. Վ. Ենեասիկ 1859)

### 1. ԱՐԴԱՐՈՒԱՄԹՈՒ

Յաւուրն յայնմիկ, ասէ, զիցես կոծ  
սաստիկ իրրեւ զկոծն աղաղռուամթով որ  
ի դաշտին, ազգ տանն Դաւթի առանձինն  
և կանայք նոցա առանձինն . . . (Եղիշ.  
Մատն: էջ 254):

Ակնարկուած տեղն է Զաք. ԺԲ. 11,  
որ Եօթանասնից Ոսկեղարեան թարգմա-  
նութեան մէջ հետեւեալ ձեն ունի. Յաւուր  
յայնմիկ սաստկասցի կոծ յԵրուսաղէմ,  
իբրև զկոծ նոնենեաց կոտորելոց ի դաշտի.  
և կոծեսցի երկիր ըստ ազգս ազգաց ա-  
ռանձինն, ազգ տանն Դաւթի առանձինն  
և կանայք նոցա առանձինն:

Երբայական բնագիրն ունի «որպէս Հա-  
դադոփմոն ի դաշտին Մեգիդոյի»: Ge-  
senius, βառ. երբ. 1910, էջ 171 բ Հա-

դադումմոն կը համարէ Մեզիզդոյի դաշտին  
մէջ քաղաք մը, ուր Յովսիա թագաւորը  
սպաննուեցաւ Եթովպացւոց կոռոին մէջ և  
այս դէպրին վրայ հոն մեծ ողբ տեղի ու  
նեցաւ: Արդի հրեաները, ինչպէս նաև  
միւս թարգմանութիւնները կը համարեն  
մարդու անուն: Բառը շփոթելով եբր. րիմ-  
տոն «նուռ, նոնենի» բառի հետ, թարգ-  
մանուած է նաեւ սխալմամբ «նոնենի»:  
Ասոր համար է որ Բառզիրք Երեմիայ էջ  
5 կը գրէ. Ազաթումովլթ. նոնենի խզեալ.  
և բիչ մը վարը՝ Ագուամթովն. կոտորած  
նոնենեաց:

## 2. Գիրգ

Բազումք են որ յաշս մարդկան անմեղք  
երեխն, այլ ի գործ Աստուծոյ անպիտան,  
գիրզը, յիմարք, ցնորեալ, անսէր, ապուշք  
(Եղիշ. կանոն. էջ 368):

Սովորաբար զիրգ կը նշանակէ «զիրուկ»,  
փափուկ մեծցած, պարարտ», բայց հոս  
դէպի յոռին զարգացած առումով մը՝ եղած  
է «յոյր, դատարկապորտ»:

## 3. Խանձոց

Տայ զինքն ի խանձ կերակրոյ, զի  
միանզամայն իցէ ինքն ծով և տեղի և

խանձոց և կերակուր և ձկանցն որսորդ  
(Եղիշ. տիր. 335):

Ծովն աշխարհս է, ուռկանն քարոզու-  
թիւն Տեառն, ծազք ուռկանին չորք աւե-  
տարանք, ուռկանաւորք երկրոտասան ա-  
ռաբեալքն, որսք ձկանցն ամենայն ազգք  
հեթանոսաց, իսկ խանձոցն ի միջին՝ մար-  
մին և արիւն Տեառն մերոյ (անդ՝ էջ 338):

Խանձոց բառը չունի ՆՀԲ. իսկ ԱԲ կը  
մեկնէ «կարթ». այս իմաստը թէն յարմար  
է առաջին վկայութեան մէջ, բայց թուի  
թէ անյարմար է երկրորդին, ուր աւելի  
պատշաճ է հասկնալ պարզապէս «Խայծ,  
կարթին անցուած կերը»:

## 4. յետսընդդէմ

Եւ ունի յանկ անխրամ, ուր ոչ Եւա  
և ոչ օձն կարասցէ սողել մտանել և ոչ  
տալ զյետս ընդդէմ խրատն և ոչ մերկանալ  
զհայրենի փառսն (Եղիշ. ննջ. 357):

Այլուր ունինք յետս լնդդէմ (իբր մակ-  
րայ) «ետ ետ», բայց հոս զուտ ածական  
դարձած է «հակառակ, ներհակ» նշանա-  
կութեամբ:

## 5. Սարսաւել

Է գարձեալ այլ ախտ, զոր կողացա-  
ւութիւն կոչեն և թիկնացաւութիւն, և յայլ

օդից ոտից, ձեռաց, ողաց, կարկամնլով  
սարսաւերով և զողալով բերէ զնմանութիւն  
դիւահարի (Եղիշ. կանոն. էջ 364):

Անշուշտ սարսփիլ «զողալ» բառն է և  
եթէ ձեռազբական կամ տպագրական սխալ  
մը չէ, շատ կարեւոր է իր ձևով՝ իբր  
պարզ կրկնաւոր մը առո արմատէն:



## ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԱՆԿԱՆՈՆ ԳՐՈՅ ՄԵԶ

(Հին կտակ. Վ. Կնես. 1896, Նոր կտակ. Վ. Կնես. 1898)

### 1. Ա. ԲԻԼԵՌԵՐ

Ապա յայնմ ժամանակի նեղեսցի վի-  
շապն և յառաջնորդաց իւր ըմբռնեսցի և  
յահկէորդացն կապեսցի, և մի՛ ոք ընկալցի  
զնա, զի եհեղ զարիւն սրբոցն ի քաղաքս  
և ի գաւառս (Հին կտ. էջ 394):

Անձանօթ և թերեւս սխալազիր նորա-  
գիւտ բառ, որուն իմաստն անյայտ է.  
բայց ասածնորդ բառին յարազրութենէն կը  
հասկցուի որ ասոր մերձաւոր նշանակու-  
թիւն մը ունենալու է:

### 2. անբան

Բնդէ՞ր տրտում նստեալ կայք աստ  
դատարկ անբան (Նոր կտ. էջ 90):

Դատարկ բառին հոմանիշն է և կը նը-  
շանակէ «անգործ», կազմուած է բան  
բառին ռամկական «գործ» առումէն. կը

գտնենք նաև նոր գաւառականներուն մէջ,  
ինչպէս Եւղոկիա, Երևան, Զէյթուն, Նոր  
— Բայազիտ:

### 3. Բարձրահամ

Ընդ ահեղ և ընդ զարմանալի ճանա-  
պարհան, ընդ անձուկ կապանս և ընդ  
բարձրահամ լեռունս անցուցանեն (Հին  
կտ. էջ 301):

Իմաստն է « բարձր, բարձրաբերձ ».  
բայց համ բարին բարզութիւնը անպատեհ  
է. ըստ իս պէտք է ուղղել բարձրահամ.  
սխալը նոյն է ինչ որ շերամ — շերամ  
զրչութեանց մէջ:

### 4. Բդեշխափոխ

Թուղթ Լենթուլոսի Հռովմայեցի բդեշ-  
խափօխին՝ որ է պրօկուլին, զոր զրեալ է  
նա, հեթանոս գոլով դատաւոր ի Հրէաս-  
տան (Նոր կտ. էջ 381):

Կը նշանակէ « բդեշխի փոխանորդ, փոխ-  
հիւսպատոս » և կը համապատասխանէ Ա.  
Գրքի փոխանակ բդեշխի ձեւին:

### 5. Բէթ

Եւ տային մեզ հանապազ զգրուանս

ցորենոյ երկերից, և ձիթոյ չափերս հինգ-  
հարիւր, և զինոյ հազար և հինգ հարիւր  
(Հին կտ. էջ 83):

Ըստ իս իրարմէ բաժնելով՝ պէտք է  
գրել և ձիրոյ չափ՝ բերս հինգհարիւր:

Բերը չափի մը անուն է: Նոյն բառը  
կը գտնենք նաև կիւրզ. թոգ. « Բեթսեայ  
իւղոյ մզելոյ. բեթն չափ իմն է մզելոյ,  
զի մի՞ ոք համարեսցի թէ զպտղոյն ասիցէ  
և ոչ զձիթոյն »: Հեղինակին բացատրու-  
թիւնը բաւական պարզ է. ըսել կ'ուզէ թէ  
բէթը հեղուկներու չափ մ'է և ոչ թէ  
հաստատուն մարմիններու. բէթ ըսուր զոր-  
ծածուած է, կ'ըսէ, հասկցնելու համար թէ  
խնդիրը ձեթի մասին է և ոչ թէ ձիթապը-  
տուզի, որովհետեւ ձիթապտուզը իբր հաս-  
տատուն մարմին՝ կարելի չէր բէթ հեղու-  
կաչափով կշռել: Այս բոլորը անոր հա-  
մար է որ երբ. զայն կը նշանակէ ոչ  
միայն ձիթապտուզ, այլ և ձիթենի և ձի-  
թափ. բոն նշանակութիւնը բովի բա-  
ռերէն միայն կարելի է հասկնալ:

Նոր Հայկ. Բառ. (և ասոր հետեւելով  
նաեւ Առձենը) չհասկնալով կիւրզի բա-  
ցատրութիւնները, բեր կը մեկնեն « իւզ  
մզեալ, բամած ձէթ »:

Վերի նոր վկայութիւնը կը հաստատէ  
« հեղուկաչափ » նշանակութիւնը: Փոխա-  
ւոր Բառեր. Բ.

սեալ է երբ. ԴԵ bath բառէն, որ է հեղուկներու չափ մը:

#### 6. Գնուապահոյն

ԱՀԱ ի բաց մերժեցի յի՞նէն զթագաւորական զգեստն, զքնիեզ, զգնդապաճոյնն և զոսկեհուոն, և զգեցայ զհանդերձ սգոյ (Հին կտ. 171):

Կը նշանակէ գնդակներով կամ գնդաձեւ զարդերով զարդարուած (տեսակ մը զգեստ):

#### 7. Դաստակ.

Խորհեցաւ արկանել զձեռն իւր ի դաստակսն սրոյ իւրոյ և ձգել զնա ի պատենից իւրոց (Հին կտ. 191):

Կը նշանակէ «զաստապան, սուրի կոթ», ինչպէս որ երկրորդ ձեռագիր մը ունի արդէն դաստապան: Բայց պէտք չէ կարծել թէ սիսալ զրչութիւն մ'ըլլայ, այլ հին հայերէն բառ է և կու գայ պէլ: dastak «կոթ», պըս. dasta «կոթ», բոնատեղ, սուրի՝ դաշոյնի՝ զանակի՝ կացինի եւն կոթ» բառէն: Գործածուած է նաեւ Մագ. քեր. 246 (հրատ. Ն. Աղոնց, Ո. Ռուեստ Դիոնիսեայ քերականի): Իբրու գդաստակ ինչ սրոյ՝ որ ի գործ արկանէ:

#### 8. Դստիկոնիս

Իբրև եղեւ զաւակն աւուրս երիս՝ հրամայեաց մանկաբարձին լուանալ զնա և զնել դստիկոնիսն պատուով (Նոր կտ. 5):

Հրատարակիչը այս բառը կը համարէ «թերեւս գաշտիշոն», որ նշանակէ կոնք: Բայց մանուկը լուալէն յետոյ չէ՝ որ կը զնեն կոնքի մէջ: Ասիկա ըստ իս դստիկոն բառն է, բայց հոս կը նշանակէ «պատըշշամ»:

#### 9. Երեքաւորեալ

Վիշապն հալածեսցէ զայլազզին, և այլազզին որ անուանեալ կոչի Սաղամանդար՝ ի փախուստ դարձցի, դարձուցեալ զերես իւր ի կոչիս: ոսկի և արծաթ և ականս պատուականս և պսակը գաւազանցն. և որ ի գոզ գազանին երեքաւորեալ յազգէ Պարսից ի կարքեղովնի. ոչ ոք հալածեսցէ զնա (Հին կտ. 244):

Ինձ կը թուի թէ պէտք է ուղղել երեսառողեալ, հմմտ, երեսաւոր «բաջ պատերազմիկ»:

#### 10. Լաղմ

Փորեցին լաղմ ծածուկ և թագուցին անդ այր մի կրակով և եղին ծծումը ի

ներքոյ ողջակիզեաց փայտին (Հին Կտ. 339):

Ինչպէս հրատարակիչն ալ կը ծանօթագրէ, թրք. լաղբմ «ական» բառն է:

### 11. Խելք

Ի վերնատուն մի ժողովեալ էին, և էր բարձրութիւն նորա կարի մեծ յոյժ... և մանուկ մի ննջէր ի յեզրն ի խելս տանն. և յանկարծակի յափշտակեալ զնա բուն թանձրութեան, անկեալ ի բարձրութենէ անտի (Նոր Կտ. 152):

Խելք տան կը նշանակէ «տան կտուրը». բառին այս առումին համար հմմտ. Խելք կամրջին. Ազաթ. - Խելք հաշու Մրկ. դ. 38:

### 12. Խոհապետ

Կոչեցեալ խոհապետին զվաճառականոն և խնդրեաց զիս ի նոցանէ գնոյ (Հին Կտ. 141):

Խոսքը Փարաւոնի տաճարապետին համար է. հոս կը նշանակէ «խոհարապետ»:

### 13. Ծաղ

Անկ. զիրք Հին Կտ. էջ 178 և 180 բանիցս կը յիշուի մեղուներու փեթակի

մաղլ, այն է մեղրահաց, ձեռագիրներէն մէկը (Ա.) այս բոլոր պարագաներուն ալ կը զրէ ծաղ (հմմտ. էջ 180 ծան): Կաղալի՞ է այս բոլորը զրչագրական սխալ համարել, թէ պէտք է կարծել որ կար նաև ծաղ բառ մը՝ «մեղրահաց» նշանակութեամբ. հմմտ. ծաղ «խմորեղէն» Ոսկ. Փիլիպ. էջ 469, ծաղարար «խմորեղէն շինող» Ոսկ. մ. գ. 17:

### 14. Կալամոն

Տէր Աստուած հրամայեաց տալ նմա չորք իրք, որ են այսորիկ. կրաւկոն՝ որ է զափարան (բրքում) և նարգոսն՝ որ է փայլասենի, կալամոն՝ որ է եղէզն, և կինամոն՝ որ է դասենի (Հին Կտ. 14):

Ցն. ոչլախոց «եղէզ» բառին հայցականն է:

### 15. Կնեայպանոյն

Եւ փութացաւ Ասանէթ և զգեցաւ ըզպատմուճանն բեհեղեայ՝ յոսկոյ կնեայպանաձ և ած զգօտին ոսկեղէն ընդ մէջ իւր (Հին Կտ. 156):

Խնդրական բառին տեղ Գ ձեռագիրն ունի կնձապանոյն, Ա ձեռագիրը յակերա-

պահոյած։ Ասիկա կը ցուցնէ որ բառը կը նշանակէ «թանկագին քարերով զարդարուած»։ Բառս կը ծագի կի՞մ (կո՞ն) արմատէն, որ այլուստ յայտնի է «մարմարիոն» նշանակութեամբ, բայց մեր ձեռաշղթին մէջ կը նշանակէ «մոզայիքի մանր քար»։ Հմմտ, անդ՝ էջ 153, 154, 172 գրծ, կի՞նճիւնք, կնջիւք, կնջիւն, կճայովք, կճայեօք։ Ասո՞նց մէջ բառին ուզ, ձեւն է կի՞նճ, որուն հետ նոյն կու գայ լոռիի և Ղաղախի գաւառականներով կի՞նճ «մանր քար»։

#### 16. Կշտի բռնել

Ոկիզբն արար խաղալ ընդ եղբօրն իւր և արար զօտամարտիլ և կշտի բռնել փորձիլ, զի տեսցէ յուժն իւր՝ յաղթել կարէ զնա, քանզի որ կշտի բռնեցին՝ վայր անկաւ և ոչ կարաց յաղթել (Հի՞ն կտ. 316):

Կը նշանակէ «ըմբշամարտիլ»։ թարգմանաբար կազմուած է պրս, կստի գիրիftan հոմանիշէն, որ բռն կը նշանակէ «կուշտի՝ կողքը բռնել», ինչպէս որ գու, ունինք կող բռնել։

#### 17. Հակոյի

Երթունք իւր որպէս զվարդ փթթեալ՝ յորժամ ի հակուկացն ի դուրս վազէ (Հի՞ն կտ., 183):

Անստոյգ բառ, կամ կը նշանակէ «կուկոն» և կամ պէտք է կարդալ բակոյի՝ առնելով» ծաղկաման, թաղար» իմաստով։

#### 18. Հիւթ

Գնասցուք ի գիշերիս և գարանակալ լիցուք ի ճանապարհին և թագիցուք ի հիւթս եղեգանն . . . Եւ թագեան ի մէջ հիւթոց եղեգանն (Հի՞ն կտ. էջ 192, տող 3 և 14). Երթայր դուք ի հիւթոց եղեգանդ (էջ 196): Եւ նորա էին ի պուրակս հիւթոց եղեգանն (էջ 197):

Առաջին վկայութեան մէջ Ա. ձեռագիրն ունի ի խիր եղեգանն, երկրորդին մէջ խըրոցն, երրորդին մէջ ի տեղի, խակ չորրորդին մէջ տարբերութիւն չ'ընծայեր, այսպէս ուրեմն հիւր ընթերցուածը կը հաստատուի։

Նշանակութիւնն է, ինչպէս տեղէն կ'երեայ, «թաւուտ, խարձ»։

## 19. Մանասրուսնք

Այսպիսի պահապանք կան շուրջ զաթոռոյ աստուածութեանն : Կայանք են, մանասրուսնք են, խոռոչք են, հրեղէնք են, կամարազգեստք են, լապտերք են (Հին կտ. 302):

Կայանք բառին մերձանիշը ըլլալու է, բայց բուն նշանակութիւնը և կազմութիւնը անձանոթ է :

## 20. ԱԵԼՆ

Եւ պատանին հանեալ զգեստ հանդերձի իւրոյ՝ մերկացաւ: Եւ հրամայեաց մանականցն մեկն տարածել ի վերայ երկրի (Եր. կտ. 227):

Ձեռազիրն ունի մեկն. հրատարակիչը կը սրբազրէ մերկ. բայց կրնանք նաեւ ընդունիլ մեկն ձեւը, որ կը նշանակէ « փռուած, տարածուած », իրբեւ մեկնել բային արմատը: Նոյն ձեւը այլուր կը գտնենք « պարզ » նշանակութեամբ (Լմբ. ներք. համբ. 1865, էջ 269): Դժբախտաբար Անկանոն զրբի միւս օրինակին համապատասխան տեղը (էջ 107) խնդրական բառը կը պակսի:

## 21. ՆԵՏԱԼՅԱՐ

ՅՈՂԵՑՍԱՆՂՐԻ յուզմունք պատերազմի բազում եղիցին և պարանոց ստահակութեան նորա մինչ ի նետալարս պարըստաց նորա. իշխանք նորա հալածեսցին (Հին կտ. 138):  
Թերեւս սխալ գրչութեամբ իմաստն անյայտ բառ:

## 22. ՇԱՊԼԱՆԱԼ

ԱՀՔ նորա շաղղացեալ էին ի լալոյ (Հին կտ. 220):  
Կը նշանակէ « աշքերը շատ լալէն աւրուիլ, շաղիղ կամ զիակ դառնալ », ինչպէս կը ցուցնէ նոյն պատմութեան երկրորդ օրինակը, « ԱՀՔ նորա էին իբրեւ զշաղիղ ի լալոյն » (անդ, սիւնակ Բ):

## 23. ՍԱՓ

Իմաստուն, քաղցածաղը, տեսանող, խորհրդական, սափ, հեզ, հանդարտ (Հին կտ. 398):

Արար. Սաֆ sâf բառն է, որ կը նշակէ « մաքուր, վճիտ, պարզ »:

## 24. Վանունի

Այստեղ վանուհիք էին և ի պոռնկութիւն  
բնթացան (Նոր կտ. 410):  
Կը նշանակէ «կրօնաւորուհի»:

## 25. Վտանգ

Աղքատ եմ յոյժ և տնանկ զուով և  
վտանկ մարմեռվ... Տեսանես զիս որ այս-  
պէս վտանկ եմ և ոչ կարեմ կանգնել...  
Ոչ տեսեալ որ զայսպիսի վտանկս կարող  
իցէ մարդ դեղով ողջացուցանել (Նոր  
կտ. 229-230):

Նոր առում մ'է միայն և կը նշանակէ  
«հիւանդ»:

## 26. Տախտակ

Եւ էին ի նմա ոսկի տախտակն հաս-  
տատեալ ի սենեկին որ հայէր ընդ պա-  
տուհանն յանդիման յարենելից. և էր տախ-  
տակն զարդարեալ անկողնօք ծիրան(ե)օք  
և ոսկեթելօք... և յայն տախտակին ննջէր  
Ասսնէթ (Հին կտ. 154-5):

Կը նշանակէ «մահճակալ». Կովկասեան  
բարբառներու տախտն է. ձեռագիրներէն

Երկուքը վերջին անգամին արգէն ունին  
տախտ:

## 27. Տարեկան

Ոչ կամեցաւ մնալ, ընդ նոսա և կամ  
տանիլ զնոսա՝ պատճառելով զտարեկանս  
երկրին. Մեր երկրի հացն տարեկան է,  
ասէ, թէ ուտէ մարդ փորացաւ լինի և  
ոչ կարէ (Հին կտ. 348):  
Կը գտնուի շատ գաւառականներու մէջ  
և կը նշանակէ «հաճար»:

## 28. Տիւեցուցանել

Հարստութիւն բու և փառք բու տիւե-  
ցուցին զբեզ ի լինել բեզ հապրտ և ամ-  
բարտաւան (Հին կտ. էջ 394):

Հրատարակիչը բառը կը սըրազրէ տր-  
խրեցոցին. սակայն ասիկա ամեննին չի  
յարմարիր տեղին. պէտք է հասկնալ ար-  
յացուցին «զբեցին, զբգուցին, շարժեցին»,  
զեցուցին «զբգեցին, զբգուցին, շարժեցին»,  
իբրև անցողականը աղել «շարժել» հա-  
զուազիւտ բային, որու վրայ խօսած եմ  
զուազիւտ բային, որու վրայ խօսած եմ  
Հայ. նոր բառեր Տիւեց. կուզի մէջ, էջ  
102:

## 29. Փայլսանի

Վկայութիւնը տե՛ս թ. 14, ուր և բաշարուած է իրը «Նարդոս»։ Հմմտ. նաեւ Հայրուսակ § 3035։

## 30. Քամատարաց

Եւ բարկացաւ Տէր ի վերայ կայենի,  
ափ մի հողոյ նման քամատարաց՝ զամենայն հունձսն կայենի ցորենեացն՝ ցրուեաց  
(Հին կտ. 315)։

Կը նշանակէ «քամիէն տարուած՝ ցանուցիր եղած»։ ուղղելի է քամատարած։



## ԳԼՈՒԽԻ ԽԵ.

## ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

## ԳԻՐՔ ԹՂԹՈՅԻ ՄԷԶ

(ապ. Թիֆլիս 1901)

## 1. Ազնինի

Զի ազտիչ որ ինձ հասեալ է ի տերանց։ Ազտիչ ձեր և փառաւորութիւնն (էջ 170-171)։

Այս բառը առաջին անգամ Հ. Ակինեան ՀՕ. 1909, 141 ծանօթացնելով՝ մեկնեց պրս. azadeskari «ազատ, ինքնիշխան»։ Նորայր՝ անդ, 220 մեկնեց «շուք, փառաւորութիւն», իրը ասոր. եղինի «փառաւորեցաւ», եղինի «փառաւորեալ»։ Բայց իս պհլ. հազար բառն է, որ կը նշանակէ «ազատութիւն, ազնուականութիւն»։

## 2. Աթունի

Յետ այսորիկ տեսանէր նոյն ծերն զՅոր-նաղիոս յանկեան մի կանկնեալ և սեա-

ցեալ իրըկ զաթունի, որ զբաղանիսն այլրէ  
(էջ 515, նոյնը նաեւ Միւս. ասոր. էջ  
209):

Արար. աֆան «heny» բառն է (անս  
Գամոսս, թրք. թրգմ. Գ. 589, 605):  
Զարմանալի է որ Գարամաճեանի բառա-  
րանը գիտէ այս բառը՝ «Հաց եփելու փառ»  
նշանակութեամբ:

Այս մի և նոյն բառը ունինք նաեւ Ոնկ.  
զիրք հին կտ. 335. Եւ գնացեալ հանգի-  
պեցաւ այրոյն, և ետես զի ի սովոյն մա-  
շեալ էր և եղեալ զաթունի: — Հրա-  
տարակիչը ծանօթութեան մէջ կը մեկնէ  
«գուցէ թրք. zaben գտիտ», որ ինչպէս  
նախորդ վկայութենէն կ'երեւայ, ճիշտ չէ:

### 3. Անջիման

Եւ Սերգիս՝ որում Բարգէն անուն էր,  
Արդիշոյեան Խուժիկ, ի Շոշտրի շահաս-  
տանէ, ի նմին յանջմնի՝ առաջի մեր ա-  
մենայն Հայոց ասաց՝ թէ այդ այդպէս է  
(էջ 47):

Հրատարակիչը ծանօթութեան մէջ կը  
հարցնէ թէ « արդեօք Ենձիւմնին բառն է  
պարսկական, որ նշանակէ ժողով»: Ոն-  
շուշտ այո՛: Բառը կը գտնեմ նաեւ զոր-  
ծածուած Առկը. եկեղ. պտմ. էջ 719. Եւ

արարեալ Դիոկղետիանուի թագաւորի ան-  
ջիման, կոչէ ի միասին գումարեալ զԱրւ-  
կղիտոսն ամենայն և զիշխանս»: Պրս.  
ձեւն է այսուած, պհլ. այսուած կամ  
hanjamana, հպրս. \*hanjamana « ժո-  
ղով»:

### 4. Բագանակեալ

Զի զբագանակեալ մեղք տարւոյն՝ բա-  
ռասուն աւուրբս ընկեցուք յանձանց  
(էջ 240):

Հրատարակիչը կը ծանօթագրէ թէ լու-  
սանցը վրայ ինդրական բառին տեղ դր-  
րուած է զգարսն, որուն միտքը չեմ հաս-  
կընար: Բայց բագանակեալ կը նշանակէ  
«հաւաքուած»: հմմտ. նոյն հատուածը  
թուկ. Մանդ, Վենետ. 1860, էջ 210.  
Զ ի բագ անկեալ մեղք տարւոյն բառա-  
սուն աւուրբս ընկեցուք յանձանց (այլ  
ձեռ. բագանակեալ): Արմատն է բագ «կից,  
միասին, հաւաքուած», որմէ ունինք նաև  
բագձանել «հաւաքել, ամփոփել» թէ. կթ.  
նիւս. կազմ:

### 5. Բիրկաթոր

Մինչ յօրն դատաստանի առնուլ զվարձ

արդարոցն՝ որք դասին ընդ հրեշտակս, և անապաշխար մեռելոցն ի ներքոյ տան- ջանաց մտանել և չարչարիլ, զոր կոչեն բիրկաթոր (էջ 507). Այնք որք ընդ հրեշ- տակս դասեալը են և որք ի բիրկաթորն՝ միապէս փառաւորին (էջ 508):

Այս երկու վկայութիւններն ալ կը գտնուին կոստանդին կաթուղիկոսի առ Հեթում Ա. զրած թուղթին մէջ՝ 1246 թուէն: Բատ այսմ բիրկարոր կը ներկա- յացնէ յետին տառադարձութիւնը լու · purgatorium, ֆրանս. purgatoire «քա- ւարան» բառին: Նոյնը ունին նաեւ բեր- քարուր ձևով՝ Տաթեւ. հարց. 392 և 687, բուրգարուր անդ 553, նոյնպէս Տաթեաց- ւոյն Պարապմանց Գրոց լուծման մէջ (կը- ցուած կիւրդի Պարապմանց զրոց ետեր), էջ 605. Յետ մահուանն հոգիք արդարոցն առնուն զփառս իւրեանց. և մեղաւորք զտանջանսն, իսկ միջակը ոմանը երթան ի բիերբարուրն և անդ բաւին և մտանեն ի փառս:

## 6. Բլայթ

Որ ոչ բլայթով և խարէութեամբ ուսու- ցանեն և ուսանին՝ որպէս դոքա, այլ ճշմար- տութեամբ և հիմամբ առաջնոցն (էջ 509):

Յետին եւրոպական փոխառութիւն մ'է. տեղէն կ'երևայ որ կը նշանակէ «նենգու- թիւն, խարէութիւն», բայց ունինք նաեւ բրայրել «դատը պաշտպանել». Անսիզը, էջ 19 == ֆրանս. plaidier «դատը պաշտ- պանել», plaid «դատ, դատական ժողով»:

## 7. Բնաւտուք

Եթէ ոք կրճատեացի կամայ կամ ակա- մայ, կամ յաւագեաց կամ ի բժշկաց կամ յայլ զիպուածոյ իմերէ, մի՛ իշխեցէ գալ ի կարգ քահանայութեան... (զի Մով- սէն) օրէնսդրեալ զրեաց, թէ Մի՛ մատու- ցանես Աստուծոյ զմոլեկանն, և մի՛ զկըր- ճատականն և մի՛ զմիորձին և մի՛ որ բնաւ- տուքն է (էջ 329-330):

Իրարմէ բամնելով պէտք է կարդալ մի՛ որ բնաւ սուրին է, որով ուրբ նորագիւտը Կ'րլայ «ներբինացեալ» կամ նման բան մէ: Իրօք ալ Զգոն, էջ 292, յայտնի կեր- մը կը գտնեմ. Եւ ցիսրայէլ ասաց. Մի՛ պով կը գտնեմ. Եւ ցիսրայէլ ասաց. Մի՛ եղիցի բեզ այր սուբ և կին ամուլ, և զարձեալ յաւել և ասաց. Մի՛ եղիցի ան- ձետ և անզաւակ յերկրի ձեր: Ասոր հետ հմմտ, թ. օր. Լ. 14 Մի՛ լիցի ի ձեզ ան- ձեռնդ և մի՛ ամուլ. Եւ. իդ. 26. Եւ մի՛ եղիցի անսերմն և ամուլ յերկրի բում: Այս

համեմատութիւններէն կ'երեայ որ սուք կը նշանակէ «անծնունդ, անսերմն» և է ամուլ բառին արականը։ Ահա ոսկեղարեան ընտիր բառ մը՝ որ մինչև հիմայ անծանօթ մնացած էր։

#### 8. Դեռուանիոլմն

Քանզի համբակ գեռաճիղմն՝ որպէս ասցի, յառաջ քան զարուսեակն՝ մարմնով, հոգւով, մտօք, զգայնութեամբ ծնաւ (էջ 200)։

Կը նշանակէ «դեռաբուսիկ, մատղաշ»։ Հմմտ. Ոսկ. եփես. իս. Թո՛ղ աճեսցի մանուկս և զարգացցի փոքր մի ճիղմ և մատաղ հասակն։

#### 9. Դաշտկարան

Վրկանաց մարզպան Ամբատի եղրօր Գիգ իշխանի տիտղոսն է, որ թէ՛ զրիչներէն և թէ հրատարակիչներէն անհասկանալի մնալով զանազան աղաւաղեալ ձևերով աւանդուած է Գիրք Թղթոցի և Ուխտանէս պատմչի մէջ (տպ. Վղրշպտ. 1871, հտ. Բ)։ Այսպէս՝ Ուխտանէսի մէջ՝ տր. գեղայ դաշտականի (էջ 57), ուղ. գեղգաշտկարին (էջ 58), տր. զիգալաշտակարանի (էջ 64),

բց. Դաշտկարնէ (էջ 93), տր. Դաշտկարնի (էջ 95)։ Գիրք Թղթոցի մէջ եւս նման աղաւաղ ձևեր (տես ցանկը)։ Մաս ՅՅՕ 17,026 կը մեկնէ կարան «իշխող, կառավարիչ» Դաշտ գաւառի. ուրեմն կար կարան բառ մը՝ որ կը հանէ կարել բայէն (ինչպէս իշխել-իշխան) և որմէ փոխառեալ կը դնէ վրաց. կարանի հոմանիշը՝ գործածուած Պիղատոսի անվաւերականին մէջ։

#### 10. Զորաքել

Թեպէտ և զլուքս ի նմա զանազանեալ տեղեկացաք և թէ ըստ կարծեացս զորացեցէ, աստուածվայելուչ խոստովանութիւնը. թո՛ղ յաշակերտելոց բանին, բայց յօտարոտաց եղեալը, ում ոչ սրտալիր ուրախութիւն թուիցի (էջ 197)։

Իմաստը անյայտ. թերես սխալ գրչութեամբ բառ մ'է։

#### 11. Զօշոտ

Եւ զշաբաթ և զկիրակէ որոշեսցուք ձաշակման զօշոտացն (էջ 227). Զշաբաթ և զկիրակէ, յուրախութիւն պայծառութեան ի կթոց կերակուրս հրամայեմք լու-

ծանել զօշոտացն և որովայնամոլիցն (էջ 230-231):

Զօշոտ բառը չին թու. զանազան ձեռվ կ'ուզէ մեկնել (տե՛ս ՆՀԲ). բայց վերի վկայութիւնը կասկած չի թողուր որ բառը կը նշանակէ «բերանախնդ», նա որ պահը չի կրնար պահել և որովայնամոլութեամբ մսեղէն ուտել կ'ուզէ»:

### 12. Ըմպահակոտ

Յաղագս սխալայեց և ըմպահակոտի մարդկային բնութեանս (էջ 189):

Կը նշանակէ «անսանձ, ապստամբ»։ Կու գայ լմպահիկի կամ լմպահակիկ «ընդգործի, ապստամբիլ» բայէն։

### 13. Ընդելուլ

Առքա ձեռօք ի ճշմարտութիւնն՝ սոռ կայծակն աստուածային հրոյն (այն է Ս. Հաղորդութեան) յանդգնագոյնս մերձեցեալք՝ ինքեանց ընդելով, և զմեղուցեալսն հայորդեցուցանեն (էջ 392):

Եթէ սխալ գրչութիւն մը չէ, կը նշանակէ մերձաւորապէս «բաժին հանել, հայթայթել, մատակարարել»։

### 14. Լիլաթ

Պատասխանի թղթին որ ի պապէն Հռումայ բերաւ առ թագաւորն Հայոց Հեթում, ի ձեռն լիկաթին, որ կոչէր Տիմանչ, ի թուիս Հայոց ի ԱՂԵ = 1246 (էջ 503): Նոյն բառը կը զտնենք նաեւ Ամբ. պտմ. տպ. Փարիզ, էջ 94. Եւ եկն առ նա լեկաթն և խօսեցան Ընդ միմեանս բան հաւատոյ. և զոր ասաց հայրապեան՝ հաւանեցաւ լեկաթն։ (Երկու տեղն ալ Մոսկուայի տպագրութիւնը էջ 81 ունի լիկարեն, իսկ Փարիզինը կը զնէ լեկարեն, որ աւելի ուղիղ է)։ Բազմաթիւ անգամներ գործածած է Սկեռացին (Պատասխանիք, տպ. Երուսաղէմ, 1865), էջ 8-11, 19-20, 22, 25, 27, 31, 32, 34, 38, 43, 45 ևն՝ լիկար ձեռվ։

— Լտ. legatus «գեսպան, պատգամաւոր» բառն է և կը նշանակէ «պապական նուիրակ»։ Ինչպէս կը հասկնայ նաև Շահնազարեան։ Հմմտ. նաև հիներէն Միւսկեւու. անդ՝ էջ 7. Եկն ի կողմանցն յիտալիոյ և ի Հայրապետէն Հռովմայ լիկաթը ըստ լատինացւոց բարբառոյ, որ թարգմանի ի լեզուս մեր գեսպան, բայց ներգործութեան նուիրակ»։

### 15. Խաչարգաբար

Եւ զի՞ Աստուծոյ սեղան խաչարգաբար  
օրհնութեամբ յուղղոցն և ի կատարելոցն  
գլխաւորացն եղանի, ամենեցուն յայտ է  
(Էջ 153):

Խաչի յարգանքով կամ պաշտամունքով  
եղած:

### 16. Խոնսունդ

Թեպէտ և ծառայք արքայից արքայի  
եմք, զբաւատ զերուսաղէմի ունիմք և  
կալցուք: Զի թէ ցայժմ խոնսունդ էին  
Տեարք, այժմ որչափ եւս առաւել երանելի  
եմք, ուրք յարքայից արքայի ծառայու-  
թեան հասեալ եմք (Էջ 167): Պահլաւերէն  
բառ մ'է, իմաստը անյայտ. հմմտ. Ուփ-  
տանէս, հտ. թ. գլուխ Խլ, Էջ 76-77:

### 17. Կաղութիւն

Եւ նա զօրէն օձի ունի, որ մինչեւ ի  
ջերմանալ աւուրն յար ի գազանութիւնն,  
և ի ցրտին աւուրսն կաղուեալ իրբև զմե-  
ռեալ լինի (Էջ 330):

Այս վկայութիւնը ունի նաեւ ՆՀԲ  
կրուիլ ձեռով, զոր կը մեկնէ «իրը կուզ

լինել, կծկիլ»: Այսպէս ունին նաեւ Զախ-  
ջալիսան և Առձեռն:

Ըստ իս այս բացատրութիւնը ուզիդ չէ.  
բառը պէտք է կցել կաղաւել բային, որուն  
նշանակութիւնն է «ձմեռը օձին պաղիլ՝  
թմրիլը»: հմմտ. Անյ. հց. իմ. «կամ  
նոյն իսկ օձից ազգ, որ ի ջերին աւուրսն  
յար ի գազանութիւն յանդգնի և արեգա-  
կան ի հարաւ խոնարհեցելոյ՝ կաղաւէ»:

Այս մեկնութիւնը գեղեցիկ կերպով կը  
հաստատէ գու. կաղուիլ (Ակն, Զենկիլէր)  
«ցուրտէն սառիլ, ընդգարմանալ»: Ինչ.  
Զեռքերը ցըտէն կաղուեր է:

### 18. Կարմիր

Առաք հինգ հարիւր կարմիր... և ելից  
առաջի իմ զոսկին (Էջ 527) ... և եսու  
նմա երկու կարմիր և մտեալ ի գերեզ-  
մանն զրի երիս կանթեղու (Էջ 528):

Կը նշանակէ «սոկի, ոսկեզրամ» և է  
իրը թրգմ. թրք. զօշը բառին. նոյն գոր-  
ծածութիւնը ունի նաև Վրդ. Պտմ. Էջ 162:

### 19. Կերեւուրաց

Վասն Հերբայեցւոցն ասաց զկերեւու-  
րաց և զաստուածամարտաց ազգն զորու-  
յարգէրն վասն արմատոյն (Էջ 6):

Ոսկեղարեան գեղեցիկ բառ մ'է. կը նշաւ-  
նէ « կերածը ուրացող, անազուհաց, ապ-  
երախտ » :

### 20. Կթոց

Ըստ Հռովմայեցւոց յի ամսոյն յերեքն  
որ կոչի Սեպտեմբեր, և ասորերէն իլուլ  
և Հայերէն կթոց (էջ 273):

Կրոց « Սեպտեմբեր » կազմուած կրել  
« այգեկութ ընել » բայէն, ճիշտ ինչպէս  
ունինք գւու քաղոց « յունիս » ամսանունը՝  
քաղել բայէն:

### 21. Կեր

Քանզի և զարբանեկէն ձերոյ ասաց. Ի  
կեր ուղոյ հրաժարի, բայց մեզ բարե-  
պաշտութիւն խնդրել գուշակեցաւ (էջ 196):

Իմաստը կը պահանջէ « ուղիղ, ճշմա-  
րիս » նշանակութիւնը, եթէ միայն կեր  
սիսալ գրչութիւն մը չէ, փխ. ձեր:

### 22. Հալանել

Ձի հողոյն ասէ կառուցեալ մարմինն և  
փշել շունչ և հոգի. և զուստն և զի՞նչ  
ոչ հալանէ. զի փոքրն, անճառութեամբ

ուսուցանելով պատմել, կարձեսցէ ի վե-  
հագոյն պատճառէն (էջ 22):

Հրատարակիչը կ'ուղէ ուղղել հորանել,  
որ կը նշանակէ « մերկանալ »: Ես եւս  
այսպէս կը կարծեմ: Բայց հորանել հոս  
գործածուած է երկրորդ փոխաբերական  
իմաստով մը, այն է « մեկնել, բացարեկել,  
յայտնել », որ իսկապէս գաղափարին մեր-  
կացումն է: Գրեթէ նոյնակիսի առումներ կը  
ցուցնեն՝ Զկուապաշտիցն հոլանեցաց զյի-  
մարութիւն. Յհ. իմ. պաւլ. Առութեան  
նորա հոլանիւր կեղծիք. Որ յայտնապէս  
աստուստ բացափայլեալ բանիս հոլանի-  
ցին միտք, Խոսրովիկ:

### 23. Հառնումն

Բայց թէ վասն քահանային մերձեցման  
զվատթարագոյն սրբեալ համարիք, մի՛  
գուցէ և նա վարակիցի. քանզի վատթարի-  
կ առաջինոյ առ միմեանս յարմամբ հարկ  
է և զհառնումն առնուլ, որ լինի ո՛չ ա-  
ռաքինի և ո՛չ վատթար. և այս ի բա-  
ռում (էջ 155): — Ուղղելի իսառնումն:

### 24. Հողիողումն

Ո՛վ հովիւր, որ կորուսէք և ցրեցէք

զոչխարս արօտի իմոյ, արդ ահաւասիկ  
ես վրէժ առից ի ձէնջ, զի լցան աւուրը  
ձեր ի հողհողումն (Էջ 115):

Կ'ակնարկէ Երեմ. իգ. 1. Ո՛ հովիւք  
ԱՆ հատուածը. բայց հողհողումն բառին  
իմաստը պարզաբանող բան մը չեմ կըր-  
նար գտնել:

### 25. Ճռադաւան

Զայս վեց եպիսկոպոսքս փախուցիք և  
սպանիք, ճռադաւանք, մոլար և խոտոր,  
ստափառ, գայլախումր, գառնակոտոր,  
դիածամք, արինաթաթաթաթիք, պղծաժողովք  
... (Էջ 491):

Այս զանազան նոր բառերուն մէջ՝ ո-  
րոնք հասարակ բարդութիւններ են՝ նը-  
կատելի է ձռադաշան, որ թերեւս պէտք է  
ուզգել ծռադաշան « ծուռ հաւատքի հե-  
տեւող »: Ավակյն հմմտ, Ղարաբաղի բար-  
բառով չեւ մելիք, չեւ կարուղիկոս, այն է  
« սուտ մելիք, սուտ կաթուղիկոս »:

### 26. Շմկիւ

Ծաղու արժանի են բանքն. զպատուա-  
կանն, ոչ զանգիտես, ըստ նոցա շմկեալ  
և խառնափնդորեալ վարկի՝ յանձն առ-  
նուլ (Էջ 24):

Շմկեալ և խառնափնդորեալ զութէ հո-  
մանիշ բառեր են: Նորայր, Բառ. Փրանս.  
1244 թ ունի շմկել « զործել ինչ խառ-  
նամառն կամ ազտեղի օրինակաւ, շաղա-  
խել, tripoter »: Ո՞ւն է ուզիղ ձեւ:

### 27. Ունարամն

Տէրն մեր և Աստուած ի ձեռն սեղա-  
նոյն ճշմարտագործէ, որպէս պատմէ ա-  
ւետարանազիքն և զինքն իւկ առնէ յու-  
տել կերօղացն. ապա հակառակ ունարան  
ի լուծումն փոխէ զէութիւն զտենչալ ի  
հրոյն կայծակն (Էջ 154):  
Իմաստը անյայտ է. թերեւս աղճատ  
զբչութիւն:

### 28. Զաբոցել

Պատուական գտելոցդ և վեհ ժողովե-  
լոցդ, որք զկարութիւն բերել յօժարու-  
թեամբ յառարկութիւնս և զանտեղիս բա-  
ցասովք, նաեւ ոմանք թուեցեալ ի դէպ  
է ինձ իմանալ կամօք հաւասար հարց  
ջանի աթենականիցն նորագունից լսօղս և  
պատմիչս յարդեան ժամանակիս ի մէջ  
հիւսիսոյ կողմանդ տաղաւարողք զբոլոր  
լսօղս տարաբերմամբ, մանաւանդ սակա

ջարոցել. զ'ի խորհրդոյդ սկզբումն (էջ 196):

Շատ մութ է գրուած. կէտաղրութիւնը շատ գէշ. չարոցել թերեւս նշանակէ « մեկնել, ըմբռնել, պարզաբանել »:

### 29. Զաշտնք

Անլոյս ստուերաւ պարփակեալ նստէաբ ի խաւարի զիցազանցն տօնից և ջաշանցն հեթանոսականաց (էջ 374):

Այս վկայութիւնը զիտէ նաեւ ՆՀԲ՝ սխալ ընթերցուածով. նստէաբ ի խաւարի զիցատօնակ և ջաշանց հեթանոսականաց»: Բայց ՆՀԲ իմաստուն գտնուած է հաւատ չընծայելու դիցատօնակ բառին՝ զոր չի յիշեր (զիտէ միայն Առձեռնը), և միւս կողմէ յաջող կերպով ջաշանց կցած է չաշնամք բառին. « Զալիհանց տօնից տարեկանաց հեթանոսաց հաւասարել »: Եւազր. ԺԲ: Նոր վկայութիւնը տօնից բառին յաւելուածով՝ կը հաստատէ ՆՀԲ-ի ենթաղրութիւնը:

### 30. Վասպուրականագոյն

Աստուած զարքայից արքայ անմահ արասցէ, և զքեզ, Տէ՛ր, աւելի տերանց

վասպուրականագոյն արասցէ զաւակաւզ հանդերձ (էջ 170):

Կը նշանակէ « ազնուականագոյն, առաւել ազնուական ». կու գայ վասպուրական « ազնուական » հազուագիւտ բառէն, որ է պհլ. vâspruhrahkân « Սասանեան պիտութեան ազնուականներու բարձրագոյն դասակարզը կամ ամենէն ազնուական եօթը ընտանիքներու անդամները » (տե՛ս Հիւալ. Altarm. Ortsnamen, 262, 470):

### 31. Տապաստել

Ամենակալն բարբառելով՝ զրազմաստուածութիւնն և որք յոլով զյաւիտեանսն առասպելաբանելով տողեն, առ հասարակտապալեալ կործանեսցին և մի Տէ՛ր զթիսուս Քրիստոս վարդապետելով՝ վիրաւորեսցին անբժշկելի վիրօք, որ զանբժշկելին մոլեզնեալը բաժանեն . . . զոր իսկապէս տապաստելով, նշան կանգնեալ յաղթութեան (էջ 30):

Կը նշանակէ «գետին փռել, կործանել ». Կը վերաբերի հակառակ կողմի մարդոց:

## 32. Տրեկան

Բաստի Հռովմայեցւոցն ի տասն հոկտեմբեր, և ասորելէն Թշրին կախմ, և ըստ հայոց տրեկանի (Էջ 273):

Նոյն էջ՝ թիչ մը վերը ըսուած էր թէ «ըստ Հռովմայեցւոց ի 14 ամսոյն որ կոչի միայիս և յասորելէն իյար և ըստ հայոց մարգաց » : Հոկտեմբերը մայիսէն հինգ ամիս յետոյ է և որովհետեւ մարգացէն հինգ ամիս յետոյ կու գայ Հայոց տրէ, ուստի պարզ է որ տրեկան ըսելով պէտք է հասկնալ տրէ: Յայտնի չէ միայն թէ տրեկանը զրչագրական սխալ մ'է, թէ ահեկան և մեհեկան ձերէն ազդուած և իրօք գոյութիւն ունեցող ժողովրդական ձեւ մը, որ զրուածցին հեղինակը կամ զրիչը զործածեր է, ինչպէս որ թիչ մը վարն ալ զործածեր է ժողովրդական կրոց ամսանունը՝ փոխանակ սահմիի (տե՛ս թ. 20):

## 33. Քացախոց


Ես եմ հացն իջեալ յերկնից. — մի՞ թէ խմոր էր. ապա ի վեր խմորահարք կան և քացախ(ախ)ոցը (Էջ 495):

Երկու թիւն ալ նոր բառեր են. առաջինը

կը նշանակէ «խմոր հարող, հաց շաղուող», երկորդը «խաշ, հացը խմորելու մայա» :

## 34. Քըթիչոր

Որոց գլուխ և արմատ դառնութեան Սիմոն ճանաչիւր կախարդ....: Ո.րդ որ նորանշան հարուածովքն անկեալ հերձաւ վայրապարին ճապաղեալ ըրթփչորն՝ ճարակ լինելով յաւիտենական հրոյն, մեծարանօք առեալ ի կիր համառօտէք (Էջ 97): Նախատական բառ մ'է «չնչին, ոչինչ բան » նշանակութեամբ:



## ԳԼՈՒԽ ԽԵ.

### ՀԱՅԵՐԼԻՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ՊՍԿԵԲԵՐՅՈՒԽԻ ՄԱՍԹԵՔԻ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(ԳԽՐԹ Ա.-Գ, ապ. ՎԵՆԵՏ. 1826)

**Ծանօթ.** — Այս և յաջորդ զլիսի համար անհրաժեշտ էր ունենալ բնագիրները. բայց առ այժմ ինձ համար այդ անկարելի է. այնու ամենայնիւ ես կարեռ համարեցի հաւաքել հոս բոլոր խնդրական բառերը իմ բացարութիւններով միասին, առաջարկելով որ ձեռնհասները լրացնեն իմ պակասները:

#### 1. Այգոյց

Որ ի ներքուստ ի սրտէն ելանիցէ, և մինչ ի ներքսն կայ՝ պղծէ, և յորժամ արտաքս ելանէ՝ պղծէ.... Բայց Մարկոս ասէ և սրբէ յայգոյց կերակրոց (Ուկ. մ. թ. 26, էջ 731):

Բառին գործածութիւնը անյարմար է.

Ճեռագրին լուսանցքին վրայ դրուած է յայրոց, որ նոյնպէս անյարմար է: Կ'երեայթէ գրչագրական աղաւաղութիւն մ'է, որուն մաքուր ձեզ կը դժուարիմ գուշակել: Հեղինակին ակնարկած տեղը (Մարկ. է. 19) կը կարդանը «և սրբէ զամենայն կերակուրս»:

#### 2. Գալիսուլ

Կոչէ զմամոնայն տէր, ո՛չ վասն նորայնչ բնութեան, այլ վասն այնոցիկ՝ որ ընդ նովաւն երթեալ գակնուցուն: Սովորին օրինակաւ և զորովայն աստուած կոչէ. ո՛չ ըստ նորա ինչ պատուոյ, այլ ըստ ծառայացելոցն թշուառութեան (Ուկ. մ. ա. 21, էջ 336):

Յոլորովին նոր բառ մ'է. ընդ նովայ խնդիրը և ծառայել բարին համարութիւնը կը ցուցնեն որ կը նշանակէ «հպատակիլ»:

#### 3. Գրահամնկ

Որ չէ ընդ իս, ասէ, նա հակառակ իմէ. և որ ո՛չ ժողովէ ընդ իս՝ ցըռէ:... Որ ո՛չ ընդ իս ժողովիցէ և ոչ ընդ իսիցէ, իմ գործակից լինել ո՛չ իցէ: Եւ զինչ ասացից գործակից. զի և զրահանգ

ևս լինի՝ զիմ ժողովեալսն ցրուել (Ոսկ.  
մ. թ. 16, էջ 608):

Նոր Հայկ և Զախոջախեան չունին այս  
բառը, զիտեն միայն Հին Հայկ. և Առձ.  
բառարանները: Առաջինը կը գրէ զրահանգ  
կամ զրհանգ և կը մեկնէ «ինո, հեստ,  
անհաւան»: Երկրորդը կը դնէ միայն զրա-  
հանգ լինել և կը մեկնէ «ետեէ ըլլալ (ջա-  
նալ)», որ կը համարիմ ուղիղ մեկնու-  
թիւն:

#### 4. Գեղեալ

Բազումք իսկ յորժամ ի գերեզմանաց  
դառնայցեն, նախ լուանան և ապա գան  
ի տուն. և որբ ի թատերացն մեկնին,  
չհանեն յոգւոց և չհեղուն վտակս արտա-  
սուաց...: Եւ արդ չեր պարտ նոցա՝ որ  
անդ զեգեալ նստիցին՝ ծիծաղել, այլ ար-  
տասուել և յոգւոց հանել դառնութեամբ  
(Ոսկ. մ. թ. 12, էջ 569):

Յոլորովին անձանօթ բառ մ'է: Յն.  
բնագիրն ունի պարզապէս, աճողլեցուց  
որ է «նստիցին», ուրեմն զեգեալ բարին  
համազօրը չկայ: Վարդանեան ՀԱ. 1921,  
247, որովհետև նոյն յունարէն բառը կը  
նշանակէ նաև «զեգերիլ», կը կարծէ որ  
զեգեալ պէտք է ուղղել զեգերեալ: Այս

մեկնութիւնը շատ ճիշտ է, որովհետև ու-  
րիշ տեղ ալ Ոսկերերանի մէջ կը գտնենք  
նման ասութիւն. Առ զերեզմանիս նստէին  
զեգերեալ. Ոսկ. մ. գ. էջ 135. բայց այս  
բոլորին մէջ զեգերիլ ըսելով պէտք չէ  
հասկնալ «թափառիլ», ինչպէս է աշ-  
խարհարարի մէջ, այլ «յապաղիլ», տեղ  
մը նստելով պարապ ժամանակ անցունել»:

#### 5. Երախան

Այլ ոմն ծեր անցեալ ընդ բազում աշ-  
խարհս, և զերախանացն և զվատաւանացն  
համարս և զբաղացաց կայանս և զկեր-  
պարանս և զնաւահանգստաց և զվաճա-  
ռաց, բազում հաւաստեաւ և ճշգրիտ պատ-  
մէ (Ոսկ. մ. ա. 1, էջ 15):

Յոյն բնագիրն հոս այս ձևով է. 'Ալլ'  
'օ մէն շեշշառած ուն ունալին ՇՊԵԼԹՈՒՆ  
շին, ուն տաձնան ծրծիծն, ուն ունալին ՑԵ-  
ՏԵՍԻ..., ուր տաձնօն (600 յունական քայլի  
տարածութիւն) առնելով իրը վտառն, մեր  
երախան բառը կը մնայ առանց համազօ-  
րի: Առ հասարակ «խումբ, դաս» իմաստն  
ունի. բայց որովհետև այս իմաստը հոս  
յարմար չէ, ուստի պէտք է հասկնալ  
«ճամբու հանգըռուան, իջեան, քարվան-  
սարայ»:

## 6. Զակար

Եւ այսպիսի օրինակօք լի են զիրք և  
աշխարհիս կեանք։ Զի և պոռնիկը և  
իգացեալը խնուն զբերանս զակակաց, որը  
զշարիս անշարժ համբաւեն և աստանայի  
հարկատուը են (Ասկ. մ. թ. 1, էջ 417):

Բառարանները չփետեն այսպիսի բառ  
մը. Ասկերերանի հրատարակիչը կ'ըսէ թէ  
ձեռագրին մէջ զբուած էր զ ակակաց, և  
կը կարծէ որ թերես ուղղելի է զանդիաց,  
որովհետեւ յոյնը ունի «մանիքեցւոց»։

## 7. Խեղբարկեալ

Վշտացելոց դիրութիւն առնիցէ, ի կա-  
պանաց զբազումս արձակիցէ և զայլս ի  
մետաղաց ազատիցէ, զիսեղարկեալն ի  
կախաղանաց իջուցանիցէ, զերեաց դարձ  
առնիցէ (Ասկ. մ. ա. 23, էջ 376):

ՆՇԲ. կը ճանչնայ բառա՝ այս նոյն  
վկայութեամբ, բայց իրը անջատ բառեր  
առնելով՝ կը դնէ զիսեղդ արկեալ. ըստ  
այսմ կը յիշէ իւնդդ արկանել ոճին տակ։  
Բատ իս բարդ ձհ մ'է և իրը առանձին  
բառ՝ պէտք է զբել իւնդդարկեալ, ինչպէս  
ունի Առձեռնը։

## 8. Ոզնիկ

Մի և մեզ սպառնայցէ մարգարէն,  
որպէս թարիլովնի, եթէ «Ոնդ ոզնիկը և  
յուշկապարիկը բնակեսցեն, զոր յոյնն  
իշացուլ ասիցէ, և դեք կացաւեսցեն» (Ասկ. մ. գ. 6, էջ 24):

Ոզնիկ ձեզ առաջին անգամն է որ կը  
պատահի և ուրիշ տեղ գոյութիւն չունի.  
Նշ ՆՇԲ և ոչ ալ Առձեռնը կը յիշեն զայն։  
Բայց սիսալ կամ խանգարուած ձե մը չէ,  
այլ մաքուր հայերէն, ինչպէս կը հաս-  
տատեն նոր գաւառականներէն վն. վող-  
ելիկ, Խրբ. օգեկ, որոնց շլջեալ ձեզ կը  
ներկայացնեն թերես Ազլ. Գոր. Ղըբ.  
Կօղիկ, Ղզ. Կուզ։

## 9. Ոտնիմատն

Եթէ արբունի հրովարտակը ուստեք  
յանկարծակի հասանիցեն, յոտնիմատն  
յառնեն, յակճիռս կայցեն լսել (Ասկ. մ.  
ա. 19, էջ 318):

Գեղեցիկ հայերէն բառ մ'է ոտեխմատն,  
որ կը նշանակէ «լաւ լսելու կամ զիտե-  
լու համար ոտքին մատերուն վրայ կանգ-  
նելով՝ յառաջ կարկառած»։ ՆՇԲ զիտէ  
այս բառն ալ՝ վերի վկայութեամբ, բայց

ո՞չ թէ իբրև առանձին բարդ ձեւ կը յիշէ,  
այլ կը զնէ ոտես բառին տակ՝ յոտես ի  
մատե յառնել (յն. կանգուն կամ յոտին  
կալ) ոճին մէջ։ Զարմանալի է որ Առ-  
ձեռնը բոլորովին ջնջած է ասիկա, մինչ-  
դեռ պէտք էր ոտես բառէն հանելով՝ իբրև  
առանձին բառ յիշատակել։

#### 10. Պահանջ

Զկապանսն խզեսցէ և զդմնդակ պա-  
հանսն մերժիցէ և ի ծանրութենէ երկա-  
թոյն զերծուսցէ (Ոսկ. մ. ա. 14, էջ 207)։

Կը նշանակէ «բանտարկութիւն, բան-  
տարզելութիւն»։ չունի նշի, բայց Առ-  
ձեռնը կը յիշէ այս իմաստով։ Նոյնպէս  
նաև Նորայր, կորիւն վրդ. էջ 454 ծան.  
որ ասկէ կը զնէ նեեմ. դ. 9 պահանդրդ  
բառը։

#### 11. Պրիւտանիոն

Եւ առաջինութեան պարզե ո՞չ տերեւ  
գափնոյ, և ո՞չ ոստ և պսակ ձիթենոյ,  
և ո՞չ ոռճիկը պատուիրանաւ, և ո՞չ պատ-  
կերը պղնձիք. քանզի այն ամենայն ոյծ  
և արհամարհեալ էր (Ոսկ. մ. թ. 1,  
էջ 11)։

Չեռագրին պառուիրանաւ ձեւ խանգա-  
րեալ զրչութիւն մ'է, որ իմաստ չունի.  
յոյն օրինակը՝ ինչպէս կը նկատէ հրա-  
տարակիչը, ունի ասոր դէմ որսուացելոն  
«յունական բաղաբներու մէջ այն հասա-  
րակական հաստատութիւնները՝ ուր կը  
պահուէր նույրական հուրը և ուր կը  
խնամուէին հասարակական հիւրերը և  
պետութեան թոշակաւորները»։ Թարգմա-  
նիչը անշուշտ տառադարձութեամբ պա-  
հեր է նոյն բառը, բայց զրչագրուղը  
չհասկնալով այս պրիւտանիոն ձեւ՝ դար-  
ձուցեր է պատուիրանաւ։

#### 12. Արնգել

Եւ արդարեւ իշացուը իսկ են ոմանք ի  
մարդկանէ, որը իբրև յանապատի կեան  
և սրնզեն և կցիցեն և եղջիւր ածիցեն  
(Ոսկ. մ. գ. 6, էջ 20)։

Նշի զիտէ այս բառը վերի վկայու-  
թեամբ, որուն կ'աւելցնէ նաև երկու ու-  
րիշ վկայութիւն նոյն գործածութեամբ։  
«Իբրև զջորիս անձաւս սրնզեն. Ոսկ. կող.  
ԺԲ. իբրև զուղոս վազվազեն և իբրև  
զջորիս սրնզեն. Բրո. մրկ. Այս բոլորին  
մէջ նշի որեղել կը մեկնէ «զոնչել, հա-  
նել զձայն իշոյ և ջորւոյ», թէկ ինըն

ալ զիտէ որ յն. բնագրին մէջ ասոնց համապատասխան բառը կը նշանակէ «ընդուժնուլ», կիցս արձակել»:

Սրբել բառ մը կայ հայերէնի մէջ, որ կը նշանակէ «սրբնզի ձայն հանել» (Մագ. Արծր. վկայութիւնները տես ՆՀԲ). բայց այս բառը հոս գործ չունի: ՆՀԲ երկուքը միենոյն բառը կարծելով՝ նշանակութիւններն ալ յարմարցնելու համար՝ վերի վկայութեանց մէջ սրբել բառին տուերէ «զուալ» նշանակութիւնը: Ըստ իս երկուքը իրարմէ պէտք է բոլորովին բաժնել. սրբել «սրբնզի ձայն հանել» կու զայ սրինգ բառէն, իսկ միւսը՝ որ ըստ յունարէնի կը նշանակէ «ընդուժնուլ», կիցս արձակել», կը ծագի սրուեկն «սրունը» բառէն: Ասիկա սրուեք բառին աղաւաղութիւնը չէ, այլ բնիկ հայ սրուեն արմատէն կն մասնիկով աճած ձև մը (հմտ. մուկն, արմուկն), որ առանձին ալ կայ գործածուած՝ սրուեկն, սրուեկն, սրեկուեք, սրեկանց ձեւերով: Ըստ այսմ վերջինը պէտք է զրել սրեկել:

Առձ. բառարան ունի սրեկել «պարի մէջ սրունքներով ցատկուել», որ անշուշտնոյն բառն է՝ ուրիշ վկայութենէ մը հանուած:

### 13. Տմարդիկ

Բայց քանզի անազորոյնը և տմարդիկը էին, զզբոց ընթերցուածս ի մէջ բերէ (Ոսկ. մ. թ. 14, էջ 584):

Նշանակութեամբ նոյն է տմարդի բառին հետ. ՆՀԲ չգիտէ բառս, բայց Առածեռնը ունի:

### 14. Օրէնսդնել

Քանզի ի ստէպ օրէնսդնելն՝ զայն ես յաւելոյր, իթէ «Բայց ես ասեմ ձեզ» (Ոսկ. մ. ա. 25, էջ 390):

Օրէնսդնել «օրէնք դնել, օրէնքներ հաստատել» առանձին բարդութիւն մ'է և ո՛չ թէ զոյգ բառ, ինչպէս կարծեր է անշուշտ ՆՀԲ. վերջին պարագային պիտի ունենայինը ի դեկն ստէպ օրէնս: Նոյն բարդութեան ուրիշ ձեւերն են օրինադրել, օրէնսդրել. հմմտ. Զամենայն ի բարի և յօգուտ օրինազրեաց. Օրինազրեաց պսակել, Ոսկ. Հռովմ. էջ 325. Աստուած իսկ զսոյնս օրէնսդրեաց. էջ 330. Որբ զբախտին և զիրամանաց կրօնս օրէնսդրել ժարհին. Ոսկ. մ. թ. 16, էջ 418: Նոյն ոճով ունինը մեղադրել, բանադրել, ունիրել, բոլորն ալ յետին:

## ԳԼՈՒԽ ԽԵ.

### ՀԱՅԵՐԻՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

Ս. ԵՓԲԵՄԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷԶ

(Տպ. Վ. Անհարկ 1836)

#### 1. Ազագայէլ

Դիցէ, ասէ, Ահարոն ի վերայ երկուց նոխազաց վիճակս երկուս. վիճակ մի յանուն տեառն և վիճակ մի ազագէլի յանապատ:... Որպէս նոխազն զի արածի զերանութիւն երկրի և դառնայ. այլ ոչ եթէ զօրութիւն ինչ այլ է ազագայէլ, այլ որպէս անապատն կաղէս:... Մոյնպէս և ազագայէլ, զի յիշեսցեն զսաստկութիւնն նորա և զբարկութիւնն նորա՝ որ եղել ի վերայ նոցա յանապատի անդ, և արգելցին նորա ի մեղաց, զի ազագայէլդ՝ սաստկութիւն Աստուծոյ անուանի (Եփր. հտ. Ա. Վ. 222-3):

Եփրեմի ակնարկած հատուածը կը գըտնըսի Ղետ. Ժ. 8, որ մեր թարգմանութեան մէջ սամէս է. «Եւ արկցէ Ահարոն

ի վերայ երկուց նոխազացն վիճակս. վիճակ մի ջեառն և վիճակ մի արակերոյ»: Ազագայէլին համապատասխանն է արակերոյ. Երբայական բնագրին մէջ ասոր դէմ կը գտնենք յինչ ազակէլ, որուն իմաստը անձանօթ է. հաւանաբար կը նշանակէ անապատներու մէջ բնակող չար ողի մը (տե՛ս Gesenius, Բառ. իբր 1910, էջ 570): Եօթանասունը հասկցած են «ազատ արձակուած նոխազ», ինչպէս կը գնեն նաև յաջորդ 10 և 26 համարներուն մէջ: Ասորական թարգմանութիւնը կ'երեւայ թէ լաւագոյն համարեր է պահել երբայեցի բառը, որմէ տառաղարձուած է նաև հայը: Եփրեմի վերի հատուածին մէջ յիշուած չորս ճեերէն առաջինը ճեռագրին մէջ զրուած է ազագէլ, զոր հրատարակիները միւսներուն համաձայն դարձուցեր են ազագայէլ, մենք պահեցինը ճեռագրին ձեր՝ քանի որ երբայականին ճիշդ համապատասխանն է:

#### 2. Անսուակագնաց

Լոեցո՛, Տէր, զբերան իմ բամբասելոյ... զոտս իմ անառակ զնացից (հտ. Դ. էջ 240): Ասոր դէմ Գիրք աղօթից ասացեալ Ա. Եփրեմի Խուրին ասորւոյ, Երուսաղէմ

1870, էջ 69 կը դնէ «Եւ զոտս ի յանձառակ գնացս երթալոյ», որ անշուշտ լաւագոյն ընթերցուածն է, որովհետեւ այսպէս զեղեցիկ կը յարմարի միւս նախադասութեանց կազմին, ուր իւրաքանչիւրը բացառական հոլով աներևոյթով մը կը վերջաւորի. «Լոեցո՛, Տէ՛ր, զբերան իմ ի բամբասելոյ և զլեզու իմ ի չար խօսելոյ, զաշս իմ յարատ հայելոյ և զականջս իմ ի չարալուր լսելոյ, զձեռս իմ (ի) յափըշտակելոյ և զոտս իմ ի յանառակ գնացս երթալոյ»: Ասոր զէմ վենետկեան ձեռագիր մը ունի «զսիրտ իմ յանառակագնացս երթալոյ», որ անշուշտ Երուսաղեմի օրինակին խանզարուած ձեն է: Բառարաններուն մէջ չկայ անառակագնաց և թէկ մէկ ձեռագրի տարրերակն է, բայց այնու ամենայնիւ իբրև նոր բառ պէտք է մըտցընել:

### 3. Արտահող

Զի եթէ հնար զոյր արտավայրացն զալ առ հողագործն, քանիօն ուրախութեամբ տային նմա զսերմն լիսապէս (հտ. Դ, էջ 174):

Արտավայր կը նշանակէ «արտ ըլլալու հողը դեռ չցանուած կամ ցանուելիք արտ»:

Այս բառին տեղ մէկ ձեռ, զրած է արտահողացն, որ նախորդին հումանիշն է իբրև նոր բառ պէտք է այնպէս մտցնել բառարաններուն մէջ:

### 4. Բացադիմի

Ողորմեա՛, Տէ՛ր, մեղաւորիս և բացադիմի յանցաւորիս անթիւ բազմութեան (հտ. Դ, էջ 246):

Բառարանը կը կարծէ թէ յաջորդ գոյականին հետ համաձայնուած ածական մըն է, և ուղ. կը դնէ բացադիմ «յանդուզն աներես», բայց աւելի յարմար է դնել ուղ. բացադիմի, ինչպէս ունինք երկդիմի, բազմադիմի, բանի որ նախադաս ածականի համաձայնութիւնը սովորական չէ հայերէնի մէջ:

### 5. Գիւրագործութիւն

Զիւր զփորձն ետես բազմաց զիւրագործութիւն. զի մինչև ցայսօր իսահակայ նմանութեան հաւանին հեթանոսք ևս, մանաւանդ առաւել վասն Քրիստոսի (հտ. Դ, էջ 202):

Կը նշանակէ «հեշտութիւն»?:

## 6. Զղացումն

Զղացումն բժշկութիւն է անձինն, լուսաւորութիւն հոգւոյ (Հտ. Դ. էջ 166), նշ. «զղումն»:

## 7. Թարմափիլ, թարմափամնք

Խօսեցաւ Առաքեալ վասն մեղաց...  
իրեւ ետես եթէ բարրափին լսողըն ի բազմապատիկ յօդապատ բանիցն նորա՝ ած ժողովեաց նա զպատմութիւնն իրը ի բազում բարրափանաց անտի և ած յայտնեաց զնա համառօտ բանիւը (Հտ. Դ. էջ 26):

Ոյն վկայութենէն կ'երեայ որ բարրափանիք կը նշանակէ «բացատրութեան մը դժուարըմբոնելի մանրամասնութիւնները». բարրափիլ «բացատրութեան մը դժուար մանրամասնութիւնները չկարենալ ըմբոնել»: Այս առումները բառարաններու մէջ նշանակուած չեն:

## 8. Խնճաններել

Խոկ այն որ հզօրն է, այս ինքն իրրուինքնանեղեաց ճշմարտութեանն անարգողն՝ զի երկիր պազցեն նմա, վասն այսու-

րիկ ասէ. Տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ (Հտ. Բ. էջ 221):  
Կը նշանակէ «բռնադատել»:

## 9. Խոհակեր

Քաղաքն ետես զթովնան և խոռվեցաւ,  
զի իրեւ զիսոհակեր կայր ի միջի նոցա (Հտ. Դ. էջ 109):

Խօսրը Յովնան մարգարէի մասին է, որ Աստուծմէ ուղարկուած էր Նինուէ՝ քաղաքը պատուհասելու համար: Այս պարագային շատ տարօրինակ կու գայ ըսել Յովնանի համար թէ «կերակուր եփողի պէս կանգնած էր անոնց մէջ»: Անշուշտ խանգարուած զրչութիւն մ'է խոհակեր, որուն դէմ մէկ ձեռագիր ունի խոհակիր (չունին բառարանները): Զեռագրին այս ի-ով ձեւը ենթազրելով խոհ = խորհիք բայէն՝ կրնայ աւելի յարմար ըլլալ, բայց դարձեալ բաւարար չէ: Անհրաժեշտ էր ունենալ բնագիրը:

## 10. Խոտուց

Կենդանի է բանն Աստուծոյ և առաւել հատու է քան զամեն սուր երկսայրի՝ հատանել անցանել հասանել մինչև յորու-

շումն ոգւց և մարմնոց, մինչև յօդս և ի խոտուցս (հտ. թ. էջ 317):

Հատուածս առնուած է Պօղոսի Երբայեցոց թղթէն (Գ. 12), որ մեր Ոսկեղարեան թարգմանութեան մէջ հետեւեալ ձեռվ է. «... և անցանէ մինչև ցորոշումն շնչոյ և ոգւոյ և յօդից և ուղղոյ». ասկէ կ'երեւայ որ խոտոց բառին հոմանիշն է ուղեղ. բայց ասիկա ո՛չ թէ զիխու ուղեղն է, այլ ոսկորներուն ծուծը, ինչպէս կը ցուցնէ յոյն բնագիրը (մօւծան) և ինչպէս կը պահանջէ նաև քովի յօդից բառը:

ՆՀԲ անշուշտ մտազիր չըլլալով Եփրեմի վկայութեան բուն աղբիւրին և հետեւցնելով յօդ բառին յարազրութենէն՝ խոտոց կը մեկնէ «յօդուած, մարմին ներքին խաղերը»: Նման բառ մը իրօք կայ հայերէնի մէջ, բայց ունի խոտոց ձեւը. ահա՝ ասոր վկայութիւնը. Հասթ ձեր եղիցին ի պատարագաց՝ կաշի և աչոյ երի անդամ և ճրագու և դմակ և սիրտ և լերգարոյթ և երիկամունք և ճարպով ի կողիցն և ի խոտոցաց մասն, լեզուն և աջոյ ակն և ամենայն խորհրդական մասունքն (կանոն. էջ 54. այս վկայութիւնը չունի նՀԲ): Յիշելի է նաև Սարկ. լուս. 22 «Ուրբացն խոտոցաց՝ մամուլը, ծնկացն՝ յօշումն, կողիցն՝ բերանք, արտասուացն ամանոց՝

բախմունք»: Ասկէ զատ բառը կենդանի է նաև Երևանի և Ղազախի զաւառակներուն մէջ՝ խոտոց «դանակով կարած ձկան մասն, կտոր», որմէ խոտոցի «ձուկը մաս մաս կարել» (տես և իմ յօդուածս խոտոցոց բառի մասին, Արք. 1915, 223-4):

Եթէ խոտոց և խոտոց միհնոյն բառերն են, այն ժամանակ խոտոց բառին գոնէ իրրև երկրորդ նշանակութիւն պէտք է դնել «ուղեղ, ծուծ»: ինչպէս կը հետեւի վերի օրինակէն. մանաւանդ որ Եփրեմի նոյն հատուածին ակնարկութեամբ ուրիշ տեղ մը զարձեալ կը գտնենք ուղեղ. ընդ մէջ անցուցանել զազդողական սուրն, որ հատանէ անցուցանէ մինչև յորոշումն շնչոյ և մարմնոյ (') յօդից և ուղղոց (հտ. Գ. էջ 185):

### 11. Ճապուել

Ճողովրեա՞ յընչից քոց և տուր ի ձեռս նոցա (հտ. թ. էջ 174). հոս ձողովրել կը նշանակէ «խլւել, կորզել, փրցնել»: Զեռուազիրներէն մէկը ունի ձողովրեա՞ և ձողովրեա՞, ուր ձողովրել անշուշտ ձողովրել պրեա, ուր ձողովրել անշուշտ ձողովրել բառին հոմանիշն է: Ասիկա պէտք է դնել ձափուռ «մազիլ, ճիրան» բառէն, որով և բայց կարգալ ձափուռ «ճանկել, յափշտարայը կարգալ ձափուռ»:

կել, իւլել, փրցնել»։ կենդանի է զաւասականներուն մէջ ձափռել. ձեփռել ձեռով և «ճանկել, ճանկուտել, պոկել փրցնել» նշանակութեամբ։

### 12. Մանկապէս

Զի մի՛ ոք ասիցէ մանկապէս զաստուածութիւնն (հտ. Դ. Էջ 98)։ Կը նշ. «մանկանման, երեխայի նման»։

### 13. Մեծահանգոյց

Դարձեալ խրատեաց զնա Աքիտոփէլ վարել ընդ իւր գունդ մի զօրու և անկանել ի վերայ գնդին Դաւթի։ Իսկ Հոշի իբրև ետես թէ Դաւիթ անց գնաց ի Գաղութու, քանզի հանդերձ կանամքը և որդուվը գնաց նա, և վասն զի զիտաց՝ զի եթէ հալածեն մեծահանգոյց և վառեալ գունդն զինի փախստէիցն, ժամանեն և կոտորեն զնոսա (հտ. Ո. Էջ 401)։

Մեծահանգոյց բառը Նէր կը մեկնէ «յերկար հանգուցեալ, անխոնջ, ժիրաժիր»։ Ըստ իս սիսալ է այս մեկնութիւնը։ Քանի որ փախստականներուն ետեէն հասնելու վրայ է խնդիրը, աւելի յարմար է մեծահանգոյց հասկնալ «արագ գնացըով»։

Ինչպէս յայտնի է, հին ժամանակ և գեռ հիմայ ալ Արևելքի մէջ, ճամբորդութիւնը կ'ըլլար իջևանէ իջևան։ Սովորաբար օրական երկու իջևան կ'անցնին. մինչև կէս օր մէկ իջևան, ուր ճաշել հանգստանալէ յետոյ կ'երթան յաջորդ իջևանը, ուր և կը զիշերեն։ Այս իջևանները կամ կայարանները հին լեզուով կը կոչուէին հանգոյց. հմտու, խոր. Բ. 43։ Երբ ճամբորդութիւնը շատ ստիպողական է, կարելի է փոխանակ երկուքի, երեք իջևան անցնիլ, կամ որ նոյն է՝ մէկ օրուան մէջ աւելի մեծ հանգոյցներ կարել։ Ահա ինչ որ Եփրեմիթարգմանիչը կը կոչէ մեծահանգոյց։

### 14. Յարակիլ

Այլ յիմարութենէ և յանխրատ հակառակութենէ՝ յորում տղէտքդ յարակեալ են, հրաժարեալ (հտ. Գ. Էջ 253)։

Հատուածս առնուած է Բ. Տիմ. Բ. 23 համարէն։ Այլ ի յիմար և յանխրատ խնդրոց հրաժարեալ։ Հոս զժբախտաբար չկայ յարակիլ, որ հայ մատենազրութեան մէջ ուրիշ տեղ մ'ալ գործածուած չէ, որչափ զիտեմ։ Նէր կը համարի «թերևկա» զրելի յարակիլ, վարակիլ ևն և կամ իմանալի յարանալ, հանապազորդիլ»։

իսկ Առձեռնը կը մեկնէ «միշտ շարունակ ընել»։ Անստոյգ բառ է, որուն համար բնազրի համեմատութիւնը անհրաժեշտ է։

### 15. Շարակարտող

Դիւթ վասն օգնութեան շարակարտող բանիւք պատրէ։ Քաղդէ առ սովի զծնունդս նուիրէ բախտից և բազում ինչս առնու յանմաից (հտ. Գ. էջ 115)։

Շարակարտող ձև մը գոյութիւն չունի. կ'ուղղեմ շաղակրատող «փուճ խօսող, յիմարաբանող»։

### 16. Որսալի

Այսպիսիքն ոչ կարեն վերանալ ի վեր, դիւրաւ որսալիք լինին սատանայի (հտ. Գ. էջ 224), նշ. «որսացուղ, որսալու յարմար»։

### 17. Պարէ

Եւ ոչ պատրեաց զմեկ ուղեղ (?) պարգևացն նորա և ոչ խտողեաց զմեղ սաստկութիւն պարէիցն նորա և ոչ կափոյց զմեկ որոգայթ մենքենայիցն նորա և ոչ թագաւորեաց ի միջի մերում սպանող գեղարդն նորա (հտ. Բ. էջ 241)։

Կը կարծեմ որ պէտք է ուղղել պարսիցն «պարսատիկներու», որուն յարմար կու գայ սաստկուրիւն յատկացեալը. բայց անյարմար կը թուի խտադեաց բայը. ասիկա կը պահանջէ սիրտ շոյող, հաճելի բան մը. ուստի կարելի է որ պէտք է կարդալ սաստկուրիւն պախորեիցն (դրամի, ստացուածքի, կաշառքի առատութիւնը մեզ չզբգուեց)։ Բնազիրը կրնայ վճռել խնդիրը։

### 18. Որսունայ

Այն որ նա ինքնին օծ և զրոշմեաց զմեզ ի ձեռն ուրունային Հոգւոյն՝ զորեա ի սիրտս ձեր (հտ. Գ. էջ 88)։

Այս բառը ծանօթ էր մեզ միայն մէկ վկայութեամբ, ուր սակայն թէ ձեռվ և թէ նշանակութեամբ, անստոյգ է. «Եւ ի ձեռին նոցա զանշուշտ որունայն» (Եղիշ. ը. էջ 118, այլ ձ. ուրունայ, ըսրունայ)։ Հին բառարանը ասիկա կը մեկնէր «պըսակ»։ Որունայն ասաց (ոմն), թէ չէ պարսիկ (բառ)։ բայց յայտ է ի նախատես բանից մոգսետին, զի պսակն է։ Ասոր հետևելով Նշի և Զախշախիսան կը զնեն «բրաբիոն, բրաբիոնեան պսակ»։ Առձեռնը ունի «առհաւատչեայ»։

Բառիս կասկածական նշանակութեան վրայ լոյս կը սփռէ Եփրեմի վերի վկա- յութիւնը, որ առնուած է Բ. Կոր. Ա. 22 համարէն, ասիկա մեր թարգմանութեան մէջ հետևեալ ձևով է. Եւ որ օծ զմեզ՝ Ասուուած է. որ և կնքեաց զմեզ և ետ գառնաւատիւայ Հոգւոյն ի սիրոս մեր (յն. ուն ձրձաբանա): Այս համեմատութենէն կ'ե- րեւայ որ ուրունայ կը նշանակէ «առհա- ւատչեայ», ինչ որ կը հաստատէ նաև բառին ծագումը, հմմտ. ասոր. rahlbōnā «գրաւ, աւանդ». հայերէն բառը ասորե- րէնէ փոխառեալ է (Հիւպշ. Arm. Gram. 316), հետևեաբար և ուղղագոյն ձևը ու- րունայ է:

### 19. Տե՛ռն

Եւ արդ զիսոզմ՝ որ պեղնն համարեալ են արարչին՝ հեղճոյց, և արար կամս և դիւացն, և արկ տուգանս ի վերայ տեսնե երամակին, և դեբն զիտացին զտանջիչն իւրեանց (հտ. Բ. էջ 69):

Ոնձանօթ և անստոյդ բառ է. թուի թէ երամակին ածականն է և կը նշանակէ «պիղծ, անմաքուր»: Բայց կրնայ ըլլալ որ հասարակ համառօտագրութիւն մ'ըլ- լայ, փոխանակ տեսոն. և այս աւելի

հաւանական է: Ասորի բնագրին համեմա- տութիւնը պիտի վճռէ խնդիրը:

### 20. Յմախիւղ

Յիւղ յորժամ արկանէ վարդ՝ լինի վարդիւղ. և եթէ ցմախ արկանէ՝ լինի ցմախիւղ. իսկ եթէ խնդամոլ արկցէ՝ լինի խնդամոլիւղ (հտ. Դ. էջ 102):

Կը նշանակէ «ցմախ բոյսով (ըստ Հայ- րուսակ & 3022 eucubalus behen, si- line inflata, gypsophile) պատրաս- տուած իւղ»: Ցպագրին մէջ երեցն ալ իրու առանձին բառեր առնելով դրուած է ցմախ իւղ, վարդ իւղ, խնդամոլ իւղ, մինչ- դեռ պէտք է միացնել և իրու նոր բառեր մտցնել բառարանի մէջ:

### 21. Քող

Եկի հասի ի վերայ քոյ, և տեսի զքեզ զի հասեալ էր ժամանակ քո և ժամ քաղաց քոց (հտ. Բ. էջ 305):

Հատուածս առնուած է Եզեկիէլի մար- գարէութենէն (ԺԶ. 8), որ մեր թարգ- մանութեան մէջ սապէս է. «Ճեսի զքեզ զի հասեալ էր ժամանակ քո և ժամանակ խսիստողաց քոց»: Երրայական բնագիրը

ստորագծեալ բառին տեղ ունի ԾՂՂ ձօ-  
ձիմ «սիրոյ, կրից, տուփանաց». ուստի  
Եփրեմի յիշեալ քող բառը պիտի առնենք  
իբրև «տոփի»:

Ժողովրդական բարբառներու մէջ անա-  
սուններու մերձաւորութեան համար գոր-  
ծածուած բառերը նոյն իսկ անասուններու  
անուններն են. ինչպէս ցուլ գալ, ցուլ  
առնել, ցուլ ուտել կամ ցրալ, «կովի խառնք»,  
բայս գալ «նոյն նշ.» (թրգ. եսաց ցուլ  
բառէն), բոնրի գալ, բոնրով գալ, բոնրալ  
«շանց խառնք» (քենր «էզ շուն» բառէն),  
այսպէս ալ ունինք բաղ գալ, բաղ ուտել,  
բաղալ «էզ այծին մերձաւորութիւնը», որ  
կազմուած ի բաղ «արու այծ» բառէն:  
Այսուհետեւ այս բառերը իրենց նախնա-  
կան նշանակութիւնը փոխելով՝ ընդհան-  
րացած են. ցլալը միայն կովի համար չէ,  
այլ նաև կատուի համար (Յուլանը),  
քաղ ուտելը միայն այծի համար չէ, այլ  
և կովին ու մաքիին համար, քոնթալը  
միայն շան չէ, այլ գայլի, արջի, նաև  
էշի համար: Նոյն իսկ մարդու համար  
Մերատի գատաստանազրին մէջ ունինք  
ցուլ, իբրև «կնոջ մը ապօրինի սիրականը,  
տոփողը» (Հրտր. Karst, էջ 120, 121):  
Այս բոլոր ըսածներէն կը հետեւի թէ Եփ-  
րեմի յիշեալ քող բառը պէտք է սրբազրել

քաղ «տոփի», խառնք» և թէ այս բաղը  
ծանօթ քաղ «արու այծ» բառին մէկ  
առումն է միայն:

Բառարանները Եփրեմի յիշեալ բառը  
հասկցած են անշուշտ բող «ծածկոյթ»  
և անուշաղիր անցած. բայց այս պարա-  
գային սեռական պիտի ըլլար քողոց. սըր-  
բազրելով քաղ, բառին աց վերջաւորութիւնը  
կ'արդարանայ:

Քաղ բառին «խառնք» նշանակութիւնը  
ինծի աւելի հեռու կ'առաջնորդէ: Կը կար-  
ծեմ որ հյ. քաղոց ամսանունն ալ ասկէ  
կազմուած է, իբրև անասնոց խառնից  
ժամանակը կամ ամիսը:

Գիտենք որ մեր անշարժ տոմարով  
քաղոցը կը համապատասխանէ զեկոտ. 9—  
յունվար 7, որ հայ երկրի համար խառ-  
նից ամիսը չէ: Բայց անշարժ տոմարը  
յետին գործ է. աւելի առաջ տոմարը  
շարժական էր և այն ժամանակ՝ երբ առա-  
ջին անգամ ամսանունները դրուեցան,  
հարկաւ անոնք պիտի պատասխանէին եղա-  
նակին: Մեր 12 ամսանուններուն մէջ  
նաւասարդ (պրս, նոր տարի), հունի (վրաց.  
երկրորդ ամիս), սահմի (վրաց. երրորդ  
ամիս) են. եղանակ ցոյց տուող բառեր չեն.  
միայն քաղոցն է՝ որ իմ այս մեկնութեանս՝  
կը դառնայ եղանակ ցոյց տուող բառ մը,

և երկրորդ՝ արեգ ամիսը, որ նշանակելով  
«արև, արեգակ», անշուշտ յարմար է  
միայն յունիս կամ յուլիս ամիսներուն։  
Գուցէ բաղոց բառին համար տուած մեկ-  
նութիւնս կասկածելի ըլլար. բայց արեգ  
ամիսը միայն, յունիս—յուլիսին յարմա-  
րելու հանգամանքը կը ցուցնէ և կը հաս-  
տատէ որ ենթադրութիւնս ճիշտ է։

Հիմա պէտք է փնտոել թէ ո՞ր թուին  
է որ բաղոց ամիսը մարտին կ'իյնայ։  
Տոմարական հաշիւները կը ցուցնեն որ  
նաւասարդի մէկը նոյեմբերի մէկին եկած  
է 1560 թուին. հետևաբար նոյն հայկա-  
կան տարւոյ բաղոցի մէկը եղած է 1561  
թուի մարտի մէկին։ Ասկէ աւելի առաջ  
մինչև Ե. դար՝ երբ աւանդուած են մեզ  
մեր ամսանունները իբրև արդէն պատրաստ  
տոմար, երբեք բաղոցը մարտին պատա-  
հած չէ։ Ետ երթալով 1560 թուէն մէկ  
Հայկայ շրջան (1460 տարի), կը գտնենք  
որ մէկ անգամ ալ բաղոցը մարտին հան-  
գիպած է Յ. Բ. 100 թուին, ուստի Յ.  
Բ. 100 բուականին է որ դրուած է բաղոց  
բառը կամ նոյն է ըսել թէ այս բուականն  
է որ կազմուած է հայկական տոմարը։

Ահա այսպէսով մենք կը հասնինք ան-  
սպասելի, անակնկալ եզրակացութեան  
մը. — հայերէն բառի գործածութեան

վկայութիւնը Յ. Բ. 100 թուականին,  
Ոսկեղարէն 300 տարի առաջ, հնութիւն  
մը՝ որուն հասած չեն երբեք ոչ մեր ձե-  
ռագիրները, ոչ մեր արձանագրութիւնները  
և ոչ ալ ուրիշ ազգերու հին հին յիշա-  
տակարանները։

## 22. Օրիայ

Քարոզեաց Յովնան զկործանումն ի վե-  
րայ Նինուէացոցն. արկ ի նոսա սոսկումն  
և գողումն, և սերմանեաց ի նոսա հիա-  
ցումն. և ետուն նորա նմա օրիայ զապաշաւ  
ոգոց և պտուղ ապաշխարութեան (հու.  
Բ. էջ 109)։

Թերեւս որայ բառն է՝ իբր հոմանիշ  
պառաղ ձեին։ Բնագրին համեմատութիւնը  
հոս բոլորովին անհրաժեշտ է։

\*  
\* \*

Ս. Եփրեմի Խոստովանութեան մէջ՝ որ  
հրատարակուած է վերոյիշեալ Գիրք Աղօ-  
թից մէջ (տպ. Երուասղէմ 1870), կը  
գտնեմ ես երբեք բառ, որոնք են.

1. Ժամարձակ «ժամասացութեան վեր-  
ջը, ժամէն արձակուիլը»։ Մեղայ... ան-  
յագ ուտելով, զորովայնս խճողելով,  
առանց ժամի և ժամարձակի հաշակելով,  
զպահսն արհամարհելով (էջ 20)։ Ասկէ

կ'երևայ նաև որ ժամասացութեան միշտոցին ճաշելը մեղք կը համարուէր:

2. Ճառագայրատոր «ճառագայթ տուող, շողք արձակող»։ Ճրագ ճշմարտութեան և ճառագայթատու, մերկեա յինչն զիաւար մթացեալ մեղացս (էջ 26):

3. Վաճառասիրել «շահադիտութիւն ընել»։ Մեղուցեալ եմ Աստուծոյ ազահութեամբ և արծաթսիրութեամբ, խարելով, աւելի առնելով և պակաս տալով, վաճառասիրելով, կծծելով, զաղտ գողնալով (էջ 20):

---

## ՅԱԻԵԼՈՒԱԾ ԵՒ ՈՒՂՂԵԼԻՔ

### Ա. Բատոր

Էջ 7, տող 14 կարդա՛ տարբեր աղբիշրենիւ:

Էջ 9, տող 5 կարդա՛ Գրականը:

Էջ 9, թիւ 3 Գայրանը։ — Այս բառը մեկնած եմ «ինչը, գումար, հարստութիւն», որ սխալ է: Գայթանը կը պատկանի զայր արմատին և կը նշանակէ «սըխալմունը, յանցանը» և բաղարավար լեզուով «գողութիւն», հմմտ. վրբ. հց. բ. 337 «Եղբայր ոմն գողացաւ զանօթս այլում և տարեալ առ ծերն. այն՝ եղ ի պահեստի . . . և կալեալ զծերն ինդրէին ի նմանէ զինչ և գողացեալն էր: Խսկ նա ասէր. Թողութիւն արարէք զի զթեցի . . . Եւ այսպէս զոր ինչ զթէրն եղբարըն և ուրանային, նա յանձն առնոյր զյանցանը»։ Այս պատճառով կանոնազրբի և կաղանկայտուացւոյն զայրանը ոք առներառով պէտք է հասկնալ ոչ թէ «ինչը մը առնէ», ինչպէս կարծած էի, այլ «գողութիւն ընէ»։ Գողութիւնը այնպէս ծանր

յանցանք էր վանականներու համար՝ որ պատիքը արտաքսում էր. հմմտ. վրբ. հց. Բ. 101. եթէ իցէ եղբայր... որ գողանայն, պարտ է արտաքսել զնա:

Էջ 14, տող 4 կարդա՛ Երևան, Մուշ:

Էջ 14, թիւ 9 րուսեիիկ.— Այս բառը կանոնազրբի մէջ՝ էջ 193 տպուած է «ի թուականին»! Որպիսի ուշազրութիւն հըրատարակչին կողմէն:

Էջ 19, թիւ 13 կատայ.— Այս բառը մեկնած եմ «իշխան, թագաւոր», ասիկա կարսայ բառն է և իր այս նշանակութիւնը ստացած է Երեմիա մարգարէի մէկ այլաբանական պատկերէն ազգուելով (Երեմ. Ա. 13) հմմտ. Լաստ. էջ 83՝ կաթսայն՝ որ Երեմիայի յեռանդն ցուցաւ՝ որ՝ ի հիւսիսոյ ի հարաւ ձգէր յայնժամ զցնցուլս եռանդեանն, այժմ ի հարաւոյ ի հիւսիսի ահագին եռանդեամբ...:

Էջ 26, թիւ 22 նամեսական.— Այս բառը մեկնած եմ «հովուական»: Յիշեալ մեկնութիւնը սիսալ է: Երեմիայի բառզրբին մէջ՝ էջ 232, կը գտնեմ նամեսական «չնորհական», նամերսահան «յաւերժական», նամեսական «նախարար կամ իշխան»: այս բոլորէն կը հանեմ նամեսական «նախարարական», որ շատ լաւ կը յարմարի տեղին: Բայց միենոյն ժա-

մանակ կ'երևայ որ նամեսական բառին մէկ տարբեր ձեռն է նամեսական, որմէ չեմ կը նար բաժնել նամեսական «նախարար» (բառ. Երեմ. էջ 240):

Էջ 30, թիւ 28 պարոյի.— Մեկնած եմ «պարիսպ»: անշուշտ ծանօթ պարոյի բառն է, իբրև «շրջապարիսպ»:

Էջ 88, տող 6 կարդա՛ արգելուին:

Էջ 90, թիւ 15 դունել.— մեկնած եմ «բիսիլ, յառաջ գալ, ելանել»: Բոլորովին սիսալ և անգոյ բառ մ'է: Հատուածը պէտք է կարդալ պարզապէս ոչ որպէս ի միուշի ունել:

Էջ 104-107, թիւ 1, 2, 4, 6, 7 բառերուն բով մոոցուած է զնել աստղանիշ:

Էջ 136, թիւ 3 բազմամուռ ուղղած եմ բազմամամուռ, որ սիսալ է. պէտք է պահել բառը ամփոփուա. մուռ «ցեխ, տիղմ» բառը յիշուած կը գտնեմ բառ. Երեմ. յաւել. էջ 554 և բառզիրք Մխ. Աբբայի. գործածուած է յայսմ. մարտ 9 հարեալ էին ի տիղմն զետոյն և իրեալ ի մուռն: Բազմամուռ բառը կայ նաև այլուր. ինչ. Յայսմ. մարտ 13 և Մինաս Համդեցի էջ 63, ի բազմամուռ և ի տղմային տեղիսն ճանապարհաց:

Էջ 145, թիւ 6 դարում. հմմտ. Եզեկ. ի 46 հաստատեա՛ զերեսս քո ի թեմսն

և հայեաց ի Դագովն (Երբայեց. ի դարում «Հարաւ»):

Էջ 147, թիւ 8 երամակ «ոչիլ» առան համար հմմտ. Աեկունդոսէ այս խօսքը. Քանզի ի նոսա զեռունք խաղան, և ի քեզ ճճիք և երամակը ոջլաց (Հրար. Տաշեան. Մատեն. մանր ուսումն. Ա. էջ 233):

Էջ 150, թ. 11 մայեակ «Չտեմարան» բառին համար պէտք է յիշել որ է նաև տեղի անուն. հմմտ. ի յերկիրն Մայեկայ ի զեօղն որ կոչի Սիալ (Հանդէս ամս. 1920 էջ 24):

Էջ 157, թիւ 3 դարձ «թո՛ղ, բացի»: այս բառին համար Հ. Վարդանեան (Հանդ. 1922, 576) դիտել կուտայ թէ ձեռագրական սխալ մ'է և բնագրին մէջ գոյութիւն ունեցած չէ: Բնագրին ուղիղ ընթերցուածն է հանդերձ: Այս մասին հմմտ. յաջորդը:

Էջ 168, մեծահեծան և յաղումն.— այս բառերուն, ինչպէս և զանազան ուրիշ բառերու վրայ ալ խօսելով Հ. Վարդանեան (Հանդ. 1922, էջ 649, 651 ևն) կ'ուզէ ցուցնել թէ յետին սխալ ընթերցուածներ են կամ անզոյ բառեր և ձեռագիրներու համեմատութեամբ և բանասիրական ըննութիւններով ալ շատ ան-

գամ կը հաստատէ թէ բնագրին մէջ ուրիշ բառ մը կար: Ակզբունքային տարբերութիւն մը կայ իմ և Հ. Վարդանեանի տեսութեան մէջ: Ամենափառ իրաւունք չունինք սխալ համարելու բոլոր այն բառերը որոնք որևէ ձեռագիր ընդունուած ձեւն տարբեր, մանաւանդ բոլորովին տարրեր ձեռվ կը ներկայացնէ մեզ: Ախալները երկու կարգի կը բաժնեմ. հասարակ մարդկային անուշագրութեան սխալներ և հոգերանական կամ զիտակից սխալներ: Երբ մէկը բան մը զրած կամ օրինակած պահուն պատահմամբ տառ մը կամ բառ մը փախցնէ կամ տառ մը երկու անգամ զրէ կամ ամբողջ տողի մը վրային թոփ և այլն, ասոնք անուշագրութեան սխալներ են: Երբ նշանաւոր զերասանը մտիր կուսանոց ըսելու փոխարէն բեմին վրայէն հանդիսաւորապէս կտիր մուսանոց արտասաներ է, ասիկա և այլ բազմաթիւ նըման զէպեր մարդկային պատահական անուշագրութեան սխալներ են և անշուշտ պիտի սրբագրուին, որովհետև հեղինակն ալ եթէ քիչ մը վերջ անդրադառնար, անշուշտ պիտի սրբագրէր: Բայց ինչ պիտի ըսենք, եթէ օրինակ՝ Մխիթար Գօշի Դատաստանագրքին մէջ անկատար բառին գէմ երկու ձեռագիր կը հանեն մարագ (տե՛ս իմ

Նոր բառեր, Ա. էջ 65): Կարելի՞ բան է ըսել թէ ասիկա սիսալման, մոռացութեան կամ անուշազրութեան արդիւնք է: Բնականաբար ոչ: Յայտնի է որ գրիչը զիտակացար փոխած է բառը և անոր տեղ դրած աւելի ծանօթ և սովորական բառ մը: Մարազ բառ մը հայերէնի մէջ ծանօթ չէ և եթէ մտածէնիք սովորական ձևով, իսկոյն պիտի ըսէինը թէ գրչին տգիտութեան արդիւնք է, որ սխալ ու անգոյ բառեր կը հնարէ և բնազրին լեզուն կը խաթարէ: Ես իրաւունք չեմ համարած այս պէս մտածելու և մալազը համարած եմ այն ժամանակի համար աւելի ծանօթ և սովորական բառ մը՝ «ոչ-չափահաս, գեռ մօրուքը չեկած մարդ» նշանակութեամբ, թէկ ասիկա հաստատելու համար որևէ փաստ ձեռքիս տակ ունեցած չեմ: Ուրախ եմ սակայն ըսելու որ ապագան իմ ըսածս հաստատեց:— Կարդալով Գամուսի ծովածւալ բառարանը՝ գոայ արար. իմլան «ոչխարին բուրգը թափիլ», malâsa «հարթ ու ոլորկ դառնալ», amlas «հարթ, ողորկ»: Այս վերջինը գործածուած է Ա. Գրքի արարերէն թարգմանութեան մէջ «անմազ» նշանակութեամբ այս պէս Ծն. Իէ 11 Այսուհետեւ աշուր անարջ ամլս է և սու լերկ:

Ուրիշ օրինակ մը:— Կաղանկայտուացւոյն Պատմութեան մէջ սովորական ասպատակը ընթերցուածին դէմ (տե՛ս իմ նոր բառեր, Ա. 37) Շահնազարեան տպագիրն ունի փախատք, որ անշուշտ սխալ է: Բայց անկարելի է ըսել թէ որևէ մէկը ասպատակ բառը սխալմամբ փախառ կարդացած ըլլայ. ուստի պիտի հետևցնենք թէ եղած է փախառ բառ մը՝ որ գրիչը դիտմամբ մտցուցած է իր ընդօրինակութեան մէջ:

Մենք կրնանք զեռ իջնել աւելի հասարակ և նոյն իսկ անմիտ սխալզրութեանց, ինչ. Ոսկերերանի պարտրաշխի հարազատ ընթերցուածին դէմ սխալագիր հապատ վաշխի (Նորայր, Հայկ. Բառաքն. էջ 24):

— Ոչ տեսանես զկորուստ քո, այլ ժրիտեալ ստահակս բարբառիս. Վրբ. և վկ. թ. 443, փոխանակ ժտեալ.— անդ՝ էջ 456 մէկ անգամ կոճոտեալ 2 և անգամ կրամտեալ.— անդ՝ էջ 470 բմբաքար՝ փոխանակ ոմբարար.— Նախ քան գհինդ կադանդին յունուարի, Վրբ. և վկ. Ա. 56, ուր 2 օր. ունի կաղանդին յունի (յունական կաղանդի),— անդ՝ էջ 57 օթիւ հեռու է, մի օր. անրիւ հեռագոյն է:— Բյուբոնիլի յաղբս բանսարկուին (փոխանակ՝ ի հաղբս. Խոսր. մեկն. Ժմկրգ. 1840, էջ 159):— Պարտ և պատշաճ է մարդոյ հրա-

ժարել ի կարքէ անտի և ի մեղուէ յօրինացն, Եփր. Գ. էջ 30, զոր Վարդանեան Հանդ. 1922, 584 կը սրբագրէ ի կարսնե. բայց օրինակողը հասկցած է ստուգիւ կարրոր «որոգայթ, մարդ խարող հրապուրանը» իմաստով գործածուած կը գտնեմ նոյն Եփրեմի մէջ, Գ. 30 (բառարաններուն անձանօթ): Այս բոլոր սիսալները (նպաստ վաշլի, ժխտել, կոճուտեալ, թմբարար, յոյն; անթիւ, ազր, կարթ) այնու ամենայնիւ ծանօթ հայերէն բառեր են, որոնք լեզուին մէջէն իբրև անգոյ մերժելու իրաւունք չունինք:

Ես կրնամ դեռ աւելի մանրամասնութեանց իջնել. Սեբերիանոսի մէջ (էջ 133) գրուած է ձնուրեն «առաստաղ», զոր թոռնեան, Հատընտիր 1891, էջ 280 կ'ուղղէ ձեղուհս:— Զեմ զիտեր թէ ոսկեղարեան հայերէնի համար ինչքան ճիշտ կարող է ըլլալ այս սրբազնութիւնը, բայց յետին հայերէնի համար կրնամ ըսել որ ճիշտ չէ. որովհետեւ մինչև այսօր ալ Ակնայ բարբարին մէջ ունինք ձնուրեր՝ ձեղուն իմաստով:

Այս բոլոր ըսածներէս կը հետևի որ ձեռագրական ամէն սիսալ անմիջապէս սըրբագրել՝ լեզուարանօրէն ներելի և արդար չէ: Հ. Վարդանեան ալ իրաւունք չունի

սրբագրելու և մերժելու ամէկ մէկ բառ՝ որ մեր զիտցած հայերէնին մէջ չի գտներ: Խնդիրը աւելի կը ծանրանայ, երբ Հ. Վարդանեան իր սրբագրութիւնները և տարբեր կարծիքները կը համեմէ այնպիսի լեզուով մը՝ որ զիտունին և զիտութեան անվայել է: Օրինակի համար երկնամարիմ բառին համար՝ որ ես գտած եմ կնիք Հաւատոյի մէջ, համարձակ կերպով կ'ըսէ. «Այս շատ հապճեպով վճռուած մեկնութիւնը սակայն բնաւ արժէց չունի (ՏԻԸ), որովհետեւ նախ մեկնուած բառը գոյութիւն չունի (ՏԻԸ!). Կնիք Հաւատոյի ընթերցուածը բնագրական փոփոխութիւն մըն է, ծընունդ յետագայ դարերուա» (Հանդ. 1922 էջ 579): Ի՞նչ ըսել է գոյութիւն չունի, երբ կայ: Ո՞վ ըսած է թէ այս բառը անպատճառ ոսկեղարեան է, և ո՞ր յանդուզնը կրնայ երբեք ըսել թէ Ոսկեղարեան հայերէն լեզուին գաղտնիքները ճշմարտութեամբ զիտէ: Միլիոնաւոր անգամներ Ոսկեղարեան հայ մատենագրութեան մէջ գործածուած էր Աստուծոյ ձեր, և ամենեին մէկը չէր կասկածեր անոր մասին, և ահա գտնուեցաւ Meillet մը՝ որ հաստատեց թէ Ոսկեղարուն չէր կրնար գոյութիւն ունենալ Աստուծոյ ձեւ մը և պէտք էր որ ըլլար \* Աստուծոյ: Ո՞վ կը կաս-

կամէր ապստամբ բառին մասին. պէտք էր որ երևան գար Եզնիկի նորագիւտ ձեռագիրը, որպէս զի յլշեցնէր մեզի թէ Ուկեղարեան հայերէնի մէջ չկար այդպիսի բառ մը, այլ պիտի ըլլար ապԱստամբ: Եւ ՞վ զիտէ գեռ քանի քանի այսպիսի ձևեր կան, որ այսօր Ուկեղարեան կը համարենք և սակայն սխալ են: Մինչեւ որ ժամանակակից բնագիր մը երևան չգայ ոչինչ կարելի է հաստատօրէն ըսել: Մենք իրաւունք ունինք ամէն բանի վրայ կասկածելու: Ինչ որ կը գտնենք՝ ճշմարիտ է միայն իր ժամանակի համար: Եւ այսպէս ճշմարտութիւններ են երկինամարել, ձորունք և այլ նման ձևեր, որ Հ. Վարդանեանի և նմաններու համար սխալ կամ անզոյ են:

Հ. Վարդանեան ուրիշ շատ անգամներ ալ իր մեթողը կը գործադրէ: Օր. Եւսերիոսի ձեռագրին մէջ եիրծուն բառ մը կայ, որ րիծուն բառին սխալ գրչութիւնը կը համարէ, իբր թէ թթ կարդացուած է իթ ևն (Հանդ. 1922, 652): Բայց ինչպիսի ապուշ աչք ունեցած պիտի ըլլայ մէկը՝ որ թթունը նիւթծուն կարդայ: Այն աչքը՝ որ կրցած է տեսնել «Եւ զկէս պարըսպացն... աղիւսոյ և ի նաւթէ...» բառերը և կրցած է զանոնք ուղիղ գրել թղթի վրայ, ի՞նչ աներևակայելի անկարողու-

թեամբ բռնուած պիտի ըլլայ յանկարծ րիծուն ամենահասարակ բառը չտեսնելու և եիրծուն՝ չլուսած ու չգործածուած ձեւ մը գրելու: Գարիկեան, Հանդ. 1923 378 ցուցուց որ ծուն մասնիկով ձեւը սովորական են Սեբաստիոյ բարբառին, ուստի բոլորովին պարզ է որ գրիչը թթունը բոլորովին պարզ է որ գրիչը թթունը բոլորովին համար փոխած և իր բարբառին կամ գիտմամբ փոխած և իր բարբառին կամ իր շըջանին համար աւելի ծանօթ եիրծուն ձեւ դրած է: Միանգամ ընդ միշտ իրը բանական սկզբունք ընդունելու է թէ չի կրնար աշխարհիս մէջ գտնուիլ մէկը՝ որ առջեր գտնուած ծանօթ և սովորական բառ մը գրչին ծայրէն վտարէ և մանաւանդ անոր որևէ սեղոյ բառ դնէ:

Հ. Վարդանեան այսպէս վարուեցաւ նաև Գորիա և Շմոնի օչք բառին համար զոր սրբազնեց ուստի կամ յօդի: Ամէն բան, միայն թէ օշ չըլլայ (Հանդ. 1922, 477): Խակ ես կ'ըսեմ որ օշ բառ մը կայ՝ «մսի պատառ, կտոր» իմաստով և թանկագին բառ մ'է այս, որ թերևս Շական տեղը բառ ալ արմատն է և որուն յ մասնիկով աճած ձեն է յօշ: Օշ բառին գոյութեան իբր ապացոյց կը բերեմ հետեւալ վկայութիւնները: Ոշ ոշ կոտորեալ (Վարք և Վկ. Ա. 124). Օշ օշ կոտորիմ (Պիռն WZKM 28, 386), օշատել Առ որս.

Նոնն. Պիտ. օշել Փարակ. օշոտել Պիտ.  
Սարգ.

Չեմ ուզեր օրինակներու թիւը շատ ա-  
ւելի երկարել. կարծեմ այսքանը բաւա-  
կան էր միտքս պարզելու և ընթերցողը  
համոզելու համար:

Էջ 191, թիւ 5 խովիկ «Ժանտախտ».  
— այս բառը գործածուած է Ուռհայեց-  
ոյն մէջ, էջ 46. բայց պէտք է կարդալ  
խոչիկ. և և լ տառերը բոլորգիր զրութեան  
մէջ շատ մօտիկ զրուելով՝ ձեացել է վ:  
Արդէն խոչիկ ձեր կը գործածէ Մամ. ա-  
նեցի՝ էջ 104 և խոչիկ ձեռվ՝ Ամբատ  
պատմիչ, էջ 44: Ժանտախտով վարա-  
կուած հիւանդին բոլոր աւշային գեղձերը  
(խոյլերը) կ'ուտին և ասկէ ալ հիւանդու-  
թիւնը կոչուած է խոչիկ. ուստի խովիկ  
ձեր ջնջելու է, թէև Գաբամաճեան բա-  
ռարան իբր գաւառական բառ ունի խովիկ  
«Ժանտախտ», որ թիւրիմացութեան ար-  
դիւնք կը կարծեմ:

Բ. հատոր

Էջ 45, թիւ 1. անգնայ մահ, շատ լաւ  
կը գտնեմ Հանդէս 1923, էջ 81 առա-  
ջարկուած սրբազրութիւնը ահճեամահ:

Էջ 47, թիւ 5. կեղծ Շապուհ Բագ-  
րատունոյն աւանդ բառը՝ որ մեկնած եմ  
«մեծ քաղաք», հաստատուեցաւ պարսկե-  
րէնով, հմմտ. պըս. Ճա՛ հանձն «գահ,  
աթոռ, պաշտօն (թախթ ու մէսնէտ)» ըստ  
Բուրհանի Կատի, Բուրհանի Ջամի (էջ 13)  
և Ջարհանգի Ջիհանզիրի բառարաններու:  
Չի գտնուիր Գիորգ դարի բով: Ասկէ կազ-  
մուած է Պարսից Nihâvand քաղաքին  
անունը, որ ժողովուրդը սիալ ստուգա-  
բանութեամբ «Նոյի գահ» կը մեկնէ (տես  
Blochet, Liste géogr. էջ 2 և Գամուսի  
արար. բառարանը, Ա. 70):

Էջ 51, տող 14 կարդա ոչիս:

Էջ, 57 թիւ 20 խասաւ. շատ լաւ կը  
գտնեմ Բագմավէպի խմբազրութեան սրբա-  
զրութիւնը իրասու (Բազմ. 1922, էջ 234):

Էջ 65, թիւ 33 սկեսին բառը մեկնած  
էի «խաչը պարունակող արկդը». այս  
մեկութիւնը հաստատուեցաւ Բառը փո-  
խառեալ է յն. σκευάριον (σκέβριον) ձևէն՝  
որ հնապէս կը նշանակէր «փոքրիկ կա-  
ռասիք», բայց յետոյ ստացաւ «արկդ»

նշանակութիւնը, որմէ ալ փոխառեալ է ասոր. asqurîn կամ səqurîn «աման, փոքրիկ աման, երկար արկղ, կողովիկ» (տես Brockelmann, Lex. syr. էջ 20 237 և 490): Ասկէ Սկնույ վանքը:

Էջ 107, իսրշ «մանուկ» բառը Բառագրք Երեմ. էջ 145 կը մեկնէ «զաւակ կամ խնձոր». վերջինը պէտք չէ կարծել ծանօթ պտուղը, այլ հմմո. զոռ. խնձորիկ «արգանդի բերանը»: Նոյնը կարծեմ կայ նաև Ղարաբաղի բարբառին մէջ խնձորի ձևով: Ուստի աւելորդ է ուղղել խանարուր:


Էջ 117, Լաբուբնայի կաղանդ բառը մեկնած եմ «թերես խնջոյք, հացկերոյթ» այս մեկնութիւնը սիսալ է. բառը կը նըշանակէ «կոտրած անդամի կապ», որմէ նաև կաղանդել կամ կաղանդել «կոտրած մէկ անդամը կապել՝ դարմանել», յետնաբար կաղընդել (վկայութիւնը տես Նորայր, Բառ. Փրանս. էջ 126):


Էջ 156 ապուղայ.— այս բառը ՆՀԲ կը դնէ ապուղայ ձևով՝ ես ենթադրած էի որ ուղիղ ձեւը պիտի ըլլայ ապուղայ, ինչպէս և գործածած էի, միենոյն ժամանակ ըսած էի թէ «անպատճառ ասորական փոխառութիւն մ'է: Այս ենթադրութիւնը» հիմայ բոլորովին հաստատուեցաւ, Brockelmann, Lex. syr. էջ 22 կը գտնեմ

ասոր. apâulâ, որ կը մեկնուի «ampulla», իսկ այս լատին բառն ալ կը բացարուի «ուրած փորով փոքր սրուակ որուն մէջ հիները ձէթ կը լեցնէին լուսուն մէջ հիները ձէթ կը լեցնէին լուսուն մէջ համարի գործածելու համար»: գանքի ժամանակ գործածելու համար»: աման մ'էր:

## ՎԵՐՋ







ՀՀ Ազգային գրադարան



NL0245422

